

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2025թ., հունիսի 27)

ՀՏԴ 81՝28(082)

ԳՄԴ 81g43

Բ 300

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:
Խմբագիր՝ Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվալյան

Բառագիտության արդի խնդիրներ. հանրապետական գիտաժողովի նյութեր
Բ 300 (Երևան, 2025թ., հունիսի 27).– Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2025.- 136 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում 2025թ.
հունիսի 27-ին տեղի ունեցած «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական
գիտաժողովի նյութերը:

Հոդվածները արծարծում են լեզվի բառապաշարի ուսումնասիրության տարբեր
խնդիրներ՝ տեսական և գործնական մի շարք հարցերի ուշադրավ դիտարկումներով:

ՀՏԴ 81՝28(082)

ԳՄԴ 81g43

ISBN 978-9939-970-17-2

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2025

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում 2025թ. հունիսի 27-ին տեղի ունեցած «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտա-
ժողովի նյութերը:

Հոդվածները արծարծում են լեզվի բառապաշարի ուսումնասիրության տարբեր խնդիր-
ներ՝ տեսական և գործնական մի շարք հարցերի ուշագրավ դիտարկումներով: Քննվում են
բառագիտության տարբեր ոլորտների հարցեր՝ նորակազմությունների կառուցվածքային վեր-
լուծություն, բայերի իմաստակառուցվածքային դիտարկում, փոխառությունների և համարժեք
հայերեն կազմությունների գործառույթի պարզաբանում, նույն բառի բառակազմական արդ-
յունավետ կաղապարների դրսևորումների վերլուծություն, այլև էլեկտրոնային բառարանա-
գրության և արհեստական բանականության արդի խնդիրների ներկայացում բառարանա-
գրության մեջ:

Անահիտ Գալստյան
Լեոնիդ Թեյյան

Բանալի բառեր: Կայուն կապակցություն, փոխաբերական իմաստ, հարադրավոր բայ, բարբառային կիրառություն, նույնահիմք և տարահիմք փոխարկումներ:

Նախաբան: Հոդվածը նվիրված է հայերենի **տալ** բայի տարբեր գործածություններին, դրա կապակցական և դարձվածակազմական հնարավորություններին, խոսակցական և գրական լեզվում, այլն բարբառներում եղած ուշագրավ և յուրօրինակ նրբիմաստային դրսևորումներին: Հետազոտությունը տվյալ բայի իմաստային, կառուցվածքային և կիրառական բնութագիրը ներկայացնող քննություն է, որ իրականացվում է լեզվի տարբեր շերտերի ընձեռած նյութի հիման վրա:

Կայուն կապակցությունների իմաստային, կառուցվածքային և գործառական վերլուծություն: Տալ-ով կայուն կապակցությունները բազմաթիվ են: Դրանք քննվում են ըստ բառակապակցության բաղադրիչների քանակի, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, ըստ դրանց փոխարկելիության, ըստ ոճային կիրառության և այլ չափանիշներով:

Գրական լեզվի պաշտոնական ոճում մեծ տարածում ունի *հնարավորություն տալ, հավանություն տալ, համաձայնություն տալ, ցուցում տալ, ցուցմունք տալ, հրաժարական տալ, ընթացք տալ, զարկ տալ, գնահատական տալ, հանձնարարական տալ, երաշխիք տալ, տուրք տալ, պատկերացում տալ* և նման կայուն կապակցությունների գործածությունը: Դրանց առավել մանրամասն և հանգամանալից ուսումնասիրությունը հնարավոր կլինի իրականացնել կայուն կապակցությունների, հաճախականության, լեզվի զուգորդային նորմերի բառարանների առկայության, դրանց ընձեռած լեզվական նյութի համակարգմամբ և գնահատմամբ:

Բառակազմության մեջ **տալ** բայը որպես հիմք հանդես է գալիս հետևյալ տարբերակներով՝ -տու (*կենսատու, ստնտու, լուսատու, բերքատու, հարկատու, խորհրդատու*), տուր (*առնտուր, անձնատուր, տուրուդմիոց, Խաչատուր, Աստվածատուր, Ասատուր, տուրք*), տր (*տրական, բացատրել, տրվել, թույլատրել*), տվ (*տվյալ, տվյալագետ, տվյալագիտություն, նվիրատվություն, տեղատվություն, շուռտվիկ, բերքատվություն, խորհրդատվություն, տեղեկատվություն, տվածուրիկ*), նաև *տալ* ձևով (*տալացուկ(ք), տալիք, անտեղիտալի*):

Տալ բայով կայուն կապակցությունները լինում են մենիմաստ և բազմիմաստ, փոխաբերական իմաստ ունեցող և միայն ուղիղ իմաստով գործածվող: Խոսքի մեջ տարածված է նաև դրա՝ իբրև մեղմասություն գործածվելը: Բացատրական բառարաններում **տալ** բայի հիսունվաթսուն իմաստ է գրանցված, որոնք պայմանավորված են խոսքային միջավայրով. *հինգ տարի տվին* (դատարանի որոշման մասին), *հիսուն չես տա* (տարիքը որոշելու վերաբերյալ), *տվին կովեցին, տասներկուսով տվեց* (վաճառեց) և այլն:

Տարբեր ոճերում, խոսքային տարբեր իրադրություններում նշված բայը լայն իմաստային տարրողունակություն է դրսևորում. *արևը գլխին տալ* (վնասել, հիվանդացնել), *յոթը տալ, քառասունքը տալ, տարին տալ* (հիշատակի օրերը նշել) և այլն:

Հայերենագիտության մեջ հարադրավոր բայերը քննելիս ընդունված է հիմնվել հարադրության անվանական բաղադրիչի վրա. դարձվածագիտության մեջ առանձնացվում են հարադիրների թեմատիկ խմբերը՝ մարմնամասերի անվանումներ, գունանվանումներ, կենդանանուններ, երկնային մարմինների անվանումներ և այլն: Բայերի իմաստագործառական առանձնահատկություններին նվիրված մեր հոդվածներում հարադրավորների քննությունը սկսվում է դրանց բայական բաղադրիչից՝ *անել, լինել, տալ, դնել, առնել, ընկնել, գնալ, գալ, հանել, դառնալ ածել, տանել* և այլն¹:

Ըստ բառակապակցության բաղադրիչների քանակի՝ լինում են երկանդամ, եռանդամ, քառանդամ հարադրություններ: Երկբաղադրիչ բառակապակցություններից նշենք *ոտնատալ տալ, լուսնահաչ տալ, խաղեր տալ, բաժինք տալ, օժիտ տալ, խաբս տալ, ցեցը տալ, մլու տալ, դդիկ տալ, խուտուտ տալ, ցրցամ տալ, փուռը տալ, նեստա տալ (բրբ. կպցնել), երդում տալ, քացի տալ, քացով տալ, գլուխ տալ, գլուխկոնծի տալ, աչք տալ, աչքով տալ, աչքալույս (աչքալուսանք) տալ, երես տալ, երեսով տալ, չափ տալ, գործ տալ, ամոթանք տալ, թանչին տալ (բրբ. հևալ):* Եռաբաղադրիչ բառակապակցությունները ևս բազմաթիվ են. *շան տուր տալ, խելքին գոռ տալ, մեջքը գետնով տալ, փողերը (խելքը, ունեցվածքը, բմբուլները) քամուն տալ, հարցին լուծում տալ, իրեն հարբեցողության տալ, խելք խելքի տալ, ձեռք ձեռքի տալ, կլխավը շոռ տալ(բրբ.), ճուրը լենջան տալ(բրբ.), ձեն ձենի տալ, տուր թե կտաս, տալ-առնել չունենալ, գլուխը քարով (պատով) տալ, իրեն նեղություն (յ)տալ, աստծուն քարով տալ, քարը գլխին տալ, զինքը պատերով տալ (բրբ.), դռի տակ տալ (ընկնել, քցել), բամբակով ջուր տալ, աստծուն փառք տալ, մատը մատին չտալ:*

Քառանդամ բառակապակցություններից նշենք՝ *շոր տուր՝ շնորհք տալ, գույն տալ, գույն առնել, ոչ տալ, ոչ առնել, գառը գայլին պահ տալ, օր ու արև չտալ, տակից գլխից դուրս տալ:*

Բառակապակցության հարադիր անդամը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով: Ամենաշատ տարածում ունեն գոյական (տարբեր հոլովներով) հարադիրով արտահայտությունները. *խրատ տալ, ընթացք տալ, ժամանակ տալ, համ տալ, կերպարանք տալ, ահ տալ, արձագանք տալ, հաշիվ տալ, գլուխ տալ, սիրտ տալ, շալակը տալ, ուշունց տալ, տեղ տալ, տեղի տալ, տեղիք տալ* և այլն: Տրականով արտահայտված հարադիրների օրինակներ. *բերնին տալ, գլխին տալ, քթին տալ, քիթ ու մոռիթին տալ, լեզվին տալ, բահի տալ (բրբ.), մարդու տալ, կնության տալ:* Գործիականով հարադիրներ՝ *ծառավը տալ (բրբ. փաթաթվել), գլուխը քարով (պատով) տալ, աչքով տալ:* Բացառականով հարադիրները շատ չեն՝ *նկարը պատան տալ :*

Ածական բաղադրիչով հարադրություններ՝ *կարմրին տալ, սպիտակին (սևին) տալ, դերանուն բաղադրիչով՝ զիրավ տալ(բրբ.), իրար տալ, բայարմատով՝ կուլ տալ, կեց տալ (բրբ.), պոկ տալ, կոխ տալ, հարու տալ, շաղ տալ, կախ տալ, վազ տալ, խաշ տալ, ձեռ տալ քարշ տալ, (մեկի) սևը տալ, դերբայ հարադիրով՝ չլսելու տալ, չհասկանալու տալ, չտեսնելու տալ* և այլն, մակբայով՝ *նի տալ (բրբ.), վարի տալ, դուրս տալ, ներս տալ* և այլն, կապով՝ *տակ տալ, վրա տալ, հետ տալ մեջ տալ, ձայնարկությամբ՝ երանի տալ, քսի տալ, հայ տալ, հարայ տալ, վայ տալ:* Բանավոր խոսքի դրսևորումներում սակավադեպ չեն օտար հարադիրով կազմությունները՝

¹Տե՛ս օրինակ **Ա. Գալստյան, Լ. Թեյան**, Հայերենի **անել** բայի իմաստագործառական քննություն // Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 3:

դուխ տալ, տորմուզ տալ, ստոպ տալ, մաջալ տալ, զադնի տալ, սիլլա տալ, շիրա տալ, տոկի տալ, տոկ տալ, շանս տալ, քյալլա տալ, չանա տալ և այլն:

Տալ բայի կիրառություններից հանրահայտ է նաև պատճառականության քերականական կարգի արտահայտությունը այն բայերի դեպքում, որոնց մեջ –*ցն*- պատճառական ածանցի ներմուծումն անսովոր է՝ *գրել տալ, կարդալ տալ, դիտել տալ, բերել տալ* և այլն. նշելի է, որ սրանք հմնականում ներգործական սեռի բայեր են: Բայերի մի որոշակի խմբի համար էլ (հիմնականում ասացական կամ մտածական) սովորական են թե՛ ածանցմամբ, թե՛ հարադրությամբ կազմվող պատճառականները (*հիշեցնել-հիշել տալ, խոսեցնել-խոսել տալ, զգացնել-զգալ տալ* և այլն)²:

Տալ բայով հարադրությունների իմաստային բնութագիրը ամբողջացնելու համար հարկ է անդրադառնալ դրանց փոխարկելիությանը համադրական կազմությունների: Այստեղ հնարավոր են փոխարկելիության երեք տարբեր ուղիներ:

1. Բառեր, որոնց հարադիրը (անվանական մասը) կարող է հիմք դառնալ համադրական բայաձևի համար³՝ *թավալ տալ-թավալվել, վազ տալ-վազել, կախ տալ-կախել, տերև տալ-տերևակալել, արմատ տալ-արմատակալել, ծափ տալ-ծափահարել* և այլն: Նկատենք, որ սրանց անվանական հիմքերը կարող են ունենալ հավելյալ բաղադրիչ՝ *արմատ տալ-արմատակալել, հույս տալ-հուսադրել, ծափ տալ-ծափահարել, թույլ տալ-թույլատրել*:

2. Կազմություններ, որոնք ունեն տարահիմք միաբառ հոմանիշներ՝ *մտիկ տալ-նայել, մարդու տալ-ամուսնացնել, կուտ տալ-խաբել, հաց տալ-հյուրասիրել* և այլն:

3. Հարադրությունը չունի նույնահիմք կամ տարահիմք համադրական փոխարինիչ. սրանք հիմնականում դարձվածային արժեք ունեցող բառակապակցություններ են, և դրանց իմաստները կարելի է ներկայացնել նկարագրորեն: *Մար տալ* հարադրությունը, օրինակ, Արցախի բարբառում երկու իմաստով է գործածվում՝ ա. *կոճկել, բ. հորթը՝ գառը բաց թողնել, որ մոր կուրծքը ծծի*:

Տալ բայի գործածության հետաքրքիր մի իրողություն է առկա Արցախի բարբառում:

Լեզվաբանական գրականության մեջ որպես բացառիկ իրողություն նշվում է, նախադասությունը կարող է ձևավորվել մեկ հնչյունով: Արցախի բարբառում այդպիսի օրինակ կա. **ի** հնչյունն է դա, որ նշանակում է *տուր ինձ*՝ այսինքն՝ նախադասություն մեկ հնչյունով, որի մեջ ներակայված է *տալ* բայը⁴:

Մեկ այլ հետաքրքիր իրողություն ևս, որ առկա է բարբառային խոսքում: *Որնէ պարի կամ խաղի անվանում+տալ* կառույցը նշանակում է *այդ պարը պարել կամ այդ խաղը խաղալ* : Օրինակ՝ *յալլի տալ, նարդի տալ* և այլն: Հետաքրքիր է, որ հատկապես բարբառներում հանդիպում են գրեթե նույնիմաստ հարադրավոր կազմություններ *տալ, անել, ածել* և այլ բայերով, ինչպես *գրույց անել-գրույց տալ, նի անել- նի ածել- նի տալ, մտիկ տալ-մտիկ անել, դեն անել-դեն տալ- դեն-ածել* և այլն:

² Ավելի հանգամանորեն տե՛ս **Լ. Թեյյան**, *Արդի հայերենի քերականության հարցեր*, Ե., 2016, էջ 12-13:

³ Հմմտ. **Գ. Զահուկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի բառակազմություն և իմաստաբանություն*, Ե., 1989, էջ 226:

⁴ **Ա. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 222:

Եզրակացություն: Հոդվածը կայուն բառակապակցություններում ամենից հաճախ կիրառվող բայերի իմաստագործառական քննությանը նվիրված աշխատանքների շարքից է: Վերլուծված են *տալ* բայի իմաստների, նրանով կազմությունների դրսևորումները լեզվի հասարակական և տարածական տարբեր ոլորտներում՝ գրական հայերեն, ժողովրդախոսակցական հայերեն, բարբառ (հիմնականում Արցախի բարբառի նյութը), ժարգոն: Դիտարկվում են *տալ* բայի իմաստները, ապա և նրանով կազմված հարադրությունները: Վերջինները քննվում են ըստ հարադրության բաղադրիչների քանակի, հարադիր բառի խոսքիմասային պատկանելության, հարադրության՝ նույն իմաստն արտահայտող այլ բայով կամ էլ այլ կարգի բառերով փոխարկվելու, ինչպես նաև դրանց՝ լեզվի տարբեր շերտերում տարածված լինելու իրողությունները:

Anahit Galstyan, Leonid Telyan. A Semantic-Functional Analysis of the Armenian Verb տալ.
-This article is part of a series devoted to the semantic-functional analysis of verbs that form set expressions and phrases in Armenian. The uses of the verb տալ in various areas of the language—colloquial speech, dialects, jargons, etc.—are analyzed. Phrases consisting of two, three, and four components are examined, and they are also classified according to the part-of-speech attributes of the non-verbal component and their transformability into equivalent combinations with other verbs.

Keywords: Stable conjunction, figurative meaning, adverbial verb, dialectal usage, homonymous and heteronymous transformations.

Анаит Галстян, Леонид Телян. Семантико-функциональный анализ глагола տալ армянского языка. - Данная работа входит в ряд статей, посвященных семантико-функциональному анализу глаголов, составляющих устойчивые обороты и словосочетания в армянском языке. Анализируются употребления глагола տալ в различных сферах языка - разговорная речь, диалекты, жаргоны и т.д. Исследуются словосочетания, состоящие из двух, трех и четырех компонентов, они классифицируются так же по признакам частеречной принадлежности не глагольного компонента и по трансформируемости в эквивалентные сочетания с другими глаголами.

Ключевые слова: устойчивое сочетание, метафорическое значение, составные глаголы, диалектные употребления, заменяемость.

Օգտագործված գրականություն

Գալստյան Ա., Թելյան Լ., Հայերենի անել բայի իմաստագործառական քննություն // Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատարակչություն, 2024:

Թելյան Լ., Արդի հայերենի քերականության հարցեր, Ե., հեղ. հրատ., 2016:

Ջառուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի բառակազմություն և իմաստաբանություն, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 226:

Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., «Էդիտ Պրինտ» հրատ., 2013:

Բանալի բառեր: Նորակազմություն, բանաստեղծական բառ, բարդություն, ածանցում, բարդաձանցավոր կազմություն, գոյական, ածական, բայ, մակբայ:

Նախաբան: Յուրաքանչյուր լեզվի բառապաշարի հարստացման անսպառ աղբյուր են նորակազմությունները: Սրանք հիմնականում ստեղծվում են հասարակական կյանքում նոր հասկացությունների առաջացմամբ պայմանավորված: Նորակազմությունների ուսումնասիրությունը խիստ է կարևորվել միշտ, առավել ևս վերջին ժամանակներում, ինչի վառ վկայությունն են դրանց ուսումնասիրությանը նվիրված գիտական հետազոտությունները, նորակազմությունների բառարանները, ինչպես Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը», Փ. Մելքիսյանյանի «Նոր բառերի բացատրական բառարանը», առանձին հեղինակների կամ ստեղծագործությունների բառարաններ, օրինակ Հ. Մեսրոպյանի «Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի երկերի բառարանը», Ս. Համբարձումյանի «Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարանը» և այլն: Այս առումով հսկայածավալ աշխատանք է կատարում ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժինը՝ 2015թ.-ից հրատարակելով նոր բառերի պրակները, որոնք ընդգրկում են «մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում»¹:

Նշված միավորների թվում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն բանաստեղծական բառերը, որոնք հեղինակային նորակազմությունների մի առանձին խումբ են: Ընդգծվել է, որ «Նորաբանությունների մեջ որոշ տեղ են գրավում առանձին գրողների և բանաստեղծների կողմից ստեղծագործական, ոճական նկատառումներով ստեղծված նոր բառերը, որոնց մեծ մասը հարստացնում է գեղարվեստական գրականության լեզուն՝ հաղորդելով նրան ճկունություն և գեղեցկություն ... կամ մնում բնորոշ միայն տվյալ հեղինակի ստեղծագործությանը ... չթափանցելով բառապաշարի ակտիվ շերտի ոլորտը»²:

Հայ բանաստեղծները ոսկեդենիկ հայերենը միշտ են հարստացրել նոր ու գեղեցիկ բառերով: Վ. Առաքելյանը նշում է, որ «արդարև Նարեկացին «Մատեան ողբերգութեան» մեջ ըստ «Հայկազյան բառարանի» տվյալների կազմել է 700-750 բառ. սա նորակազմ բառերի մի այնպիսի քանակ է, որ հազվագյուտ հեղինակի երկերում կարելի կլինի գտնել»³:

Պարույր Սևակի լեզվական արվեստին նվիրված աշխատության մեջ Արտաշես Պապոյանը գրում է, որ «Պ. Սևակը զարգացնում է իր մեծ նախորդների ավանդները նաև այս ասպարեզում: Նա ունի նոր բաղադրությունների ամենաբազմազան ձևեր ու արտահայտություններ»⁴:

¹ Նոր բառեր, Բ պրակ, Ե., 2016, էջ 3: Այսուհետ Նոր բառեր պրակաշարից կատարվող մեջբերումների տվյալները կնշվեն կից՝ փակագծերի մեջ:

² Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Ե., 1979, էջ 237:

³ Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 42:

⁴ Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970, էջ 137:

Նորակազմություններ արդի հայ քնարերգության մեջ: Հայերենի բառապաշարը շարունակում է համալրվել նորակազմ բառերով նաև մեր ժամանակներում, և արդի բանաստեղծները հաջողությամբ են շարունակում նախնիների սկսած գործը: Ջեկուցումը պատրաստելիս նպատակ ենք ունեցել որոշակի պատկերացում կազմել արդի հայ քնարերգության մեջ առկա նորակազմ բառերի և բառաստեղծման միտումների մասին: Նյութը քաղել ենք ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի կողմից հրատարակված «Նոր բառերի» ութ պրակներից: Պատահականության սկզբունքով ընտրվել է 150 բառ և փորձ է արվել դրանք ներկայացնել ըստ բառագիտական աշխատանքներում ընդունված դասակարգումների:

Ըստ կազմության.

Նորակազմությունների ճնշող մեծամասնությունը՝ 150-ից 132-ը կամ 88%-ը բարդ բառեր են: Բարդ բառերի մեծ մասը՝ 132-ից 129-ը կամ 97.5%-ը հոդակապով իսկական բարդություններ են, ինչպես. *անրջաբույր, գոյազիրք, լուսանժար, լուսնաքույր, կարծրամկան, սարսռածաղիկ, քանքարավրեպ, ազգաշուք, աստեղնահուր, արարչավայել, յոթնատեգ, սառցաքիստ, ահատագնապ, այգաճառագ, հրադեղձան, լուսաձիգ, երկնաթև, այգափայլ, երկնածով* և այլն: Բնագրային վկայություններ. «Դու լուսատենչ իմ **լուսնաքույր**, լույսս վրադ հավերժ շաղեն» (Տ. Գամաղելյան, Բ պրակ), «Հայրենիք և սեր, բիբերիս երկու **լուսանժարին** կշռում եք ինձ» (Ս. Եղիազարյան, Բ պրակ), «Վարսերդ խարույկաբոց // Ինձ վրա դու փռեցիր, // Ես դարձա **առույգաբորբ**, // Ես դարձա արեգնածին (ԼԴ1, էջ 194, Ջ պրակ), «Ես եմ **ազգաշուք** դարձրել տառը, // Որով դարախոս մեր մատյանները // Փառաբանել են հանճարությունը» (ԼԴ1, էջ 6, Ե պրակ) և այլն:

Ինչպես նշում է Ա. Սուքիասյանը. «Բառակազմության ժամանակ, որոշ դիրքերում ա հոդակապը միանալով նախորդ բաղադրիչի վերջնահնչյուն ի-ին, դառնում է ե, ինչպես՝ այգի-ա-գործ, այգեգործ: Հետագայում այդ կարգի ե-ն նույնպես գիտակցվում է որպես հոդակապ և համաբանությամբ մտնում որոշ բաղադրությունների կազմության մեջ. ինչպես՝ երգեհոն, խաբեպատիր ... և այլն»⁵: Այսօրինակ կազմություններ ևս առկա են մեր դիտարկած նորաբանությունների մեջ, ինչպես՝ *գինեմշուշ, լուսեբարուր*. «Աչքերիս **գինեմշուշում** // Յոլում է մի արևադրիկ» (ԳԹ, 22.07.2016, Դ պրակ), «Քեզնով նաև փրկվեց Էրզրի պատմության **լուսեբարուր** շուքը, որ դանդաղ մարում էր տարիների մեզ-մշուշի մեջ, մոռացության դավադիր մացառուտը ծածկում էր ամեն ինչ ու ամենքին» (ԳԹ, 27.12.2015, Բ պրակ):


Հանդիպել ենք երեք անհոդակապ բարդությունների՝ *ահերգ*, որ Լևոն Միրիջանյանի բանաստեղծության վերնագիրն է, *աղավնաչք* և *արևանուշ*:

Փոքր թիվ են կազմում բարդածանցավոր կազմությունները՝ 12 բառ. *անմահապատիվ, անմահավայր, աստղաշաղոտ, աստղատարածք, անփրկատու, աստղանավակ, գահախորհուրդ, դիցերգական, լուսաստղային, ծաղկագոծուն, ծոռնեծոռնուհի, հուզագեղում*, օրինակներ. «Վերևից վար գյուղամիջին աշտարակը հագած նրբին բաղեղի ամպ, **ծաղկագոծուն** դիպակի պես ծածանվում էր ներքևից վեր» (ԲՄ, էջ 52, Ե պրակ), «**Գահախորհուրդ** փառք փայլակեց ամեն սար, // Շանթ խուժեցին նժույգներս թխածին» (ԼԴ1, էջ 62, Ե պրակ), «Բմաստուններ, թե հոգևորական, // Արարչավայել նպատակն իրենց // **Անմահապատիվ** գրառում էին» (ԼԴ1, էջ 370,

⁵ Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 282:


Զ պրակ), «Հո՛ղ, քո կոչումի դերը սրբազան // **Անմահավայրն** է դառնում այն քաջի» (ԼԴ1, էջ 337, Զ պրակ) և այլն:

Ամենափոքրը նորակազմ ածանցավոր բառերի թիվն է՝ ընդամենը վեց. որոնցից երեքը Վահագն Դավթյանի գրչին են պատկանում: *Անցորդուհի*. բանաստեղծության վերնագիր է, *շամանդադե ու կայծակե*. ե վերջաձանցով կազմված հարաբերական ածականներ. «Ծավալվում է, ծփում, **շամանդադե** մի շուրք» (ՎԴ, էջ 95, Գ պրակ), «Պարզի՛ր կայծակե քո ձեռքը մաքուր» (ՎԴ, էջ 188, Գ պրակ): Մյուս երեքն են. *ակունքվել*, *արբունքոտ*, *ներխոյանք*:



Նկ. 1 Նորակազմությունների պատկերն ըստ կազմության

Ըստ խոսքիմասային պատկանելության նորակազմ բառերը ներկայացնում են հետևյալ պատկերը. ածական՝ 99 բառ կամ 66%, գոյական՝ 42 բառ կամ 28%, բայ՝ 5 բառ կամ 3.4%, մակբայ՝ 4 բառ կամ 2.6%: Օրինակներ. ածական՝ *աստղաշաղոտ*, «Ինձ ամեն օր տանում են վեր // Տեսլիքները աստղաշաղոտ» (ԼԴ1, էջ 114, Զ պրակ), գոյական՝ *գոյաշխարհ*, «**Գոյաշխարհը** հավետ բաց է, // Պատյանի մեջ նա չի փակվում» (Հրչ.Թ, էջ 76, Ե պրակ), բայ՝ հուզավառել, «Մակայն ոչինչ էլ չեմ գտնում, որ կարող է **հուզավառել**, ափսոսանքը օտար է ինձ» (ԻՄ, էջ 33, Ե պրակ), մակբայ՝ *անձրևամաշ*, «*Անձրևամաշ* ծերացել էր կյանքը գուրթի - // Գիշերն ամբողջ աստղի թաղում, սուգ էր եղել» (ԼԴ1, էջ 135, Զ պրակ) և այլն:



Նկ. 2 Նորակազմությունների պատկերն ըստ խոսքիմասային պատկանելության

Հանդիպել ենք դեպքերի, երբ մեկ նախադասության մեջ հեղինակները կիրառել են երկու նորաբանություն, օրինակ՝ *աստղաթափոն և գիշերասահ*. «**Գիշերասահ** մոխրաբլուր մի ամայք, // **Աստղաթափոն**, մայրցամաքվող շիրմալույս, // Պսակակիր խորհրդաժամի հմայք» (ԲԱ, էջ 19, Գ պրակ) և այլն:

Եզրակացություն: Ամփոփելով այս համառոտ քննությունը՝ կարող ենք արձանագրել, որ ա) հայոց լեզվի բառապաշարը մեծ թափով շարունակում է համալրվել նոր բառերով, որոնց մեջ ուրույն ու կարևոր տեղ ունեն բանաստեղծական բառերը, բ) ըստ կազմության նորակազմ բանաստեղծական բառերի մեծ մասը բարդ է, սրանց ճնշող մեծամասնությունն էլ իրենց հերթին հոդակապով իսկական բարդություններ են, գ) ըստ խոսքիմասային պատկանելության այս բառերի մեծ մասը ածական է, ավելի քիչ են գոյականները, շատ ավելի քիչ բայերն ու մակբայները, դ) նորակազմ բառերի մի սովոր մասը վստահաբար հարստացնում է գրական լեզուն, իսկ մի մասն էլ մնում է որպես դիպվածային և չի անցնում բառապաշարի ակտիվ շերտին: Ինչպիսին կլինի այսօր ստեղծվող բառերի ճակատագիրը, ցույց կտա ժամանակը:

Շնորհակալական

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակիցներին «Նոր բառերի» պրակաշարի համար, որը կարող է օգտակար լինել բազմաթիվ նոր գիտական հետազոտություններ կատարողների:

Karine Arakelyan. Neologisms in Modern Armenian Poetry. - Neologisms are an inexhaustible source of vocabulary enrichment, the study of which is extremely important in terms of forming an accurate and complete picture of a given stage of the language. Authorial neologisms, including poetic words in verse speech, have their own place in the classification of these units. Armenian poets have always enriched the vocabulary of the native language with new and beautiful words, and modern poets are no exception. The article aims to present a certain picture of neologisms and word-creation tendencies in modern Armenian poetry. An examination of the material provided by the New Words Collection compiled by the Department of Lexicography of the Institute of Linguistics of the NAS RA shows that the overwhelming majority of poetic words created today are complex in structure, more precisely real complexity with articulation, and are adjectives in part of speech, there are fewer nouns, much less verbs and adverbs. A significant part of neologisms enriches the literary language, and some enter as incidental and do not pass into the active layer of the vocabulary.

Keywords: neologism, poetic word, compound word, derivative word, derivational compound, noun, adjective, verb, adverb.

Карине Аракелян. Неологизмы в современной армянской поэзии. - Неологизмы – неисчерпаемый источник обогащения словарного запаса, изучение которых чрезвычайно важно для формирования точной и полной картины данного этапа развития языка. Авторские неологизмы, в том числе поэтические слова в стиховой речи, занимают своё особое место в

классификации этих единиц. Армянские поэты всегда обогащали словарный запас родного языка новыми и красивыми словами, и современные поэты не являются исключением. Цель статьи – представить определённую картину неологизмов и тенденций словотворчества в современной армянской поэзии. Изучение материалов, представленных в сборнике «Новые слова», составленном отделом лексикографии Института языка НАН РА, показывает, что подавляющее большинство созданных сегодня поэтических слов имеют сложную структуру, точнее, действительные сложные слова с соединительным гласным, и являются именами прилагательными по части речи, меньше существительных, а тем более глаголов и наречий. Значительная часть неологизмов обогащает литературный язык, а некоторые входят в него как окказиональные и не переходят в активный слой лексики.

Ключевые слова: неологизм, поэтическое слово, сложное слово, производное слово, сложнопроизводное слово, существительное, прилагательное, глагол, наречие.

Օգտագործված գրականություն

Առաքելյան Վ., Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչունաբանություն և բառագիտություն, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1979:

Նոր բառեր, Ա-Ը պրակներ, Ե., 2015-2023:

Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., «Լույս», 1970:

Սուրբիսայան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1989:

Օգտագործված աղբյուրներ

ԲԱ - Բազրատ Ալեքյան, Մերկ լեռը, Ե., ՀԳՄ հրատ., 2010:

ԳԹ - Գրական թերթ

ԻՄ - Իսկուհի Մինաս, Աստվածային խաբկանք, ֆրանս. թարգմ. Նվարդ Վարդանյան, Ե., Փյունիկ, 1995:

ԼԴ 1 - Լյուդվիգ Դուրյան, Կյանք Իմացյալ, Ե., Ոսկան Երևանցի, 2008:

Հրչ. Թ. - Հրաչյա Թամրազյան, Բանաստեղծություններ, էսսեներ, գրական դիմանկարներ, հոդվածներ, Ե., Նաիրի, 2010:

Վ. Դ. - Վահագն Դավթյան, Անքնություն: Բանաստեղծություններ, պոեմներ, Ե., Սով. գրող, 1987:

**ԲԱՐԵՎԵԼՈՒ ԺԵՍՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԻԴ-19-Ի (COVID-19)
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ. ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Գայանե Գրիգորյան

Բանալի բառեր: Ժեստ, բարևելու մշակույթ, սոցիալական շփում, համավարակ:



Նախաբան: 2019 թվականի վերջին բռնկված Կովիդ-19 (COVID-19) համավարակը արմատապես փոխեց մարդկանց առօրյան, շփման եղանակները և հասարակական վարքի մի շարք դրսևորումներ: Վարակից խուսափելու անհրաժեշտությունը, մասնավորապես ֆիզիկական հեռավորության պահպանումը, հանգեցրեց սոցիալական փոխգործակցության նոր ձևերի առաջացման, որոնցից մի քանիսը վերածվեցին մշակութային ժեստերի: Այս համատեքստում զգալի փոփոխության ենթարկվեց նաև բարևելու մշակույթը, որը դարերով եղել է մարդկային հաղորդակցման ամենահիմնական ու խորհրդանշական դրսևորումներից մեկը:

Եթե մինչ համավարակը ձեռքսեղմումը, գրկախառնությունը համընդհանուր ընդունված բարևելու ձևեր էին, ապա համավարակի բռնկման ժամանակ այդ ժեստերը սկսեցին դիտարկվել որպես պոտենցիալ վարակակիր գործողություններ: Արդյունքում տարբեր համայնքներում սկսեցին տարածում գտնել այլընտրանքային, առանց շփման կամ նվազագույն շփմամբ ժեստեր, որոնք ոչ միայն հարմարեցված էին հիգիենիկ պահանջներին, այլև հաճախ կրում էին մշակութային տարրեր:

Ուսումնասիրության նպատակն է վերլուծել Կովիդ-19 համավարակի ժամանակ և հետո ձևավորված բարևելու ժեստերը, դիտարկել դրանց սոցիալական ու մշակութային նշանակությունը, ինչպես նաև անդրադառնալ այն հարցին՝ արդյո՞ք այդ ժեստերը ժամանակավոր արձա-

գանք էին ճգնաժամային իրավիճակին, թե՛ կարող են զարգանալ՝ դառնալով նոր նորմ: Հողվածում կներկայացվեն բարևելու տարբեր ձևերի օրինակներ՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հանրության հարթությունում:

Բարևելու մշակույթը մինչև համավարակը: Բարևելու ժեստերը ձևավորվել են մարդկության պատմության վաղ շրջանից՝ որպես փոխադարձ հարգանքի, ընդունման և խաղաղության խորհրդանիշ: Չնայած աշխարհագրական և մշակութային տարբերություններին՝ բարևելու որոշ ձևեր ժամանակի ընթացքում դարձել են համընդհանուր: Օրինակ, ձեռքսեղմումը՝ որպես վստահության ու ընկերության նշան, եղել է միջազգային շփման ամենատարածված ձևերից մեկը: Գրկախառնությունը, ձեռքի թափահարումը, թեթև հպումը կամ նույնիսկ ինչ-ինչ նշաններ փոխանցելը տարբեր մշակույթներում մարմնավորել են ողջույնի գործողություններ:

Հայաստանում բարևելու ավանդական ձևը, հատկապես միջահասակների և ավելի տարեցների շրջանում, եղել է ձեռքով բարևելը՝ ուղեկցված հարգալից խոսքերով (օր.՝ «բարև ձեզ», «ուրախ եմ ձեզ տեսնելու» և այլն): Ավելի մտերիմ միջավայրում՝ բարեկամների ու ընկերների շրջանում, տարածված է գրկախառնությունը կամ թեթև համբույրը այտերին, նույնիսկ այտը այտին հպելը կամ հպելով՝ օդում համբուրելը: Հատկանշական է, որ բարևելու ձևը հաճախ պայմանավորված է սոցիալական դիրքով, սեռով, տարիքով և միջանձնային հարաբերություններով:

Արագ գլոբալիզացիան ու միգրացիոն շարժերը նպաստել են բարևելու ժեստերի փոխանակմանը տարբեր մշակույթների միջև: Արևմտյան աշխարհում ընդունված ձևերը աստիճանաբար ներթափանցել են նաև Արևելքի, այդ թվում՝ Հայաստանի միջավայր, ինչն էլ հանգեցրել է ժեստերի որոշակի հոմոգենացման: Այդուհանդերձ, տարբեր ազգեր պահպանել են բարևելու իրենց յուրահատուկ ավանդույթները, որոնք իրենց մեջ կրում են մշակութային արժեքների և հարգանքի առանձնահատուկ դրսևորումներ:

Հետևաբար, կարելի է ասել, որ բարևելու մշակույթը մինչև համավարակը եղել է բազմաշերտ, հասարակական և մշակութային տարբեր գործոններից կախված երևույթ: Այն ոչ միայն հաղորդակցական գործողություն է, այլ նաև ինքնության և ազգային ինքնության արտահայտություն:

Կովիդ-19-ի ազդեցությունը սոցիալական շփման վրա: Կովիդ-19 համավարակը ոչ միայն առողջապահական ճգնաժամ էր, այլև հասարակական փոխհարաբերությունների կառուցվածքի էական վերաձևում: Մարդկանց միջև ֆիզիկական շփումը, որը մինչև այդ ընկալվում էր որպես բնական հաղորդակցման և փոխհարաբերությունների մաս, սկսեց դիտարկվել որպես հնարավոր վտանգ՝ վիրուսի փոխանցման հիմնական ուղի: Առողջապահության համաշխարհային կազմակերպության և տեղական առողջապահական մարմինների հորդորները՝ պահպանել սոցիալական հեռավորություն, նվազեցնել շփումը և սահմանափակել ֆիզիկական կոնտակտը, սկսեցին ազդել առօրյա վարքի նույնիսկ ամենապարզ դրսևորումների վրա:

Բարևելը՝ որպես շփման սկզբնական գործողություն, անմիջապես հայտնվեց այդ փոփոխությունների կենտրոնում: Ձեռքսեղմումները, գրկախառնությունները և շփման վրա հիմնված այլ ժեստեր սկսեցին ընկալվել ոչ միայն որպես անպատասխանատու, այլ նույնիսկ՝ սոցիալապես անընդունելի վարք: Բազմաթիվ երկրներում ձեռքի սեղմումը նույնիսկ արգելվեց

պետական մակարդակով՝ պետական ծառայողներին ու պաշտոնյաներին հորդորելով օգտագործել ողջույնի այլընտրանքային ձևեր:

Ստեղծված իրավիճակում մարդիկ ստիպված եղան վերաիմաստավորել բարևելու ժեստի խորհուրդը՝ փորձելով գտնել այնպիսի տարբերակներ, որոնք միաժամանակ կհարգեն սոցիալական նորմերը և կպահպանեն առողջական անվտանգությունը: Նախկինում ֆիզիկական շփմամբ պայմանավորված բարևելու ձևերը իրենց տեղը սկսեցին զիջել ոչ շփումային այլընտրանքներին:

Նոր ձևավորված ժեստեր: Կովիդ-19 համավարակը ստեղծեց այնպիսի սոցիալական պայմաններ, որոնցում առաջացան նոր՝ ոչ կոնտակտային կամ նվազագույն կոնտակտ ունեցող բարևելու ձևեր: Մարդիկ ստիպված էին նվազեցնել ֆիզիկական շփումը, որի արդյունքում առաջացան բարևելու նոր ժեստեր: Այս ժեստերը տարբեր մշակույթներում հայտնվեցին ինքնաբերական կերպով, սակայն որոշ ձևեր արագորեն տարածում գտան համաշխարհային/գլոբալ մակարդակով՝ դառնալով նոր հասարակական նորմերի մաս: Նշենք դրանցից մի քանիսը, որոնք լայնորեն տարածվեցին աշխարհի տարբեր հատվածներում ոչ միայն մարդկանց առօրյա շփումներում, այլ նույնիսկ բարձրաստիճան պաշտոնական հանդիպումներում և պաշտոնատար անձանց տեսակցություններում:

1. Արմունկով բարևելը



Սկզբնական շրջանում, որպես անվտանգության նվազագույն պահանջներին համապատասխանող տարբերակ, արմունկով բարևելը արագորեն տարածվեց ինչպես առօրյա, այնպես էլ պաշտոնական միջավայրերում: Դրա կիրառումը երբեմն ընկալվում էր որպես հումորային, բայց միևնույն ժամանակ՝ որպես պատասխանատու սոցիալական վարքագծի նշան: Այս ժեստը պահպանեց որոշակի ֆիզիկական շփում, սակայն նվազեցրեց դեմքը դեմքին մոտեցնելու անհրաժեշտությունը:

2. Ոտքով բարևելը

Չինաստանում ի հայտ եկած այս յուրահատուկ ժեստը 2020 թվականի սկզբին լայնորեն տարածվեց համացանցում: Երկու անձ ոտքով թեթևակի հպվում էին միմյանց, ձեռքի շփման

փոխարեն: Չնայած այս ժեստը արագ տարածվեց, սակայն լայնորեն չընդունվեց որպես երկարաժամկետ տարբերակ՝ հարմարավետության պակասի և ֆիզիկական անհարմարության պատճառով:

3. Ձեռքը սրտին դնելը

Սա ոչ կոնտակտային, հարգալից և մշակութային առումով չեզոք ժեստ է, որն ընդգծում է զգուշավորություն և փոխադարձ հարգանք: Շատ հասարակություններում այն արագորեն դարձավ ընդունված տարբերակ՝ հատկապես պաշտոնական կամ միջմշակութային շփման ժամանակ:

4. Ճապոնական խոնարհում

Ճապոնիայում վաղուց ձևավորված ողջույնի այս ձևը նորից արժևորվեց համավարակի ժամանակ: Այն սկսեց կիրառվել նաև այլ երկրներում՝ որպես ոչ կոնտակտային զուսպ ժեստ: Խոնարհումը ոչ միայն ֆիզիկական ժեստ էր, այլ նաև հարգանքի և զգուշավորության խորհրդանիշ: Հայաստանում բարևի այս ձևը գրեթե տարածում չգտավ:

5. Նամաստե

Հնդկական ծագում ունեցող ողջույնի այս ձևը՝ ձեռքերը միացնելով կրծքավանդակի մոտ և թեթևակի գլխով խոնարհվելով, մեծ տարածում ստացավ Կովիդ-19-ի ժամանակ: Այն վայելում է համընդհանուր հարգանք՝ իր խորը մշակութային հիմքի և ոչ շփումային բնույթի շնորհիվ: Աշխարհում մեծ տարածում գտած այս ժեստը Հայաստանում գրեթե չի գործածվում:


6. Օդում ձեռքով թափահարելը

Ձեռքի թեթև շարժումը՝ առանց ֆիզիկական շփման, դարձավ ամենապարզ ու անմիջական ձևերից մեկը: Այն ավելի հաճախ կիրառվում է առօրյա և ոչ ֆորմալ միջավայրում:

Այս ժեստերը ցույց են տալիս սոցիալական վարքի ճկունությունը, արտակարգ պայմաններում հարմարվելու մարդկանց կարողությունը: Բարևելու նոր ձևավորված ժեստերը միաժամանակ արտահայտում են անհատի գիտակցումը սեփական և շրջապատի առողջության նկատմամբ պատասխանատվության մասին:

Բարևելու ժեստերի հարցաթերթիկի վերլուծություն: Հայաստանում Կովիդի համավարակի ընթացքում գործածված ժեստերն ուսումնասիրելու նպատակով կազմվել է հարցաթերթիկ, որի նպատակն է բացահայտել՝ բարև տալու ինչ ժեստեր են կիրառվել մեզանում: Հարցմանը մասնակցել է ավելի քան 60 մարդ:

Հարցմանը մասնակցած անձինք նախ նշում էին իրենց տարիքային պատկանելությունը, ինչը հնարավորություն էր տալիս պատկերացում կազմելու, թե ինչպես են տարբեր սերունդների ներկայացուցիչները արձագանքել համավարակի ընթացքում ձևավորված շփման նոր ձևերին: Տարիքային բաշխումը ներկայացված է դիագրամով, որը վկայում է, որ հարցվածների մեջ ընդգրկված են եղել ինչպես երիտասարդ, այնպես էլ միջին և ավագ սերունդների ներկայացուցիչներ:



(Դիագրամ 1)

Մինչև 18 տարեկան մասնակիցների շրջանում առավելապես կիրառվել են այնպիսի ժեստեր, որոնք կա՛մ չեն ներառում անմիջական ֆիզիկական շփում (օրինակ՝ գլխի թեթև շարժում, ձեռքի ավեր բարձրացրած շարժում), կա՛մ փոխարինում են ավանդական *բարևը* ավելի ազատ ու ստեղծագործ ձևերով (օրինակ՝ բռնցքների հպում, ձեռք ձեռքի հարված): Ամենաշատ օգտագործված տարբերակն այս խմբում եղել է բռնցքների հպումը, որին հաջորդել են ձեռքսեղմումը և ձեռք ձեռքի հարվածը, գլխի թեթև շարժումը, ձեռքի ավեր բարձրացրած շարժումը, ինչպես նաև այլընտրանքային տարբերակ՝ ոտքի թեթև հպում: Այս բազմազանությունը վկայում է դեռահասների շրջանում ստեղծագործ մոտեցման և միաժամանակ խաղային շփման տարբերակների տարածման մասին:


18–30 տարեկանների շրջանում գերակշռող ժեստը եղել է գլխի թեթև շարժումը, ինչը վկայում է այս ժեստի տարածվածության մասին: Դրան հաջորդել է ձեռքի ավեր բարձրացնելը՝ որպես տեսողական ու հստակ բարև, որն անվտանգ է: Այստեղ նկատվում է նաև ժեստերի որոշ բազմազանություն. օգտագործվել են բռնցքների հպում, ճապոնական խոնարհում և նույնիսկ ոտքի թեթև հպում: Այս տարիքային խումբը առավել բաց է նորաձև, տարբերակված և ոչ ստանդարտ բարևելու ձևերի նկատմամբ:

31–50 տարեկանների շրջանում նույնպես գերակշռել է գլխի թեթև շարժումը, սակայն նկատվել են նաև այլ ժեստերի ընտրություններ՝ ձեռքի ավեր բարձրացնելը, բռնցքների հպում, ինչպես նաև միակ դեպքը՝ ձեռքը սրտին դնելը: Նշանակալի է նաև, որ այս խմբում մեկ մասնակից նշել է, որ միշտ բարևում է բանավոր, անկախ համավարակի հանգամանքներից: Սա վկայում է, որ որոշ մարդկանց համար խոսքը յուրաքանչյուր պարագայում գերադասելի է ժեստից:

51 և ավելի տարիքայինների խմբում գերիշխող է եղել գլխի թեթև շարժումը, ինչը համահունչ է ավագ սերնդի՝ ավելի պահպանողական և հարգալից բարևելու մշակույթին: Որպես այլընտրանք կիրառվել է միայն ձեռքի ավեր բարձրացրած շարժելը: Այս տարիքային խմբում ժեստերն ավելի սահմանափակ են:

Հետաքրքրականն այն է, որ հարցվողներից ոչ ոք չի նշել «նամաստե» ժեստը, որը համավարակի ընթացքում լայն տարածում ուներ որոշ մշակույթներում: Սա կարող է վկայել կամ ժեստի ոչ ընկալելի լինելու, կամ մշակութային օտարության մասին:

Տվյալները տե՛ս դիագրամ 2-ում:




(Դիագրամ 2)

Հարցին՝ «Հիմա շարունակո՞ւմ եք բարևել այնպես, ինչպես COVID-19-ի ժամանակ» տրված պատասխանները ցույց են տալիս, որ մասնակիցների մեծ մասը վերադառնալով նախահամավարակային սովորույթներին, միաժամանակ պահպանել է որոշ ճկունություն վարքագծում:

Այսպես, հարցվածների մոտ 45%-ը նշել է, որ վերադարձել է բարևելու ավանդական ձևերին, ինչը կարող է վկայել այն մասին, որ համավարակից հետո մարդիկ նախընտրել են վերադառնալ սոցիալական շփման սովորական ձևերին: Միևնույն ժամանակ, մոտ 69%-ը նշել է, որ փոփոխում է բարևելու ձևը ըստ իրավիճակի՝ հիմնականում առողջական վիճակի հետ կապված: Մա վկայում է այն մասին, որ Կովիդ-19-ի ժամանակ ձևավորված զգուշավորությունն ու հարմարվողականությունը դեռևս պահպանվում են:

Տվյալները տե՛ս հետևյալ դիագրամում.



(Դիագրամ 3)

Եզրակացություն: Կովիդ-19 համավարակը դարձավ հասարակական վարքի վերաի-մաստավորման և մշակութային հարմարվողականության յուրահատուկ փուլ: Բարևելու ժես-

տերի փոփոխությունը, որպես առօրյա հաղորդակցության հիմնարար տարր, դրսևորեց հասարակության ճկունությունը՝ արտաքին վտանգի պայմաններում հարմարվելու և նոր նորմեր ստեղծելու կարողությամբ: Եթե նախքան համավարակը ֆիզիկական շփումը դիտվում էր որպես մտերմության և վստահության կարևոր ցուցիչ, ապա համավարակի ընթացքում այն վերափոխվեց՝ ճանապարհ տալով նոր՝ ոչ կոնտակտային և երբեմն սիմվոլիկ ժեստերին:

Վերլուծելով այս փոփոխությունները՝ կարելի է եզրակացնել, որ սոցիալական վարքը, այդ թվում՝ բարևելու ձևերը, մշտապես փոփոխման ենթակա են և կախված են ոչ միայն մշակութային ավանդույթներից, այլև կոնկրետ ժամանակաշրջանի սոցիալական, առողջապահական և քաղաքական պայմաններից: Այս համատեքստում Կովիդ-19-ը հանդես եկավ որպես սոցիալական փոփոխությունների կատալիզատոր՝ վերանորոգելով հաղորդակցության մշակութային կոդերը:

Հետևաբար, բարևելու ժեստերի փոփոխությունն այս ժամանակահատվածում կարելի է դիտարկել ոչ միայն առողջապահական արձագանք, այլև՝ որպես մշակութային ինքնակազմակերպման յուրահատուկ ձև, որն արժանի է հետազա հասարակական և մարդաբանական ուսումնասիրության:

Gayane Grigoryan. Greeting gestures' Changes During COVID-19: Public-Cultural Analysis. -

During the COVID-19 pandemic, maintaining physical distance led to the emergence of new forms of social interaction. In this context, the culture of greeting also underwent significant changes, despite being one of the most fundamental and symbolic manifestations of human communication for centuries. The purpose of this article is to analyze the greeting gestures that developed during the pandemic, examine their social and cultural significance, and identify which gestures were used in Armenia during that period.

Keywords: gesture, greeting culture, social interaction, pandemic.

Гаяне Григорян. Изменение жестов приветствия во время COVID-19: общественно-культурный анализ. - Во время пандемии COVID-19 необходимость соблюдать физическую дистанцию привела к появлению новых форм социального взаимодействия. В этом контексте значительным изменениям подверглась и культура приветствия, которая веками была одной из самых основных и символических форм человеческого общения. Цель статьи — проанализировать жесты приветствия, сформировавшиеся в период пандемии, рассмотреть их социальное и культурное значение, а также выявить, какие жесты приветствия использовались в Армении в это время.

Ключевые слова: жест, культура приветствия, социальное взаимодействие, пандемия.

Հավելված

ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎ

Նպատակը: COVID 19-ի ժամանակ առաջացան բարև տալու նոր ժեստեր: Սույն հարցաթերթիկում խնդրում ենք նշել, թե բարևելու ինչ ժեստեր եք օգտագործել համավարակի ժամանակ:

1. Ձեր տարիքը

- ☐ մինչև 18
- ☐ 18–30
- ☐ 31–50
- ☐ 51 և ավելի

2. COVID-19-ի ժամանակ, ի՞նչ ձևով էիք բարևում մարդկանց (նշեք բոլոր կիրառված տարբերակները)

- ☐ Ձեռքսեղմում
- ☐ Ձեռք ձեռքի հարված
- ☐ Ձեռքի ափը բարձրացրած շարժել
- ☐ Ձեռքը սրտին դնել
- ☐ Բռունցքի հպում
- ☐ Արմունկով հպում
- ☐ Ոտքի թեթև հպում
- ☐ Ճապոնական խոնարհում
- ☐ «Նամաստե» (ձեռքերը միացնելով)
- ☐ Գլխի թեթև շարժում
- ☐ Այլ _____

3. ՀԻՄՆԱ շարունակու՞մ եք բարևել այնպես, ինչպես COVID 19-ի ժամանակ:

- ☐ Վերադարձել եմ հին տարբերակներին
- ☐ Շարունակում եմ COVID-ի ժեստերը գործածել
- ☐ Փոփոխում եմ ըստ իրավիճակի (օրինակ, երբ վատառողջ եմ)

4. Հավելյալ

Եթե ունեք որևէ հիշողություն կամ հետաքրքիր դեպք՝ կապված բարևելու նոր ձևերի հետ COVID-19-ի ժամանակ, կարող եք պատմել այստեղ՝

Օգտագործված գրականություն

Խաչատրյան Նարինե, Գրիգորյան Անի, Մանուսյան Սոնա, Հակոբջանյան Աննա, Պողոսյան Անի, ՔՈՎԻԴ-19-Ի ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՐՁԱԳԱՆՔԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ, ԵՊՀ հրատ., Ե., 2023:

http://publishing.yzu.am/files/COVID_19.pdf

Mondada. L., Geiger. S., & Souchon. N. (2020). Human sociality in the times of the Covid-19 pandemic: A systematic examination of change in greetings. *Journal of Social and Personal Relationships*, 37(5), 1262-1275. <https://doi.org/10.1177/0265407520917016>

Andrighetto. L., Gazzola. F., & Panno, A. (2024). Changes in Social Norms during the Early Stages of the COVID-19 Pandemic across 43 Countries. *Journal of Social Psychology*, 36(2), 113-130. <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/38365869/>

Özduran. K. (2023). Changing social practices: Covid-19 and new forms of sociality. *Cultural Sociology*, 15(3), 355-372. <https://avesis.aybu.edu.tr/yayin/eecaef42-c293-434c-97b7-c18487dd8ea7/changing-social-practices-covid-19-and-new-forms-of-sociality>

Anderson. R., & Brown. A. (2022). Social distancing, sociality, and new ways of greeting: A cultural adaptation during the COVID-19 pandemic. *Cultural Anthropology*, 25(1), 80-99. <https://journals.sagepub.com/doi/full/10.1177/03057356221101547>

**ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՌԻՄԱՍԻԻ
ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ֆրիդա Հակոբյան

Բանալի բառեր: Արհեստական բանականություն, լեզվական մոդել, բնական լեզվի մշակում, մեքենական ուսուցում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային բառարանագրություն, նոր բառեր:

Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառությունը արմատապես վերափոխում է էլեկտրոնային բառարանագրության բնագավառում կատարվող աշխատանքները: Դրանք մի կողմից՝ նպաստում են բառարանագրական աշխատանքների դյուրացմանը, օգտագործվում լեզվաբան-բառարանագիրների կողմից բառարանների կազմման ողջ ընթացքում (բառացանկի կազմում, մշակում, նոր բառերի առանձնացում, բառիմաստի բացատրություն, բազմիմաստ բառերի տարբեր իմաստների առանձնացում, գործածություն և այլն): Մյուս կողմից՝ արհեստական բանականությամբ աշխատող չաթբոտերը, որոնք օժտված են բնական լեզվի մշակման NLP և խորքային ուսուցման մոդուլներով, հենց իրենք են հանդես գալիս որպես բառարան՝ օգտատիրոջ հետ հարց-պատասխան երկխոսության միջոցով ներկայացնելով բառիմաստի բացատրությունը, բառի հնչյունական, բառագիտական, քերականական բնութագրերը, թարգմանությունը և այլն: Ստացվում է, որ ժամանակակից բառարանագրությունն աստիճանաբար դուրս է գալիս իր ավանդական սահմաններից՝ վերածվելով լեզվատեխնոլոգիական ամբողջական համակարգի, որի առանցքը ԱԲ-ն է:

Այս հոդվածում կներկայացնենք, թե ինչպես է կատարվում բառիմաստի բացատրությունը ԱԲ չաթբոտերում, և ինչպես կարող են բառարանագիրներն օգտագործել LLM-ները ինչպես բառարաններ կազմելիս, այնպես էլ առավել ամբողջական բառահոդված մշակելիս:

Բառի՝ լեզվի իմաստային հիմնական միավորի բնութագիրը տարբեր կերպ է ներկայացվում տպագիր, էլեկտրոնային բառարաններում և ԱԲ համակագերում: Տպագիր բառարանների դեպքում բառի բացատրությունը ներկայացվում է բացատրական բառարաններում, հոմանիշները՝ հոմանիշների բառարաններում, հականիշները՝ հականիշների բառարաններում, դարձվածքները՝ դարձվածաբանական բառարաններում, թարգմանությունը՝ թարգմանական բառարաններում:

Էլեկտրոնային բառարանները հնարավորություն են տալիս բառի վերոնշյալ բնութագրերը մեկտեղել և ներկայացնել բառիմաստի բացատրությունից հետո՝ առանձին բաժիններով: Օտարալեզու հեղինակավոր էլեկտրոնային բառարաններում ներկայացվում են ոչ միայն բառիմաստի բացատրությունը, այլև արտասանություն, հոմանիշները, հականիշները, այդ բառով կազմված կապակցությունները և դարձվածքները, թարգմանությունը, ստուգաբանությունը, քերականական բնութագիրը և այլն:

Հայ լեզվաբանության մեջ էլեկտրոնային բառարանագրության բնագավառում տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն տպագիր բառարանների սկանավորված տարբերակների էլեկտրոնային գրադարանի ստեղծումով: Ըստ իրենց ներկայացրած բառարանների բնույթի՝ պայմանականորեն կարելի է առանձնացնել այնպիսի կայքեր, որոնցում ներկայացվում են տպագիր բառարաններն առանց բովանդակային որևէ փոփոխության: Այդ

կայքերի թվին է պատկանում www.nayiri.com-ը¹: Կայքում ներկայացված բառարանները որևէ փոփոխության ենթարկված չեն: Որոնման արդյունքում էկրանին է հայտնվում թղթե տպագիր բառարանի սկանավորված տարբերակը: Այլ կերպ են ներկայացված բառերը bararan.am² կայքում: Այս կայքում բառահոդվածն ունի հետևյալ կառուցվածքը. տրվում է բառի բացատրությունը, ներկայացվում են հոմանիշները, հակահիշները, դարձվածքները, ռուսերեն և անգլերեն թարգմանությունները: Թարգմանությունները հիմնականում ներկայացնում են բառի հիմնական իմաստները: Պետք է նշել, որ բառիմաստի բացատրությունից բացի՝ իմաստային մյուս դաշտերը թերի են ներկայացվում, շատ դեպքերում դրանք դատարկ են:

Բառի բնութագիրը ոչ ամբողջական է տրվում նաև հայերեն Վիքիբառարանում³, որը համագործակցային նախագիծ է, և որի շրջանակներում ստեղծվում է ազատ բովանդակությամբ բազմալեզու բառարան: Նպատակն է ներկայացնել բոլոր լեզուների բոլոր բառերի բացատրությունները հայերենով: Վիքիբառարանում ներառված են նաև բառերի ձայնային տվյալները: Նպատակ ունենալով տալ բառի ամբողջական նկարագրությունը՝ ներկայացվում են բառի ստուգաբանությունը, արտասանությունը, քաղվածքներ տարբեր ստեղծագործություններից, բառի հոմանիշները և թարգմանությունները: Այս բառարանում ևս բառի նկարագրության ոչ բոլոր դաշտերն են լրացված:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ կան հայերեն տպագիր բառարաններ և դրանց սկանավորված կամ թվայնացված տարբերակները համացանցում, մինչդեռ բառարանագրության արդի պահանջներին համապատասխան էլեկտրոնային բառարան հայերենի համար դեռևս չի ստեղծվել:

Ի տարբերություն տպագիր և էլեկտրոնային բառարանների՝ ԱԲ չաթբոտերում բառահոդվածը որևէ ստանդարտ կառուցվածք չունի: Դրանք բառիմաստի բացատրությունը ներկայացնելիս հաշվի են առնում օգտատիրոջ հետաքրքրությունները և որոնման վարքագիծը՝ տալով բառիմաստի՝ ավելի անհատականացված բացատրություն: Օրինակ՝ նույն բառը փնտրելիս ուսանողը կարող է ստանալ գիտական, ակադեմիական ոճով բացատրություն, սովորական օգտատերը՝ պարզ և ավելի հասկանալի ոճով բացատրություն:

Այժմ տեսնենք, թե ինչպես են բառերը բացատրվում տպագիր բառարանում բառարանագրի կողմից, և ինչպես է ԱԲ չաթբոտը բացատրում բառը: Իբրև օրինակ՝ վերցրել ենք մի քանի նոր բառ «Նոր բառեր» պրակաշարից: **Էկոակտիվիստ** բառը «Նոր բառեր»-ի պրակներում բացատրվում է այսպես՝

ԷԿՈԱԿՏԻՎԻՍՏ, գ. **Բնապահպանական բնույթի գործունեություն իրականացնող անձ**: Գլազգոյում, որտեղ ընթանում է կլիմայի փոփոխության շուրջ համաժողովը, հազարավոր **Էկոակտիվիստներ** դուրս են եկել երթի (<https://artsakhpress.am/arm/news/153305/glazgoyum-aveliqan-20-ekoaktivist-e-dzerbakalvel.html>)⁴:

ChatGPT LLM-ում⁵ **Էկոակտիվիստ** բառի բացատրությունը ներկայացվում է այսպես՝

¹ <http://www.nayiri.com/>

² <https://bararan.am/>

³ <https://hy.wiktionary.org/wiki/>

⁴ Ա. Ս. Գալստյան, Վ. Մ. Բադրամյան, Ֆ. Ա. Հակոբյան, Գ.Կ. Հովսեփյան, Ի. Ա. Մարգարյան, Ա.Ա. Մկրտումյան, Ն. Ս. Մարգարյան, *Նոր բառեր*, Ը պրակ, Ե., 2023, էջ 40:

⁵ <https://chatgpt.com/>

Էկոակտիվիստ

1. Շրջակա միջավայրի պաշտպանության համար պայքարող կամ ակտիվ գործունեություն իրականացնող մարդ:

Օրինակ՝ *Էկոակտիվիստները* բողոքում էին նոր արդյունաբերական գործարանի կառուցման դեմ:

2. Բնապահպանական շարժման մասնակից, ով ներգրավված է հասարակական, քարոզչական կամ իրավական գործողություններում՝ ուղղված էկոլոգիական խնդիրների լուծմանը:

Օրինակ՝ Երիտասարդ *Էկոակտիվիստը* նախաձեռնել էր աղբի վերամշակման ծրագրեր դպրոցներում:

Էներգածրագիր բառը «Նոր բառեր»-ի պրակներում բացատրվում է այսպես՝

ԷՆԵՐԳԱԾՐԱԳԻՐ, գ. **Էներգիայի հետ կապված ծրագիր**: Զեկույցի հեղինակներից մեկը նշել է, որ շատ գործող և ծրագրվող **Էներգածրագրեր** չեն նպաստում կլիմայական նպատակներին (Հմց, news.am)⁶:

ChatGPT LLM-ում այն բացատրվում է այսպես՝

Էներգածրագիր

Էներգետիկայի ոլորտին վերաբերող ռազմավարական կամ ծրագրային փաստաթուղթ, որը սահմանում է էներգիայի արտադրության, սպառման, խնայողության և վերականգնվող աղբյուրների կիրառության հիմնական ուղղությունները:

Օրինակ՝ Կառավարությունն ընդունեց նոր *Էներգածրագիր*՝ մինչև 2035 թ. անցում կատարելու վերականգնվող աղբյուրների:

Էթնոգտիչ բառը «Նոր բառեր»-ի պրակներում բացատրվում է այսպես՝

ԷԹՆՈԶՏԻՉ, ած. **Ազգային գտում՝ մաքրում կատարող**: Թուրք-ադրբեջանական ազրե-սիան **Էթնոգտիչ** նկրտումներ հետապնդող գործողություն է (Հմց, tert.am)⁷:

ChatGPT LLM-ում այն բացատրվում է այսպես՝

Էթնոգտիչ

Անձ, ով իդեոլոգիական կամ քաղաքական դրդապատճառներով թշնամական վերաբերմունք ունի որոշակի էթնիկ խմբերի նկատմամբ, հանդես է գալիս ազգայնամոլ, ռասիստական կամ խտրական դիրքորոշումներով և ձգտում է տվյալ էթնոսի ներկայացուցիչներին դուրս մղել հասարակությունից կամ երկրից:

Օրինակ՝ *Էթնոգտիչների* քարոզչությունը հանգեցրեց լարվածության երկրում:

Նշումներ

- Տերմինը հաճախ գործածվում է քննադատական և զգուշացնող համատեքստերում՝ բնորոշելու **քսենոֆոբիա**, **ռասիզմ**, **էթնիկ գտումներ** և դրանց գաղափարախոսներին:

⁶ Տե՛ս նշվ. Աշխ., էջ 42:

⁷ Ա. Մ. Գալստյան, Ս. Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ի. Ա. Մարգարյան, Ա. Ա. Մկրտումյան, Ն. Մ. Մարգարյան, *Նոր բառեր*, Է պրակ, Ե., 2022, էջ 72:

- Գիտական ոլորտում գործածվում է քաղաքագիտության, սոցիոլոգիայի, մարդու իրավունքների և պատմության ուսումնասիրություններում:

Էնոքիմիկոս բառը «Նոր բառեր»-ի պրակներում բացատրվում է այսպես՝

ԷՆՈՔԻՄԻԿՈՍ, գ. **Էնոքիմիայի մասնագետ**: Այդ կանոնը սահմանել է *Էնոքիմիկոս* Դելլեն (Դասագիրք, էջ 128)⁸:

ChatGPT LLM-ում այն բացատրվում է այսպես՝

Էնոքիմիկոս

1. Գինու քիմիական բաղադրության, դրա ֆիզիկաքիմիական հատկությունների և արտադրության ժամանակ ընթացող քիմիական գործընթացների մասնագետ:

Օրինակ՝ Գինեգործական գործարանը համալրվել է փորձառու *Էնոքիմիկոսով*:

2. Քիմիկոս, ով մասնագիտացած է գինեգործության ոլորտում և կատարում է գինու որակի վերլուծության, խմորման, պահպանման և հնեցման քիմիական վերահսկողություն:

Օրինակ՝ *Էնոքիմիկոսը* չափեց գինու թթվայնությունը և ալկոհոլային բաղադրությունը՝ նախքան շալցումը:

Վերոնշյալ և հարյուրավոր այլ բառերի բառիմաստների բացատրությունների համեմատություններից կարող ենք նկատել, որ բառարանագիրները տալիս են բառիմաստի կարճ բացատրությունները, LLM-ները ներկայացնում են բառիմաստի առավել ընդարձակ բացատրությունը և ընդհանուր նկարագրությունը:

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում ընդգծել, որ ԱԲ համակարգերը կարող են հանդես գալ միայն իբրև *օժանդակ միջոց* և որևէ դեպքում չեն կարող ամբողջությամբ փոխարինել լեզվաբան-բառարանագիրների կատարած աշխատանքը, քանի որ LLM-ների կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ ունի մի շարք տեսական և գործնական սահմանափակումներ:

Չնայած ԱԲ համակարգերի լեզվական մոդելների՝ անընդհատ և շարունական զարգացմանը՝ որոշ դեպքերում դրանք չեն կարողանում տարբերակել մենիմաստ և բազմիմաստ բառերը, բազմիմաստ բառերի իմաստային տարբերությունները տվյալ համատեքստում, ուղիղ և փոխաբերական իմաստները և այլն: Հետևաբար, ԱԲ մոդելները կարող են առաջարկել կամ կատարել բառիմաստների բացատրություններ, սակայն նախքան դրանք բառարաններում ընդգրկելը պետք է ստուգվեն լեզվաբան-բառարանագիրների կողմից:

Ընդհանուր առմամբ՝ ԱԲ մոդելների արդյունավետությունը մեծապես կախված է այն լեզվական տվյալների որակից, որոնց վրա դրանք «սովորում են»: Եթե կորպուսում ներառված տեքստերի լեզուն աղավաղված է, կան մեծաթիվ լեզվական սխալներ, ապա լեզվական մոդելները թերի կլինեն: Այս խնդիրն ամենից առաջ բնորոշ է այն լեզուներին, որոնց համար դեռևս բավարար քանակությամբ որակյալ տեքստային կորպուսներ չեն ստեղծվել:

Հայերենի համար լուրջ մարտահրավեր է լեզվական կորպուսների բացակայությունը, քանի որ ԱԲ մոդելները հնարավոր է արդյունավետ կերպով «վարժեցնել» միայն տեքստային կորպուսներում եղած մեծածավալ լեզվական տվյալների հիման վրա: Այս առումով պետք է մեծապես կարևորել ակադեմիական և բուհական տարբեր հաստատությունների կողմից

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 73:

այնպիսի գիտական նախագծերի իրականացումը, որոնք կնպաստեն լեզվական ռեսուրսների թվայնացմանը և զանազան տեքստային հենքերի ստեղծմանը:

Hakobyan F. The Role of AI Systems in the Process of Machine-Based Word Meaning Explanation.- Artificial intelligence (AI) technologies are fundamentally transforming the field of electronic lexicography. They facilitate lexicographic work by assisting linguists in compiling wordlists, analyzing word meanings, distinguishing polysemy, providing usage examples, and more. AI-powered chatbots, equipped with natural language processing (NLP) and deep learning modules, can themselves function as interactive dictionaries, offering definitions, phonetics, grammatical features, and translations. Modern lexicography is gradually evolving into a comprehensive language technology system centered around AI. This article examines how AI chatbots explain word meanings and how lexicographers can use these explanations and usage examples to create more complete dictionary entries. Traditional print dictionaries present definitions and semantic relationships in structured ways, while electronic dictionaries combine multiple features into unified entries. In Armenian, most electronic lexicography has so far been limited to digitized versions of print dictionaries. AI chatbots, in contrast, provide personalized and context-sensitive definitions tailored to user queries. However, AI cannot fully replace human lexicographers, as it may struggle with polysemy, figurative language, and cultural nuances. The effectiveness of AI models depends heavily on the quality and size of language corpora, highlighting the need for digitized linguistic resources and academic projects to support languages like Armenian.

Keywords: artificial intelligence, natural language processing, deep learning, machine learning, electronic lexicography, dictionary entry, polysemy, corpus analysis, personalized definitions, language technologies.

Акобян Ф. Роль искусственного интеллекта в процессе машинного объяснения значений слов.- Технологии искусственного интеллекта (ИИ) радикально преобразуют сферу электронной лексикографии. Они облегчают работу лексикографов, помогая составлять словари, анализировать значения слов, различать омонимы, предоставлять примеры употребления и выполнять другие задачи. Чатботы на основе ИИ, оснащённые модулями обработки естественного языка (NLP) и глубокого обучения, могут сами функционировать как интерактивные словари, предоставляя определения, фонетику, грамматические характеристики и переводы. Современная лексикография постепенно превращается в комплексную языковую технологическую систему, в центре которой находится ИИ. В статье рассматривается, как чатботы объясняют значения слов и как лексикографы могут использовать эти объяснения и примеры употребления для создания более полных словарных статей. Традиционные печатные словари представляют определения и семантические связи в структурированном виде, тогда как электронные словари объединяют несколько характеристик в одной статье. В армянской лексикографии работы в области электронных словарей пока ограничены оцифрованными версиями печатных словарей, часто лишёнными полной семантической информации. Чатботы на основе ИИ, напротив, предоставляют персонализированные и контекстно-зависимые

определения, адаптированные под запросы пользователей. Однако ИИ не может полностью заменить лексикографов-человеков, так как может испытывать трудности с омонимией, переносным значением и культурными нюансами. Эффективность моделей ИИ сильно зависит от качества и объёма языковых корпусов, что подчёркивает необходимость оцифровки лингвистических ресурсов и реализации академических проектов для поддержки таких языков, как армянский.

Ключевые слова: искусственный интеллект, обработка естественного языка, глубокое обучение, машинное обучение, электронная лексикография, словарная статья, многозначные слова, корпусный анализ, персонализированные определения, языковые технологии.

Օգտագործված գրականության ցանկ

Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի.Ա., Մկրտումյան Ա.Ա., Սարգսյան Ն.Ս., Նոր բառեր. Է պրակ, Ե., 2022, 260 էջ:

Գալստյան Ա. Ս., Բաղրամյան Վ.Ս, Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի. Ա., Մկրտումյան Ա.Ա., Սարգսյան Ն. Ս., Նոր բառեր. Ը պրակ, Ե., 2023, 140 էջ:

<https://chatgpt.com/>

<http://www.nayiri.com/>

<https://bararan.am/>

<https://hy.wiktionary.org/wiki/>

Բանալի բառեր: Արհեստական բանականություն, ԱԲ տեխնոլոգիաներ, լեզվական մոդելներ, բնական լեզվի մշակում, մեքենական ուսուցում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային բառարանագրություն:

Ժամանակակից վեբ տեխնոլոգիաները զարգացման միանգամայն նոր մակարդակի են հասցրել լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքները: Վերջին տարիներին դրանք լայնորեն կիրառվում են նաև էլեկտրոնային բառարանագրության բնագավառում: Էլեկտրոնային բառարանագրությունը համակարգչային լեզվաբանության ամենաարագ զարգացող ուղղություններից է: Այն զբաղվում է էլեկտրոնային բառարանների ստեղծմամբ, բառարանային հոդվածների կազմմամբ, բառահոդվածների ներկայացման եղանակների մշակմամբ¹:

Համակարգչային բառարանագրության վաղ փուլում համակարգիչներն ու համակարգչային ծրագրերն օգտագործվում էին բառարանագրական աշխատանքների կատարման ժամանակ: Այնուհետև, էլեկտրոնային բառարանագրության մեջ սկսեցին լայնորեն կիրառվել վեբ տեխնոլոգիաները, որոնք հնարավոր դարձրին էլեկտրոնային բառարանների ստեղծումը և ապահովեցին դրանց համացանցային հասանելիությունը: Արդի փուլում արհեստական բանականության (ԱԲ) համակարգերն արմատապես վերափոխում են այս բնագավառում կատարվող աշխատանքները, քանի որ դրանք ոչ միայն հանդես են գալիս իբրև բառարանների կազմման աջակցող ծրագրեր, այլև շատ դեպքերում փոխարինում են լեզվաբան-բառարանագրին: Եթե բնական լեզվի մշակման գործիքներն օգտագործվում են լեզվաբանի կողմից՝ իբրև օժանդակ միջոց բառարանագրական աշխատանքների կատարման ժամանակ, արհեստական բանականության համակարգերը կարող են կատարել բառարանագրական բոլոր աշխատանքները բառարանագրի փոխարեն²:

Տեսնենք, թե որոնք են ԱԲ համակարգերը և ինչպես են դրանք աշխատում: Արհեստական բանականության ծրագրերի հիմքում ընկած են լեզվի մեքենական ուսուցման տեխնոլոգիաներն ու ալգորիթմները: Մեքենական խորը ուսուցումը (deep learning) համակարգչային գիտության արագ զարգացող հեռանկարային ուղղություններից է: Գիտնականներին մշտապես հետաքրքրել է, թե ինչ է բանականությունը, ինչպես է աշխատում մարդու ուղեղը, ինչպես կարելի է տեխնոլոգիաների օգնությամբ կրկնօրինակել մարդու ուղեղի աշխատանքը և ստեղծել արհեստական բանականություն: Ըստ էության՝ արհեստական բանականության համակարգերն աշխատում են նեյրոնային ցանցերի միջոցով, որոնք կրկնօրինակում են մարդու ուղեղի աշխատանքը: Տեխնոլոգիական ոլորտի առաջատար ընկերությունները հսկայական

¹ **Ֆ. Հակոբյան**, *Նոր բառերի ներկայացման եղանակները հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանում* // Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 54:

² **Ֆ. Հակոբյան**, *Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ* // Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 154:

ջանքեր են գործադրում արհեստական բանականության համակերգեր ստեղծելու և դրանք տարբեր ոլորտներում կիրառելու ուղղությամբ³:

Արհեստական բանականության համակարգերի թիվը գնալով մեծանում է, դրանց կատարած գործառնությունները ևս բազմազան են, ուստի կանոնադրաբանական ամենահայտնիներին:

Վերջին շրջանում իր տարածվածությամբ աչքի է ընկնում ChatGPT (անգլ.՝ Chat Generative Pre-trained Transformer) արհեստական բանականությամբ օժտված լեզվական մոդելը, որը մշակվել և գործարկվել է OpenAI-ի կողմից: Այն ստեղծվել է բնական լեզվի մշակման ոլորտում նորարարական խնդիրներ լուծելու նպատակով: Այս բազմագործառնությամբ չաթբոթը կարող է հասկանալ և ստեղծել մարդկային լեզվով գրավոր տեքստ, պատասխանել հարցերի, օգնել լուծել խնդիրներ, ստեղծել բովանդակություն, թարգմանել, խմբագրել և նույնիսկ տրամադրել տեխնիկական աջակցություն տարբեր ոլորտներում՝ կրթությունից մինչև բիզնես, ծրագրավորումից՝ բժշկություն և այլն: ChatGPT-ն անցել է երկարաժամկետ նախապատրաստական փուլ, որի համար օգտագործվել են համացանցում եղած տեքստային հսկայածավալ տվյալներ: Այս փուլում մոդելը «սովորում է» մարդկային բնական լեզուն, տիրապետում աշխարհի և ընդհանրապես ամեն ինչի մասին համացանցում եղած տեղեկատվությանը, ձեռք բերում մարդկանց հարցերին ճիշտ և տրամաբանված պատասխանելու կարողություն: Այն մարդու նման չի մտածում, սակայն կարողանում է մեծ հստակությամբ և տրամաբանվածությամբ հետևել մարդու կողմից տրված հարցերին, պատասխանել դրանց: Պատասխանների որակը կախված է նրանից, թե որքան ժամանակ և ինչ տվյալների հիման վրա է մոդելը «սովորել»⁴:

Թեպետ բնական լեզվի մշակման (Natural Language Processing, NLP) և մեծածավալ լեզվական մոդելների (Large Language Models, LLMs) ոլորտում ChatGPT-ն ներկայումս համարվում է ամենահայտնի և լայն կիրառություն ստացած համակարգերից մեկը, սակայն կան մի շարք այլ մեծածավալ լեզվական մոդելներ (LLM), որոնք համարվում են ChatGPT-ի հիմնական այլընտրանքներն ու մրցակիցները ժամանակակից արհեստական բանականության ոլորտում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Gemini (Google DeepMind)

Gemini մոդելաշարը (նախկինում՝ Bard) մշակվել է Google DeepMind հետազոտական լաբորատորիայի կողմից: Այն Google-ի առաջատար նախագիծն է բնական լեզվի մշակման և բազմամոդալ (multimodal) AI համակարգերի զարգացման ոլորտում: Gemini-ն միավորում է տեքստային, վիզուալ և ձայնային տվյալների մշակման կարողությունները՝ դարձնելով այն ոչ միայն լեզվական, այլև ընդհանրական մոդել: Այս մոդելն օգտվում է Google որոնողական համակարգի հսկայածավալ տվյալների բազաներից, ուստի ապահովում է տվյալների մշակման բարձր ճշգրտություն: Gemini-ն լայնորեն կիրառվում է կրթական, գիտահետազոտական, բիզնես և մի շարք այլ ոլորտներում⁵:

³ Russell S., Norvig P., Artificial Intelligence: A Modern Approach, 2021, p. 3.

⁴ <https://chatgpt.com/>

⁵ <https://gemini.google.com/>

LLaMA (Meta AI)

LLaMA-ն (անգլ.՝ Large Language Model Meta AI) մեծածավալ լեզվական մոդել է, որը մշակվել է Meta Platforms ընկերության (նախկին Facebook) կողմից: Meta-ի նպատակն է եղել ստեղծել մատչելի և հետազոտական նպատակներով հասանելի LLM, որը թույլ կտա գիտնականներին և ինժեներներին զարգացնել իրենց սեփական մոդելները՝ առանց կորպորատիվ սահմանափակումների: LLaMA-ն աչքի է ընկնում իր արդյունավետությամբ և բարձր ճշգրտությամբ՝ դարձնելով այն նպաստավոր ինչպես ակադեմիական, այնպես էլ առևտրային նպատակներով կիրառությունների համար⁶:

Claude (Anthropic)

Claude լեզվական մոդելաշարը ստեղծվել է ամերիկյան Anthropic ընկերության կողմից՝ նախկին OpenAI մասնագետների նախաձեռնությամբ: Claude մոդելները (Claude 1, 2, 3) կարողանում են մշակել և ստեղծել մեծածավալ տեքստեր, ամփոփել փաստաթղթերի բովանդակությունը, գրել կոդ, մեկնաբանել բարդ գիտական նյութեր և տալ փաստարկված պատասխաններ⁷:

Mistral (Mistral AI)

Mistral մոդելները նախատեսված են տարբեր կիրառությունների համար՝ ծրագրավորման և մաթեմատիկական հաշվարկներից մինչև փաստաթղթերի վերլուծություն և երկխոսության իրականացում: Mistral Small 3.1 մոդելը, օրինակ, ունի 128,000 տոկենի համատեքստային պատուհան՝ հնարավորություն տալով մշակել երկար տեքստեր և պատկերներ⁸:

Grok (xAI)

Grok մոդելաշարը մշակվել է xAI ընկերության կողմից: Այն ինտեգրված է X (նախկին Twitter) սոցիալական ցանցին: Grok մոդելն ունի հասանելիություն համացանցային տեղեկատվությանը, ինչը թույլ է տալիս այն օգտագործել որպես առաջադեմ որոնողական համակարգ: Grok մոդելը նաև օժտված է բազմալեզվությամբ և հնարավորություն է տալիս մշակել բազմաբառարանային տվյալներ: Grok 3 մոդելը, որը նույնպես մշակվել է xAI ընկերության կողմից, համարվում է նախորդ մոդելների առավել կատարելագործված տարբերակը: Այն օժտված է բարձր հաշվարկային կարողություններով՝ օգտագործելով ավելի մեծ թվով պարամետրեր և բարելավված ալգորիթմներ: Grok 3 մոդելը նախատեսված է հատկապես գիտական, մաթեմատիկական և ծրագրավորման խնդիրների լուծման համար⁹:

Ասիական շուկայում զարգանում են նաև չինական խոշոր լեզվական մոդելներ, այդ թվում՝ Baichuan, Zhipu (ChatGLM), Tongyi (Alibaba), և Yi մոդելները, որոնցից ամենատարածվածը և հայտնին DeepSeek¹⁰ չինական մեծածավալ լեզվական մոդելն է՝ մշակված DeepSeek-VL AI ընկերության կողմից: DeepSeek-ը արագ զարգացող հավակնոտ նախագիծ է տեխնոլոգիական շուկայում, որը նպատակ ունի մրցակցել արևմտյան խոշոր LLM մոդելների հետ, ինչպիսիք են՝ GPT, Gemini կամ Claude համակարգերը:

⁶ <https://www.llama.com/>

⁷ <https://claude.ai/>

⁸ <https://mistral.ai/>

⁹ <https://grok.com/>

¹⁰ <https://www.deepseek.com/>

Ինչ խոսք, այս համակարգերը և դրանց միջոցով կատարվող լեզվական աշխատանքները հանգամանալից կերպով ներկայացնելը միանգամայն այլ բնույթի աշխատանքի նյութ կարող է հանդիսանալ: Այս հոդվածում կանդիդատնանք այն ԱԲ տեխնոլոգիաներին, որոնք կիրառվում են էլեկտրոնային բառարանագրության մեջ և արմատապես վերափոխում են այս բնագավառում տարվող աշխատանքները:

Էլեկտրոնային բառարանագրության ոլորտում կիրառվող ԱԲ տեխնոլոգիաներից ամենահիմնականը, ըստ էության, բնական լեզվի մշակման (Natural Language Processing, NLP) տեխնոլոգիան է:

Բնական լեզվի մշակումն ԱԲ-ի այն ճյուղն է, որի նպատակն է հասկանալ և մեքենական եղանակով վերլուծել մարդկային լեզուն: NLP գործիքակազմի միջոցով հնարավոր է մշակել լեզվական տվյալները մեծածավալ տեքստային կորպուսներում, գտնել բառային միավորները, կատարել դրանց ձևաբանական և շարահյուսական վերլուծություն, վերականգնել բառի ուղիղ ձևը, կատարել բառիմաստի բացատրություն և իմաստաբանական կապերի բացահայտում:

Նախնառաջ, NLP տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մեքենական եղանակով իրականացնել խոսքիմասային պիտակավորում (Part-of-Speech, POS): Այնուհետև, NLP տեխնոլոգիաների միջոցով կատարվում է բառի իմաստային և շարահյուսական վերլուծություն: Շարահյուսական վերլուծության ժամանակ բացահայտվում են նախադասության կառուցվածքային հարաբերությունները (dependency parsing), կազմվում է նախադասության կախումների ծառը, իսկ իմաստային վերլուծությամբ արվում է բառերի իմաստային հարաբերությունների բացահայտում և վերլուծություն: Այդպիսով ավանդական բառարանների փոխարեն ստեղծվում են բառային հենքեր, որոնցում բառերը ներկայացվում են որպես իրար հետ իմաստային-հասկացական հարաբերությունների մեջ գտնվող իմաստային ցանց: Այդպիսի հենքերից են WordNet-ը, BabelNet-ը և այլն:

Արհեստական բանականության առավել զարգացած այլ տեխնոլոգիաներից են մեքենական ուսուցումը (Machine Learning) և խորքային ուսուցումը (Deep Learning), որոնք ևս լայնորեն կիրառվում են էլեկտրոնային բառարանագրության բնագավառում: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս լեզվական մոդելներին ավտոմատ կերպով սովորել լեզվական օրինաչափությունները՝ մեծածավալ լեզվական տվյալների հիման վրա:

Էլեկտրոնային բառարանագրության մեջ կիրառվող ԱԲ վերոնշյալ տեխնոլոգիաները նպաստում են մի կողմից՝ բառարանագրական աշխատանքների դյուրացմանը՝ մեքենայացնելով բազմաթիվ գործընթացներ, մյուս կողմից՝ կարող են ներկայացնել բառի՝ լեզվի իմաստային հիմնական միավորի սպառիչ բնութագիրը:

Այսպես, ԱԲ համակարգերը կատարում են բառերի մեքենական հավաքագրում և վերլուծություն, համացանցային աղբյուրներից առանձնացնում, խմբավորում և վերլուծում են մեծածավալ տեքստեր, անում բառիմաստի ինքնուրույն նկարագրություն: Տպագիր բառարանագրության հիմնական խնդիրներից մեկը բազմիմաստ բառերի տարբեր իմաստների բացատրությունն է Word Sense Disambiguation (WSD): Երբ բառը մի քանի իմաստ ունի, անհրաժեշտ է պարզել՝ կոնկրետ համատեքստում որ իմաստով է գործածվում: ԱԲ-ում կիրառվող մի շարք մոդելներ, օրինակ՝ BERT կամ RoBERTa մոդելները, կարող են վերլուծել ամբողջ նախադասությունը կամ պարբերությունը՝ պարզելու, թե տվյալ բառը որ իմաստով է գործածվել:

Այս տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր է նույն բառի տարբեր իմաստները ներկայացնել տվյալ իմաստին համապատասխան հոմանշային շարքերով, տալ բառիմաստի բացատրությունը, ներկայացնել գործածության օրինակները: Դրանք հաջողությամբ օգտագործվում են ոչ միայն բառի տարբեր իմաստները բացատրելու, այլև մեքենական թարգմանություններում թարգմանվող լեզվական միավորի ճիշտ համարժեքը գտնելու համար:

Ինչպես հայտնի է, տպագիր և էլեկտրոնային բառարաններում բառարանագիրներն իրենք են տարբեր աղբյուրներից քաղում բառի գործածության օրինակներ, որոնք, ըստ իրենց, լավագույնս ներկայացնում են բառիմաստի բացատրությունը: Մինչդեռ, ԱԲ համակարգերը կարող են համացանցային տարբեր աղբյուրներից գտնել և ներկայացնել բառագործածության օրինակները: Ավելին՝ նորագույն ԱԲ մոդելները, մասնավորապես՝ GPT ընտանիքի գեներատիվ մոդելները, կարող են մեքենական եղանակով ստեղծել բառի գործածության օրինակներ: Այս մոդելները լեզվական օրինակներ ստեղծելիս հաշվի են առնում ոչ միայն բառի նշանակությունը, այլև դրա քերականական ձևը, գործածության ոլորտը և համատեքստը: Արդյունքում ստեղծվում են քերականորեն և ոճականորեն ճիշտ կազմված օրինակներ, որոնք կարող են ամբողջությամբ նպաստել բառիմաստի ճիշտ ընկալմանը և ներկայացմանը:

ԱԲ համակարգերը կարող են նաև համեմատել լեզվական միավորների՝ լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում կրած փոփոխությունները՝ հնարավորություն տալով բառարանագիրներին ստեղծելու լեզվի տարբեր փուլերի բառապաշարը ներկայացնող բառարաններ: ԱԲ համակարգերի միջոցով հնարավոր է նաև հետևել իրական ժամանակում լեզվում կատարվող փոփոխություններին. դրանք կարող են մեքենական եղանակով ավելացնել նոր բառեր եղած բառարաններում կամ բացահայտել բառի նոր իմաստները՝ ներկայացնելով դրա գործածության համատեքստը: Ընդլայնվող մեդիա միջավայրում լեզուն մշտապես փոխվում է, ստեղծվում են նոր բառեր և արտահայտություններ, տերմիններ, որոնք չեն կարող անմիջապես արտացոլվել ավանդական բառարաններում: ԱԲ համակարգերը, օգտագործելով բնական լեզվի մշակման (NLP) տեխնոլոգիաները, կարող են ուսումնասիրել համացանցային զանազան աղբյուրներում (լրատվական կայքեր, սոցցանցեր, բլոգ, տեքստային և խոսակցական կորպուսներ) եղած էլեկտրոնային տեքստերը, դուրս բերել դրանցում գործածված նոր բառերը կամ բառերի՝ նոր իմաստով գործածությունները: Եթե թվային մեդիայում սկսում է հաճախ գործածվել որևէ նոր բառ կամ տերմին (օրինակ՝ «մետավերս»), ԱԲ-ն այն համարում է նոր բառ, ուսումնասիրում դրա գործածության հաճախականությունը, կատարում բառիմաստի բացատրություն և առաջարկում այն՝ իբրև նոր բառահոդված:

Եզրակացություն: Այսպիսով՝ արհեստական բանականության ժամանակակից տեխնոլոգիաները (NLP, մեքենական ուսուցում, խորքային մոդելներ, chatbot-մեսինջերներ), բացում են զարգացման միանգամայն նոր հնարավորություններ էլեկտրոնային բառարանագրության բնագավառում: LLM լեզվական մոդելները ոչ միայն ընդլայնում են էլեկտրոնային բառարանների կիրառական հնարավորությունները, այլև նպաստում են առավել նորարարական, ինտերակտիվ բառարանների ստեղծմանը, որոնք համապատասխանում են 21-րդ դարի լեզվատեխնոլոգիական պահանջներին և կարող են օգտակար լինել ինչպես լեզվաբանների, այնպես էլ գիտական հանրության առավել լայն շրջանակների համար:

Hakobyan F. The Application of Artificial Intelligence Technologies in Electronic Lexicography. - The article focuses on the ways web technologies have revolutionized computational linguistics, especially the field of electronic lexicography. Electronic lexicography, one of the fastest-growing branches of computational linguistics, focuses on creating, organizing, and presenting digital dictionaries. With the rise of artificial intelligence, this field has entered a new era. AI systems, particularly those based on machine learning and deep learning, can now perform tasks once handled by human lexicographers. Natural Language Processing (NLP) enables machines to analyze linguistic data, identify word meanings, and establish semantic relationships. Large Language Models (LLMs) like ChatGPT, Gemini, LLaMA, Claude, Mistral, and Grok demonstrate how AI transforms language processing. These models generate, interpret, and classify words with remarkable precision. In electronic lexicography, they automate data collection, meaning interpretation, and example generation. AI also tracks language evolution, detecting new words and senses in real time. Overall, AI-driven lexicography represents a major advancement toward intelligent, interactive dictionaries for the 21st century.

Keywords: artificial intelligence, natural language processing, machine learning, electronic lexicography, corpus analysis, multilingual dictionaries.

Акобян Ф. Применение технологий искусственного интеллекта в электронной лексикографии. - В статье исследуется, как современные веб-технологии произвели революцию в компьютерной лингвистике, особенно в области электронной лексикографии. Электронная лексикография — одно из самых быстро развивающихся направлений компьютерной лингвистики, занимающееся созданием, организацией и представлением цифровых словарей. С развитием искусственного интеллекта эта область вышла на новый уровень. Системы ИИ, основанные на машинном и глубоком обучении, теперь способны выполнять задачи, которые ранее выполняли лексикографы. Технологии обработки естественного языка (NLP) позволяют машинам анализировать лингвистические данные, определять значения слов и устанавливать семантические связи. Крупные языковые модели (LLM), такие как ChatGPT, Gemini, LLaMA, Claude, Mistral и Grok, демонстрируют, как ИИ преобразует обработку языка. Эти модели способны с высокой точностью генерировать, интерпретировать и классифицировать слова. В электронной лексикографии они автоматизируют сбор данных, интерпретацию значений и создание примеров. ИИ также отслеживает эволюцию языка, выявляя новые слова и значения в реальном времени. В целом, лексикография, основанная на ИИ, представляет собой значительный шаг вперёд к созданию интеллектуальных и интерактивных словарей XXI века.

Ключевые слова: искусственный интеллект, обработка естественного языка, машинное обучение, электронная лексикография, корпусный анализ, многоязычные словари.

Օգտագործված գրականություն

1. de Schryver G.-M., Generative AI and Lexicography: The Current State of the Art Using ChatGPT, International Journal of Lexicography, Oxford University Press, 2023, 36(4), pp. 355–387.
2. Lew R., AI and the Future of Lexicography: Opportunities and Limitations, Lexikos, 2024, 34(1), pp. 45–67:
3. Rundell M., Recent Trends in Lexicography: From Data to Artificial Intelligence, The Bloomsbury Handbook of Lexicography, Bloomsbury Academic, London, 2020, pp. 413–433:
4. Becker M., & Faaß G., Lexicography Meets AI: Using Large Language Models for Word Sense Explanation, Proceedings of eLex 2022, Brno, Lexical Computing, 2022:
5. **Հակոբյան Ֆ.**, Նոր բառերի ներկայացման եղանակները հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանում, Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 53-66:
6. **Հակոբյան Ֆ.**, Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ, Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 153-161:
7. <https://chatgpt.com/>
8. <https://gemini.google.com/>
9. <https://www.llama.com/>
10. <https://claude.ai/>
11. <https://mistral.ai/>
12. <https://grok.com/>
<https://www.deepseek.com/>

**ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հրայր Բալոյան (Հրայր Արմենյան)

Բանալի բառեր: Հատկական փոխառություն, իմաստ, իրույթ, բառային միավոր, երկիր:

Նախաբան: Լեզվական իրակությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում հատկական փոխառությունները: Դրանք այն բառային միավորներն են, որոնք ցույց են տալիս այս կամ այն ազգին, ժողովրդին, երկրին, պետությանը հատուկ, բնորոշ իրույթներ՝ կյանքի տարբեր բնագավառներին առնչվող իրեր, առարկաներ, երևույթներ, սովորույթներ, զբաղմունքներ, կառույցներ, հաստատություններ և այլն. այդ իրույթների մեջ հազվադեպ մտնում են նաև այս կամ այն ազգին, ժողովրդին, երկրին, պետությանը հատուկ, բայց, նրանց կամքից անկախ, իրենց տարածքում առաջացած, գոյություն ունեցող, դրսևորվող իրույթներ՝ բույսեր, բուսական աշխարհի առարկաներ, բնական երևույթներ, կենդանիներ և այլն՝ *սակուրա, ագավա, անտոնովկա, ջունգլի, ցունամի, զամփռ, կենգուրու, կռալա, դինգո, կակադու, բաբիրուս* և այլն. այստեղից էլ նշյալ լեզվական իրակության գիտական անվանումը՝ *հատկական փոխառություն*. կան նաև *էկզոտիզմ, օտար բառեր, օտարաբանություններ, տարաշխարհիկ բառեր* եզրույթներ¹:

Խնդրո առարկա բառային միավորների մասին խոսել է Էդուարդ Աղայանը. ըստ նրա՝ հատկական են կոչվում այն փոխառությունները, որոնք «ցույց են տալիս այս կամ այն երկրին հատուկ երևույթներ, այս կամ այն ժողովրդին հատուկ սովորույթներ, կենցաղային սովորույթներ, իրեր, արտադրանքներ և այլն, և այլն»²: Այդտեսակ բառային միավորների մասին խոսել է նաև Ֆրիդրիխ Խլդաթյանը՝ դրանք անվանելով *տարաշխարհիկ բառեր*³:

Հիշյալ փոխառությունները հայերենագիտության մեջ լայն ուսումնասիրության առարկա են դարձել մոտավորապես վերջին մեկ տասնամյակում. առանձին հոդվածներով դրանց անդրադարձել են Սիլվա Պապիկյանն ու Արևիկ Քամալյանը⁴:

¹ Տե՛ս ստորև հղվող **Ս. Պապիկյանի, Ա. Քամալյանի** հոդվածները, **Ֆ. Խլդաթյանի** գիրքը, նաև՝ **Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու: (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն)** Ե., 1999, էջ 208–209: **Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան, Արդի հայերենի բառապաշարը: Ջարգացման միտումներ: Հիմնախնդիրներ**, Ե., 2020, էջ 101–102:

² **Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն**, Ե., 1984, էջ 169, նաև **Գ. Բ. Զահուկան, Է. Բ. Աղայան, Վ.Դ. Սոսքեյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու**, Ի մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 330:

³ Տե՛ս **Ֆ. Խլդաթյան, Ժամանակակից հայոց լեզու**, Ա մաս, Ե., 2009, էջ 192–193:

⁴ Տե՛ս **Ա. Քամալյան, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ)** // «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», № 2, 2015, Ե., էջ 66–80: **Ս. Պապիկյան, Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն** // Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 10, 2021, Գավառ, էջ 341–349: **Նույնի, Հատկական փոխառությունների քննություն** // Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, 2021, Գավառ, էջ 313–323: **Նույնի, Իրանական ծագման հատկական փոխառությունների քննություն** // Լեզու և լեզվաբանություն, համ. 1, 2022, Ե., էջ 77–85: **Նույնի, Թյուրքական ծագման հատկական փոխառությունների քննություն** // Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023, Գավառ, էջ 310–320: **Նույնի, Ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունների քննություն** // Վեմ համահայկական հանդես, N4, 2023, Ե., էջ 325–338:

Հատկական փոխառությունների ցույց տված իրույթները հատուկ են այդ իրույթները ստեղծած ազգին, ժողովրդին, երկրին, պետությանը, ունեն գործածության ազգային, պետական սահմանափակվածություն, մինչդեռ ոչ հատկական փոխառությունների ցույց տված իրույթները չունեն նմանատիպ սահմանափակվածություն, դրանք կարող են, նամանավանդ ժամանակի ընթացքում, գործածվել և յուրացվել այլ ազգերի ու պետությունների, նույնիսկ ողջ աշխարհի կողմից: Հատկական փոխառությունների ցույց տված իրույթները, որպես կանոն, հազվադեպ են յուրացվում այլ ազգերի, ժողովուրդների, երկրների, պետությունների կողմից, հետևաբար հազվադեպ են յուրացվում նաև այդ իրույթները ցույց տվող բառերը՝ *բումերանգ, բորշ, պիցցա, սենդվիչ, տեկիլա* և այլն:

Հատկական փոխառություններն առնչվում են կյանքի գրեթե բոլոր բնագավառներին՝ ծեսեր, սովորություններ, տոներ՝ *հարակիրի, սեպուկու, կորիդա, տոմատինա, Բարեկենդան, Շաբաթ, Ռոշ հաշանա, Չարշամա մարսալեն կամ Մալաքե թաուս, Խա բը-նիսան*, ազգային կրոններ՝ *մանտրա, նիրվանա, րաբբի, մալաք թավուս, թալմուդ, սինագոգ*, կերակրատեսակներ, խմիչքներ՝ *տոլմա, խաշ, բարբիքյու, սուշի, վասսաբի, տոկպոկի, սպագետտի, մոցարելլա, պիցցա, ջելատո, սակե, մալագա, բորդո, խինկալի, պարեր՝ յարխուշտա, վերվերի, թամզարա, լորկե, քոչարի, ուզունդարա, իշխանաց պար, սիրտակի, սամբա, ռումբա, կանկան, պոկա, երաժշտական գործիքներ՝ դուդուկ, սիտար կամ սիթառ, բալալայկա, կոչում, տիտղոս, պաշտոն, դիմելաձև՝ բոյար, կոնստերլ, շերիֆ, դոժ, կոմիսար, լորդ, պատրիկ, ցենտուրիոն, նագիր, վեզիր, ջենտլմեն*, որոշակի զբաղմունքի, կարգավիճակի տեր մարդիկ *տրուբադուր, մոտադոր, կովբոյ, սամուրայ, ռիկշա, կուլակ, բուդակ, ջիգիթ, ենիչերի*, մարգաձևեր՝ *սումո, կենդո, ջիու-ջիգու, կարատե, ուշու, քունգֆու, նինջա, ռեգբի, կոխ, թայ չի* հագուստ *կիմոնո, սարի, կիպա, ֆես*, կենդանիներ՝ *գամփո, կենգուրու, կոալա, դինգո, կակադու, բաբիրուս*, զենքեր, զինատեսակներ՝ *մաչետե, տոմահավկ, յաթադան, զբաղմունք՝ յոգա, այուրվեդա*, բնության երևույթներ՝ բույսեր, բուսական աշխարհի առարկաներ՝ *ջունգլի, սակուրա, ցունամի*, կյանքի այլ բնագավառների վերաբերող իրույթներ՝ *հայրեն, կաբուկի, Չուչխե, Սոնգուն, կլկլան, քոթեջ* և այլն:

Ի տարբերություն մյուս՝ ոչ հատկական փոխառությունների՝ հատկական փոխառությունները, որպես կանոն, գործածվում են միայն որոշ առիթներով, երբ խոսքը այս կամ այն ազգին, ժողովրդին, երկրին, պետությանը բնորոշ՝ տվյալ հատկական փոխառությամբ ցույց տրված իրակության կամ դրան առնչվող իրողության մասին է: Հիշյալ փոխառությունները սահմանափակ գործածություն ունեցող բառեր են, մաս են կազմում բառապաշարի ոչ գործուն շերտի: Տրված բնութագրման առնչությամբ՝ կկամենայինք մի նրբություն մատնացույց անել՝ այս կամ այն լեզվում գործածվող՝ որևէ ազգի, ժողովրդի, երկրի, պետության հատուկ իրույթներ ցույց տվող ամեն մի բառ դեռ այդ լեզվի բառապաշարի բաղկացուցիչ չէ. բառային միավորի հիշյալ կարգավիճակը որոշելու համար պետք է հիմք ընդունել այդ միավորի գործածության հաճախականությունն ու լեզվակիր հանրությանը ծանոթ լինելը. տվյալ պահի դրությամբ ընդամենը մեկ կամ մի քանի անգամ գործածված լինելը բավարար հիմք չէ բառային միավորը բառապաշարի մաս համարելու համար, քանի որ այդ բառային միավորը դեռևս չի արմատավորվել այն գործածող հանրության լեզվի բառային կազմի մեջ, չի յուրացվել դրա կողմից, չի կազմել դրա մաս: Հենց նմանատիպ բառերին կպատշաճեն *էկզոտիզմներ, տարաշխարհիկ բառեր* եզրույթները:

Եթե հատկական փոխառության ցույց տված իրույթը վերջինս գործածող ուրիշ ժողովրդի, ազգի կողմից տարբեր գործունեների բերումով չի գիտակցվում, ընդունվում իբրև այլ ժողովրդի, ազգի կողմից ստեղծված, նրան պատկանող, այլ համարվում է իրենը, սեփականը, ապա այդ իրույթը ցույց տվող բառային միավորը այն գործածող ուրիշ ժողովրդի, ազգի համար դադարում է հատկական փոխառություն լինելուց, կրող է նույնիսկ ընդհանրապես դադարել փոխառություն լինելուց: Բառը դադարում է հատկական փոխառություն լինելուց նաև այն դեպքում, երբ դրա ցույց տված իրույթը յուրացվում է այլ ազգի, ժողովրդի կամ ազգերի, ժողովուրդների կողմից, դառնում նրանց առօրյայի մասը: Այս երևույթը հաճախադեպ է մարգաձերի պարագայում. որոշ մարգաձեր՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, թենիս և այլն, առաջացել են այս կամ այն երկրում, սակայն հետագայում յուրացվել են գրեթե ողջ աշխարհի կողմից, հետևաբար դրանք անվանող բառերը հատկական փոխառություններ չեն:

Մարդկային գործունեության տարբեր բնագավառների տարբեր չափով են բնորոշ հատկական փոխառությունները, քանի որ մարդկային գործունեության տարբեր բնագավառներ տարբեր չափով են ազգային, տարբեր չափով ունեն ազգային բնույթ. ազգային են հատկապես տոները, ծեսերը, սովորությունները, արարողությունները, խոհանոցը, գրականությունը, արվեստը, երբեմն՝ կրոնը. կոնկրետ այս կամ այն ազգին, ժողովրդին հատուկ իրույթներ կարող են, որպես կանոն, այդ բնագավառներում լինել, հետևաբար այդ բնագավառներն են ավելի շատ ունենում հատկական փոխառություններ: Նվազ ազգային կամ ապազգային բնագավառներից են սպորտը, պետական համակարգը, տնտեսությունը և այլն. հասկանալի է՝ այս բնագավառներում հատկական փոխառություններ գրեթե չեն լինում կամ առհասարակ չեն լինում:

Հետաքրքիր հարց է հատկական փոխառությունների թարգմանելիության հարցը: Այստիպիբառերը, ըստ էության, տեսակ ցույց տվող բառեր են, այսպես ասենք, ազգային տեսակ ցույց տվող բառեր. ցույց են տալիս այս կամ այն իրույթի՝ այս կամ այն ազգին պատկանող, բնորոշ տեսակը, որ առանձնանում է իր մի շարք յուրահատկություններով, ուստի նմանատիպ բառերը որոշ չափով ունեն կոկրետացնող արժեք, որով մոտենում են հատուկ անուններին, բայց հատուկ անուններ չեն դառնում, քանի որ չեն անվանում միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրը՝ մյուսներից տարբերելու համար, այլ, ինչպես ասացինք, ցույց են տալիս տեսակ: Եվ քանի որ այս բառային միավորները ցույց են տալիս տեսակ և մոտենում են հատուկ անուններին, հետևաբար չեն թարգմանվում, որոշ դեպքերում ուղղակի չեն կարող թարգմանվել, քանզի նախատեսած են այդ իրույթները ցույց տալու, անվանելու համար և ուրիշ բառով փոխարինումը մի տեսակ խախտում է իրույթի և այն ցույց տվող, անվանող բառային միավորի կապը, կարող է նաև անհասկանալիության, շփոթի պատճառ դառնալ. պարզ չի լինի, թե խոսքը որ իրույթի մասին է. կոնկրետ տեսակը նկատի ունենալու, ցույց տալու համար պետք է հենց այդ տեսակը նշանակող բառը գործածել, օրինակ՝ *դուդուկ* երաժշտական գործիքը ցույց տվող, անվանող բառային միավորը *դուդուկ*-ն է, որ մի տեսակ հատուկ անուն է դարձել այդ իրույթի համար, ամրացել նրան և այս բառային միավորը թարգմանելը, այլ բառային միավորով փոխարինելը փաստորեն կնշանակի իրույթի ու նրա անվան կապի խախտում, ընդհանուր առմամբ կարելի է ասել նաև բառի անվանողական դերի անտեսում, նշանակիչի ու նշանակյալի կապի խախտում:

Սակայն լինում են հատկական փոխառությունների թարգմանության դեպքեր. սովորաբար թարգմանվում են վերը արդեն նշած նվազ ազգային կամ ապազգային բնագավառներին պատկանող հատկական փոխառությունները, ասվածի վառ օրինակներից են մարգանունները. մի շարք մարգաձևերի անուններ թարգմանվել են հայերեն՝ *բոքս*՝ *բոնգրամարտ* կամ *կոփամարտ*, *գիմնաստիկա*՝ *մարմնամարզություն*, *բադմինտոն*՝ *փետրագնդակ* (վերջինս տարածված չէ) և այլն: Անթարգմանելի են ազգային բնույթ ունեցող բնագավառներին պատկանող հատկական փոխառությունները՝ տոներ, ծեսեր, սովորույթներ, արարողություններ, կերակրատեսակներ, գրականության ու արվեստի ժանրեր, ազգային կրոններին առնչվող իրույթներ ցույց տվող. սրանք ավելի մոտ են հատուկ անուններին:

Տարածվածության տեսանկյունից էլ տարբեր են հատկական փոխառությունները. կան ոչ տարածված և տարածված հատկական փոխառություններ, վերջիններից մի քանիսը տարածված են համարյա ամբողջ աշխարհում՝ *բումերանգ*, *ջունգլի*, *ցունամի*, *տեկիլա*, *պիցցա* և այլն: Իրենց տարածվածության և յուրացվածության շնորհիվ սրանք դադարել են հատկական փոխառություններ լինելուց, քանի որ դրանց ցույց տված իրույթները դադարել են միայն դրանք ստեղծած ազգին, ժողովրդին, երկրին, պետությանը հատուկ լինելուց, այդ իրույթների մասին չի խոսվում միայն որոշ առիթներով: Եթե նմանատիպ իրույթները լայն ճանաչում ունեն, բայց յուրացված չեն, մնում են հատկական փոխառություններ՝ *հարակիրի*, *կորիդա*, *սամուրայ*, *ռիկշա*, *գեյշա*, *կիմոնո*, *սարի* և այլն:

Հատկական փոխառությունները, ինչպես մյուս բառերը, բովանդակության պլանում կարող են զանազան զարգացումներ ունենալ՝ ձեռք բերել նոր իմաստներ, գործածվել փոխաբերական իմաստներով՝ ստեղծելով ռճավորում, և այլն. դիտարկենք այդպիսի մի քանի բառ՝

Մաֆիա. Իտալերեն բառը, նշանակում է «հանցագործ մարդկանց, գողերի՝ ավագանների՝ կողոպտիչների խումբ, հանցախումբ...»⁵: Այս բառը ի սկզբանե, երբ դրա ցույց տված հասարակական երևույթը նոր էր առաջացել (Մաֆիական առաջին կազմակերպությունները ձևավորվել են Իտալիայի Սիցիլիա կղզում XVIII դ.), հատկական փոխառություն էր այն գործածող օտար լեզուների համար, հետո, երևույթի տարածմամբ պայմանավորված, դարձավ ոչ հատկական փոխառություն (այդպես անվանվեցին XX դ. ԱՄՆ -ի կազմակերպված հանցագործ խմբերը, ապա՝ այլ երկրների). ինչպես տեսանք, տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: Արդի հայերենում այս բառն այլ իմաստ էլ է ստացել՝ «մարդկանց մի խումբ, որը տնօրինում է այս կամ այն բնագավառը՝ հիմնականում տնտեսական, և օգտվում դրա բարիքներից»՝ «Այսինքն, ձեւավորվել է այսպես կոչված նկարիչների *մաֆիա*, որը հերթագրել է ծանոթ, մտերիմ նկարիչներին եւ ամեն մրցանակաբաշխության ժամանակ հենց նրանց են շնորհում մրցանակները՝ սխալ պատկերացումներ ձեւավորելով մեր արվեստի, մասնավորապես՝ թատրոնի եւ կինոյի մասին»⁶, «Մոմերի *մաֆիա* Բրազիլիայում»⁷ (վերնագիր), ջրի *մաֆիա*⁸, գազի *մաֆիա*⁹ և այլն: Կա նաև մեկ այլ իմաստ՝ ժողովրդախոսակացական լեզվում՝ «պետության այս կամ այն

⁵ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 353:

⁶ <https://armtimes.com/hy/article/47218>

⁷ <https://www.facebook.com/watch/?v=692911956481280>

⁸ <https://www.aysor.am/am/news/2019/07/02/%D5%8B%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%86%D5%AB%D5%A1/1582424>, <https://www.aravot.am/2018/08/28/977382/>

⁹ <https://www.aravot.am/2013/12/24/417831/?s>

դեկավարի տրամադրության տակ գտնվող, նրա կողմից կառավարվող հանցավոր խմբավորում»։ Բմաստային զարգացում է ապրել նաև *մաֆիոզ* բառը՝ դարձյալ ժողովրդախոսակցական լեզվում՝ «խարդախ, խորամանկ, զարտուղի ճանապարհներով, օրենքները շրջանցելով, որոշ դեպքերում բռնությամբ իր ուզածին հասնող, իր նպատակներն իրականացնող մարդ»։

Խունտա. իսպաներեն բառ՝ «տեղական ինքնակառավարման մարմինների անվանում Իսպանիայում, Իտալիայում և լատինաամերիկյան մի շարք երկրներում», «պետական հեղաշրջման միջոցով իշխանությունը զավթած զինվորականների խումբ»¹⁰։ Արդի հայերենում այս բառը երբեմն գործածվում է «իշխանությունը զավթած և ապօրինի պահող մարդկանց խումբ», «ավագակապետական վարչակարգ, ավագակապետական իշխանություն» իմաստներով՝ նկատի ունենալով հայրենի որոշ իշխանությունների՝ «Մի խումբ *խունտա* խաբեությամբ զենքի կիրառմամբ զավթել է ժողովրդի իշխանությունը»¹¹, «Որ ասում էի Հայաստանում «*խունտա*» է ձևավորվում»¹² և այլն։

Մադամ. ֆրանսերեն բառ՝ «ամուսնացած կնոջը դիմելու հարգական ձև Ֆրանսիայում և այլ երկրներում»¹³, «որ իբրև օտարաբանություն գործածվում է գրականության մեջ զանազան ոճական նպատակներով՝ տիկին»¹⁴։ Բառը հաճախ է հանդես գալիս հեզնական, բացասական իմաստով (նաև այլ լեզուներում)՝ «*Մադամը*, լինելով իշխող դավադիր ռեակտիվ գործ պարագլուխներից մեկը, դեռ մի հատ էլ «պոռոշ է անում», նեղվում է, թե առողջ մթնոլորտ չկա»¹⁵, «Էս *մադամը* երեկ Սոլովյովի մոտ ասում էր, որ լավ են արել խփել են եկեղեցուն»¹⁶, «Վերջապես պարզվեց թե, ինչու է այս *մադամը* հրատապ ժամանում Երևան»¹⁷, *Մադամ* Կամորա՝ նեապոլիտանական մաֆիայի առաջին կին պարագլուխ Ասունտա Մարեսկայի մականուններից մեկը¹⁸ և այլն։

Ֆյուրեր. գերմաներեն բառ. «ֆաշիստական Գերմանիայի առաջնորդի (Հիտլերի) տիտղոսը»¹⁹, նրան դիմելու ձևը։ Գործածվում է նաև փոխաբերական իմաստով՝ բնականաբար ստանալով բացասական երանգավորում՝ «դաժան, բռնակալ դեկավար, բռնապետ»՝ «Ո՞վ և ինչպե՞ս է զսպելու թուրք *ֆյուրեր* Էրդողանին»²⁰, «Հիմա, բնականաբար, նոր թիրախ է պետք

¹⁰ Վ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բաբաջանյան, Ս. Աստվածատուրով, *Քաղաքագիտություն։ Հանրագիտական բառարան*, Ե., 2004, էջ 174։ Տե՛ս նաև <https://hraparak.am/post/629a2420a4992086870900cdcff967ab>, <https://www.1in.am/2405910.html>,

<https://www.panorama.am/am/news/2025/04/19/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D4%B1%D5%B5%D5%BE%D5%A1%D5%A6%D5%B5%D5%A1%D5%B6/3129474>, <https://168.am/2025/04/05/2195391.html>, <https://www.1in.am/3571313.html>

¹¹ <https://www.1in.am/2263020.html>

¹² <https://irakanum.am/post/219312>

¹³ Դ. Գյուրջինյան, *Մեծատա՛ն, թե՛ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու*, Ե., 2005, էջ 101։

¹⁴ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011 էջ 341։

¹⁵ <https://livenews.am/2020/72385/01/17/08/>

¹⁶ <https://www.freeneews.am/post/eb9cc3a6d5c3a9527aa8a69c86af5fdb>

¹⁷ <https://newsmedia.am/?p=2504342&l=am/verjapes+parzvec+te+inchu+e+ays+madamy+hratap+gamanum+erevan>

¹⁸ <https://tert.am/am/news/2021/12/31/mafia/3750143>, <https://lurer.com/article/446807/en>, <https://news.am/arm/news/680217.html> և այլն

¹⁹ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011 էջ 263։

²⁰ <https://livenews.am/2021/140354/04/18/46/>

«մայն *Ֆյուրերին*», որպեսզի շարունակի պահել իր ընտրագանգվածի փշրանքները...»²¹ և այլն: *Ֆյուրեր* բառը այս իմաստով գործածվում է նաև այլ լեզուներում՝ «Լավրովը ֆոն դեր Լայենին անվանել է «*Ֆյուրեր* Ուրսուլա»²², «Էրդոդանը «մեր օրերի *Ֆյուրեր*» է անվանել Նեթանյահուին»²³ և այլն: Կա նաև *Ֆյուրերություն* բառը՝ «Ֆյուրեր լինելը, առաջնորդություն»²⁴:

Խանում. թուրքերենից փոխառյալ բառ. «ամուսնացած կնոջը դիմելու հարգական ձև՝ տիկին», ունի նաև այլ իմաստներ՝ «ծաղրական մակդիր, որ դնում են տան անդամների վրա», «փխբ. բարեբարո՝ ծանրաբարո կին», «խանում-խաթուն՝ իրեն իշխանուհու նման պահող՝ գործից խուսափող կին՝ աղջիկ»²⁵, «ծանրաբարո, շնորհալի (կնոջ մասին)», «պարապ անցկացնող՝ գործ չանող կին», «տիրուհու նման պարապ-սարապ», «հարգական մակդիր, որ դրվում է տիրուհիներին աղախիներին և օտարների կողմից»: Գործածվում է նաև մեկ այլ հեգնական, բացասական իմաստով՝ «արժանիքներ չունեցող, հարգանքի ոչ արժանի կին»՝ «Մեհրիբան *խանումը*. ինչո՞ւ է Ալինն այսքան ծանրաբեռնում փխրուն կնոջը»²⁶, ««Շատերը չեն հասկացել, թե ինչ է բարբաջել Մակունց-*խանումը*»²⁷, «Փաստորեն, *խանումին* Լա Սկալա էր խոստացել»²⁸, «Ժաննա *խանումին* պատժելը դաս կլինի մյուս տականքների և դավաճանների համար»²⁹ և այլն:

Ջունգլի. հինդի և մարատիի լեզուներից անգլերենին անցած բառ. «անանցանելի մացառուտներ կամ ճահճուտ ու շատ խիտ անտառներ, «(փխբ.) անթափանցելի՝ խորհրդավոր ու գաղտնի գործունեության խճճված միջավայր»³⁰: Բառն ստացել է նաև այլ փոխաբերական իմաստ՝ «վայր, ուր չկան օրենքներ, խիղճ ու բարոյականություն, այլ իշխում է ուժն ու բռնությունը, դրանցով են կարգավորվում մարդկային, միջանձնային հարաբերությունները»՝ «Գրեգորի Դիկեոսի խորհուրդը դիմորդներին. «Գնացեք երազանքի հետեւից, բայց հիշե՛ք՝ կյանքը *ջունգլի* է»³¹: «Աշխարհը չի դադարելու *ջունգլի* լինելուց»³², «Այստեղ գործում է *Ջունգլի*ի օրենքը՝ իրենք ուժեղ են, ինչ կուգեն, ինչքան կուգեն, կվերցնեն»³³, «Եթե բռնությունը դառնա քաղաքական պրակտիկա՝ Հայաստանը պետությունից կվերածվի *ջունգլիի*»³⁴ և այլն:

²¹ <https://168.am/2025/06/04/2224805.html>

²² <https://news.am/arm/news/871171.html>

²³ <https://news.am/arm/news/803091.html>

²⁴ Է. Բ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 2, էջ 1606:

²⁵ Է. Բ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 1, էջ 563: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1972, էջ 482:

²⁶ <https://armilur.am/948411/>

²⁷ <https://azg.am/news/%D5%B7%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B9%D5%A5%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%AF%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC-%D5%A9%D5%A5-%D5%AB%D5%B6%D5%B9-%D5%A7-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A2%D5%A1%D5%BB%D5%A5%D5%AC/>

²⁸ <https://www.blognews.am/arm/news/646781/pastoren-khanumin-la-skala-er-khostacel-narek-samsonyan-photo.html>

²⁹ <https://www.hayeli.am/?p=100600&l=am>

³⁰ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 465:

³¹ <https://mediamax.am/am/news/education/57387/>

³² <https://www.irates.am/hy1581023365/1731574229>

³³ <https://www.pastinfo.am/hy/news/2024/05/16/fm58vfuk0/1765468>

³⁴ <https://168.am/2014/12/12/436090.html>

Գուրու, սանսկրիտ բառ, նշանակում է «ուսուցիչ, հոգևոր դաստիարակ, խրատատու»³⁵, հինդուիզմում և բուդդայականությունում. գործածվում է նաև «առաջատար դեմք, հեղինակություն, առաջնորդ» իմաստներով՝ երբեմն՝ հեզնական, բացասական երանգավորմամբ՝ «Միբելի կրթության գուրուններ... սա հատուկ ձեզ համար է...»³⁶, «Տարբեր ծախու գրչակներ ու պլագիատի գուրուններ տոտալ լծվել են Արցախի գործոնի հերթական քարկոծմանն ու հակաարցախյան թեզերի նոր «պորցիայի» գեներացմանը»³⁷, «Օ՛, կինոյի գուրուններ»³⁸, «Պարոն Հովհաննիսյանի որոշումից դժգոհ մնացած որոշ դինոզավրերի դարի իրավաբանության գուրուններ սկսեցին օրինական ուժի մեջ գտնվող դատական ակտը քննարկել ամեն պատեհ և անպատեհ առիթով՝ ընդհուպ մինչև Ազգային Ժողովի ամբիոնից»³⁹ և այլն:

Կամիկաձե. ճապոներեն բառ, նախապես նշանակել է «աստվածային քամի», այնուհետ՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմի Ժամանակ թշնամու նավերը խորտակող մահապարտ օդաչու»⁴⁰: Ի սկզբանե հատկական փոխառություն եղող այս բառը իմաստային զարգացման շնորհիվ ձեռք բերել է նոր իմաստ՝ «մահապարտ». ընդլայնել է բառիմաստը՝ «Անկարայում վնասազերծել են կամիկաձեի, ով ցանկացել է պայթեցնել նախարարների կաբինետի շենքը»⁴¹: Բառը ունի նաև փոխաբերական իմաստ՝ «ինքնագոհողության պատրաստ, հանուն արժեքների կյանքը տվող մարդ»՝ «Օմբուդսմենները շատ բանով կամիկաձեներ են հիշեցնում»⁴²: Այս բառը ևս երբեմն օգտագործվում է հեզնական, բացասական իմաստով՝ «Ասք Տարոն-Կամիկաձեի մասին»⁴³, «Իշխանությունները կամիկաձեի պահվածք են ընդունում»⁴⁴ և այլն: Երբ ստեղծվեցին անօդաչու ռազմական սարքերը, որոնք պայթում էին՝ թիրախը ոչնչացնելու համար, ապա այս բառը սկսեց գործածվել նաև որոշակի զինատեսակ ցույց տալու համար՝ ԱԹՄ հապավման հետ. տեղի է ունեցել բառի իմաստափոխություն՝ գործառական կամ ֆունկցիոնալ հիմունքով՝ ԱԹՄ-կամիկաձե՝ «Հնդկաստանը կարող է ԱԹՄ-կամիկաձեներ և «Ակաշ» համակարգեր մատակարարել Հայաստանին»⁴⁵, «Թուրքիան Ալբանիային զգալի թվով կամիկաձե ԱԹՄ-ներ կտրամադրի»: Երբեմն միայն կամիկաձե բառն են գործածում վերջին

³⁵ Ա.Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 132:

³⁶ <https://hayeli.am/?p=603032&l=am>

³⁷ <https://168.am/2024/09/14/2097133.html>

³⁸ <https://www.tomsarkgh.am/hy/event/41693/MOVIE-QUIZ-Tribute-to-Stan-Lee.html>

³⁹ <https://azg.am/news/%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80-%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%B8%D5%BE%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B6%D5%AB%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%A1-%D5%B6%D5%A1/>

⁴⁰ Ա. Հայրապետյան, նշվ. աշխ., Ե., 2011, էջ 267:

⁴¹ <https://www.1in.am/231929.html>

⁴² <https://news.am/arm/news/546515.html>

⁴³ <https://blognews.am/arm/news/502110/%D4%B1%D5%BD%D6%84%20%D5%8F%D5%A1%D6%80%D5%B8%D5%B6-%D4%BF%D5%A1%D5%B4%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B1%D5%A5%D5%AB%20%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6>

⁴⁴ <https://a1plus.am/hy/article/92441>

⁴⁵ <https://lurer.com/?p=486624&l=am>

իմաստով՝ «ՊՆ փոխնախարարը՝ Հնդկաստանից *կամիկաձեներ* գնելու տեղեկության մասին»⁴⁶, «*Կամիկաձեներ* են խոցվել Մոսկվայի երկնքում»⁴⁷ և այլն:

Հատկական փոխառությունները գործածվում են նաև տիպականացման նպատակով՝ չնայած այս դեպքում էլ ոճավորում կա՝ իսպաներեն *կոմանդանտե* բառը նշանակում է հրամանատար: Նշված բառով էին անվանում կուբայական հեղափոխության առաջնորդ Ֆիդել Կաստրոյին՝ «Ազատության կղզու *կոմանդանտեն*. Ֆիդել Կաստրոյի անցած ուղին.....»⁴⁸, «*Կոմանդանտեն* հաջողություն է մաղթում Օբամային»⁴⁹, «Ֆիդել Կաստրոյի սիրուհին պատմել է *Կոմանդանտեն* թունավորելու փորձի մասին»⁵⁰ և այլն: *Կոմանդանտե* են անվանել նաև Լատինական Ամերիկայի մի շարք այլ քաղաքական ու պետական առաջնորդների: Արդի հայարենում այսբառը գործածվել է նաև «համաշխարհային գրականության ամենամեծ իսպանալեզու գրող» իմաստով՝ աշխարհահռչակ գրող Գաբրիել Գարսիա Մարկեսին բնութագրելու համար՝ «Համաշխարհային գրականության *Կոմանդանտեն*» (վերնագիր)⁵¹:

Հետագայում, ժամանակի ընթացքում հիշյալ փոխաբերական իմաստները կարող են դադարել փոխաբերական լինելուց, վերածվել մակաձական կամ հավելական իմաստների, հետո՝ նաև դառնալ բառի հիմնական իմաստներից մեկը:

Եզրակացություն: Այսպիսով՝ հատկական փոխառությունները ցույց են տալիս այս կամ այն ժողովրդին, ազգին, երկրին, պետությանը հատուկ, բնորոշ իրություններ՝ կյանքի տարբեր բնագավառներին առնչվող իրեր, առարկաներ, երևույթներ, սովորույթներ, ավանդույթներ, զբաղմունքներ, կառույցներ, հաստատություններ և այլն: Ժամանակակից հայոց լեզվում ևս կան հատկական փոխառություններ, որոնք առնչվում են կյանքի գրեթե բոլոր բնագավառներին: Նշված փոխառություններից մի քանիսը արդի հայերենում ենթարկվել են **իմաստային** զարգացման, ձեռք բերել գործածության լայն ասպարեզ:

Hrachya Baloyan (Hrachya Armenian). About the semantic and usual features of specific loanwords.—Specific loanwords indicate realias specific to a this or that nation, people, country, state. These realias rarely include realias that are specific and characteristic of a this or that nation, people, country, state, but that arose, exist and are manifested in their territory independently of their will. The realias indicated by specific loanwords are specific to the nation, people, country, state that created them, and have national and state limitations of use. Specific loanwords relate to almost all areas of life. Specific loanwords are as a rule used only in certain cases. The aforementioned loanwords are words of limited use, forming part of the inactive layer of the vocabulary. The specific loanword can cease to be a specific loanword, can even cease to be a loanword at all. Different areas of human activity are characterized by different degrees by specific loanwords. Specific loanwords are not translated, but there are cases of translation. There are uncommon and common specific loanwords.

⁴⁶ <https://factor.am/569158.html>

⁴⁷ https://www.youtube.com/watch?v=vLa83t_tUWo&ab_channel=5TVChannel

⁴⁸ <https://tert.am/am/news/2016/11/26/castro-pictures/2204603>

⁴⁹ <https://www.aysor.am/am/news/2009/01/23/kastro/4748>

⁵⁰ <https://tert.am/am/news/2014/02/21/kastro-lornec/1010914>

⁵¹ <https://www.irates.am/hy/1748784921>

Specific loanwords can acquire new meanings, be used in a metaphorical sense, creating stylization. Specific loanwords are also used in order to typification. Later, over time, the aforementioned figurative meanings may cease to be figurative, to turn into derived meanings, and then also become one of the main meanings of the word.

Keywords: specific loanword, meaning, realia, word unit, country.

Рачья Балоян (Рачья Арменян). О смысловых и употребительных особенностях свойственных заимствований.—Свойственные заимствования показывают реалия, свойственные, характерные для той или иной нации, народа, страны, государства. К числу таких реалий редко относятся также реалия, свойственные и характерные для той или иной нации, народа, страны, государства, но возникающие, существующие и проявляющиеся на их территории независимо от их воли. Реалия, показываемые свойственными заимствованиями, свойственны нации, народу, стране, государству, которые их создали, имеют национальные и государственные ограничения использования. Свойственные заимствования касаются почти всех сфер жизни. Свойственные заимствования как правило используются только в определенных случаях. Вышеуказанные заимствования являются словами ограниченного употребления, составляют часть неактивного слоя лексики. Свойственное заимствование может перестать быть свойственным заимствованием, может даже вообще перестать быть заимствованием. К разным областям человеческой деятельности в разной степени характерны свойственные заимствования. Свойственные заимствования не переводятся, но бывают случаи перевода. Существуют не распространенные и распространённые свойственные заимствования. Свойственные заимствования могут получать новые значения, использоваться в метафорических значениях, создавая стилизацию. Свойственные заимствования также используются в целях типизации. В дальнейшем, с течением времени указанные переносные значения могут перестать быть переносными, превратиться в производные значения, а затем и стать одним из основных значений слова.

Ключевые слова: свойственное заимствование, значение, реалия, лексическая единица, страна.

Օգտագործված գրականություն

- Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Ե., 1976, հ. 2, Ե., 1976:
Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ., Արդի հայերենի բառապաշարը: Չարգացման միտումներ: Հիմնախնդիրներ, Ե., 2020:
Գյուրջինյան Դ., Մեծատա՞ն, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան–տեղեկատու, Ե., 2005:
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1972:
Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, Ե., 2009:
Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Ե., 2011:
Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բարաջանյան Ա., Աստվածատուրով Ա., Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, Ե., 2004:

Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980:

Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու: (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Ե., 1999:

Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, № 2, Ե., 2015 :

Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 10, Գավառ, 2021:

Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, Գավառ, 2021:

Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, N 14, Գավառ, 2023:

Լեզու և լեզվաբանություն, համ. 1, Ե., 2022:

ՎԷՄ համահայկական հանդես, N4, Ե., 2023:

<https://armlur.am>

<https://armtimes.com>

<https://azg.am>

<https://a1plus.am>

<https://blognews.am>

<https://factor.am>

<https://hraparak.am>

<https://irakanum.am>

<https://livenews.am>

<https://lurer.com>

<https://mediamax.am>

<https://newsmedia.am>

<https://news.am>

<https://tert.am/am>

<https://www.aravot.am>

<https://www.aysor.am>

<https://www.blognews.am>

<https://www.facebook.com>

<https://www.freeneews.am>

<https://www.hayeli.am>

<https://www.irates.am>

<https://www.pastinfo.am>

<https://www.panorama.am>

<https://www.tomsarkgh.am>

<https://www.youtube.com>

<https://www.1in.am>

<https://168.am>

Բանալի բառեր. Արդի հայերեն, փոխառություն, նորակազմություն, պատճենում, բառի թափանցիկություն, լեզվի ինքնամաքման միտում, լեզվաշինական քաղաքականություն:

Նախաբան: Սույն հոդվածն այն մասին է, թե հասկանալիության առումով ինչ փոխհարաբերության մեջ են հայերեն բառերը և դրանց փոխառյալ հոմանիշները: Փաստերով, օրինակներով ու հիմնավորումներով ցույց է տրվում, որ օտար բառերը (փոխառությունները, օտարաբանությունները), որպես կանոն, ծածկագրեր, մուֆ բծեր են, որ առաջացնում են տեղեկատվական մշուշ և նվազեցնում խոսքի հասկանալիությունը: Պատճառն այն է, որ դրանք բառակազմորեն ու ստուգաբանորեն թափանցիկ չեն, թաքցնում են իրենց ներքին ձևը և բնիմաստը¹: Մինչդեռ դրանց համարժեք հայերեն բառերը՝ նորակազմությունները, ներառյալ՝ պատճենումները, ինքնըստինքյան հասկանալի, ինքնաստուգաբանվող են շնորհիվ ձևային ու իմաստային կառուցվածքների թափանցիկության, բաղադրիչների ճանաչելիության, այլ բառերի հետ համակարգային փոխկապակցվածության: Դրանք անհամեմատ դյուրըմբռնելի, տպավորիչ ու հիշվող են մանավանդ տվյալ հասկացությանն առաջին անգամ առնչվող հայախոսի տեսակետից:

Դրանք նաև նպաստում են հայերեն բառակազմական մանրահամակարգերի և հարացույցների կայացմանն ու համասեռությանը: Ահա թե ինչու է հայերենում գործում ինքնամաքման միտումը, և ինչու պիտի նպաստել դրա ծավալմանը:

Բացահայտված ու վերլուծված են նաև այլ վնասներ, որ լեզվին պատճառում են փոխառությունները:

Հետազոտության ընթացքը և արդյունքները: Հաղորդակցման գլխավոր նպատակն է տեղեկույթը հասցեատիրոջը փոխանցել հնարավորինս լիարժեք: Դրա համար տեղեկույթի խոսքային ձևակերպումները պետք է լինեն ամբողջապես հասկանալի, չունենան հակասություններ, «մուֆ բծեր»:

Այլ հարց է, եթե տվյալ խոսքի նպատակը հասցեատիրոջը մոլորեցնելն է, ապակոդմուրոշելը, նրանից որոշ ճշմարտություններ թաքցնելը: Այս դեպքում շատ հարմար գործիքներ են աննկատ հակասությունները, մեղմասությունը և օտար բառերը:

Օրինակ՝ **գրավադրային վարկ** ասելու փոխարեն օգտագործում են **հիպոտեկային վարկ** «անմեղ» արտահայտությունը, որն անմիջապես չի հուշում տունը գրավ դնելու պայմանի առկայությունը:

¹ Խոսքը վերաբերում է առավելապես նոր և նորագույն փոխառություններին: Դրանց տարբերակման մասին տե՛ս **Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն)**, Ե., 1982, էջ 260-265: Հին և հնագույն փոխառությունների մի մասը, հարմարվելով հայերենի համակարգին, յուրացվել է, դարձել բառապաշարի մաս և այլևս չի ընկալվում որպես օտարամուտ տարր: Օրինակ՝ *եկեղեցի, երանգ, կմախք, ոչխար, ապակի, գոհար, աշխարհ, պատասխան, թշնամի, արկղ, տիտղոս, քահանա, մատուռ, շաբաթ, կիրակի, մեղեդի, նարինջ* և այլն:

Պաշտոնագրկում ասելու փոխարեն օգտագործում են անորոշ իմաստով **իմպիչմենտ** «մեղմասությունը»՝ հանրության տատանվող զանգվածին չխրտնեցնելու համար: Կամ **տարածքի հանձնում** ասելու փոխարեն գործածում են «տարածքի վերահսկման արտապատվիրակում» խաբուսիկ արտահայտությունը՝ խուճապ չառաջացնելու համար:

Տնտեսագետները երկար ժամանակ նախընտրում էին **ինֆլյացիա** բառը՝ խուսափելով դրա հայերեն տարբերակներից, քանի որ դրանք անկեղծ էին ու տագնապահարույց: Հետո անցան **սղաճ** տարբերակին, որ երկիմաստ է ու խաբուսիկ: **Գնաճ** տարբերակին անցան միայն այն ժամանակ, երբ իրական գնաճը մեր երկրում խիստ չափավոր էր, և **գնաճ** բառն այլևս սարսափեցնող չէր:

Ազնիվ նպատակների դեպքում հակասությունները և «մութ բծերը» ոչ թե գործիք են, այլ թերություն:

Եթե հակասությունները տրամաբանության ոլորտից են, ապա «**մութ բծերը**» վերաբերում են լեզվի ոլորտին: Դրանք տեղեկույթն ընդունողի համար դժվարահասկանալի կամ անհասկանալի բառերն ու արտահայտություններն են, նախ և առաջ՝ օտար լեզուներից կատարված **փոխառությունները**²:

Փոխառությունների կարիք լինում է նաև այն դեպքում, երբ ասելիքը պարզունակ է կամ բովանդակագուրկ: Այս պարագայում պարզունակ ասելիքը խոսքային միջոցներով քողարկել-պաճուճելու կարիք է լինում: Այդ նպատակին հաջողությամբ ծառայում են օտարաբանությունները:³ Մինչդեռ երբ լուրջ ու կարևոր ասելիք ունես և ուզում ես, որ քեզ լիարժեք հասկանան, ապա կխոսես առանց անհասկանալի բառեր գործածելու:

² **Փոխառություն** ասելով՝ նկատի ունենք օտար բառի (կամ այլ միավորի) տառադարձված գործածությունը փոխառու լեզվում, բայց ոչ պատճենում: Վերջին ժամանակներս փոխառության ըմբռնումը փորձ է արվում անհարկի ընդլայնելու՝ դրա մեջ առնելով ամեն կարգի ազդեցության հետևանք (տե՛ս, օրինակ, Ա. Մուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 265–268): Բայց այդպիսով կորչում է փոխառության և բառապաշարի ինքնուրույն զարգացման սահմանը, հակասություն է առաջանում այդպիսի ըմբռնման և **փոխառություն** բառի բնիմաստի միջև: **Փոխառություն** նշանակում է «փոխարինաբար վերցված բան»: **Փոխարինաբար**-ը ենթադրում է ժամանակավորություն: Այսինքն՝ երբ որևէ բան կոչվում է փոխառություն, ենթադրվում է, որ դա վերցվում է ժամանակավոր օգտագործման համար: Իրականում հենց այդպես էլ կա: Բնական օրենքներով գործող լեզուները այլ լեզուներից հաճախ վերցնում են բառեր ու այլ միավորներ և օգտագործում մինչև սեփական միջոցներով համարժեք միավորներ ստեղծելը: Այլ խնդիր է, որ սեփական համարժեքի ստեղծումը երբեմն ուշանում է կամ չի կայանում: Այդ դեպքում լեզուն գործում է բացասական հաշվեկշռով: Ժամանակավորության հատկանիշով սովորաբար չեն բնութագրվում բովանդակային ներթափանցումները (հասկացություններ, կադապարներ, պատճենումներ): Հետևաբար դրանք նպատակահարմար չէ կոչել փոխառություններ: Այս տեսակետից հարմար չէ նաև **ներքին փոխառություն** եզրույթը, քանի որ նույն լեզվի այլ տարբերակներից վերցված անգամ նյութական տարրերը, եթե ծագմամբ այլալեզու չեն, սովորաբար լինում են ոչ ժամանակավոր:

Լեզուների փոխազդեցության բովանդակային և կառուցվածքային(ոչ նյութական)դրսևորումները ազդված լեզվում սովորաբար լինում են աննկատ (ի սկզբանե յուրացված) կամ էլ շատ արագ են յուրացվում: Այսօր ո՛վ է նկատում, որ **ի միջի այլոց, ուղղագրություն, ենթակա, մանրէ, ընդհատակյա, տեսադաշտ, մայրաքաղաք, քարեկամ, նեղսիրտ, վերնատուն, ձրիակեր, մանրավաճառ, սներես** բառերը պատճենումներ են, կամ ո՛վ է հիշում, որ հապավումները հայերենում սկսել են ստեղծվել ռուսերենի և այլ լեզուների օրինակով:

³ Այս երևույթի մասին խոսելիս Հ. Աճառյանը հիշում է Հ. Պարոնյանի մի հերոսի հետևյալ խոսքերը. «Անանկ դժուար խոսքեր չդնեն նե՛ իրենց ըսածներուն պարապ խոսքեր ըլլալը մէյտան պիտի ելնէ, վարպետութեամբ խրթին բառեր կը դնեն կոր քի ուսուլով մը պարտկեն իրենց պակասութիւնը» (**Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն**, 2-րդ մաս, Ե., 1951, էջ 267):

Փաստերը վկայում են, որ օտար լեզուներից փոխառված բառերին համարժեք հայերեն նորակազմությունները (այդ թվում՝ պատճենումները), շնորհիվ իրենց թափանցիկության (ինքնաստուգաբանելիության), անհամեմատ հասկանալի, դյուրըմբռնելի, տպավորիչ ու հիշվող են մանավանդ տվյալ հասկացությանն առաջին անգամ առնչվող հայախոսի տեսակետից: Դրանք նաև նպաստում են հայերեն բառակազմական մանրահամակարգերի և հարացույցների կայացմանն ու համասեռությանը⁴: Ահա թե ինչու է հայերենում գործում ինքնամաքրման միտումը, և ինչու պիտի նպաստել դրա ծավալմանը:

Աշխարհում իրենց բարձր մակարդակով հայտնի են ֆիննական ու ճապոնական կրթական համակարգերը: Դա մեծապես բացատրվում է այն հանգամանքով, որ **ֆիններենն ու ճապոներենը մաքուր ու ինքնաբավ** լեզուներ են, խուսափում են փոխառություններից:

Լեզվի մաքրությունն ու ինքնաբավությունը նպաստում են այդ լեզվին մայրենիի մակարդակով տիրապետողների **մտածողության անկաշկանդ զարգացմանը և ստեղծարարության աննախադեպ աճին**, թույլ են տալիս դյուրությամբ խորանալու գիտության մեջ և լիարժեք ըմբռնելու ամենաբարդ հասկացությունները, մեծ սրություն, ճկունություն ու խորաթափանցություն են հաղորդում մտքին:

Այդ նախադրյալներն ունի նաև **հայերենը**:

Բառին ու հասկացությանը առաջին անգամ ծանոթացողի և հատկապես **մատաղ սերունդների** տեսանկյունից հայերեն բառը փոխառության համեմատ ապահովում է՝

1. **ինքնըստինքյան հասկանալիություն,**
2. **դյուրին յուրացում,**
3. **խնայողություն,**
4. **լեզվական համակարգին հարմարվածություն,**
5. **ազգային լեզվական միասնություն:**

1. Ինքնըստինքյան հասկանալիություն

Քչերը կարող են հանպատրաստից (առաջին անգամ պատահելիս) կռահել, թե ինչ են նշանակում *օրնիտոլոգ, դիդակտիկա, գրաֆիտ, կոնցենտրատ, էմպատիա, կատարսիս, բենեֆիս, ինվեստոր, կարդիոգրաֆիա, բիլիարդ* բառերը:

Մինչդեռ դրանց համարժեք նորակազմ հայերեն բառերը (*թռչնագետ, ուսուցաբանություն, գրաքար, խտանյութ, հուզակցություն, մաքրագործում, պատվահանդես (պատվախաղ), ներդրող, սրտագրություն, գնդամուղ*) իրենց արդեն ծանոթ բաղադրիչների շնորհիվ **թափանցիկ** են, այսինքն՝ ի սկզբանե ունեն **հասկանալիության որոշակի ներուժ**, ինչից զուրկ են փոխառությունները:

Փոխառություններն ինքնին և ի սկզբանե ոչինչ չեն հուշում և կարող են հասկանալի դառնալ միայն համարժեք հայերեն բառերի կամ դրանց բառակապակցական բացատրությունների օգնությամբ: Այսպես՝ **սարկոֆագ**-ը պետք է հասկանալ ու հիշել որպես «քարե տապան՝ քարատապան», **ֆունգիցիդ**-ը՝ «սունկ սպանող նյութ՝ սնկասպան», **իխտիոլոգ**-ը՝ «ձկների գիտակ՝ ձկնագետ» և այլն: Այսինքն՝ օտար բառերի յուրացումը ավելի քան կրկնակի աշխատանք,

⁴ Տե՛ս նաև Է. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 408:

կրկնակի ջանքեր, կրկնակի ժամանակ, կրկնակի հիշողություն է պահանջում և վերջին հաշվով կայանում է դարձյալ լեզվի սեփական միջոցների օգնությամբ, դրանց հիման վրա: Իսկ հաճախ էլ այդ յուրացումը կիսատ-պռատ է կայանում կամ պարզապես չի կայանում: Դրա հետևանքով օտար բառերը դառնում են չբացված ծածկագրեր, որոնք երբեք թույլ չեն տալիս լիովին ըմբռնել մատուցված տեղեկությո՜ւնը, խորանալ երևույթների էության մեջ և դառնում են աննկատ անջրպետներ անհատի և նրա կողմից ուսումնասիրվող երևույթների միջև:

Փոխառությունները մեծ մասամբ հիշվում ու հասկացվում են մոտավորապես՝ երբեմն էլ թյուրըմբռնման տեղիք տալով: Օրինակ՝ **վիտամին** ասելով՝ սովորաբար հասկանում ենք պարզապես «օգտակար բան՝ նյութ, սնունդ, դեղ»: Բայց դրա ճշգրիտ իմաստն է «կենսականորեն անհրաժեշտ նյութ», որը լիարժեք արտահայտում է դրա հայերեն համարժեք **կենսանյութ** բառը: **Մանդատ** ասելով՝ սովորաբար հասկանում ենք «ինչ-որ փաստաթուղթ: Բայց դրա ճշգրիտ իմաստն է «իրավունք տվող, իրավունքը երաշխավորող փաստաթուղթ», որը լիարժեք արտահայտում է դրա հայերեն համարժեք **իրավագիր**» բառը⁵: **Բիենալե** ասելով՝ սովորաբար հասկանում ենք «ինչ-որ փառատոն»: Բայց դրա ճշգրիտ իմաստն է «երկու տարին մեկ տեղի ունեցող (միջոցառում)», այսինքն՝ **«երկամյա»**:

Եթե փոխառությունները երբեմն կարծես թե ինչ-որ բան հուշում են, ապա դա կարող է խաբուսիկ լինել: Օրինակ՝ **կորդեբալետ, կատապուլտ, կոնսերվատորիա, կինոլոգ, դիագնոզ** (ախտորոշում), **կատակլիզմ** (համադետ):

Կորդեբալետ–ը թվում է բալետի տեսակ, մինչդեռ այստեղ **բալետ** բաղադրիչը մեզ ծանոթ իմաստը չունի (ոչ թե «պարային հանդես», այլ պարզապես «պար»): **Կորդեբալետ** բառացի նշանակում է «պարախումբ»:

Կատապուլտ–ը թվում է պուլտի տեսակ, մինչդեռ այստեղ էլ **պուլտ** բաղադրիչը մեզ ծանոթ իմաստը չունի (ոչ թե «վահանակ», այլ «նետիչ»): **Կատապուլտ** նշանակում է «ինքնանետիչ»:

Կոնսերվատորիա–ն, թվում է, պետք է նշանակեր «պահպանարան»: Բայց իրականում նշանակում է «երաժշտանոց», այսինքն՝ երաժշտական բուհ:

Նորակագնությունները մեծ մասամբ պատճենումներ⁶ են այլ լեզվից, բայց ամեն ինչ չէ, որ արժե կամ կարելի է պատճենել: Օրինակ՝ **բլանկ**–ի պատճենումը կլինի «սպիտակ», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «1. **ձևաթուղթ, 2. պաշտոնաթուղթ**»:

Բյուլետեն–ի պատճենումը կլինի «կնիք», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «1. տեղեկագիր, 2. հիվանդաթերթիկ»:

Դիվան–ի պատճենումը կլինի «դպիր», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «1. բազմոց, 2. գրասենյակ, 3. հնադարան (արխիվ), 4. ժողովածու»:

Դիվիդենտ–ի պատճենումը կլինի «բաժանելիք», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «շահաբաժին, օգուտ»:

⁵ Ի դեպ՝ **մանդատ** բառը բնօրինակի լեզվում նույնքան ճշգրիտ չի արտահայտում իր իմաստը, որքան **իրավագիր**–ը: Դա կազմված է լատիներեն **մանս**– «ձեռք» և **դատ**– «տալ» արմատներից, այսինքն՝ «ձեռքը հանձնել»:

⁶ Պատճենումների մասին տե՛ս նաև **Ն. Պառնասյան, Պատճենումը և նրա դերը հայոց լեզվի զարգացման գործընթացում** // Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, 3, Ե., 1988, էջ 20-25:

Ժոկեյ-ը ծագում է **Ժակ** անունից», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «1. **հեծ-նորդ, հեծյալ, 2. երաժշտավար**»:

Լոտո-ի պատճենումը կլինի «վիճակ, բախտ», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «**թիվքաշուկ**»:

Բանկետ-ի պատճենումը կլինի «նստարանիկ», բայց ըստ բովանդակության թարգմանվում է «**ճաշկերույթ**»:

2. Դյուրին յուրացում

Բնականաբար բառը որքան թափանցիկ է, այնքան լավ է տպավորվում և արագ յուրացվում: Մինչդեռ դրանց օտար համարժեքները, ինքնըստինքյան հասկանալիության հատկությունից միանգամայն զուրկ լինելով, յուրացվում են ոչ թե **տրամաբանորեն**, այլ զուտ **մեխանիկորեն** և հավելյալ ջանքերի հաշվին: Դա երևում է հետևյալ հոմանիշների համեմատությամբ.

դիտանկյուն – ռակուրս,

ապագայագետ – ֆուտուրոլոգ,

ներծոր – էնդոկրին,

նախագտում – քասթինգ,

բնակախումբ – պոպուլյացիա,

գանձորդ – ինկասատոր,

տարհանում – էվակուացիա:

Տարբերությունն առավել ակնհայտ է, երբ օտար բառը ինքնին ստուգաբանված չէ, դեռ մի բան էլ ավելին՝ դժվարարտասանելի է: Օրինակ՝ *ինաուգուրացիա – պաշտոնակալություն (երդմնակալություն)*:

3. Խնայողություն

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն դրույթը, որ փոխառության փոխարեն նորակազմությունների կիրառումը խնայողության միջոց է: Այդ կերպ լեզուն և մեր հիշողությունը ազատագրվում են տասնյակ հազարավոր օտար բառերից, որոնք ունեն արմատների արժեք և **առանձին-առանձին** հիշվելու կարիք:

Մինչդեռ նորակազմությունները, ինքնաբերաբար բաղադրվելով հայտնի **կադապարներ**ով, հայտնի **արմատներից** ու **ածանցներից**, ինքնըստինքյան հասկանալիության շնորհիվ հիշողությունը ծանրաբեռնում են աննշան չափով: Հետևաբար օտար բառերը միանգամայն **ավելորդ բեռ** են լեզվի և հիշողության համար:

4. Լեզվական համակարգին հարմարվածություն

Այս չափանիշը կարելի է դիտարկել որպես **քերականական** հարմարվածություն, **բառակազմական** սերողունակություն, **հնչույթային** համապատասխանություն, **արտասանական** հարազատություն: Սրանցից առավել կարևորը բառակազմական սերողունակությունն է:

Համեմատենք **էմոցիա** և **հույզ** բառերը: **Հույզ**-ը ոչ միայն ավելի **կարճ** է, այլև **արտադրողական** է: Նրանից **ինքնաբերաբար** կազմվում են ածանցավոր՝

Գոյականներ (*հուզում, հուզմունք, հուզականություն, հուզվածություն*),

Ածականներ (*հուզական, հուզիչ, հուզումնավետ, անհույզ, համահույզ*),

Մակբայներ (*հուզականորեն, հուզաբար*),

Բայեր (*հուզել, վերահուզել, հուզականանալ*),

ինչպես նաև բազմաթիվ բարդություններ՝ հուզալից, հուզումնալից, հուզաշատ, հուզագուրկ, հուզաբորբոք, հուզաթաթավ, հուզախառն, հուզախռով, հուզակցություն, հուզահակ, հուզաշխարհ, հուզավառ, հուզարար, հուզարտահայտչական, հուզումնաբեկ, հուզումնակոծ, սաստկահույզ, փոթորկալիույզ, մրրկահույզ, մշտահույզ, սրտահույզ, սիրահույզ, ծովահույզ, մտահույզ և այլն, **որոնք իրենց հերթին կարող են ածանցվել՝** հուզաշատություն, հուզարարում, հուզաշխարհային, հուզավառվել, հուզազրկվել, հուզարտահայտչականորեն, հուզարտահայտչականացում և այլն:

Մինչդեռ **էմոցիա**-ից հայերենում գրեթե **ոչ մի բառ չի կազմվում**, հետևաբար հարկ է լինում փոխառել դրա օտարալեզու ածանցյալներ՝ *էմոցիոն, էմոցիոնալ, էմոտիվ*, որպեսզի դրանցից մի կերպ կազմվեն մի քանի նոր բառեր՝ *էմոցիոնալացում, էմոցիոնալություն, էմոցիոնալորեն*:

Իսկ հայերեն կազմություններից շատերը և հատկապես բայերը **անփոխարինելի** են: Ուստի օտար բառը նախընտրողը ստիպված է լինում իրար կողքի գործածել, օրինակ, **էմոցիա**-ն և **հուզվել**-ը: Բայց այդ պատճառով **մթազնում** է դրանց **իմաստային կապը**, և **քողարկվում** է նույնարմատ բառերի **ծագումնաբանական առնչությունը՝ հույզ – հուզվել**:

Մերոդունակ բառերից արդեն պատրաստի կադապարներով ինքնըստինքյան ստացվում են **բառակազմական հարացույցներ** (համակարգեր), կամ այդ բառերը ներառվում են համակարգերի մեջ և լեզվակրի միտքն ու **հիշողությունն ազատում** մեծաքանակ ածանցյալներ կազմելու, իմաստով հարաբերակից բառեր գտնելու ջանքերից: Այս հատկությունը, որպես կանոն, բնորոշ չէ փոխառություններին, որոնք **ամլացնում** են բառակազմական կադապարները, **հաշմում** բառակազմական համակարգերը, **աղճատում** ու խճողում հարացույցները:

Բերենք բառակազմական մանրահամակարգի օրինակ գեղարվեստի ոլորտից՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն զուգահեռներով:

գեղանկար	գեղանկարային	գեղանկարիչ	գեղանկարչություն	գեղանկարչական
գծանկար	գծանկարային	գծանկարիչ	գծանկարչություն	գծանկարչական
խճանկար	խճանկարային	խճանկարիչ	խճանկարչություն	խճանկարչական
սրբանկար	սրբանկարային	սրբանկարիչ	սրբանկարչություն	սրբանկարչական
մանրանկար	մանրանկարային	մանրանկարիչ	մանրանկարչություն	մանրանկարչական
յուղանկար	յուղանկարային	յուղանկարիչ	յուղանկարչություն	յուղանկարչական
ջրանկար	ջրանկարային	ջրանկարիչ	ջրանկարչություն	ջրանկարչական
որմնանկար	որմնանկարային	որմնանկարիչ	որմնանկարչություն	որմնանկարչական
լուսանկար	լուսանկարային	լուսանկարիչ	լուսանկարչություն	լուսանկարչական
դիմանկար	դիմանկարային	դիմանկարիչ	դիմանկարչություն	դիմանկարչական
բնանկար	բնանկարային	բնանկարիչ	բնանկարչություն	բնանկարչական
խարանկար	խարանկարային	խարանկարիչ	խարանկարչություն	խարանկարչական

Հայերեն այս բառակազմական հարացույցում ամեն ինչ **համակարգված** է, **համասեռ** ու **կանոնավոր**: Բոլոր բառերը փոխկապակցված են ոչ միայն իմաստով, այլև ձևով ու կառուցվածքով: Դրանք ինքնըստինքյան բխում են մեկը մյուսից և հատ-հատ հիշվելու կարիք չունեն: Այս 60 բառին տիրապետելու համար պետք է իմանալ ընդամենը բառակազմական մեկ կադապար, 11 արմատ և 4 ածանց:

Ինչպես տեսնում ենք, **հայերենը** իր լեզվական համասեռության շնորհիվ այստեղ **կատարյալ է, ամբողջական, ինքնաբավ** և ապահովում է հասկացական ու լեզվական համակարգերի **համաձևություն** (իզոմորֆիզմ):

painting	painting	painter	painting	(of) painting
graphics		draftsman, drawer, draughtsman	graphics	graphic
mosaic	mosaic	mozaicist	mosaic	mosaic
icon	iconic	iconographer	iconography	iconographic
miniature	miniature	miniaturist	miniature	miniaturistic
oil painting	oil painting	oil painter	oil painting	(of) oil painting
watercolor, wash drawing, aquarelle	watercolor	watercolorist, wash drawer	watercoloring, wash drawing	(of) watercoloring
fresco, mural, wall-painting	fresco	wall-painter	wall-painting	fresco, mural, wall-painting
photo, photograph	photographic	photographer	photography	(of) photography
portrait	portrait	portraitist	portraiture, portrait- painting	(of) portrait-painting
landscape	landscape	landscape- painter	landscape- painting	(of) landscape- painting
poker-work, pyrography	poker-work, pirography	poker-worker, pyrographer	poker-work, pyrography	poker-work, (of) pyrography

Անգլերեն տարբերակում չկա բառակազմական կադապարի **ամբողջական ու հետևողական** իրացման ոչ մի դեպք: Հաճախ փոխվում են արմատները՝ բերելով այլալեզու կադապարներով կազմված ածանցյալներ: Հաճախ բառի փոխարեն **բառակապակցություն** է կիրառվում: Հաճախակի են **համանունները** (տարբեր իմաստների ձևային նույնացումները): Հնարավոր են նաև **բաց վանդակներ**, որոնք չեն լրացվում բառով կամ բառակապակցությամբ:

живопись	живописный	живописец	живопись	живописный
графика (м. ч.), рисунок	графический, рисуночный	график, рисовальщик	графика, рисунок	графический, рисуночный
мозаика	мозаичный	мозаист, мозаичник	мозаика	мозаичный
икона	иконный	иконописец	иконопись	иконописный
миниатюра	миниатюрный	миниатюрист	миниатюра	миниатюрный
живопись маслом	маслянный	художник по маслу	живопись маслом	
акварель	акварельный	акварелист		

фреска	фресковый	художник пишущий фрески, альфрейщик	фреска	фресковый
фотография	фотографический	фотограф	фотография	фотографический
портрет	портретный	портретист	портрет	портретный
пейзаж	пейзажный	пейзажист	пейзаж	пейзажный
выжигание, пирография	пирографический	пирографист	выжигание, пирография	пирографический

Ռուսերեն տարբերակում նույնպես չկա բառակազմական կաղապարի ամբողջական ու հետևողական իրացման ոչ մի դեպք: Հաճախ փոխվում են արմատները՝ բերելով այլալեզու կաղապարներով կազմված ածանցյալներ: Հաճախ բառի փոխարեն բառակապակցություն է կիրառվում: Հաճախակի են համանունները (տարբեր իմաստների ձևային նույնացումները):

Ռուսերեն մանրահամակարգերը իրենց անհամաստեղծության պատճառով **թերի** են (կան բաց վանդակներ), **ոչ ճկուն, անմիօրինակ**, լի են երկիմաստություններով, համանուններով, կաղապարից շեղվող ձևերով, անհարկի հոմանիշներով ու տարբերակներով:

Թերությունները առաջանում են փոխառությունների հետևանքով, որոնք՝

- գուրկ են սերողունակությունից և
- իրենց հետ բերում են օտար ածանցյալներ կամ
- հարկադրում են բավարարվել նկարագրական բառակապակցու-

թյուններով, որոնք հաճախ կամայական են, վիճելի և անհարմար:

Փոխառությունները փաստորեն ավերում են բառակազմական հարացույցները:

Նույնը կպատահի, եթե հայերենում էլ ներմուծենք փոխառություններ՝ **նասյուրմորտ, պեյզաժ, ակվարել, գրաֆիկա, ֆրեսկա** և այլն:

Անգլերենը **միջին** տեղ է գրավում հայերենի և ռուսերենի համեմատ:

Հայերենի այս **ինքնաբավությունից** շահում է լեզուն ինքը՝ ձեռք բերելով բառակազմական համակարգի **ճկունություն**, իմաստային դաշտերի **համակարգվածություն**, այլ լեզուներից **անկախություն**:

Անդրադառնալով այլ լեզուներից անկախության խնդրին՝ պետք է նկատենք, որ արևելահայերենը դեռ լիովին չի հաղթահարել կախվածությունը արևելյան լեզուներից (պարսկերենից, արաբերենից, թուրքերենից), իսկ այժմ զգալի կախվածություն ունի **ռուսերենից**, քանի որ մեծաթիվ են **ռուսերենի միջնորդությամբ** կատարված, ռուսերենին **հարմարված** և ռուսերենից **տառադարձված** փոխառությունները՝ *լամինացիա, խրոնոլոգիա, տոննա, տեխնիկա, բլոկհրովկա* և այլն⁷:

⁷ Մի լեզվի վրա այլ լեզվի ազդեցությունը կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական: Դրական է այն, երբ որևէ լեզվի օրինակով տվյալ լեզվում կատարվում են պատճենումներ, այդ լեզվից վերցվում են նոր հասկացություններ

Ռուսերենի միջնորդությամբ փոխառությունները հայերենին մասամբ **պարտադրում** են բառակազմական ու հնչադարձական որոշ միջոցների կիրառում այլ լեզուներից նաև անմիջաբար փոխառություն կատարելիս՝ *ինստալյացիա, պարկովկա, ռեստարտ, կրեատիվ, դատաբեյզ, տրի-դե, էմ-պե-տրի* և այլն:

Ռուսերենն ինքը կախման մեջ է **լատիներենից, հին հունարենից**, ինչպես նաև՝ գերմաներենից, անգլերենից, ֆրանսերենից, իտալերենից:

Արևելահայերենն այժմ սկսել է կախման մեջ ընկնել **անգլերենից**:

Որևէ այլ լեզվից կախվածությունը սովորաբար լինում է **ժամանակավոր**, և պարբերաբար առիթ է լինում **փոխելու** կախվածության կողմնորոշումները:

Լեզվական կողմնորոշման փոփոխության հետևանքով՝

բիրժա-ն դառնում է *բորսա*,

կոնֆերենցիա-ն՝ *կոնֆերանս*,

ինստալյացիա-ն՝ *ինսթոլեյշըն*,

տոննա-ն՝ *թոն*,

ցիկլ-ը՝ *սայքլ*,

մուլտի-ն՝ *մալթի*,

պարկովկան-ն՝ *փարքինգ*,

խրոնոլոգիա-ն՝ *քրոնոլոջի*,

սիւեմա-ն՝ *սքեմ*,

ցինիկ-ը՝ *կինիկ*,

մատրիցա-ն՝ *մաթրիքս*,

պրոյեկտ-ը՝ *փրոջեքթ*,

վիզուալ-ը՝ *վիժուալ* և այլն:

Հայտնի չէ, թե դեռ ինչ լեզուներ կտիրապետեն աշխարհում և կփորձեն բռնանալ հայերենի նկատմամբ: **Ինքնաբավ** քաղաքականության դեպքում ազդեցությունների փոփոխության նկատմամբ լեզուն ձեռք է բերում **անընկալունակություն** (իմունիտետ): Ամեն փոփոխության հետ հարկ չի լինում վերանայելու փոխառությունների կազմը, եղանակները, հիմքերը:

և արտահայտվում տվյալ լեզվի միջոցներով: Այդպես համալրվում ու հարստանում է տվյալ լեզվի բառապաշարը, կատարելագործվում են արտահայտության քերականական ու բառակազմական միջոցները: Օրինակ՝ հայերենում ռուսերենից կամ անգլերենից կատարված պատճենումներ են՝ *ինքնաթիռ, պատճենիչ, մանրադիտակ, երկաթուղի, շոգեքարշ, հնգամարտ, հակազագ, ընդհատակ, հեռախոս, տիեզերանավ, գնդացիր, ամենագնաց* բառերը, *արջի ծառայություն, մուկն ու կատու խաղալ, սառը պատերազմ, թեժգիծ, սառույցի վրա գրել, չորրորդ իշխանություն* դարձվածքները: Հունարենից 5-րդ դարում կատարված պատճենումներ են հայերենի նախածանցավոր մի շարք բառեր: 20-րդ դարում ռուսերենից կատարված պատճենումներ են հապավումների զգալի մասը (*ՄՊՀ, բուհ, գիտքարտուղար, տնտեսվար, աշխղեկ* և այլն):

Բացասական է այն, երբ այլ լեզվից անհարկի և անմտածված վերցվում են պատրաստի բառեր, արտահայտություններ և նույնությամբ կամ աղավաղված օգտագործվում տվյալ լեզվով խոսքի մեջ՝ ծանրաբեռնելով ու խճողելով բառապաշարը, աղճատելով քերականական ու բառակազմական համակարգերը, մթագնելով հասկացական համակարգը: Այդպիսի անհարկի փոխառություններ են՝ *մենթալիտետ, մարկետ, ռեյթինգ, պրոբլեմ, պրոցես, դեպարտամենտ, ժուռնալիստ, դիսպետչեր, բրոքեր, ստարտ, կուլտուրա, մենեջմենթ, ալտերնատիվ, սերտիֆիկատ, դիսկ, մոտոր, դեֆիցիտ, ֆորմատ, ստատուս, սիմվոլ* և այլն:

Համընդհանուր բնական օրենք է այն, որ համակարգերը արդյունավետ գործելու համար պետք է զերծ լինեն օտար տարրերից: Հայերենի զարգացման օրինաչափություն է ինքնամաքման միտումը: Այս տեսակետից ելնելով՝ կարող ենք սահմանել հետևյալը: Հայերենը պետք է զարգանա՝ համալրվի ու կատարելագործվի իր սեփական միջոցներով ու դրանց հիման վրա: Փոխառություններ կարող են կատարվել միայն ծայրահեղ դեպքերում և ժամանակավորապես: Սա կարող ենք կոչել **լեզվաշինական ինքնաբավ քաղաքականություն**:

5. Համագգային լեզվական միասնություն

Հայերը ցրված են աշխարհով մեկ: Ամեն երկրում հայերենը կրում է տեղի պետական լեզվի ազդեցությունը (թուրքերենի, արաբերենի, պարսկերենի, հունարենի, ֆրանսերենի, իսպաներենի, ռուսերենի կամ անգլերենի), նրանից փոխառություններ կատարում⁸:

Այդ պատճառով ռուսահայի հայերենը դժվարահասկանալի է սիրիահայի համար, ֆրանսահայինը՝ թուրքահայի համար և այլն: Հետևաբար պետք է խուսափել փոխառություններից և զբաղվել **համագգային համաձայնեցված բառակերտմամբ**, որպեսզի հայերենը առավել չմասնատվի ու չճյուղավորվի, միասնական լինի ազգի համար:

Լեզվի սեփական միջոցների վրա հիմնված նորակազմությունները դրսևորումներն են լեզվի ներքին պահանջի, իրացումներն են այդ լեզվի՝

- **ինքնամաքման,**
- **համակարգայնացման,**
- **բանականացման,**
- **միասնականացման,**
- **խնայողության միտումների⁹:**

Մինչդեռ փոխառությունները հետևանք են՝

- արտաքին **ազդեցությունների ու ճնշումների**, ինչպես նաև

⁸ Փոխառությունները մեծ մասամբ կապված են լինում մշակութային, հաճախ էլ քաղաքական ծավալապաշտության հետ: Որևէ լեզու սովորաբար փոխառություններ է կատարում այն լեզվից, որի մշակութային կամ նաև քաղաքական ազդեցության ոլորտում է: Երբ տեղի է ունենում ազդեցության ոլորտների փոփոխություն, համապատասխանաբար փոխվում է փոխառության աղբյուրը: Սա նշանակում է, որ փոխառությունները շատ հաճախ պարտադրված են լինում մշակութային և քաղաքական ազդեցության աղբյուրի կողմից: Պարտադրանքը ենթադրում է հատուկ միջոցների կիրառում: Դրանցից են քաղաքական քարոզչությունը, ամբոխավարությունը և պիտակավորումը: Հիշենք, օրինակ, ազգային լեզվի մահացման տեսությունը խորհրդային վաղ տարիներին, լեզուների մերձեցման նպատակահարմարության քարոզչությունը, **միջազգային բառ և մաքրամոլություն** (պուրիզմ) քաղաքական պիտակները, որ մինչև հիմա էլ կիրառվում են: Հիշենք խորհրդային տարիներին կենտրոնից պարտադրվող օտարաբան լեզվաքաղաքականությունը «ազգային հանրապետություններում», որի բաղադրիչներից էին հատկապես մասնագիտական ոլորտներում ռուսերենից փոխառությունների պարտադրումը, դրանց համարժեք բառերի արգելումը, Մոսկվայից «ազգային հանրապետությունների» մասնագետներին տրվող հրահանգավորումը, քարոզչական գրականության տարածումը:

⁹ Տե՛ս նաև **Ս. Աբրահամյան**, *Ղեկավարվել գիտական սկզբունքներով // Լրաբեր հասարակական գիտությունների*, հմ. 12, Ե., 1970, էջ 43-48: **Է. Աղայան**, *Տերմինագիտություն*, Ե., 1978: **Է. Աղայան**, *Տերմինաբանություն մի քանի խնդիրների մասին // Լրաբեր հասարակական գիտությունների*, հմ. 1, Ե., 1971, էջ 85-96: **Ռ. Իշխանյան**, *Ակնարկներ հայերենի տերմինաշինության*, Ե., 1981: **Ռ. Իշխանյան**, Հայերենի տերմինաշինության հարցեր // *Լրաբեր հասարակական գիտությունների*, հմ. 7, Ե., 1969, էջ 87-103: **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը // Լրաբեր հասարակական գիտությունների*, հմ. 9, Ե., 1971, էջ 93-98: **Հ. Բարսեղյան**, *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 5-27: **Հ. Զաքարյան**, *Օտարաբանությունների արտամղման միտումը հայերենում // Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտություններ*, հմ. 1, Ե., 2002, էջ 133-140:

- մասնագետների՝
 - նախապաշարվածության,
 - անկարողության,
 - ծուլության,
 - վերասերված լեզվազգացողությանն ու ճաշակի¹⁰:

Փոխառությունների հույսին չմնալու, դրանցից կախված չլինելու, դրանց թակարդը չընկնելու համար **ամեն մի լեզվակիր** պետք է իր իրավասությունների սահմաններում լինի՝

- **բառակերտ,**
- **լեզվաշինարար:**

Իրենց պետական լեզուն սիրող, հարգող և խորապես գնահատող երկրներում՝ **Ֆրանսիայում, Թուրքիայում** և այլուր, լեզվի մաքրության և փոխառությունները նորակազմություններով փոխարինելու գործը ոչ թե նվիրյալ անհատների հույսին է թողնված, այլ **պետականորեն իրականացվող ծրագիր** է:

Գործում են այդ նպատակով ստեղծված պետական հաստատություններ, որոնք՝

- կազմում են օտար բառերի **սև ցուցակներ**,
- դրանց փոխարինման համար հավաքում նորակազմությունների կամ մոռացված բառերի **առաջարկներ**,
- կազմակերպում այդ առաջարկությունների հանրային **քննարկումներ**,
- **ընտրում** լավագույն տարբերակները և
- օրենքի ուժով **պարտադրում** դրանց գործածությունը:

Եզրակացություն: Որքան էլ երբեմն անխուսափելի թվան փոխառությունները, պետք է հիշել, որ փոխառությունը (**«պարտքով վերցված բառ»**) **ժամանակավոր** երևույթ է, մինչև սեփական համարժեքի հայտնվելը և տարածվելը:

Փոխառությանը որքան էլ ընտելանանք, միևնույն է, դա մնում է մուօ բիծ և շարունակում խանգերել խոսքի հասկանալիությանը:

Հետևաբար **միշտ պետք է հնարավորինս խուսափել փոխառություններից՝** ձգտելով լեզվի ներքին պաշարների հիման վրա գտնելու համարժեք միջոցներ: Դրա ուղիներն են.

¹⁰ Օտար ծավալապաշտության ենթարկված և բացասական փորձ ունեցող հանրությունների պարագայում փոխառությունների դեմ պայքարը դժվարանում է հոգեբանական պատճառներով: Ամենից ավելի խանգարում է սովորույթը: Ամեն մի բնագավառում օտար բառերի ջատագովները և սեփական լեզվով նորամուծություններին դիմադրողները հենց տվյալ բնագավառի մասնագետներն են, որոնք պարզապես ընտելացել, հարազատացել են ի սկզբանե իրենց յուրացրած օտար բառերին ու արտահայտություններին, ծիսական երկյուղածությամբ են վերաբերվում դրանց և մեծ մասամբ ծուլանում են սովորելու, առավել ևս ստեղծելու սեփական լեզվով համարժեքներ: Դրան նպաստում է նաև թերաթմեքության բարդույթը իրենց անձի և ազգային լեզվի նկատմամբ: Եթե նրանք ընդհանրապես օտարախոս են իրենց բնագավառում, ապա փորձում են ապացուցել, որ մայրենի լեզուն անկարող է լիարժեք արտահայտելու տվյալ բնագավառը: Նրանք իրենց անկարողությունը վերագրում են լեզվին, իրենց ծուլությունն արդարացնելու նպատակով վատաբանում են ազգային լեզուն և գործի դնում արտաքին ծավալապաշտ ուժերի քարոզչական հնարքներն ու բառապաշարը՝ դառնալով ազգային մշակույթի զարգացման ակամա հակառակորդներ և օտար ծավալապաշտության ակամա գործակալներ: Քչերին է հաջողվում խուսափել հոգեբանական այդ փախուստից և զբաղվել տվյալ բնագավառի լեզվի ազգայնացմամբ: Այդ քչերը մեծապես վարձահատույց են լինում մայրենի լեզվի ընձեռած ստեղծագործական լիցքով, ամեն ինչ ըստ էության, ավելի տրամաբանորեն գիտակցելու շնորհով:

- նոր բառի ստեղծում,
- օտար բառի պատճենում,
- եղած բառին նոր իմաստի հավելում,
- հնացած բառի գործառական թարմացում,
- մոռացված բառի վերակենդանացում,
- բարբառային բնիկ հայերեն բառի գրականացում,
- բառակապակցության վերածում հապավման և այլն:

Zakaryan Hovhannes. Borrowing against comprehensibility. – The need for new words in the Armenian language is satisfied mainly through its own new formations, as well as borrowings from other languages. As a result, variant forms often arise. The borrowed version is convenient for a specialist who is familiar with this concept in a foreign language and is accustomed to this foreign form. However, for those who are getting acquainted with given concept for the first time, a variant created by one's own linguistic means is much preferable, which, in comparison with a borrowed variant, is distinguished by its adaptability to the language system, is understandable in itself, is easily learned, has the properties of not overloading the memory and contributing to the national unity of the Armenian language. The word-formation system of the Armenian language is so flexible that word-formation paradigms are formed spontaneously. Meanwhile, borrowings, as a rule, destroy these paradigms, unnecessarily overload the language system and human memory. Borrowings (foreign words), as a rule, are cryptograms, dark spots that create informational fog and reduce the comprehensibility of speech. The reason is that they are not transparent in terms of word formation and etymology, they hide their internal form and etymon. That is why it is necessary to avoid borrowings whenever possible and give preference to their Armenian equivalents.

Keywords: modern Armenian language, borrowing, copying, newly coined word, word transparency, language self-purification tendency, language building policy.

Закарян Оганес. Заимствование против понятности. – Потребность новых слов в армянском языке удовлетворяется в основном с помощью собственных новообразований, а также заимствований из других языков. Вследствие этого часто возникают варианты формы. Заимствованный вариант удобен для специалиста, который знаком с данным понятием на иностранном языке и привык к этой иностранной форме. Однако для того, кто впервые знакомится с данным понятием, гораздо предпочтительнее созданный собственными языковыми средствами вариант, который, по сравнению с заимствованным вариантом, отличается приспособленностью к системе языка, понятен сам по себе, легко усваивается, наделен свойствами не перегружать память и способствовать общенациональному единству армянского языка. Словообразовательная система армянского языка настолько гибка, что самопроизвольно образуются словообразовательные парадигмы. Между тем, заимствования, как правило, разрушают эти парадигмы, излишне перегружают систему языка и память человека. Заимствования (иностранные слова), как правило, являются криптограммами, темными пятнами, создающими информационный туман и снижающими понятность речи. Причина в том, что они

непрозрачны с точки зрения словообразования и этимологии, скрывают свою внутреннюю форму и этимон. Вот почему необходимо по возможности избегать заимствований и дать предпочтение их армянским эквивалентам.

Ключевые слова: современный армянский язык, заимствование, копирование, новообразованное слово, прозрачность слова, тенденция к самоочищению языка, политика языкового строительства.

Օգտագործված գրականություն

Աբրահամյան Ս., Ղեկավարվել գիտական սկզբունքներով // Լրաբեր հասարակական գիտությունների, հմ. 12, Ե., 1970, էջ 43-48:

Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, 736 էջ:

Աղայան Է., Տերմինաբանություն մի քանի խնդիրների մասին // Լրաբեր հասարակական գիտությունների, հմ. 1, Ե., 1971, էջ 85-96:

Աղայան Է., Տերմինագիտություն, Ե., 1978, 52 էջ:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, 610 էջ:

Բարսեղյան Հ., Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1988, 416 էջ:

Զաքարյան Հ., Օտարաբանությունների արտամղման միտումը հայերենում // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ, 1, Ե., 2002, էջ 133-140:

Իշխանյան Ռ., Ակնարկներ հայերենի տերմինաշինության, Ե., 1981, 180 էջ:

Իշխանյան Ռ., Հայերենի տերմինաշինության հարցեր // Լրաբեր հասարակական գիտությունների, 7, Ե., 1969, էջ 87-103:

Պատնասյան Ն., Պատճենումը և նրա դերը հայոց լեզվի զարգացման գործընթացում // Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, 3, Ե., 1988, էջ 20-25:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը // Լրաբեր հասարակական գիտությունների, 9, Ե., 1971, էջ 93-98:

Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Ե., 1982, 440 էջ:

Բանալի բառեր: Լեզվական տարաբեքություն, բառակազմական ձևային, բառահարաբերական ձևային, իմաստափոխություն, իմաստի երկփեղկում, լեզվական տարաբեքություն, մասնակի տեղաշարժ:

Նախաբան: Լեզվական տարաբեքությունը կապված է լեզվական տարբեր մակարդակների միավորների ձևաիմաստային փոխհարաբերությունների հետ և արտահայտվում է իմաստակիր միավորներ ունեցող բոլոր մակարդակներում՝ ձևային, բառային, ձևաբանական և շարահյուսական: Լեզվական իմաստակիր միավորների իմաստի ու արժեքի պատմական տեղաշարժերը հայերենին ուղեկցել են հնուց ի վեր, սակայն քննվող հարցը հայագետների ուշադրությանն արժանացել է ավելի ուշ շրջանում: Հայ լեզվաբաններից հիմնականում հարցին անդրադարձել են Հ. Աճառյանը¹, Գ. Սևակը², Է. Աղայանը³, Գ. Զահուկյանը⁴, Ա. Աբրահամյանը⁵, Ս. Աբրահամյանը⁶, Ն. Պառնասյանը⁷, Մ. Ասատրյանը⁸, Լ. Խաչատրյանը⁹, Ս. Էլոյանը¹⁰ և այլք:

Քանի որ լեզվական միավորների իմաստի ու արժեքի տեղաշարժերը ոչ թե լեզվի մեկ առանձին փուլին հատուկ երևույթ են, այլ լեզվի ներքին զարգացման ընդհանուր գործընթացի արտահայտություն ու հետևանք են, ուստի դրանց քննությունը կարևոր և արդիական է բոլոր շրջաններում:

Սույն հոդվածի սահմաններում կփորձենք լեզվական տարաբեքության քննությունը կատարել ձևային համակարգում՝ կապված երկրորդական ձևայինների փոխադարձ անցման մասնակի տեղաշարժերի հետ: Ուսումնասիրությունը կատարել ենք պատմահամեմատական և նկարագրական-վերլուծական մեթոդներով, տարածամասնակյա ու համաժամանակյա հայեցակետերով:

Ինչպես գիտենք, ձևային լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է: **Լինելով հիմնական և երկրորդական**՝ ձևայիններն արտահայտում են չտարբերակված բառային իմաստներ (հիմնական կամ արմատական ձևայիններ) կամբառային չտարբերակված իմաստները վերածում են տարբերակված իմաստների, բառերի արդեն տարբերակված իմաստներին տալիս են այս կամ այն նոր տարբերակումը (բառակազմական ձևայիններ) կամ էլ ցույց են տալիս բառերի

¹ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հ.1, Ե., 1952:

² Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Ե., 1955:

³ Տե՛ս Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., 1963:

⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974:

⁵ Տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953:

⁶ Տե՛ս Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Ե., 1965:

⁷ Տե՛ս Ն. Պառնասյան, *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*, Ե., 1979:

⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1983:

⁹ Տե՛ս Լ. Խաչատրյան, *Խոսքիմասային տարաբեքությունը արդի հայերենի կայուն կապակցություններում*, Ե., 1996:

¹⁰ Տե՛ս Ս. Էլոյան, *Ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1969:

քերականական հարաբերությունները՝ առանց նրանց բառային իմաստը փոխելու (բառահարաբերական ձևայիններ)¹¹:

Հայերենի ձևային մակարդակի միավորների տարածմանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման տարբեր փուլերում, բառերի ու բառաձևերի իմաստափոխությամբ պայմանավորված, զգալի թվով ձևայիններ՝ հիմնական թե երկրորդական, ենթարկվել են իմաստային վերաթեքավորման, իմաստային երկփեղկման, այսինքն՝ տեղաշարժերի:

Պայմանավորված լեզվի ներքին կառուցվածքի առանձնահատկություններով՝ ձևային իմաստի ու արժեքի տեղաշարժը կատարվում է հետևյալ ուղղություններով՝ հիմնական ձևային-բառակազմական ձևային, բառահարաբերական ձևային-բառակազմական ձևային կամ հակառակը՝ բառակազմական ձևային-բառահարաբերական ձևային անցումներով:

Բառերի ու լեզվական կառույցների իմաստաարժեքային դաշտում կատարվող տեղաշարժերը դիտելով որպես քանակական ու որակական փոփոխությունների տարաստիճան գործընթաց՝ Լ. Խաչատրյանը դրանք ըստ անցման բնույթի բաժանում է երկու խմբի՝ **լիակատար, երբ երկփեղկված իմաստներից մեկը վերանում է, և մասնակի, երբ երկփեղկված իմաստները հարատևում են, երբեմն էլ համատեղում տարբեր իմաստներ նույն բառի կամ բառային մեջ**¹²:

Ժամանակակից հայերենի ձևային համակարգում մեծ թիվ են կազմում և՛ լիակատար, և՛ մասնակի տեղաշարժերի ենթարկված ձևայինները: Մեզ համար քննության նյութ են ծառայում արդի լեզվամտածողությամբ տարարժեք այն երկրորդական ձևայինները, որոնք, իմաստի երկփեղկմամբ, վերաթեքավորմամբ պայմանավորված, մտնում են ձևային տարբեր խմբերի մեջ: Այսինքն՝ բառակազմական ու ձևաբանական համակարգերում, բացի իրենց հատուկ հիմնական գործածությունից, հանդես են գալիս նաև մեկ այլ, երկրորդական գործածությամբ և համապատասխանորեն ստանում այդ երկրորդային գործածությանը հատուկ իմաստը: Այդպիսի ձևայինները դիտվում են որպես տարարժեք ձևայիններ՝ մեկ գործածությամբ ու իմաստով հատկացվելով ձևայինների մի կարգին, մյուս գործածությամբ ու իմաստով՝ ձևայինների մի այլ կարգին¹³:

Անդրադառնալով բառահարաբերական ձևայիններից բառակազմական ձևայինների անցմանը՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ «բառակազմության և բառաթեքման սահմանները խիստ որոշակիությամբ չեն գծված. թեև ըստ իդեալական վիճակի բառը պետք է ընդգրկվի բառաձևի մեջ, բայց առանձին դեպքերում որոշ բառաձևեր որպես բառակազմական հիմքեր ընդգրկվում են բառի մեջ: Դեռ ավելին, բառաթեքական որոշ ձևեր ժամանակի ընթացքում կարող են ըմբռնվել որպես բառակազմական ձևեր, բառի ձևաբանական հարացույցից անցնել բառակազմական հարացույցի մեջ, դուրս գալով հարացուցային ամբողջությունից, կարող են ըմբռնվել որպես ածանց»¹⁴:

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոչյան, *Հայոց լեզու*, Ա. պրակ, Ե., 1980, էջ 372-373:

¹² Տե՛ս Լ. Խաչատրյան, *Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, Ե., 1996, էջ 37-38:

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոչյան, *Հայոց լեզու*, Ա. պրակ, Ե., 1980, էջ 377:

¹⁴ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 176:

Նշենք, որ մեր կողմից քննվող մասնակի տեղաշարժի ենթարկված երկրորդական ձևայինները հիմնականում հոգնակերտներ են, հոլովիչ-հոլովակերտներ, հոդեր, դերբայական վերջավորություններ, բառաքերականական ածանցներ, հոդակապ: Մրանք նույն բառի սահմաններում կարող են հասկացվել և՛ բառահարաբերական, և՛ բառակազմական արժեքով: Դրանց տարբերակումը կատարվում է երբեմն խոսքից դուրս, երբեմն էլ՝ միայն խոսքում: Կան նաև այնպիսիք, որոնք տարբեր բառերում տարբեր ձևությամբ իմաստ են արտահայտում: Քննենք դրանք առանձին-առանձին՝ ըստ անհրաժեշտության անդրադառնալով ծագմանը, գործածության առանձնահատկություններին և դրսևորումներին:

-ՆԵՐ, -ԻՎ ձևայինների տարարժեքությունը: Բառահարաբերական **-ներ** ձևային ժամանակակից հայերենի համակարգային հոգնակերտներից է, որը եզակի-հոգնակի հակադրության մեջ հակադրվում է եզակիի զրո ձևային: Օրինակ՝ սեղան-սեղան**+ներ**, պատուհան-պատուհան**+ներ** և այլն: Ծագումով այն հավաքական ածանց էր: Ժամանակակից հայերենում այն դրսևորում է տարարժեքություն, երբ կցվում է բույսերի, կենդանիների տիպերի, դասերի, կարգերի, տեսակների, որոշ հանքատեսակների, քիմիական նյութերի խմբերի անվանումներին և հոգնակիության իմաստից բացի՝ արտահայտում նաև հավաքականության իմաստ, փոխում է բառերի խոսքիմասային իմաստը՝ ածականներից կերտելով գոյականներ: Այսինքն՝ հոգնակերտ բառահարաբերական ձևայինը ստանում է նաև բառակազմական ձևային արժեք: Օրինակ՝ ալրացողագի**-ներ**, աղտորագի**-ներ**, անողնաշարավոր**-ներ**, բաղազգի**-ներ**, բազեզգի**-ներ**, բաղեղազգի**-ներ**, բամբակազգի**-ներ**, գաղտնաբեղուն**-ներ**, ողնաշարավոր**-ներ**, գետնամուշկազգի**-ներ**, գլխոտանի**-ներ**, գինարբուկազգի**-ներ**, երկկենցաղ**-ներ**, լորենազգի**-ներ**, խաղողագի**-ներ**, խնկազգի**-ներ**, խնձորագի**-ներ**, կատվազգի**-ներ**, ճնճղուկազգի**-ներ**, վարդագի**-ներ** և այլն:

Հոգնակերտ **-իկ** ձևայինը հանդիպում է միայն մարդ բառի և այն որպես վերջնաբաղադրիչ ունեցող բառերի հոգնակիի կազմության ժամանակ (մարդ**-իկ**, տղամարդ**-իկ**): Ըստ Գ. Զահուկյանի՝ կազմության այդ եղանակը սահմանափակ և առանձնահատուկ բնույթի էր նաև հին հայերենի շրջանում: Անդրադառնալով **-իկ** հոգնակերտի ծագմանը՝ Զահուկյանը նշում է, որ այն առաջացել է **-իկ** ածանցից և դեռ լիովին չի խզել կապերը ածանցներից, պահպանում է հավաքականության որոշ երանգ¹⁵: Այդ մասնիկի բառակազմական իմաստի դրսևորումը բացատրվում է նաև **մարդ** բաղադրիչով բաղադրյալ բառերի կազմությանը նրա մասնակցությամբ, ինչպես՝ **մարդկություն, մարդկային, մարդկայնորեն** և այլն:

-Ս, -Դ, -Ն/Ը ձևայինների տարարժեքությունը: **-Ս, -դ, -ն/ը** հոդերը անկախացման քերականական կարգի ցուցիչներն են: Հիշյալ բառահարաբերական ձևայինները ծագումով կապվում են **սա, դա, նա, այս, այդ, այն** դերանունների հիմքում ընկած **ս, դ, ն** արմատահնչյունների հետ (**ը** տարբերակը առաջացել է **ն>ը** հնչյունական անցմանը զուգահեռ)¹⁶: «Դրվելով անունների վրա՝ այդ վերջամասնիկները որոշում են անունների հարաբերությունը դեպի հաղորդակցողները և հաղորդակցումը, ցույց տալիս, որ խոսողը որոշում է այդ անունների նշանակած առարկաները (կամ հենց իրենք անունները)՝ ըստ հաղորդակցողներին ծանոթ լինելու աստիճանի կամ

¹⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Ե., 1974, էջ 184:

¹⁶ Հ. Պետրոսյան, *Անկարկներ հայերենի պատմական ձևաբանության*, Ե., 1976, էջ 57-59:

հաղորդակցողների հետ ունեցած առնչության»:¹⁷ Օրինակ՝ **Գիտելիքը/ն** ուժ է: **Կյանքս** վերածվել է դժոխքի: Հարցը կարող եմ լուծել **ինքս**: **Օրերս** հյուրեր կունենանք:

Որոշյալ հոդերը, իրենց հիմնական գործառույթներին (մասնավորեցնող, ընդհանրացնող, ծավալային ամբողջություն ցույց տվող, առարկայական նշանակություն հաղորդող) զուգահեռ, թեև սահմանափակ, կատարում են նաև իմաստային այլ գործառույթներ: Որոշ բառերում (**առաջ, առջև, դիմաց, դուրս, մեջ, մոտ, շուրջ, չափ, վրա, դեմ,մոտ,վերջ** և այլն) դրանք գործածվում են բառակազմական արժեքով՝ փոխելով այդ բառերի խոսքիմասային իմաստը: Օրինակ՝

- 1.Շենքի **առաջ** հավաքվել էին մարդիկ: (անիսկական կապ)
- 2.Շենքի **առաջը** պետք էր մաքրել: (մակբայ)
- 1.Նրա **դեմ** ոչինչ անել չես կարող: (անիսկական կապ)
- 2.Բացվել է **դեմը/ս/դ** աշխարհի հեռուն: (մակբայ)
- 1.Հայրենիքից **դուրս** երջանկություն չկա:(անիսկական կապ)
- 2.**Դուրսը** հարազատ ոչինչ չկար: (մակբայ)
- 1.Դռնից **ներս** անմիջապես հյուրանոցն էր: (անիսկական կապ)
- 2.**Ներսը/ս/դ** ալեկոծվում էր: (մակբայ)
- 1.**Մոտ** մարդ չկար: (ածական)
2. **Մոտը/ս/դ** մարդ չկար: (մակբայ)
- 1.**Վե՛րջ**, էլ ոչինչ չես անի: (գոյական)
- 2.**Վերջը** էլ ոչինչ չե՞ս անի: (վերաբերական)
- 1.**Մեկ** նշանակեց: (թվական)
- 2.**Մեկը** նշանակեց: (դերանուն)

-Ի ձևայթի տարաբեռնությունը: Ժամանակակից հայերենի ընդհանրական-ի հոլովիչը ամենատարածված հոլովիչն է: Նրանով հոլովվում են գոյականների մեծ մասը, այլ հոլովումների պատկանող բառերի մի մասը զուգաձևությամբ և փոխանվանաբար ու ինքնանվանողաբար գործածվող բառերը: Որոշ բառերում **-ի** հոլովիչի իմաստի քարացման և մթագնման հետևանքով գոյացել է արդի հայերենի շատ գործածական **-ի** ածանցը: Այն առաջացել է հատկացուցչի և հատկացյալի կապակցության հիման վրա, ինչպես՝ **ծիրանի** ծառ, **խնձորի** ծառ, **տանձի** ծառ և այլն: Նման կապակցություններում հատկացուցիչը աստիճանաբար զրկվել է իր գործառույթից, որի հետևանքով վերջավորությունը իմաստի մթագնում է ապրել և քարանալով դարձել ածանց: Եվ այժմ, երբ ասում ենք **ծիրանի, խնձորի, տանձի** և այլն, հասկանում ենք այն ծառերը, որոնք համապատասխան պտուղներ են տալիս: Նույն բառերում **-ի** ձևայթը կարող է գիտակցվել նաև որպես հոլովիչ: Տարբերակումը կատարվում է խոսքում: Օրինակ՝

1. Այգում տնկեցին տանձի, խնձորի, ծիրանի ծառեր: (բառակազմական ձևայթ)
2. Տանձի, խնձորի, ծիրանի համը հրաշալի էր: (բառահարաբերական ձևայթ)

¹⁷ Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 139:

-ՅԱՆ ձևայթի տարաբժեքությունը: **-Յան (-եան)** հոլովիչը՝ որպես ինքնուրույն հոլովիչ, ձևավորվել է միջին հայերենում¹⁸: Ժամանակակից հայերենում կան **-իստ, -ուստ, -ունդ** ածանցներով վերջացող սահմանափակ թվով գոյականներ, որոնք, օրինաչափորեն ենթարկվելով **-ի** հոլովման, շարունակում են անկանոնությամբ ենթարկվել **-յան** հոլովման, օրինակ՝ **հանգիստ-հանգստի-հանգստյան, գալուստ-գալուստի-գալստյան, կորուստ-կորուստի-կորուստյան, թաքուստ-թաքուստի-թաքստյան, ծնունդ-ծնունդի-ծննդյան**: **-Յան**-ով տարբերակները արդի հայերենում ենթարկվել են իմաստային երկփեղկման և ձեռք բերել նաև ածականի խոսքիմասային արժեք: Նման բառերում, իմաստափոխությամբ պայմանավորված, **-յան** ձևայթը բառահարաբերականից վերածվել է բառակազմական ձևայթի:

-ՈՎ ձևայթի տարաբժեքությունը: Ժամանակակից հայերենի գործիական հոլովի **-ով** հոլովակերտը ծագել է միջին հայերենում՝ **-վ** հոլովակերտի և նրան նախորդող **-ո** հոլովիչի համակցությամբ: Սկսած միջին հայերենից՝ **-ով** բառահարաբերական ձևայթը գրաբարյան **ո**-ով հիմքերից տարածվել է նաև այլ հիմքերի վրա և համարյա դիրքային սահմանափակություն չունի: Այն եզակի գործիականի կազմության ամենատարածված թեքություն է: Հոգնակիում հանդես է գալիս բաղադրյալ հոգնակերտների կազմում՝ **եր+ով, ներ+ով, նի+ով, ան+ով**¹⁹: Ժամանակակից հայերենում այն թե՛ եզակիի (որոշ սահմանափակումներով), թե՛ հոգնակիի թեքություն է: Արդի հայերենում որոշ գոյականների գործիականի հոլովաձևեր տարաբժեքությամբ ստացել են նաև հատկանիշի իմաստ՝ վերածվելով ածականների կամ մակբայների: Վերջիններում **-ով** բառահարաբերական ձևայթը դիտարկվում է որպես բառակազմական ձևայթ: Դրանցից են՝

1. գոյական-ածական՝ **գինով, երեխով, տարիքով, թափով, խնամքով, համով, հոտով** և այլն,

2. գոյական-մակբայ՝ **ցերեկով, գիշերով, հաճությով, սիրով** և այլն:

Նման տարաբժեք բառերի տարբերակումը կատարվում է խոսքում:

Օրինակ՝ Եղբայրը **տարիքով** մեծ է քրոջից: (գոյական)

Տարիքով մարդիկ հոգատարություն ու խնամք են սիրում: (ածական)

Նա **սիրով** է կատարում իր աշխատանքը: (մակբայ)

Նա **սիրով** լեցուն ընտանիք ունի: (գոյական)

-ԵԼ, -ԱԼ ձևայթների տարաբժեքությունը: Անորոշ դերբայի **-ել, -ալ** դերբայական մասնիկները, որոնց մեջ լ-ն ծագումով կապվում է հնդեվրոպական **-lo** մասնիկի հետ, իսկ **ե-ն** և **ա-**ն խոնարհիչներ են, լեզվական-քերականական արժեքի տեսակետից երկակի դեր ունեն: Հիշյալ ձևայթները կարելի է դիտել և՛ իբրև բառակազմական երկրորդական ձևայթներ, և՛ իբրև բառահարաբերական երկրորդական ձևայթներ: Տարաբժեքությունը հետևանք է այն բանի, որ այդ երկրորդական ձևայթները, բառ կազմելու հետ միաժամանակ, կազմում են նաև բայի քերականական ձև՝ անորոշ դերբայ²⁰: Եթե այդ ձևայթները քննության առնենք բառակազմական համակարգի մեջ և դիտենք իբրև բառակազմական միավոր, ապա կբնորոշենք որպես բառակազմա-

¹⁸ Տե՛ս **Հ. Հովսեփյան, Պ. Վարդապետյան, Է. Կարապետյան, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության**, հ. Բ, Ե., 1975, էջ 27:

¹⁹ Նույն տեղում, էջ 77:

²⁰ Տե՛ս **Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու**, հ.2, Ե., 1974, էջ 315:

կան երկրորդական ձևային, այսինքն՝ ածանց, իսկ եթե քննության առնենք դերբայական հարացույցում՝ ձևաբանական մոտեցումով և դիտենք իբրև ձևաբանական միավոր, ապա կրնոթագրենք որպես բառահարաբերական երկրորդական ձևային՝ հակադրելով դերբայական հարացույցի մյուս եզրերի թեքայիններին՝ **-ել, -ալ> -ած, -ող, -իս, ում, -ել, -ու, -ի, -ա:**

Այլ խոսքի մասերից բայերի կազմության մեջ առավել կենսունակ է **-ել** մասնիկը. **-ալ** մասնիկը այս դեպքում հանդես է գալիս մեծ մասամբ **-ան** բայածանցի զուգակցությամբ: Այդ մասնիկներով բայեր կարող են բաղադրվել՝

ա. **գոյականներից**՝ անձրև-ել, աշակերտ-ել, աղաղակ-ել, արդուկ-ել, արտագաղթ-ել, աքսոր-ել, բժշկ-ել, բանաստեղծ-ել, բանավիճ-ել, բարեկամ-ան-ալ, բողոք-ել, գծ-ել, գիշեր-ել, գործ-ել, դասախոս-ել, դաստիարակ-ել, դատ-ել, դուցազն-ան-ալ, դող-ալ, էլնէջ-ել, եղբայր-ան-ալ, երագ-ել, երգ-ել, զանգ-ել, զարկ-ել, զեկուց-ել, զրուց-ել, ընկեր-ան-ալ և այլն,

բ. **ածականներից**՝ ազահ-ան-ալ, ազնվ-ան-ալ, ակտիվ-ան-ալ, աշխուժ-ան-ալ, արի-ան-ալ, ազատ-ել, բարակ-ել, բարդ-ան-ալ, գեղեցկ-ան-ալ, դժբախտ-ան-ալ, լրջ-ան-ալ և այլն,

գ. **թվականներից**՝ երրորդ-ել, հնգապատկ-ել, տասնապատկ-ել, հարյուրապատկ-ել և այլն,

դ. **դերանուններից**՝ նույն-ան-ալ, ոչնչ-ան-ալ,

ե. **մակբայներից**՝ առաջ-ան-ալ, դանդաղ-ան-ալ, արագ-ան-ալ, հաճախ-ել և այլն,

զ. **ձայնարկություններից**՝ ավաղ-ել, ափսոս-ել, վայ-ել և այլն:

-ՈՂ ձևային տարաբեկությունը: **-Ող** ձևային ենթակայական դերբայի վերջավորությունն է: Այդ վերջավորությամբ մի շարք բառեր, ժամանակակից հայերենում որոշ շարահյուսական կապակցությունների մեջ հաճախակի գործածվելով, ստանում են իմաստային յուրահատուկ զարգացում: Ինչպես նշում է Մ. Ասատրյանը՝ «խամբում է նրանց արտահայտած գործողության ընթացքի գաղափարը, և միևնույն ժամանակ ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրացականի: Հասկանալի է, որ դրանով նույն ձևը չի դադարում դերբայ լինելուց, այլ կիրառությունների մեջ պահում է իր հարաբերակցությունները բայական ձևերի հետ որպես դերբայ՝ գործողության, ընթացքի և առարկայական գաղափարներով միաժամանակ»²¹: Այդպիսի բառերից են՝ **ասմունքող, աշխատող, ծառայող, սիրող, մեղադրող, մտածող, հետազոտող, ուսումնասիրող, ուսանող, արդյունաբերող, շահագործող, զրոգ, մատուցող, ծնող, խաղացող, ասացող, գծագրող, զեկուցող, ընթերցող, ընտրող, կառուցող** և այլն:

Որպես ենթակայական դերբայներ՝ նշված բառերն արտահայտում են գործողության ընթացքի գաղափար, նրանցում **-ող** ձևային բառահարաբերական ձևային է և հակադրվում է դերբայական հարացույցի մյուս եզրերի վերջավորություններին: Որպես գոյականներ՝ դրանք արտահայտում են թանձրացականի վերածված առարկայական իմաստ²²: Նրանցում **-ող** ձևայինը համարվում է բառակազմական ձևային: **-Ող** ձևայինով կազմված բառերի խոսքիմասային տարբերակմամբ, որ կատարվում է շարահյուսական մակարդակում, բացատրվում է նաև այդ ձևային տարաբեկությունը: Այսպես՝

1. Բանակում **ծառայող** (դերբայ, ող-ը՝ բառահարաբերական ձևային) տղաներն իրենց առջև խնդիր են դրել ամեն գնով պաշտպանել հայրենիքը:

²¹ Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1983, էջ 271:

²² Տե՛ս Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1983, էջ 271:

2. Բանակում ամեն մի **ծառայող** (գոյական, ող-ը՝ բառակազմական ձևությամբ) իր պարտքն է կատարում հարենիքի առջև:

- **ԱՕ ձևային տարաբեկությունը:** Ժամանակակից հայերենում տարաբեկությամբ առանձնանում է և հարակատար դերբայի **-ած** ձևությամբ: Եթե գրաբարում հարակատար դերբայը բայական-քերականական հատկանիշով չի գիտակցվում, արժեքավորվում է որպես գոյական, ածական կամ մակբայ, ապա միջինհայերենից սկսած՝ այն քերականական իմաստով ամբողջացած երևույթ է, հանդես է գալիս և՛ որպես գոյական, ածական, և՛ որպես դերբայ²³: Այսինքն՝ միջին հայերենից սկսած՝ այդ մասնիկն արդեն տարաբեկ էր:

Ժամանակակից հայերենում մի շարք բառեր առանձնանում են հարակատար դերբայ-գոյական տարաբեկությամբ, ինչպես՝ **արարած, դատված, երկյուղած, խորոված, խմած, կոտորած, հատված, նշանած** և այլն, հարակատար դերբայ-ածական տարաբեկությամբ, ինչպես՝ **զարգացած, ընկած, ընկճված, թերզարգացած, թմրած, թոշնած, թառամած, թորշոմած, թորած, թռած, ծեծված, կարդացած, կծված, կոտրված, կորած, կոփված** և այլն: Սրանց տարբերակումը կատարվում է խոսքում:

Օրինակ՝

1. Ափսեի մեջ դրված էին **խորոված** (դերբայ) միս ու կարտոֆիլ:
2. Ռեստորանում գեղեցիկ սկուտեղով համեղ **խորոված** (գոյական) մատուցվեց:
1. Տղայի ոտքը **կոտրված** է (դերբայ):
2. Մարդիկ **կոտրված** են երկրի վիճակից (ածական):

Եթե նշված բառերը խոսքում արտահայտում են գործողության վիճակային հատկանիշ, ուրեմն հարակատար դերբայներ են, **-ած** ձևային էլ բառահարաբերական ձևությամբ է, իսկ եթե արտահայտում են առարկայական իմաստ կամ հատկանիշ, որը չի հարաբերվում ժամանակի հետ, ուրեմն կա՛մ գոյական են, կա՛մ ածական, իսկ **-ած** ձևային էլ բառակազմական ձևությամբ է:

-**Վ, -ՑՆ, -ԱՆ, -ԵՆ, -Ն, -Չ** ձևային տարաբեկությունը: Ժամանակակից հայերենի կրավորական **-վ** սեռածանցը, մասնակցելով ներգործական սեռի բայերից կրավորական սեռի բայերի կազմությանը, կատարում է քերականական դեր, դրսևորվում որպես բառահարաբերական ձևությամբ, ինչպես՝ գրել-գրվել, նկարել-նկարվել, կարդալ-կարդացվել և այլն: Որոշ բառերում այն կատարում է բառակազմական դեր, մասնակցելով այդ բառերի կազմությանը, օրինակ՝ **գծվել, բնակվել, համարձակվել, հարձակվել, հաշտվել, հնազանդվել, թաքնվել, սիրահարվել, նմանվել, սթափվել, պարտվել, հիասթափվել** և այլն: Բառակազմական-քերականական դերով են առանձնանում **-ան, -են, -ն, -չ** ածանցները: Սրանք ունեն այն ընդհանրությունը, որ մասնակցում են բայերի բաղադրմանը, և այդ բայերը, որոնց կազմության մեջ հանդես են գալիս, առանց այդ ածանցների գոյություն ունենալ չեն կարող (խոսքը բայի ուղիղ ձևի մասին է): Սրանց մյուս առանձնահատկությունն այն է, որ հանդես են գալիս միայն ներկայի հիմքում, իսկ բայերի անցյալի հիմքում **-ն, -չ** ածանցներն ընկնում են, **-ան** և **-են** ածանցները փոխարինվում են **-աց** և **-եց** հիմքի ածանցներով՝ ստեղծելով ածանցավոր բայերի յուրահատուկ խոնարհման համակարգ՝ **թռչել-թռա, տեսնել-տեսա, մոտենալ-մոտեցա, հեռանալ-**

²³ Տե՛ս **Հ. Մուրադյան, Ս. Անթոսյան**, *Աղնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Կ. Ս., 1972, էջ 310-311:

հեռացա: Հենց դրանով էլ այդ ածանցները կատարում են քերականական դեր: **Վերցնել, հատկացնել, յուրացնել, կասեցնել** և մի քանի այլ բայերում բառակազմական-քերականական դեր է կատարում նաև **-ցն** ածանցը:

- Ա ձևույթի տարաբժեքությունը: Մ. Աբեղյանը **ա** հոդակապի ծագումը կապում է բառահիմքի **ա** վերջնահնչյունի հետ²⁴, որը լեզվի պատմական զարգացման ընթացքում ընկել է և հին հայերենում առավել տարածված **ա** բնով բաղադրությունների մեջ գիտակցվել որպես բառից անկախ, բաղադրության հիմքերն իրար կապող, միավորող ձայնավոր, այսինքն՝ հոդակապ:

Հայ լեզվաբանության մեջ հոդակապը ավանդաբար համարվել է երկրորդական բառակազմական ձևույթ, որը նորագույն լեզվաբանական գրականության մեջ ընդունված չէ, քանի որ ձևույթը իմաստակիր միավոր է, իսկ հոդակապը գուրկ է իմաստից՝ որոշ բացառություններով հանդերձ: Է. Աղայանը հոդակապը, ինչպես նաև իմաստակիր միավորներ կապակցող բոլոր մասնիկները անվանում է **ներույթներ**²⁵, իսկ Գ. Զահուկյանը այդ միավորները համարում է գծային տարրերն առաջարկում անվանել **ձևատարրեր** կամ **ձևակազմիչներ**. «Բացի բուն ձևույթներից, հիմքերի կառուցվածքում կարող են լինել այնպիսի գծային տարրեր, որոնք, գուրկ լինելով բուն իմաստից, արժեքավորվում են լեզվական գործածության մեջ և սովորաբար հանդես են գալիս որպես ձևույթի կազմիչներ. այդպիսիք են, օրինակ, լծորդ ձայնավորները, հոդակապը, որոշ հիմքակազմ տարրեր. կոչենք սրանք **ձևատարրեր** կամ **ձևակազմիչներ**»²⁶:

Հոդակապը, ինքնին գուրկ լինելով իմաստից, չի առաջացնում իմաստային տարբերություններ: Այս հանգամանքը, սակայն, չպետք է բացարձակացնել. սակավ դեպքերում այն կարող է առաջացնել իմաստային տարբերակումներ նեհանդես գալ երկակի դերով: Օրինակ՝

Անցվոր (անցորդ)-**անցավոր** (անցողիկ)

Բանվոր (մշակ)- **բանավոր** (բերանացի)

Բերնոց (բերանակապ)-**բերանոց** (փողային գործիքի մաս)

Բուրավառ (բուրմունքով վառված)- **բուրվառ** (խնկաման)

Գետնաստղ (գետնի վրա սողացող)-**գետնատղ** (գետնի վրա սողալը)

Գետակալ (գետի ափերը փակող՝ պատող)- **գետկալ**(ուռկան)

Դասավար (դասը վարող)-**դասվար** (տարրական դասարաններում բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչ)

Դարձադարձ (պտույտ)-**դարձդարձ** (շարունակ պտտվող)

Դիմահար (դեմ առ դեմ բախվող, ընդդիմահար)-**դիմհար** (նեցուկ, հենարան)

Դնչակալ (սրի, թրի և այլն բռնելու տեղը՝ կոթ)-**դնչկալ** (կենդանիների բերանը փակելու հարմարանք)

Դոնաբաց (դուռը բացող)-**դոնբաց** (բաց, մուտքն ազատ)

Դոնափակ (դուռը ներսից փակելու հարմարանք)-**դոնփակ** (փակ դռներով, մուտքը արգելված)

Ետադարձ (ետ դարձող)-**ետդարձ** (ետ դառնալը)

²⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Ե., 1974, էջ 154:

²⁵ Տե՛ս Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., 1967, էջ 78:

²⁶ Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 27:

Երեսակալ (դեմքը ծածկող շոր, շղարշ)-**երեսկալ** (դռների փականցքի մետաղյա թիթեղիկ)

Էջակապ (էջակապող բանվոր)-**էջկապ** (շարվածքի էջակապելը)

Թաղավոր (1.թաղ ունեցող, 2.թաղածածկ առաստաղ ունեցող, 3.թաղացի) -**թաղվոր** (այգեթաղ կատարող բանվոր, կոլտնտեսական)

Թևաթափ (թևերը թափած)-**թևթափ** (թևի թափը՝ ուժը)

Խաչաքար (խաչաձև քար)-**խաչքար** (վրան խաչ քանդակած սալաքար)

Կախակալ (կախ արված)-**կախկալ** (կոթից կախ ընկնող ջրի դույլ)

Կամակար (կամավոր)-**կամկար** (դժվարաշարժ)

Հրձիգ (կրակ թափող, կրակ գցող)- **հրաձիգ** (հրացանով կրակող մարդ)

Քարհատ (քար հատող մարդ)-**քարահատ** (մեքենա)²⁷

Եզրակացություն: Քննելով ժամանակակից հայերենում մասնակի տեղաշարժերի ենթարկված մի քանի երկրորդական ձևայիններ, կարող ենք եզրակացնել, որ՝

1. տեղաշարժերը լեզվի ներքին զարգացման ընդհանուր գործընթացի արտահայտությունն ու հետևանք են,

2. մասնակի տեղաշարժի ենթարկված երկրորդական ձևայինները հիմնականում հոգնակերտներ (-ներ, -իկ), հոլովիչ-հոլովակերտներ (-ի, -յան, -ով), հոդեր (-ը/ն, -ս, -դ), դերբայական վերջավորություններ են (-ել, -ալ, -ած, -ող), բառաքերականական ածանցներ (-վ, -ցն, -ան, -են, -ն, -չ), հոդակապ (-ա-) են:

3. կան տարաբժեք միավորներ, որոնք, համատեղելով տարբեր իմաստներ, տարբերակվում են երբեմն խոսքից դուրս, երբեմն էլ՝ միայն խոսքում:

4. կան այնպիսի տարաբժեք երկրորդական ձևայիններ, որոնք ձևութային տարբեր իմաստներ արտահայտում են տարբեր բառերում:

Hasmik Ghazaryan. Polysemous Secondary Formants in Modern Armenian. - Linguistic polysemy is associated with the formal-semantic relations of units at different language levels and is manifested at all levels that carry meaning—formational, lexical, morphological, and syntactic. Since the shifts in meaning and value of linguistic units are not phenomena specific to a single stage of the language, but rather reflect the general process of the internal development of the language, their study is important and relevant at all periods.

This article discusses those secondary formants in modern linguistic thinking that have undergone partial semantic shifts, and, having experienced semantic change, in addition to their main function, also appear in a different usage, thus acquiring a specific meaning in this secondary function. The secondary formants under discussion include plural-forming suffixes (-ներ, -իկ), declensional formants (-ի, -յան, -ով), articles (-ը/ն, -ս, -դ), participial endings (-ել, -ալ, -ած, -ող), word-formative suffixes (-վ, -ցն, -ան, -են, -ն, -չ), and the connective formant (-ա-).

²⁷ Բառերի իմաստների բացատրությունը տրվում է ըստ **Է. Աղայանի** *Արդի հայերենի բացատրական բառարանի*, Ե., 1974:

The article emphasizes that there are polysemous secondary formants that either combine different meanings within the same word or express semantic differentiation in various words. It is also noted that polysemous formants may sometimes be distinguished outside of speech, and sometimes only in actual usage.

Keywords: polysemy, secondary formant, semantic change, declensional formant, article, participial ending, word-formative suffix, internal development, linguistic thinking, primary and secondary usage.

Газарян Асмик. Разноценные вторичные форманты в современном армянском языке.- Языковая разноценность связана с формально-семантическими отношениями единиц различных уровней языка и проявляется на всех уровнях, обладающих смысловыми единицами: формантном, лексическом, морфологическом и синтаксическом. Поскольку сдвиги значения и ценности языковых единиц не являются явлением, характерным только для одного этапа развития языка, а выражают общий процесс внутреннего развития языка, их изучение является важным и актуальным на всех этапах.

В статье рассматриваются те вторичные форманты, которые в современном языковом мышлении частично изменили свое значение и, претерпев семантическую трансформацию, помимо своей основной функции, приобрели также и дополнительное употребление, получив, соответственно, особое значение во вторичном контексте. Анализируемые вторичные форманты включают суффиксы образования множественного числа (-ներ, -իկ), форманты склонения (-ի, -յան, -նի), артикли (-ը/ի, -ս, -դ), деепричастные окончания (-ել, -ալ, -ած, -ող), словообразовательные суффиксы (-լ, -ցն, -ան, -ն, -չ), соединительный формант (-ա-).

В статье подчеркивается, что существуют разноценные вторичные форманты, которые либо сочетают различные значения в рамках одного слова, либо выражают разноценность в разных словах. Также отмечается, что разноценные форманты могут различаться как вне контекста, так и исключительно в контексте речи.

Ключевые слова: разноценность, вторичный формант, семантическая трансформация, артикль, формант склонения, деепричастное окончание, словообразовательный суффикс, внутреннее развитие, языковое мышление, основное и вторичное употребление.

Օգտագործված գրականություն

Արեղյան Մ., Երկեր, հ.2, Ե., 1974:

Արթուրյան Մ., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1974:

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 78:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (վերհր.), Ե., 1971-79:

Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ.1, Ե., 1979:

Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963:

Հովսեփյան Հ., Վարդապետյան Պ., Կարապետյան Է., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե., 1975:

Մուրադյան Հ., Անթոսյան Ս., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972:

Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Ե., 1976:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, Ա պրակ, Ե., 1980:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տեսության հիմունքները, Ե., 1974:

**«ԽԱՂ» ԱՐՄԱՏԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Լուսինե Ղամոյան

Բանալի բառեր: Խաղ, արմատ, իմաստ, ածանցավոր բառեր, բարդ բառեր, դարձվածային միավոր, առած:

Նախաբան: Ամեն մի լեզու իր հաղորդակցական կարևորագույն դերը (գործառնություն) իրացնում է բառերի շնորհիվ, որոնցում արտացոլվում է մարդու հասարակական և ճանաչողական փորձը, ժողովրդի պատմությունը, ժողովրդի մտածողությունը:

Այդպիսին է նաև հայերենում հաճախակի կիրառվող «խաղ» բառը՝ «խաղ, ծաղր, կատակ, թատրոն, երաժշտական մի ձայնանիշ, հոդ, շարժում, ընթացք, վազք, արշավ, խայտալը» իմաստներով, որը, ըստ Գ. Զահուկյանի, հավանաբար ծագել է բնիկ հնդեվրոպական *khl- (կամ *khel-)՝ *kel- «քշել, արագ շարժել» արմատից. հմմտ. հ. հնդկ. kaladati «ստիպում է, քշում է, տանում է, համարում է», ալբ. gil «բերել, տանել», հուն. κελλω «ափ քշել (նավը)», κολεα, κολια «մի պար», κλονος «իրարանցում, արագ շարժում», κλονειο «քշել, արագ հալածել», լատ. celer «արագ»: Նշենք նաև, որ Գ. Զահուկյանը կասկածելի է համարում այս արմատի կապը խեթ. kalai «շարժել» բայի հետ, ապա ենթադրում է, որ *խաղալիք* բառի *խաղ-ը* *(s)k(h)el- «ծռել, հենել, ծուռ» արմատից է, որից էլ ունենք *խեղ¹*, ինչպես՝ **խեղկատակ** բառում:

Ինչպես հայտնի է, բառապաշարի համալրման գործընթացում էական դեր ունեն լեզվի բառակազմական եղանակները՝ ածանցումն ու բառաբարդումը:

Հայերենը հարուստ է *խաղ* արմատով կազմված բարդ և ածանցավոր բազմաթիվ բաղադրություններով: Դրանք եղել են գրաբարում, միջին հայերենում, կան արդի գրական արևելահայերենում ու արևմտահայերենում, ինչպես նաև բարբառներում (բարբառային բառերը կքննարկենք մեկ այլ հոդվածով), և այսօր էլ անընդհատ կազմվում են նորանոր բառեր, որոնց կանոնադաշտանք ստորև: Այսպես.

Պարզ ածանցավոր կազմություններ: Ածանցների քանակային հատկանիշով հանդիպում ենք *խաղ* արմատով կազմված **մենածանց** և **բազմածանց** բառեր²: Մենածանց բառերից են՝ **խաղարան** «խաղատուն» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղուն** «խաղացկուն» (ԺՀԼԲԲ, 2, 474), **խաղք** «խայտառակ» (ԺՀԼԲԲ, 2, 474), *արևմտահայերենում* ունենք՝ **խաղիչ** «կողմնացույցի ասեղ» կազմությունը (ՆԲՀԼ, 597): Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանից» դուրս

¹ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 311:

² *Խաղ* արմատով բաղադրված բոլոր օրինակները վերցրել ենք հետևյալ բառարաններից. Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՆՍԲ), Ե., 2010, Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան, լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836, Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), հհ. 1-4, Ե., 1944-1945, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Ե., 1969-1980, Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան* (այսուհետև՝ ԳԲ), հհ. 1-2, Ե., 2000, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), Ե., 2009, Ս. Գաբումաճեան, *Նոր բառագիրք հայերեն լեզուի* (այսուհետև՝ ՆԲՀԼ), Կ.Պոլիս, 1910:

ենք բերել *խաղ* արմատով բաղադրված այնպիսի մենաձանց բառեր, որոնք այսօր գործածական չեն, ինչպես՝ **խաղութիւն** «խաղքութիւն», **խաղուկ** «խաղացող, դեռ երեխայ, խաղակ», **խաղորդ** «խաղացող», որից էլ՝ **խաղորդել** «խաղալ, խաղարկութիւն անել» և այլն (ՀԲԲ, 2, 234):

Ի դեպ, ուսումնասիրության ընթացքում նկատել ենք, որ *խաղ* արմատով կազմված որոշ բառեր ժամանակի ընթացքում կորցրել կամ ձեռք են բերել նոր իմաստներ, ինչպես՝ արդի գրական արևելահայերենում և արևմտահայերենում հանդիպող **խաղարան** բառն ունի «խաղատուն», «խաղավայր, խաղասենյակ» իմաստները, մինչդեռ այն գրաբարում «որևէ խաղ խաղալու տեղ» իմաստից բացի ունեցել է «թատրոն» իմաստը (ԳԲ, 1, 551):

Խաղ արմատով բաղադրված **բազմաձանց** բառերից հանդիպել է հետևյալ օրինակը՝ **խաղացկունություն**՝ «խաղացկուն լինելը, խաղացկունի հատկություն» իմաստով (ԺՀԼԲԲ, 2, 472):

Ինչպես նկատեցինք, ըստ հիմքի նկատմամբ ունեցած դիրքի՝ վերոնշյալ բոլոր բառերը հիմնականում վերջածանցավոր են: Այդպիսին են նաև գրաբարում առկա հետևյալ բառերը՝ **խաղալութիւն** «խաղալը, խաղ» (ԳԲ, 1, 550), **խաղալի** «խաղալիք» (ԳԲ, 1, 550), **խաղալիկ** «խաղացող, պարօղ, պարաւոր կին կամ այր» (ՆՀԲ, 1, 913), **խաղակութիւն** «երեխայի նման խաղալը» (ԳԲ, 1, 550), **խաղանք** «ծաղրելը» (ԳԲ, 1, 551), **խաղացական** «շարժուն, գնայուն» (ԳԲ, 1, 551), **խաղացութիւն** «յառաջխաղացութիւն» (ԳԲ, 1, 551), **խաղացումն** «շարժում, ընթացք, հոսք» (ԳԲ, 1, 551) և այլն:

Բարդություններ: *Խաղ* արմատով բաղադրված բարդությունները անհամեմատ շատ են, ինչպես՝

ա) արմատ+արմատ=գոյական կաղապարով (որտեղ խաղ-ը սկզբնաբաղադրիչ է) բարդ բառերից են՝ **խաղագրավ** «խաղի մեջ դրվող գրավական» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղադահլիճ** (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղասրահ** «զանազան խաղերի (շախմատ, շաշկի, բիլիարդ, թղթախաղ և այլն) հատկացված (և համապատասխան կահավորում ունեցող) սրահ՝ դահլիճ» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղավար** «1. (մարզ.) նա, ով վարում է խաղը՝ մրցումը, դատավոր, 2. մոլեխաղերի մեջ խաղը վարողը» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղադրամ** «թղթախաղի կամ նման խաղերի մեջ դրված դրամը» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղասեղան** «խաղերի համար հատկացված սեղան» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղավարձ** «խաղացողների կողմից խաղավարին տրվող վարձը» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղաքարտ** «խաղաթուղթ» (ԺՀԼԲԲ, 2, 472), եռաբաղադրիչ՝ **արմատ+արմատ+արմատ=գոյական** կաղապարով՝ **խաղադրամարկդ** «վիճակախաղ կազմակերպողների դրամարկդը, ուր իբրև շահ մտնում է վիճակախաղի եկամուտը» (ԺՀԼԲԲ, 2, 467) և այլն:

Որպես վերջնաբաղադրիչ *խաղ* արմատն առկա է հետևյալ բարդություններում՝ **մնջախաղ** «1. առանց ձայնի օգնության՝ դեմքի, ձեռքերի և շարժումներով միտքը նշանացի հասկացնելը. մնջկատակ, 2. ներկայացում, որի մեջ դերակատարները մնջկատակով են խաղում» (ԺՀԼԲԲ, 3, 548), **սիրախաղ** «սիրո խաղ» (ԺՀԼԲԲ, 4, 300), **գոտեխաղ** «մանկական խաղ», **աղյուսախաղ** «քառակուսի տախտակ, որ հորիզոնական և ուղղահայաց գծերով բաժանված է 64 քառակուսիների, որի վրա խաղում են. տամա, դամա», **բերդախաղ** «պատանեկական խաղի մի տեսակ», **երգախաղ** «1. երգի միջոցով կատարվող հերոսապատում, 2. երգամրցում, երգով վիճելը», **բախտախաղ** «պատահմունքից կախում ունեցող խաղ (թղթախաղի այն տեսակը, որի մեջ հաջողությունը պատահականության արդյունք է), 2. մոլեխաղ», **գլորախաղ** «խաղ, որի

Ժամանակ միմյանց զլորում են, թավալզլոր տալիս», **գրագախաղ** «մրցության արդյունքի վրա գրագ գալը», **գրավախաղ** «խաղ, որի մասնակիցները մանր իրեր են գրավ դնում և վիճակահանությամբ կատարում են զանազան առաջադրանքներ (մեծ մասամբ կատակային)», **զինախաղ** «զենքերով միմյանց հետ մրցելը, սրամարտություն, նշանառության մրցում, զինամրցում, զինամարզություն», **գորախաղ** «(ռազմ.) 1. զորքի կամ ռազմական նավատորմի տակտիկական պարապմունքները այնպիսի պայմաններում, որոնք նմանվում են պատերազմական դրության, 2. զորաշարժ», **զվարճախաղ** «խաղ, որ արվում է զվարճանալու համար», **ըմբշախաղ** «(մարզ.) մրցում, ուր հակառակորդները որոշ կանոններով ջանում են միմյանց մեջքի վրա գետին տապալել», **գուգախաղ** «(մարզ.) խաղ, որ կատարվում է երկուական զույգերով (մի զույգը մի կողմը, մյուսը՝ մյուս)», **թղթախաղ** «1. խաղաթղթերով կատարվող խաղ, խաղաթղթերով խաղալը, 2. (ծաղր.) անօգուտ գրագրություններով զբաղվելը», **լախտախաղ** «խաղի մի տեսակ, որը խաղալիս շրջանագիծ են քաշում գետնին, գոտու ծայրերը շրջանագծի ներսում դնում են գծի վրա, դրսում խաղացող հակառակորդը ձգտում է ներսում խաղացողից գոտին խլել և նրանով ծեծել ներսի խաղացողին, մինչև որ վերջինս կարողանա ոտքը դիպցնել խփողի ոտքին. լախտի», **ծայրախաղ** «գրչածայրերով աշակերտական խաղ», **հավկթախաղ** «Զատկին հավկիթ կռվեցնելը», **հիմարախաղ** «թղթախաղի մի տեսակ, որի մեջ տարվողը հիմար է համարվում», **կոնախաղ** «(մարզ.) որոշ տարածության վրա արված փայտե գնդակները զարկելու խաղ, կեզլախաղ», **ձեռնախաղ** «1. ձեռներով խաղ, 2. ձեռքերը խաղացնելով պար», **մենախաղ** «(մարզ.) անհատական, ոչ թիմային մարզական խաղ՝ մրցախաղ», **մոլեխաղ** «բախտախաղ» և այլն:

բ) *արմատ+արմատ=ածական* կաղապարով բարդ բառերից են՝ **խաղադրուծ//խաղանենգ** «խաղի մեջ խաղախտություն անող» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղասեր** «զանազան խաղեր սիրող (անձ)» (ԺՀԼԲԲ, 2, 471) և այլն:

Բարդածանցավոր կազմություններ: Բարդածանցավոր կազմությունները նույնպես բազմաթիվ են և հիմնականում ունեն *արմատ+արմատ+ածանց* կաղապարը, ինչպես՝ **խաղագնդակ** «գնդակ, որով խաղում են, խաղալու գնդակ» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղագործիք** «մարզական խաղերի գործիք» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղադաշնություն** «(մարզ.) ներդաշնակ խաղ» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղադատավոր, խաղասիրություն** «խաղալ սիրելը» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղավարժական** «խաղավարժությանը վերաբերող՝ հատուկ, խաղավարժության» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղարկու** «խաղարկվող, խաղարկման ենթակա» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղարվեստային** «խաղարվեստին վերաբերող՝ հատուկ, խաղարվեստի» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղացանկային** «խաղացանկին վերաբերող՝ հատուկ խաղացանկի» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղեչք** «խաղագումար» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղընկերություն** «խաղընկեր լինելը» (ԺՀԼԲԲ, 2, 472), **զինախաղություն** «զինամրցություն» և այլն:

Արմատ+ածանց+արմատ կաղապարով բարդածանցավոր բառերից են՝ **խաղարանատեր** «խաղարանի տեր, մասնավոր խաղարան պահող» (ԺՀԼԲԲ, 2, 471), **գնդակախաղ** «1. գնդակ խաղալը, 2. գնդակով խաղ» (ԺՀԼԲԲ, 1, 425), **դիմակախաղ** «դիմակահանդես» (ԺՀԼԲԲ, 1, 509), **վերջնախաղ** «շախմատային խաղի եզրափակիչ փուլը» (ԺՀԼԲԲ, 4, 406), **միջնախաղ** «շախմատի սկզբնախաղի և վերջնախաղի միջև տեղի ունեցող խաղը» (ԺՀԼԲԲ, 3, 540) և այլն:

Նորակազմություններ: Վերջին տասնամյակների ընթացքում հայերենն իր բառապաշարը համարել է նորակազմություններով, որոնց մեջ մեծ թիվ են կազմում նաև *խաղ* արմատով բաղադրված բարդ և բարդածանցավոր բառերը: Դրանք առայժմ արձանագրված են միայն

«Նոր բառեր» բառարանում³, իսկ թե որքանով տարածում կգտնեն հետագայում, առայժմ պարզ չէ, բայց որ դրանց մեջ կան հաջողված կազմություններ, ակնհայտ է: Այսպես՝

Նորակազմ բարդ բառեր: Որպես սկզբնաբաղադրիչ՝ *խաղ* արմատն առկա է հետևյալ նորակազմություններում՝ **խաղաշապիկ** «մարզաշապիկ» (ՆԲ, Բ, 59), **խաղագորգ** «խաղալու համար գորգ» (ՆԲ, Ե, 58), **խաղագույք** «խաղերի համար նախատեսված գույք» (ՆԲ, Գ, 56), **խաղակոշիկ** «(մարզ.) մարզակոշիկ» (ՆԲ, Է, 95) և այլն: Ֆ. Խլղաթյանի «Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ)»-ում հանդիպել ենք **խաղաթի** նորակազմությանը՝ «(մարզ.) տախտակե կամ ցանցահյուս թի, որ գործադրվում է մարզական խաղերում (թենիս, փետրագնդակ, սեղանի թենիս) գնդակին հարվածելու համար» իմաստով⁴:

Խաղ վերջնաբաղադրիչով կազմվել են հետևյալ նոր բառերը՝ **լեզվախաղ** «լեզվի խնդիրների նկատմամբ ոչ լուրջ, ոչ գիտական վերաբերմունք»⁵, **կոպախաղ** «կոպերի խաղ» (ՆԲ, Ա, 101), **կատվախաղ** «կատվի խաղ» (ՆԲ, Դ, 74), **լողախաղ** «կեղծ լող» (ՆԲ, Դ, 63), **պաշտոնախաղ** «պաշտոնական դիրքի չարաշահում» (ՆԲ, Զ, 150), **մարդասիրախաղ** «մարդկանց նկատմամբ սիրախաղ, մարդասիրության խաղ» (ՆԲ, Զ, 121), **գաղտնախաղ** «գաղտնի խաղ» (ՆԲ, Բ, 26), **թիմախաղ** «թիմային խաղ» (ՆԲ, Ե, 49), **գոյախաղ** «գոյության, գոյի խաղ» (ՆԲ, Ե, 30) և այլն: Նման մի օրինակ՝ **կովախաղ**, հանդիպել ենք համացանցում, ինչպես՝ **Իսպանիայում աքաղաղների կովախաղ կազմակերպելու համար շուրջ 200 մարդու են ձերբակալել**⁶: Նշենք, որ այս նորակազմությունը արձանագրված չէ մեր ձեռքի տակ եղած ոչ մի բառարանում, թեև ունենք կովախաղ անվանումով ռազմական պար:

Բարդածանցավոր նորակազմ բառեր: Խաղ արմատով կազմվել են նաև բազմաթիվ բարդածանցավոր նոր բառեր, հետևյալ կադապարներով՝

ա) արմատ+արմատ+ածանց(ներ) կադապարով, ինչպես՝ **խաղաժամանակ** «ֆուտբոլիստի՝ թիմի կազմում խաղացած ժամանակը» (ՆԲ, Ա, 79), **խաղագնդիկ** «խաղագնդակ» (ՆԲ, Ե, 58), **խաղարկուհի** «կին խաղարկու» (ՆԲ, Զ, 1), **խաղընկերուհի** «կին ընկերուհի» (ՆԲ, Բ, 60), **խաղաթաքսոոց** «սահմանամերձ համայնքների դպրոցների և մանկապարտեզների տարածքում գտնվող պատսպարան» (ՆԲ, Դ, 65), **խաղաթղթե** «խաղաթղթերից պատրաստված՝ պատրաստվող՝ շինվող» (ՆԲ, Ե, 58), **խաղադրույք** «խաղի ելքի գուշակման դեպքում դրամ շահելու համար վճարվող գումար» (ՆԲ, Է, 95), **խաղագիրք** «խաղերի միջոցով ուսուցանող գիրք» (ՆԲ, Ա, 79),

բ) արմատ+ածանց+արմատ կադապարով՝ **գրչախաղ** «գրական փորձ» (ՆԲ, Զ, 38), **սյունակախաղ** «մանկական խաղ» (ՆԲ, Բ, 129) և այլն:

Խաղ արմատով կազմվել են նաև այնպիսի նոր բառեր, որոնց առաջին արմատը օտարաբանություն է, ինչպես՝ **կիբեռխաղ** «SS ոլորտի խաղ» (ՆԲ, Դ, 77), **գեոխաղացող** «աշխարհաքաղաքական խաղերում դերակատարություն ունեցող միավոր՝ պետություն՝ երկիր» (ՆԲ, Բ, 27) և այլն:

³ Նոր բառեր (կազմ.՝ **Ա. Գալստյան** և ուրիշներ) (այսուհետև՝ ՆԲ), Ա-Է, Ե., 2015-2022:

⁴ **Ֆ. Խլղաթյան**, *Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ)*, Ե., 1982, էջ 90:

⁵ **Ս. Էլոյան**, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002, էջ 198:

⁶ <https://www.1in.am/2491167.html> (07.06.2025թ.)

Աչքի է ընկել *խաղ* արմատով բաղադրված դիպվածային հետևյալ բառը՝ **ճոճանակա-խաղ**՝ «(փխբ.) քաղաքական վայրիվերումներով ստեղծած անկայուն վիճակ» (ՆԲ, Դ, 108):

Բազմիմաստություն և մենիմաստություն: Ինչպես նկատեցինք վերոնշյալ բազմաթիվ օրինակներից, *խաղ* արմատով բազմաթիվ բառեր *բազմիմաստ* են, որոնք հիմնականում ունեն 2-3 իմաստ, ինչպես՝ **խաղաղաշտ** «1. մարզական խաղերի հրապարակ, 2. շախմատի՝ շաշկիի՝ տամայի տախտակը խաղի ընթացքում» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղատեղ** «1. խաղավայր, 2. ձեռք առնելու և ծաղրելու առարկա (մարդ)» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղացանկ** «1. դրամատիկական՝ երաժշտական և այլ երկերի ամբողջությունը, որ խաղացվում է թատրոններում, 2. որևէ դերասանի խաղացած կամ խաղալիք դերերի շրջանակը, 3. (մարզ.) մարզական խաղերի ցանկը որոշ ժամանակաշրջանի համար» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղամիջոց** «խաղի ընթացքի ժամանակը, 2. (հնց., թատր.) ընդմիջում» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղընկեր** «1. ամեն տեսակի խաղերի մասնակիցներից յուրաքանչյուրը, խաղակից, խաղի ընկեր, 2. (թատր.) որևէ ներկայացման մեջ խաղացող դերասաններից յուրաքանչյուրը միմյանց նկատմամբ, դերընկեր, 3. *փխբ.* խաղերի վայրում գտնվող, խաղերին ակնատես» (ԺՀԼԲԲ, 2, 472) և այլն:

Քիչ չեն նաև *մենիմաստ* բառերը, ինչպես՝ **խաղականոն** «խաղի կանոններից յուրաքանչյուրը» (ԺՀԼԲԲ, 2, 468), **խաղաձող** «(մարզ.) բիլիարդ խաղալու համար պատրաստված հատուկ ձողաձև փայտ» (ԺՀԼԲԲ, 2, 468), **խաղամայր** «որոշ խաղերի մեջ (երբ երկու հակառակ խմբեր են խաղում) խմբերից յուրաքանչյուրի գլխավորը. մայր» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղամրցորդ** «խաղի մեջ մրցողներից յուրաքանչյուրը» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղամուծ** «խաղի մեջ մտնող՝ մտած» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղանիշ** «խաղի գառ, որ վրան նիշեր ունի» (ԺՀԼԲԲ, 2, 470) և այլն:

Մեր ունեցած բառային միավորներից ակնհայտ տեսանելի է, որ *խաղ* արմատից բաղադրված բարդությունների արդյունքում ի հայտ են եկել բազմաթիվ՝

ա) **հոմանիշ բառեր**, որոնք հիմնականում երկանդամ են և պատկանում են գոյական խոսքի մասին, ինչպես՝ խաղաթաս - խաղաբաժակ//խաղագավաթ «թաս կամ գավաթ՝ բաժակ, որով նետում են գառերը» (ԺՀԼԲԲ, 2, 467), խաղագումար - խաղադրամ, խաղաղաշտ - խաղա-հրապարակ, խաղաթուղթ - խաղաքարտ, խաղակից - խաղընկեր, խաղամուլ - մուլախաղորդ, խաղամեջ - միջնախաղ, խաղաշատ - բազմախաղ (շատ խաղեր ունեցող, շատ խաղերից կազմված), խաղաշրջանագիծ - խաղաշրջանակ, խաղապոչիկ - խաղատուտ, խաղավայր - խաղատեղ, խաղարան, խաղավարտ - խաղավերջ, խաղատիկնիկ - խաղատիկին, խաղարան - խաղատուն, խաղարկու - խաղորդ, խաղացող - խաղամուլ, խաղաքայլ - խաղահերթ, խաղափուլ - խաղաշրջան, խաղադրուժ - խաղանենգ, խաղախարդախ, խաղակերպ - խաղաձև, խաղառճ և այլն⁷:

բ) **հականիշ բառեր**, ինչպես՝ սկզբնախաղ - վերջնախաղ, խաղավարտ,

գ) **համանուն բառեր**, ինչպես՝ խաղիկ¹ «փոքր խաղ, երեխայական խաղ» (ՀԲԲ, 2, 234) - խաղիկ² «1. ժողովրդական փոքրիկ երգ, որ սովորաբար կազմված է լինում չորս տողից, 2. փոքրիկ երգ» (ԺՀԼԲԲ, 2, 472), խաղավարտ¹ «(մարզ.) խաղի ավարտման պահը» - խաղավարտ² կամ խաղվարտ «(հնց.) մեջը թարախ ունեցող կեղ» (ԺՀԼԲԲ, 2, 471),

⁷Տե՛ս Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009:

դ) **բառային տարբերակներ**, օրինակ՝ խաղատուտ - խաղատուտիկ, խաղտտնիկ, խաղտուտ, խաղտուտիկ, խաղաշիշ - խաղաշշիկ, խաղափայտ - խաղափայտիկ, խաղափոս – խաղափոսիկ, խաղաձող - խաղաձողիկ, խաղամրցույթ - խաղամրցում, խաղամրցություն, սուսերախաղ – խաղասուսեր, սրախաղ - խաղասուր «սուսերամարտում մրցելու սուր՝ սուսեր, սուսերամարտի սուր» (ԺՀԼԲԲ, 2, 471) և այլն:

Այսպիսով՝ *խաղ* արմատն ունի բառակազմական լայն հնարավորություններ, որոնց ուսումնասիրության ընթացքում նկատվել է, որ տարբեր բառերում այն դրսևորվում է զանազան նրբիմաստներով, որն էլ բացատրվում է բառի բազմիմաստությամբ:

Օրինակ՝ գրաբարում *խաղ* արմատն ուներ հինգ հիմնական իմաստ՝ «1. զուարճութիւն՝ ժամանցի նպատակ ունեցող զբաղմունք, 2. երեխայական զբաղմունք, 3. ֆիզիկական մարզանքի միջոց ծառայող զբաղմունք, որի ժամանակ աշխատում են միմեանց գերազանցել ուժով և ճարպկութեամբ. մրցութիւն, 4. խաղալու՝ մրցելու տեղ, թատերաբեմ, 5. ծաղր, կատակ, հեգնանք» (ԳԲ, 1, 549), իսկ արդի գրական հայերենում այն զգալիորեն հարստացել է նոր նշանակություններով. ունի 2 տասնյակից ավելի իմաստ (ԺՀԼԲԲ, 2, 466), որոնց նրբիմաստային առանձնահատկությունները երևում են նաև բառակազմության ժամանակ, ինչպես.

1. «*Զվարճանալու և ուրախանալու զբաղմունք*» կամ «*երեխաների գործունեությունը՝ զբաղմունքը, որ որևէ գործնական նպատակ չունի*»⁸ նրբիմաստներով խաղ արմատն առկա է մի շարք բաղադրություններում⁹, ինչպես՝ **խաղախնդում** «ուրախություն, զվարճություն» (ԺՀԼԲԲ, 2, 468), **խաղագլոր** «թաւալգլոր» (ՀԲԲ, 2, 231), **խաղաբակ** «շենքերին կից բակ, որ հատկացվում է այլևայլ խաղերի» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղանկյուն** «երեխաներին հատկացված անկյուն, որտեղ նրանք խաղում են» (ԺՀԼԲԲ, 2, 470) և այլն, ինչպես նաև մի շարք դարձվածքներում⁹, որոնց ավելի մասնրամասն կանդրադառնանք ստորև, օրինակ՝ **խաղ ու պար** «չափազանց ուրախություն» կամ «փխբ. հեշտ, դյուրին, հեշտ ու ախորժելի, ցանկալի» (Սուքիասյան, 276), **խաղ դառնալ** «մշտական (հասարակ) զբաղմունքի վերածվել» (ՊԲ, 567) և այլն: Այս նրբիմաստով ունենք նաև հարադրավոր բայեր, ինչպես՝ **խաղ անել** «խաղալ», **խաղ բանալ** «սկսել խաղալ», **խաղ ունենալ** «խաղալ», **խաղ սարքել** «1. խաղ կազմակերպել ու խաղալ, **խաղի ելնել** «խաղալ սկսել», **խաղին տրվել** «ամբողջ եռանդով խաղալ, խաղով տարվել», **խաղով ընկնել** «ամբողջ ուշադրությունը խաղին նվիրել, խաղալիս ամեն ինչ մոռանալ, միայն խաղով զբաղվել», նույն իմաստն ունի նաև **խաղով տարվել**-ը (ԺՀԼԲԲ):

2. «*Մարզական մրցություն (ֆուտբոլ, ըմբշամարտ, շախմատ, ձեռնագնդակ և այլն)*» և «*խաղային ընդհանուր մրցության մի հատվածը՝ մասը*»⁹ նրբիմաստներով *խաղ* արմատով կազմվել են մի շարք բառեր, ինչպես՝ **խաղավարժ** «խաղի մարզիչ» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղավար** «1. (մարզ.) նա, ով վարում է խաղը՝ մրցումը, դատավոր, 2. մոլեխաղերի մեջ խաղը վարողը»

⁸ **Առաջխաղացում** բարդաձանցավոր կազմության մեջ *խաղ* արմատն արտահայտում է գրաբարյան «շարժում» իմաստը, հմմտ. **խաղացութիւն** «յառաջխաղացութիւն», **խաղացումն** «շարժում, ընթացք, հոսք» (ԳԲ, 1, 551):

⁹ Դարձվածքների օրինակները վերցված են հետևյալ բառարաններից. **Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան** (այսուհետև՝ ՊԲ), Ե., 2011, **Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան**, Ե., 1975, ԺՀԼԲԲ:

(ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղաձև** «1. խաղակերպ, 2. (մարզ.) մարզախաղերի մեջ խաղացողի կամ տվյալ խմբի խաղառճը» (ԺՀԼԲԲ, 2, 468), **խաղատախտակ** «1. փայտից կամ այլ նյութերից շինված տախտականման հարմարանք, որի վրա խաղաքարերը շարելով խաղում են նարդի, շախմատ, շաշկի և այլն, 2. *փխբ.* այդ տախտակի վրա կատարվող խաղ» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղափուլ** «1. մարզախաղերում երկու կամ ավելի մասից կազմված խաղի յուրաքանչյուր մասը (թայմ), 2. խաղամաս» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղընթաց** «1. խաղի ընթացքը մինչև վերջը, 2. խաղի տևողության ժամանակամիջոցը, 3. խաղաքայլ, 4. խաղացկուն ընթացք՝ քելք ունեցող» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղասկիզբ** «1. որոշ տևողություն պահանջող խաղերի սկսման պահը և սկիզբը, 2. շախմատ, շաշկի խաղերի սկզբնամասը. սկզբնախաղ. *հկնշ.* վերջնախաղ» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղամաս** «(մարզ.) 1. մրցության մաս՝ շրջան, երբ մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես է գալիս միայն մեկ անգամ, 2. շախմատի մրցության մաս, երբ ամեն մի մասնակից խաղում է մեկ խաղ (տուր), 3. մի քանի մասի բաժանվող խաղի մի մասը» (ԺՀԼԲԲ, 2, 470) և այլն: Դարձվածքներից հայտնի են՝ **խաղը շահել՝ տանել** «1. խաղակցին հաղթել, կյանքում հաջողակ լինել», **խաղը տանուկ տալ՝ տարվել** «1. մրցության կամ մոլեխաղերի մեջ պարտվել, 2. ձախողություն կրել, կյանքում պարտվել», **խաղը տաքանալ** «խաղընթացքը եռանդուն դառնալ՝ բորբոքվել, սկսել ոգևորված խաղալ» և այլն:

3. «Մոլեխաղ (թղթախաղ, զառ զցելը և այլն), երբ մրցողները առանձնապես դրամով են խաղում» նրբիմաստով **խաղ** արմատն առկա է բազմաթիվ բարդություններում, ինչպես՝ **խաղագումար** «1. դրամ, որ գոյանում է թղթախաղի կամ այլ կարգի դրամով կատարվող խաղերի ընթացքում, 2. վիճակախաղի մասնակիցներին տրվող գումարը» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղաթուղթ** «1. թղթախաղի համար խաղաքարտից պատրաստած տարբեր նկարներ՝ նիշեր կրող քարտերից յուրաքանչյուրը, 2. (հվեյն.) այդպիսի քարտերի ամբողջությունը, որ անհրաժեշտ է խաղի համար» (ԺՀԼԲԲ, 2, 467), **խաղատուն** «հատուկ շենք կամ սենյակ, որտեղ դրամով մոլեխաղեր են խաղում» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղաորջ** «(արհմրհ.) տուն՝ վայր՝ տեղ, ուր մոլեխաղեր են տեղի ունենում, խաղամուկների որջ» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղամուկ** «1. թղթախաղով կամ այլ մոլի խաղերով տարված (անձ), 2. խաղերով տարված, խաղեր շատ սիրող» (ԺՀԼԲԲ, 2, 470) և այլն, իսկ «*բախտախաղ, վիճակ*» նրբիմաստով ունենք՝ **խաղատոմս** «տոմս, որ իրավունք է տալիս վիճակախաղի մասնակցելու» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղանիվ//խաղանվակ** «վիճակախաղի խաղարկության համար անիվաձև պտտվող հարմարանք» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղարկություն** «1. վիճակախաղի միջոցով ըստ համարների շահումներ հատկացնելը, 2. որևէ ներկայացում բեմադրելը, 3. (հզվդ.) շարժում, թափ» (ԺՀԼԲԲ, 2, 471) և այլն:

4. «Թատերական ներկայացում» կամ «դերակատարում, դերակատարման ոճը՝ արվեստը» նրբիմաստներով **խաղ** արմատը հանդես է գալիս բազմաթիվ բառերում, ինչպես՝ **խաղակերպ** «(թատր.) դերասանական խաղի արտաքին ձևերի ամբողջությունը», **խաղակից** «1. բեմում տվյալ ներկայացման մեջ խաղացող դերակատարներից յուրաքանչյուրը, 2. որևէ խաղի մասնակիցներից յուրաքանչյուրը» (ԺՀԼԲԲ, 2, 468), **խաղառճ** «1. դերասանի անհատական շարժումների՝ դերակատարության եղանակների ամբողջությունը և իր դերի գաղափարական բովանդակության ու գեղարվեստական ձևի նկատմամբ ունեցած մոտեցումը, 2. մրցախաղի եղանակ՝ ոճ» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղարվեստ** «(թատր.) դերասանի խաղալու արվեստը» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղաշրջան** «1. թատերաշրջան, 2. (մարզ.) տարվա այն ժամանակամիջոցը, երբ

ծրագրված խաղեր են տեղի ունենում, 3. յուրաքանչյուր տարվա մարգամրցությունների ամբողջությունը որպես հերթական մրցաշրջան» (ԺՀԼԲԲ, 2, 470), **խաղափորձ** «1. փորձնական ներկայացում, թատերափորձ, 2. որևէ գործողության համար կատարվող նախափորձ» (ԺՀԼԲԲ, 2, 472) և այլն:

5. «*Պար, շուրջպար*» և «*երգ*» նրբիմաստներով խաղ արմատն առկա է հետևյալ կազմություններում՝ **խաղերգ** «պարերգ» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղերգել** «պարերգել» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղվոր** «1. պարել, պարող, 2. խաղացող, 3. խաղացկուն» (ԺՀԼԲԲ, 2, 473), **խաղլացավ** «(բժշկ.) պարելու մոլուցք, պարելու մոլի ցանկություն» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղտուն** «1. գյուղական մեծ տուն, ուր հարսանիքներին շուրջպար էին բռնում՝ մեծ շրջանով. գլխատուն, 2. (բրբ.) *փխբ.* հարսանիքի վերջին օրվա շուրջպարերի ամբողջությունը» (ԺՀԼԲԲ, 2, 474), այդպես նաև՝ **խաղասան//խաղասաց** «միջնադարյան հայ տաղերգու բանաստեղծ, 2. տաղեր՝ երգեր երգող՝ ասող (անձ)» (ԺՀԼԲԲ, 2, 471), որից՝ **խաղասացություն** «տաղասացություն» (ԺՀԼԲԲ, 2, 471), **խաղիկ** «1. ժողովրդական փոքրիկ երգ, որ սովորաբար կազմված է լինում չորս տողից, 2. փոքրիկ երգ» (ԺՀԼԲԲ, 2, 472), **խաղուպար** «1. երգ ու պար, երգելն ու պարելը, 2. *փխբ.* հեշտ, դյուրին, կատարելը հաճելի» (ԺՀԼԲԲ, 2, 474), **խաղուտաղ** «երգ ու երաժշտություն» (ԺՀԼԲԲ, 2, 474), **խաղտետր** «(ժող.) երգեր պարունակող տետր, երգարան» (ԺՀԼԲԲ, 2, 474):

Պարել նրբիմաստով ունենք նաև հետևյալ դարձվածքները՝ **խաղ բռնել** «1. պարել, 2. խաղալ», **խաղ խաղալ** «1. պարել, 2. վտանգի ենթարկել, վտանգել, փորձանք բերել», իսկ *երգ* նրբիմաստով ունենք հետևյալ հարադրավոր բառերն ու դարձվածքները՝ **խաղ ասել** «երգել», **խաղ կանչել** «խաղ ասել, երգել», որից՝ **խաղ կանչող** «երգիչ», **խաղ կապել** «երգ հորինել», նույն իմաստով՝ **խաղ շինել, խաղ հանել** և այլն (ԺՀԼԲԲ, 2, 466):

Այս արմատով ունենք նաև ձայնանիշների անուններ՝ **վերնախաղ** (հնգ.) «1. շաքականի հին խաղերից մեկը, 2. հայկական ձայնագրության մեջ՝ ութնյակի երրորդ աստիճանաձայնը ներքևից, որ կրճատ կերպով կոչվում է վե (փո-է-վե-բե)» (ԺՀԼԲԲ, 4, 402) և **ներքնախաղ** «(հնգ.) հին-հայկական *նե* ձայնանիշի անունը» (ԺՀԼԲԲ, 4, 32):

6. *Խաղ* արմատը հանդես է գալիս նաև հետևյալ նշանակություններով՝ «*ստվերների՝ լույսի գույների արագ փոփոխությունը*», ինչպես՝ **խաղացք** «1. վետվետանք, ծփանք, 2. (ոճբն.) ներքին ուժի ու գործողության հարստություն, ոճի խաղացկունություն, 3. ընթացք» (ԺՀԼԲԲ, 2, 472), «*դեմքի՝ աչքերի՝ մարմնի արտահայտչական շարժումները՝ փոփոխությունը*», ինչպես՝ **դիմախաղ**, «Հայերեն բացատրական բառարանում»՝ **խաղուածք** «մկանունքների նեարդային խաղը, մանաւանդ երեսի վրայ» (ՀԲԲ, 2, 234), «*մարմնի մասերի միացման տեղերը. հոդ*», ինչպես՝ **խաղահան** «հոդախախտ» (ԺՀԼԲԲ, 2, 468) և այլն: Միջին հայերենի բառարանում արձանագրված է **խաղալիկ** բառը՝ «(կզմխս.) ձեռքի այն մասը, որտեղ միանում են բազուկն ու դաստակը» (ՄՀԲ, 303):

7. *Խաղ* արմատի՝ «*գործողություն, որ նպատակ ունի ուրիշներին մոլորության մեջ գցելու*» նրբիմաստով ունենք՝ **խաղբակել** «որոգայթի մեջ գցել» հնացած կազմություն (ԺՀԼԲԲ, 2, 472), դարձվածքներից՝ **իր խաղը խաղալ** «իր գործը տեսնել, նպատակ(ներ)ն իրագործել» (ՊԲ, 567), **խաղ սարքել** «(երկրորդ իմաստով) չար միջոց ստեղծել ուրիշներին վնասելու՝ դավելու, ձեռ առնելու և այլն», **մեկի հետ այսինչ խաղը խաղալ** «այսինչ (վատ) բանը գլխին պատճառել՝ գլխին բերել» (ՊԲ, 567), **մաքիավել(ի)ական խաղեր** «երկդիմի և խորամանկ

քայլեր՝ վարվեցողություն» (ՊԲ, 567), արևմտահայերենում ունենք՝ **խաղի բերել** «խաբել, քթից բռնած ման ածել» (ՊԲ, 568) և այլն, «*դավադրական հնար՝ միջոց*» նրբիմաստով՝ **խաղափոր-ձանք** «կատակով կամ չարամտությամբ մեկին փորձանքի, անհարմար դրության մեջ գցելու հնարամտություն՝ դավ» (ԺՀԼԲԲ, 2, 472), դարձվածքներից՝ **(իր) հին խաղը խաղալ** «(նենգ) քայլը կրկնել, դրան դիմել» (ՊԲ, 567), **խաղի գալ** «փորձության՝ տհաճ վիճակի մեջ ընկնել», «*որոշակի նպատակի հետամտող գործողությունների շարք, գործարք*» նրբիմաստով՝ **խաղի բերել** «փորձության մեջ գցել, անհաճ վիճակում դնել», **խաղի դնել** «վճռական որևէ գործ ձեռնարկել, որ կարող է կամ վերջնական հաղթանակ՝ մեծ շահ բերել և կամ պարտել ու կործանել», **խաղի դրվել** «վճռական գործ ձեռնարկել, որ կարող է կամ մեծ օգուտ կամ ծանր վնաս բերել», **խաղով հասկացնել** «որևէ բան կողմնակի խոսքերով ասել, անուղղակի հասկացնել, մի բան այլաբանորեն ասել՝ հասկանալ տալ», **խաղ խաղալ** «(երկրորդ իմաստով) վտանգի ենթարկել, վտանգել, փորձանք բերել, 3. անհարմար դրության մեջ դնել, տհաճ ու ծիծաղելի վիճակում գցել» և այլն (ԺՀԼԲԲ):

8. *խաղ* արմատը որոշ կազմություններում ունի «*կատակ, թեթև ձեռք առնելը*» նրբիմաստը: Օրինակ՝ միջին հայերենում այդ կամ ընդհանապես «**ծաղրել**» իմաստով արձանագրված է՝ **խաղք** «ծաղրածու» (ՄՀԲ, 303), **խաղքություն** «1. խայտառակ՝ անպատիվ՝ ամոթալի խոսք, 2. խայտառակություն» (ՄՀԲ, 304) ածանցավոր և **խաղք առնել** «ծաղրել, ձեռ առնել» (ՄՀԲ, 303), **խաղք լինել** «խայտառակվել, խայտառակ լինել» (ՄՀԲ, 304) հարադրավոր բառերը: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում հանդիպում ենք՝ **խաղակատակ լինել** «խաղ առնել կատակելով. կամ խեղկատակ ծաղրածու գտանիլ» (1, 914), **խաղաբանել** «խաղ առնել կմ խաղալ բանիւ. ծաղրաբանել» (1, 913):

Արդի գրական հայերենում այս իմաստով հաճախակի գործածվում են նաև հետևյալ դարձվածքները՝ **խաղ անել** «(երկրորդ իմաստով) թեթև ձեռք առնել, 3. լուրջ չվերաբերվել», մեկուն խաղեր ընել (արևմտահայերեն) «(չար) կատակ(ներ) անել» (ՊԲ, 567), **ապրիլմեկյան խաղ** «չար կատակ» (ՊԲ, 567) և այլն:

Ինչպես նկատեցինք վերոնշյալ օրինակներից, *խաղ* բաղադրիչով կան բազմաթիվ դարձվածքներ, որոնք իրենց որոշակի տեղն ու դերն ունեն լեզվի դարձվածաբանության ընդհանուր համակարգում: Դրանց մեջ կան նաև միայն նյութական իմաստ ունեցող անուն խոսքի մասերից բաղադրված այնպիսի դարձվածային միավորներ, որոնք փոխաբերական, վերաիմաստավորված կերպով նշում են որևէ գործողություն կամ երևույթ: Դրանք հիմնականում երկանդամ կառույցներ են, որտեղ գերադաս անդամը *խաղ* գոյականն է, իսկ լրացումը հիմնականում արտահայտվում է ածական և գոյական անուն խոսքի մասերով, ինչպես՝ **անմեղ խաղ** «միամիտ՝ հասարակ բան (մի ուրիշի համեմատությամբ)» (ՊԲ, 567), **ապրիլմեկյան խաղ** «չար կատակ» (ՊԲ, 567), **մանկական/տղայական խաղ** «պարզամիտ, միամիտ քայլ, զբաղմունք» (ՊԲ, 567), **սև խաղ** «դաժան քայլ՝ արարք» (ՊԲ, 567), **արյան խաղ** «ցանկության բռնկում, եռք» (ԺՀԼԲԲ, 2, 467), **բախտի՝ ճակատագրի խաղ** «իրերի՝ երևույթների՝ դեպքերի դասավորությամբ մարդու հետ պատահած որևէ դիպված՝ հաջողություն, դժբախտություն» (ԺՀԼԲԲ, 2, 467) և այլն:

Լեզվի շարահյուսական մակարդակում երբեմն ԴՄ-ը, ձեռք բերելով ստորոգման հատկանիշ և բնորոշվելով հաղորդակցական արժեքով, վերածվում է նախադասության՝ միաժամանակ տարբերվելով սովորական նախադասություններից իրենց բաղադրիչների շարահյուսության կայունությամբ, ինչպես՝ «**Խաղը մոտերին չարժե**» ԴՄ-ը, որն ունի «Այսինչ (փոքր) բանի վրա պետք չէ մեծ բաներ ծախսել, մեծ ջանքեր թափել» նշանակությունը (ՊԲ, 567): Այս ԴՄ-ը ռուսերենից է վերցված՝ Игра не стоит свеч(и), վերջինս էլ՝ ֆրանսերենից՝ Le jeu n'en vaut pas la chandelle:

Արևմտահայերենում ևս հաճախակի գործածվում են *խաղ* բաղադրիչով հետևյալ ԴՄ-ները (ինչպես՝ *խաղը կորսվիլ* «նպատակը՝ ծրագիրը ձախողվել» (ՊԲ, 567), *խաղի հանել* «թեթևամտորեն կորցնել» (ՊԲ, 568), *խաղի բերվիլ* «խաբվել» (ՊԲ, 568), **բանի մը հետ խաղի ելլել** «թեթև վերաբերվել» (ՊԲ, 568), **մեկուն խաղեր ընել** «(չար) կատակ(ներ) անել» (ՊԲ, 567)), որոնց մի մասն առկա է նաև բարբառներում (ինչպես՝ *խաղ ձգել* «զարթուցանել, շարժել, զրգռել» (ՊԲ, 569), *խաղ ընկնիլ*՝ «սիրտը խառնվիլ» (567), *խաղ ըյնիլ*՝ «ջղածության հիվանդություն ունենալ» (ՊԲ, 567) կամ *խաղ իյնիլ* «արթննալ, ցավը կամ ախտը նորեն երևան ելլել, սաստկանալ» (ՊԲ, 567), *խաղ ըյնիլ*՝ «գործի մը մեջ մտնել առանց հրավիրվելու» (ՊԲ, 568) և այլն:

Հանդիպում ենք նաև խաղ արմատով բաղադրված առածներ, ինչպես՝ «Կատվի խաղը, մկան մահը»:

Այսպիսով՝ բառակազմական դիտարկումը ցույց է տալիս, որ «խաղ» արմատը հիմք է դառնում թե՛ ածանցավոր, թե՛ բարդ և բարդաձանցավոր շատ բառերի համար՝ ձևավորելով բառամթերքի լայն շերտ: Այդ միավորների հարստությունը փաստում է, որ արմատը լեզվական այնպիսի մի միավոր է, որից կարող են կազմվել, ոչ միայն գործողություն արտահայտող բառեր (օր.՝ *խաղալ, խաղացնել*), այլև իրային և ածականային տարբերակներ (*խաղալիք, խաղացող, խաղամոլ*): Իսկ նորակազմ բարդ բառերի դիտարկումը (օր.՝ *խաղասարք, խաղահարթակ, խաղամշակույթ*) վկայում է նաև ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան լեզվաստեղծ միտումների գոյության մասին:

Դարձվածքներն ու առածները վկայում են, որ «խաղ» արմատն իր տեղն ունի ոչ միայն բառապաշարում, այլև խոսքային մակարդակում՝ արտահայտելով ազգային մտածողության ու պատկերավորման ձևեր: Այս բոլոր դիտարկումներն ընդգծում են, որ «խաղ» արմատը շարունակում է մնալ կենդանի և զարգացող միավոր՝ լեզվաբանական համակարգում պահպանելով իր հիմնարար դերակատարումը:

Ամփոփում

Ներկայացված հոդվածում ուսումնասիրվում է «խաղ» արմատի ստուգաբանությունն ու նրա իմաստաբանական բազմաշերտությունը հայերենում: Արձանագրվել է, որ արմատն ունի 2 տասնյակից ավելի նշանակություններ, որոնք դրսևորվում են նաև բառակազմական համակարգում: «Խաղ» արմատով ձևավորվել են ինչպես ածանցավոր, այնպես էլ բարդ և բարդաձանցավոր բառեր, որոնց արդյունքում հայերենում առաջացել են հոմանշային ու հականշային շարքեր, համանուն բառեր ու բառային տարբերակներ: «Խաղ» արմատը բառակազմական լայն հնարավորությունների շնորհիվ նպաստել է նաև մենիմաստ և բազմիմաստ բառերի առաջացմանը, իսկ դարձվածային միավորների ու առածների մեջ այս

արմատի կիրառությունը արտացոլում է նրա արտահայտչական ուժն ու լեզվագործառական դերը:

Lusine Ghamoyan. Morphological and Semantic Features of the Root “Խաղ”- This article examines the etymology of the root ‘խաղ [khagh] (game)’ and its semantic complexity in the Armenian language. It is noted that the root has more than two dozen meanings, which are also reflected in the word formation system. Both derivative and complex and compound words are formed from the root ‘խաղ’, resulting in the emergence of synonymous and antonymous series, homonyms and word forms in the Armenian language. The root ‘խաղ’ has also contributed to the emergence of unambiguous and polysemous words, and the use of this root in phraseological units and proverbs reflects its expressive power and linguistic-functional role. The study shows that the root ‘խաղ’ in the Armenian lexicon contributes to the semantic enrichment of the language and the expansion of its expressive possibilities.

Keywords: game, root, meaning, derivative words, compound words, idiom, proverb.

Лусине Гамоян. Морфологические и семантические особенности корня «Խաղ».- В представленной статье исследуется этимология корня «խաղ [xagh] (игра)» и его семантическая многослойность в армянском языке. Отмечено, что корень имеет более двух десятков значений, которые также проявляются в системе словообразования. От корня «խաղ» образованы как производные, так и сложные и сложнопроизводные слова, в результате чего в армянском языке возникли синонимичные и антонимичные ряды, омонимы и словоформы. Корень «խաղ» также способствовал появлению однозначных и многозначных слов, а использование этого корня во фразеологизмах и пословицах отражает его выразительную силу и языково-функциональную роль. Исследование показывает, что корень «խաղ» в армянской лексике способствует семантическому обогащению языка и расширению его выразительных возможностей.

Ключевые слова: игра, корень, значение, производные слова, сложные слова, фразеологизм, пословица.

Համառոտագրություններ

ալբ. - ալբաներեն

արհմրհ. - արհամարհական

բժշկ. - բժշկական

բրբ. - բարբառային

թատր. - թատրոնական

ժող. - ժողովրդական

լատ. - լատիներեն

խեթ. - խեթերեն

ծաղր. - ծաղրական

կզմխս. - կազմախոսական

հ. հնդկ. - հին հնդկերեն

հզվդ. - հազվադեպ

հկնշ. - հականիշ

հմմտ. - համեմատիք

հնց. - հնացած

հվքկն. - հավաքական

մարզ. - մարզական

ոճբն. - ոճաբանական

ռազմ. - ռազմական

փխբ. - փոխաբերական

Օգտագործված գրականություն

Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան, լեզուի, Վենետիկ, 1836:

Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:

Գաբամաճեան Ս., Նոր բառագիրք հայերեն լեզուի, Կ.Պոլիս, 1910:

Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1969-1980:

Խլդարյան Ֆ., Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Ե., 1982:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հհ. 1-2, Ե., 2000:

Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Նոր բառեր (կազմ.՝ **Ա. Գալստյան** և ուրիշներ), Ա-Է, Ե., 2015-2022:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2009:

<https://www.1in.am/2491167.html> (07.06.2025թ.)

**ԲԱՌԱԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԳՈՒՍՏ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ**

Ռեբեկա Մարգարյան

Բանալի բառեր: Հագուստ անվանող բառեր, բառաբաղադրություն, բառակազմական հարացույց, իսկական բարդություն, սերող և բաղադրող հիմքեր, նվազող հաճախականություն, բառակազմական կաղապար, ածանցավոր բառեր, իմաստային դաշտ:

Նախաբան: Ժամանակակից հայոց լեզուն ունի հարուստ բառապաշար: Այդ բառապաշարի մեջ առանձնահատուկ տեղ ունեն հագուստ անվանող բառերը: Մեր նախորդ երկու հոդվածներում քննել ենք այդ իմաստային դաշտի արմատական բառերը, նորաբանությունները, նորակազմությունները, այն նոր ու նորագույն փոխառությունները, որոնք առայժմ չունեն իրենց համարժեքները, հնաբանությունները՝ պատմաբառերը և հնաբառերը:

Սույն հոդվածում հագուստ անվանող բառերի իմաստային դաշտում մենք առանձնացրել ենք բառաբաղադրությունների երկու խումբ՝ բառակազմական հարացույցներ և բառակազմական կաղապարներ:

I. ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐ

Հայ լեզվաբանության մեջ առաջինը Գ. Զահուկյանն էր, որ քննության նյութ դարձրեց բառակազմական հարացույցները: Ըստ նրա՝ «բառակազմական հարացույցները միևնույն բառակազմական հիմքերից (սերող կամ բաղադրող) առաջացած բառերի շարքը կամ ամբողջությունն է»¹:

Հագուստ անվանող բառերի իմաստային դաշտում բառակազմական հարացույցների կամ շարքերի ձևավորումը և դրանցում ընդգրկված բաղադրությունների քանակը պայմանավորված են նրանց բաղադրիչների իմաստային, խոսքիմասային առանձնահատկություններով, ինչպես նաև այլ դաշտերի անդամների հետ դրանց կապակցելիությամբ և բաղադրության մեջ գրաված դիրքով (սերող կամ բաղադրող հիմքերում):

Հագուստ անվանող բառերով կազմված հարացույցների շարքերը ներկայացնելու նպատակով քննենք երկանդամ իսկական բարդությունները՝ որպես բառակազմական նվազագույն միավոր: Ի դեպ նշենք, որ հագուստի անվանումներով կազմված բարդությունները հիմնականում երկբաղադրիչ են:

Ըստ էդ. Աղայանի ԱՀԲԲ-ի² ընձեռած տվյալների՝ բառերը բաղադրվում են.

1. Հագուստ անվանող մի շարք բաղադրությունների երկու եզրերն էլ (սերող և բաղադրող) հագուստ կամ հագուստի մաս են անվանում, ինչպես՝ թագակապ, կոշկազամ, դիպակազգեստ, ծալերիզ, գուլպայաթել, ժապավենաթել ևն:

2. Հագուստ անվանող բաղադրությունների երկու եզրերից մեկը հագուստի անվանում է, իսկ մյուս եզրը՝ այլ դաշտի անդամ, ինչպես՝ գիշերազգեստ, գլխաշոր, ազդրագոտի, զսպաշապիկ, զուգագուլպա, լողազգեստ, ծոցագրպան, կրկնակոշիկ, շրջազգեստ ևն:

¹ Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1995, էջ 15:

² Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:

3. Հագուստ անվանող բաղադրությունների եզրերից ոչ մեկն էլ հագուստի անվանում չէ, սակայն բարդության բաղադրիչների ներքին ընդհանուր իմաստը հագուստ կամ դրա որևէ մաս է նշանակում, ինչպես՝ հոդաթափ, ոտնաման, սրնքակապ, շուրջառ, սեղմիրան, իրանակալ, ուսադիր, ուսաթել, ուսերիզ ևն:

Լեզվում առկա են նաև այնպիսի բաղադրություններ, որոնց սերողկամ բաղադրող եզրերից միայն մեկն է հագուստ կամ հագուստի մաս անվանում: Դրանք թեև ցույց են տալիս հագուստ անվանող բառերի բառակազմական հնարավորությունները, սակայն ամբողջ բաղադրությունը հագուստի անվանում չէ, ուստի դրանք դուրս են մնում մեր հետաքրքրությունների շրջանակներից, ինչպես՝ ատամնաշապիկ, բևեռագոտի, սեպեզր, չափաժապավեն, թելաշատ, հանդերձագործ, հուշաթել, լեռնագոտիկ ևն:

Հագուստ անվանող բարդությունների բաղադրիչները տարբերվում են նաև իրենց շարահյուսական հարաբերությունների բնույթով: Ի տարբերություն այլ բաղադրությունների՝ հագուստ անվանող բարդությունների բաղադրիչների շարահյուսական կապն ստորադասական է: Համադասական հարաբերությամբ կապված բաղադրիչների քանակը սակավ է: Առկա են մի քանի հարադիր բարդություններ, որոնց բաղադրիչները կապված են համադասությամբ, ինչպես՝ օղակ – կոճակ, օղակ – մերակ, շապիկ – վարտիք, հագուստ – կապուստ, փալասփուլուս, կար-կարկատան, թել-ասեղ, թել-դերձան, ծվեն-ծվեն, ծվեն-ծվիկ, ծվեն- ծլանգ:

Այժմ ներկայացնենք սերող հիմքից հագուստ և հագուստի մաս անվանող բառերով կազմված հարացույցներն ըստ դրանց կազմում հանդես եկող բաղադրությունների քանակի նվազող հաճախականության: (Նվազող հաճախականության ցանկը կազմված է ըստ Էդ. Աղայանի ԱՀԲԲ-ի և Բ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանի»³, տվյալների: Ի դեպ զգուշացնենք, որ «Բառակազմական հարացույցներ» և «Բառակազմական կադապարներ» ենթագլուխներում բերված բաղադրությունների զգալի մասը հագուստների և նրանց մասերի անվանում չէ, այլ նրանց սերող կամ բաղադրող եզրերն են հագուստ և հագուստի մաս անվանում: Սակայն մենք հագուստ և հագուստի մաս անվանող բառերի բառակազմական հնարավորությունները ցույց տալու նպատակով ցանկում ընդգրկել ենք բոլոր բաղադրությունները՝ անկախ նրանից՝ դրանք հագուստ կամ հագուստի մաս են անվանում թե ոչ: Նշենք՝ հագուստի և նրա մասերի անվանումներով բաղադրություններն ընդգծված են: Այսպես՝ կոշիկ՝ 13 (կոշկակար, կոշկաքուղ, կոշկակրունկ, կոշկամեխ ևն), եզր՝ 8 (եզրագոտի, եզրաժապավեն, եզրաքուղ, եզրակար ևն), ծալ՝ 7 (ծալաթև, ծալափեշ, ծալեզր, ծալաբաժին) կոճակ՝ 6 (կոճակամայր, կոճակածակ, կոճակատեղ, կոճականցք ևն), մուշտակ՝ 4 (մուշտակազգեստ, մուշտակամորթ, մուշտակաշապիկ, մուշտակածալ ևն), շոր՝ 4 (շորակտոր, շորապատառ, շորագոտի, շորակապ ևն), ծոպ՝ 3 (ծոպածալ, ծոպաշար, ծոպերիզ, ծոպաթել ևն), երիզ՝ 3 (երիզաժապավեն, երիզակապ, երիզածալ), փեշ՝ 3 (փեշակար, փեշածալ, փեշազարդ), գուլպա՝ 3 (գուլպաթել, գուլպակապ, գուլպակալ), գոտի՝ 3 (գոտեզարդ, գոտեկապ, գոտետեղ, գոտկատեղ ևն), ժապավեն՝ 3 (ժապավենաթել, ժապավենակալ, ժապավենանիշ (փոքրիկ ժապավեն կրծքանշանի տակ կարված), թագ՝ 2 (թագակապ, թագապսակ), շալվար՝ 2 (շալվարա-

³ Բ. Ղազարյան, *Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան*, Ե., 1982:

կապ, շալվարակալ), շղթա՝ 2 (շղթայակտոր, շղթայակար (շղթայաձևկար), կար՝ 2 (կարաբաժին, կարաթել), տաբատ՝ 2 (տաբատափոկ, տաբատակալ), վարտիք՝ 2 (վարտիքակապ, վարտիքակալ), գդակ՝ 2 (գդակածալ, գդակակար), դիմակ՝ 2 (դիմակահագուստ, դիմակագգեստ), լաթ՝ 2 (լաթերես, լաթաշոր), քուրձ՝ 2 (քուրձագգեստ, քուրձշոր), դիպակ՝ 2 (դիպակաթել, դիպակագգեստ), թել՝ 2 (թելակար, թելաքուղ), մեխ՝ 1 (մեխակրունկ), գամ՝ 1 (գամասեղ), շապիկ՝ 1 (շապկալնկեր), հանդերձ՝ 1 (հանդերձակար), բաճկոն՝ 1 (բաճկոնագրպան), պսակ՝ 1 (պսակակապ), կապ՝ 1 (կապակտոր), գրպան, զգեստ, թաշկինակ, լաչակ, կրունկ, կտոր, հագուստ, ճարմանդ, շղարշ, տարազ, քող, քուղ բառերը սերող հիմքում բաղադրություններ չեն կազմում, բառակազմական արժեք չունեն:

Հագուստ անվանող բառերի բառակազմական հնարավորություններն այլ են բաղադրող հիմքում: Ներկայացնենք բաղադրող հիմքից հագուստ և հագուստի մաս անվանող բառերով կազմված հարացույցներն ըստ դրանց կազմում հանդես եկող բաղադրությունների քանակի նվազող հաճախականության:

Զգեստ՝ 60 (շրջագգեստ, ննջագգեստ, մարգագգեստ, հարսնագգեստ), թել՝ 24 (ոսկերթել, զարդաթել, ժապավենաթել ևն), կապ՝ 22 (կոշկակապ, մագակապ = հերակապ = վարսակապ, ճակատակապ ևն), կար՝ 22 (զարդակար, ծածկակար, խծիպակար), շոր՝ 18 (զլիաշոր, հարսնաշոր, լողաշոր, ուսաաշոր, ոսկեշոր, մահաշոր ևն), կալ՝ 15 (քթկալ, ճակատակալ, մագակալ, վարսակալ, հերակալ, ծամկալ, կրծկալ, կրծքակալ ևն), պսակ՝ 12 (դափնեպսակ, խաչապսակ, թագապսակ, եղեգնապսակ ևն), երիզ՝ 12 (ծոպերիզ, կողերիզ, լայներիզ, ծաղկերիզ, ոսկերիզ ևն), քող՝ 10 (նրբաքող, ծաղկաքող, շղարշաքող, հարսնաքող), հանդերձ՝ 10 (գիշերահանդերձ, թեթևահանդերձ, մարգահանդերձ, սգահանդերձ ևն), եզր՝ 10 (ծոպեզր, քողեզր, լայնեզր, փոթեզր, ծալեզր ևն), շապիկ՝ 10 (գիշերաշապիկ, կիսաշապիկ, ժամաշապիկ, մետաքսաշապիկ, ոսկեշապիկ ևն), գոտի՝ 8 (լայնագոտի, կոնքագոտի, լողագոտի, թրագոտի, ծաղկագոտի, եզրագոտի ևն), ժապավեն՝ 7 (երիզաժապավեն, նեղաժապավեն, վարսաժապավեն, կարճաժապավեն ևն), տարազ՝ 6 (բազմատարազ, պարատարազ, շքատարազ, մարգատարազ ևն), ծալ՝ 5 (նրբածալ, լայնածալ, ստվերածալ, դարսածալ, երիզածալ), կոճակ՝ 5 (մանրակոճակ, ոսկեկոճակ, պղնձեկոճակ, դարձակոճակ ևն), կրունկ՝ 5 (կոշկակրունկ, մեխակրունկ, ցածրակրունկ, բարձրակրունկ), շղթա՝ 4 (ոտնաշղթա, ձեռնաշղթա, շորաշղթա, ոսկեշղթա), փեշ՝ 4 (լայնափեշ, կարճափեշ, ծալափեշ, երկարափեշ), գրպան՝ 4 (ծոցագրպան, ծածկագրպան, բաճկոնագրպան, կրծքագրպան), ծոպ՝ 4 (մարգարտածոպ, ոսկեծոպ, եզրածոպ), հագուստ՝ 4 (մարգահագուստ, լողահագուստ, հարսնահագուստ ևն), շալ՝ 3 (ուսաշալ, կիսաշալ, դեղնաշալ), կոշիկ՝ 4 (ծանրակոշիկ, նրբակոշիկ, սեպակոշիկ, ջրակոշիկ), գուլպա՝ 3 (կիսագուլպա, զուգագուլպա, բրդագուլպա), քուղ՝ 3 (կոշկաքուղ, եզրաքուղ, գուլպաքուղ), կարկատան՝ 3 (հնակարկատան, կոշկակարկատան, շերտակարկատան), դիմակ՝ 2 (կիսադիմակ, խաղադիմակ), լաչակ՝ 2 (սևալաչակ, մետաքսալաչակ), բաճկոն՝ 2 (կաշվեբաճկոն, թավշեբաճկոն), վարտիք՝ 2 (կիսավարտիք, լողավարտիք), գդակ՝ 2 (մորթեգդակ, թավշագդակ), մուշտակ՝ 2 (մորթամուշտակ, ձեռնամուշտակ), վերարկու՝ 1 (կիսավերարկու), գամ՝ 1 (կոճգամ), լաթ՝ 1 (թելաթ):

Սերող և բաղադրող հիմքերում հագուստ անվանող բառերով կազմված բաղադրությունների նվազող հաճախականության համեմատական պատկերը ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակում.

Սերող հիմք	Հագուստի անվանում	Բաղադրող հիմք
13	կոշիկ	4
8	եզր	10
7	ծալ	5
6	կոճակ	5
4	երիզ	12
4	մուշտակ	2
4	շոր	18
3	ծոպ	4
3	փեշ	4
3	գուլպա	3
3	գոտի	8
3	ժապավեն	7
2	թագ	3
2	շավար	2
2	շղթա	4
2	կար	20
2	տարազ	6
2	վարտիք	2
2	գդակ	2
2	դիմակ	2
2	քուրձ	1
2	լաթ	1
2	թել	24
1	շապիկ	10
1	հանդերձ	10
2	սսակ	12
2	դիպակ	1

0	գրպան	4
0	թաշկինակ	1
0	լաչակ	2
1	կապ	22
0	կրունկ	5
0	կտոր	1
0	կալ	15
0	կարկատան	3
0	հագուստ	4
0	ճարմանդ	1
1	շալ	3
1	շղարշ	2
0	վերարկու	1
0	տարազ	6
0	քող	10
0	քուղ	3
0	զգեստ	60

Համեմատության աղյուսակը կազմելիս թե՛ սերող և թե՛ բաղադրող հիմքերում վերցրել ենք հագուստ անվանող բառերի գրեթե նույն ընտրանին, որի անդամները բաղադրող հիմքում ավելի շատ բարդություններ են կազմել (մոտ 307-310), քան սերող հիմքում (մոտ 90-95): Դա նշանակում է, որ բաղադրող հիմքը ավելի կենսունակ է և մեծ դեր է կատարում նոր բառեր՝ հագուստի անվանումներ կազմելու համար: Բաղադրող հիմքի արտադրողականությունը, ըստ իս, բացատրվում է նրանով, որ վերջինս արտահայտում է բառի հիմնական իմաստը և այս դիրքում որպես գոյական կարող է ընդունել տարբեր խոսքի մասերով լրացումներ (Գ + Գ, Ա + Գ, Բ + Գ, Դ + Գ), հետևաբար կառաջանան բազմաթիվ բաղադրություններ, մինչդեռ սերող հիմքում տվյալ բառը գոյական է և կարող է սահմանափակ բառերի հետ կազմել բաղադրություններ. օրինակ՝ զգեստ բառը բաղադրող հիմքում կազմել է 60 բաղադրյալ բառ, իսկ սերող հիմքում՝ ոչ մի:

II. ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Բառակազմական կաղապարները, ըստ Լ. Հովսեփյանի հստակ ձևակերպման, «բառակազմական տարրերի գուգորդման եղանակներն են»⁴, որոնցով կազմվում են բաղադրյալ (բարդ

⁴ Լ. Հովսեփյան, *Գրաբարի բառակազմությունը*, Ե., 1989, էջ 51:

և ածանցավոր) բառեր:

Հագուստ անվանող բառերով կազմված բաղադրությունների բառակազմական կաղապարները ներկայացնելիս որպես վերլուծության հիմնական միավոր ընդունվում է հիմքը, որը տարբեր կաղապարների դեպքում ունենում է արմատական կամ բաղադրյալ կազմություն:

Ըստ Ջահուկյանի⁵ արմատական հիմքերը լինում են «մաքուր արմատական» և «արմատական»:

Ժամանակակից հայերենում հագուստ անվանող բառերը՝ որպես բառակազմական հիմք, հիմնականում դրվում են ուղիղ, անփոփոխ ձևով և կոչվում են մաքուր արմատական (անփոփոխ) հիմք, ինչպես՝ ծոպանման, շղարշակալ, տաբատակապ, ուսաշալ ևն:

Արմատական հիմքերը լինում են՝ 1. հնչյունափոխված, 2. հավելատարրային՝ ա հոդակապով և ա, ո ձայնավորներից հետո հանդես եկող յ կիսաձայնով:

Հաճախ արմատական հիմքերի որոշ մասը անխառն հանդես չի գալիս, այլ հնչյունափոխված հիմքը՝ ա հոդակապով (կոշկազամ, կոշկաքուղ), ա, ո ձայնավորներից հետո հնչվող ու գրվող յ կիսաձայնով ու ա հոդակապով (գուլպայաթել, գուլպայագործ), գրաբարյան ն վերջնահնչյունով (ձեռ(ն)կապ, հարս(ն)աքող, ոտ(ն)աման), լեռ(ն)զգեստ): Օրինաչափն ու գործողը անհնչյունափոխ հիմքերն են՝ ա հոդակապով (ժապավենաթել, ծոպերիզ, հանդերձակալ, տաբատակապ): Հաճախ սերող հիմքի վերջին ի ձայնավորը միանում է ա հոդակապին և հնչյունափոխվում է՝ վերածվելով ե (ե) ձայնավորի, ինչպես՝ գոտիագարդ > գոտեզարդ, գոտիակապ > գոտեկապ, ոսկիադերձան > ոսկեդերձան, կաշիագոտի > կաշեգոտի, մորթիագզեստ > մորթեզգեստ ևն:

Ջգալի տոկոս են կազմում հագուստի և նրա մասերի անվանումներով բաղադրված այն կառույցները, որոնք անհոդակապ են, ինչպես՝ սեղմիրան, շուրջառ, փողկապ, վզկապ, կրծկալ, կողեզր, կողերիզ, լայներիզ, կրծքանդ ևն:

Ի տարբերություն գրաբարի՝ արդի հայերենում հագուստի անունները՝ որպես սերող և բաղադրող հիմքերի բաղադրիչներ, քերականական ձևավորում չունեն:

Բառակազմական կաղապարները քննելիս նաև անհրաժեշտ է պարզել, թե հագուստ անվանող բառերը ո՞ր խոսքի մասերով են արտահայտվում և բաղադրության մեջ ո՞ր դիրքերում են գտնվում (սերող, թե՞ բաղադրող):

Նշենք, որ հագուստ անվանող բառերը ցույց են տալիս առարկա, գոյականներ են և սերող հիմքում բաղադրվում են գոյականների, մասամբ բայարմատների, իսկ բաղադրող հիմքում՝ գոյականների, ածականների, բայարմատների և մասամբ դերանունների հետ:

Հագուստ անվանող բառերով կազմված երկանդամ բաղադրությունները քննել ենք՝ հիմք ընդունելով Ս.Գալստյանի⁶ ներկայացրած բառակազմական կաղապարների սերող (սերման) աղյուսակը, որն ընդգրկում է բոլոր խոսքի մասերի զուգորդելիության տեսականորեն հնարավոր 16 կաղապարներ, որոնցից ժամանակակից հայերենում գործում են ԳԳ(NN), ԳԲ(NV), ԳԱ(NA), ԱԳ(AN), ԱԲ(AV), ԱԱ(AA), ՄԲ(AV), ՄԱ(AA), կաղապարները, մյուսները բացառվում են:

⁵ Գ. Ջահուկյան, *նույն տեղում*, էջ 15:

⁶ Ս. Գալստյան, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2014:

Վերոհիշյալ գործող կաղապարներից հագուստ անվանող բառերի համակարգում գործում են միայն Գ+Գ, Ա+Գ, Բ+Գ, մասամբ Գ+Բ, Դ+Գ կաղապարները: Ավելացնենք, որ հագուստի անվանումներով ձևավորված երկարմատ բառակազմական կաղապարներից Գ+Գ կաղապարն ունի երեք տարբերակ՝ կախված նրանից, թե հագուստ անվանող բաղադրիչը ո՞ր հիմքում է հանդես գալիս:

Եզրակացություն: Այսպիսով, արդի հայերենում հագուստ անվանող երկանդամ (իսկական) բարդությունների բառակազմական կաղապարները հետևյալներն են՝

1. Գոյական + Գոյական (Գ+Գ)՝ կոշկաքուղ, շղարշաքուղ, ծոպերիզ, եզրագոտի, շորաշոթա, կոշկակրունկ, մեխակրունկ, բաճկոնագրպան, գամասեղ, ծալաբաժին, կարաբաժին, կոճակամայր, կոճակածակ, կոշկաքիթ ևն, հերակապ, գուգագուլպա, վզկապ, ծամթել, կնատարազ, փողկապ, թրագոտի, լանջեզր, հարսնաշոր ևն:

2. Ածական + Գոյական (Ա+Գ)՝ սևազգեստ, կրկնակոշիկ, ոսկեհանդերձ, ոսկեմաշիկ, կարճափեշ, ծանրակրունկ, լայնափեշ, լայնագոտի, ցածրակրունկ, բարձրակրունկ, բարակաշոր ևն:

3. Բայարմատ + Գոյական (Բ+Գ)՝ զսպաշապիկ, ննջազգեստ, լողազգեստ, մարգահագուստ, պարատարազ, լողավարտիք, սուգագուլպա ևն:

4. Գոյական + Բայարմատ (Գ+Բ)՝ ճակատակալ, մազակալ=հերակալ, գուլպակալ(կալ-ով կազմված բաղադրությունները):

5. Դերանուն + Գոյական (Դ+Գ)՝ նույնահագուստ, նույնահանդերձ, նույնատարազ, այլատարազ, այլահագուստ, համայնահագուստ, ամբողջահագուստ (վերնազգեստ և տաբատ) ևն:

Հագուստ անվանող բառերի համակարգում քիչ բաղադրություններ են կազմվում Գ+Բ և Դ+Գ կաղապարներով, իսկ գործուն են Գ+Գ, Ա+Գ կաղապարները:

Բառակազմական հիմքերի, հավելյալ տարրերի և ածանցների գուգադրմամբ առաջանում են 1) հիմք (արմատ) + հիմք (արմատ) և 2) հիմք (արմատ) + ածանց հիմնակաղապարները:

Առաջինները կոչվում են երկանդամ իսկական բարդություններ, երկրորդները՝ ածանցավոր բառեր: Հիմքերի (տրոհելի) և ածանցների բաղադրությամբ առաջանում են բարդ ածանցավոր բառեր, որոնց մի մասը դիտվում է որպես բարդ բառ, մյուսները՝ ածանցավոր՝ պայմանավորված նրանով, թե ածանցը հիմքակազմի՞չ է, թե՞ հանդես է գալիս բառակազմության վերջին փուլում: Առաջին տիպի կառույցները կոչվում են խառը տիպի (օձիքա - կիր, վարտիքա - կալ) բաղադրություններ, իսկ երկրորդները՝ ածանցական:

Իբրև եզրակացություն նշենք, որ հագուստ անվանող բաղադրությունների ճնշող մեծամասնությունն ունի պարզ հիմք (արմատ) + պարզ հիմք (արմատ) և պարզ հիմք + ածանց հիմնակաղապարները: Խառը տիպը բնորոշ չէ հագուստ անվանող բաղադրություններին:

Rebeka Margaryan. Compounds the semantic field of words naming clothes. -Formation of word forming and paradigms in the semantic field of words naming clothes and number of compounds involved in them are determined by the semantic and linguistic features of their components, as well as their connectivity with members of other fields and their position in the compounds (in stemming and compound bases).

Keywords: Words naming clothes compounds word-forming paradigm real complexity, stemming and compound bases of the word, decreasing frequency, word forming pattern, semantic field.

Ребека Маргарян. Ингредиенты в поле слов,обозначающих одежду. - Формирование словообразовательных парадигм или рядов в семантическом поле слов, обозначающих одежду,и количество включенных в них соединений обусловлено семантическими, речемыслительными особенностями их компонентов, а также их связью с другими полями и положением, указанным в составе (на питательной и составной основе).

Ключевые слова: слова обозначающие одежду, словосочетание, словообразовательная парадигма, производные и составные основы, убывающая частота, фразеологический шаблон, производные слова, семантическое поле.

Օգտագործված գրականություն

- Արեղյան Մ., Երկեր, հ.Զ, Ե., 1974:
- Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
- Գալստյան Մ., Դպրոցական բառակազմական բառարան, Ե., 2014:
- Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը Ե., 1989:
- Ղազարյան Բ., Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Ե., 1982:
- Զահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980:
- Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
- Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982:

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ»
ՏԵՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ**

Միլվա Պապիկյան

Բանալի բառեր: Փոխառություն, տարաշխարհիկ բառեր, օտար բառեր, համանիշային շարք, տերմինային համանիշություն, թարգմանական գրականություն, իրույթ:

Նախաբան: Ինչպես հայտնի է, փոխառությունը ուրիշ լեզուներից բառեր և այլ լեզվական միավորներ փոխառելն է: Փոխադարձաբար իրար վրա ազդում և փոխառություններ են կատարում այն ժողովուրդները, որ հարաբերություններ ունեն միմյանց հետ՝ լինեն դրանք սոցիալ-տնտեսական թե հասարակական-քաղաքական: Աճառյանի խոսքերով՝ երբ մի ազգ մի ուրիշ ազգի լեզվից բառեր է փոխ առնում, առնում է այնպիսի բառեր, որոնք իր կուլտուրական կյանքի որևէ պահանջը լրացնում են¹:

Ինչպես ժողովուրդները չեն կարող ապրել միմյանցից մեկուսացած, այնպես էլ լեզուները չեն կարող չազդել միմյանց վրա, քանի որ փոխադարձ շփումների՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն, անհրաժեշտաբար կատարվում են փոխառություններ: Այդ փոխառությունները միատարր չեն: Կան փոխառություններ, որ կատարվել են փոխառու լեզվում նոր առարկան, երևույթը նշելու համար: Հնարավոր է, որ որոշ ժամանակ անց ստեղծվի այդ բառի հայերեն համարժեքը, և դրանք կարող են որոշ ժամանակահատվածում գոյատևել կողք կողքի: Ի վերջո, հաղթում է դրանցից մեկը կամ ենթարկվում իմաստային տարբերակման:

Որևէ ժողովրդի պատմությունը ուսումնասիրելու կարևորագույն աղբյուր է նրա լեզուն, հատկապես բառապաշարը, որում արտացոլված են տվյալ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառները, միևնույն ժամանակ երևում են տվյալ էթնոսի պատմամշակութային կապերը ուրիշ ժողովուրդների հետ: Վ. Աբանի կարծիքով՝ ժողովրդի և նրա լեզվի պատմությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ 1. լեզվի պատմությունից գնալ ժողովրդի պատմությանը, 2. ժողովրդի պատմությունից գնալ լեզվի պատմություն՝ օգտագործելով ազգային պատմության տվյալները՝ բացատրելու փաստերը, գործընթացները, որ կատարվում են լեզվում²: Այսպես, երբ մի ժողովուրդ գտնվում է այլ ժողովրդի քաղաքական ազդեցության տակ, բնականաբար, լեզվի մեջ մտնում են այնպիսի բառեր, նաև արտահայտություններ, որոնք հատուկ են քաղաքական գերիշխանություն ունեցող ժողովրդի լեզվին, ինչպես՝ հայերենում բազմաթիվ իրանական ծագման բառեր, արաբների տիրապետության ժամանակ՝ արաբերենից անցած բառեր, թուրքական գերիշխանության ժամանակ՝ բազմաթիվ թուրքական բառեր, որոնք, ըստ Աճառյանի, բարբառներում 4000-ից անց են, խորհրդային տարիներին՝ ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած բազմաթիվ բառեր:

¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 1, Ե., 1940, էջ 28:

² **В.И. Абаев**, *О принципах этимологического словаря* // Вопросы языкознания, N 5, 1952, стр. 56-69.

Փոխառությունների մեջ առանձին շերտ են ներկայացնում հատկական փոխառությունները³: Այս տերմինը հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ գործածել է Էդ. Աղայանը: Անվանում են նաև *տարաշխարհիկ բառեր*, *էկզոտիզմներ*, *օտար բառեր*: Սրանք այն փոխառյալ բառերն են, որոնք ցույց են տալիս այս կամ այն ժողովրդին, երկրին հատուկ երևույթներ, սովորություններ, իրեր և այլն:

Ընդհանրապես հատկական փոխառությունների գործածությունը հատուկ է թարգմանական գրականությանը. թարգմանիչը տվյալ ժողովրդի առանձնահատկություններին բնորոշ բառերը չի թարգմանում՝ տեղական կոլորիտը և հուզազգացական կոդը պահպանելու, ինչպես նաև արտահայտչականություն ստեղծելու համար, ինչպես՝ ռուսերենից՝ *բուռլակ* «նավաքարշ բանվոր», սանսկրիտից՝ *գուրու* «ուսուցիչ», պարսկերենից՝ շահիդ «վկա», *մոջահեդ* «հավատի զինվոր», մոնղոլերենից՝ Դալայ լամա «Բարձրյալ», արաբերենից՝ *իմամ*, *իսլամ*, *մեդրեսե*, *մզկիթ*, *ջիհադ* և այլն: Երբեմն սկզբնապես 1-2 լեզվում հանդիպող հատկական փոխառությունը անցնում է շատ լեզուների, հասկանալի դառնում շատերին և համալրում միջազգային բառերի շերտը, ինչպես՝ չինարենից *թայֆուն* «կործանիչ փոթորիկ, որ փչում է Ասիայի և Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասերում», ճապոներենից՝ *ցունամի* «ափամերձ ալիք», *տորնադո*՝ իսպաներենից՝ «արևադարձային երկրներում՝ մրրիկի տեսակ»:

Սովորաբար այդ բառերը թարգմանելի չեն. երբեմն կարող են արտահայտվել թարգմանությամբ՝ հեղինակի կամ թարգմանչի բացատրություններով՝ փակագծերում կամ տողատակում:

Փոխառությունների և հատկական փոխառությունների միջև սահմանը փոփոխական է: Երբ առարկան կամ սովորույթը յուրացվում է, ապա միաժամանակ կատարվում է հասկացության յուրացումը, որն այն վերածում է սովորական փոխառության:

Նշենք, որ *փոխառություն*, *օտարաբանություն* և *էկզոտիզմ* տերմինների տարբերակման փորձ է կատարել Արևիկ Քամալյանը⁴:

«Հատկական փոխառություն» տերմինի մասին: Դիտարկենք *տարաշխարհիկ* բառեր, *օտար բառեր*, *էկզոտիզմ* բառերի բացատրությունները արդի հայերենի բացատրական բառարաններում:

Տարաշխարհիկ բառը ԱՀԲԲ-ում բացատրվում է. «1. Հեռավոր՝ օտար աշխարհի, օտար երկրյա: 2. Օտարոտի, անծանոթ, անսովոր, օտար, ոչ սովորական: 3. Հեռավոր աշխարհի գնացած, օտարության մեջ ապրող, պանդուխտ: 4. Հեռու տեղ քշված, արքտրական, վտարանդի: 5. Օտարական, օտար աշխարհից եկած: 6. Հայրենի աշխարհից կտրված, օտար աշխարհում ձևավորված՝ առաջացած: 7. Փխբ. Գերերկրային, բացառիկ, արտասովոր: Տե՛ս Հմայք»⁵:

Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում՝ *Տարաշխարհիկ*-ն ունի «1. Տես տարաշխարհական: 2. Հեռավոր կամ օտար աշխարհի գնացած, պանդուխտ: 3 Հեռու տեղ քշված, արքտրական, վտարանդի: 4. Օտար աշխարհից եկած, օտարական»⁶ իմաստները: (*Տարաշխարհիկ բառեր* տերմինը

³ Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984. էջ 169:

⁴ Ա. Քամալյան, *Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ)* // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն 2(17), Ե., 2015, էջ 66-80:

⁵ Տե՛ս. Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 1420:

⁶ Տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., 1944-1945, էջ 384:

գործածում են Ֆ. Խլղաթյանը «Ժամանակակից հայոց լեզու», Ե., 2009, էջ 192, նույնի՝ Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու, Ե., 1976, էջ 159), «Հայոց լեզվի ուղեցույցի» հեղինակները (Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան), Ե., 2017, էջ 58: Ընդ որում, ուղեցույցում նշվում է նաև *էկզոտիզմ* տերմինը): Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» *տարաշխարհական, տարաշխարհիկ* գլխաբառի երկրորդ իմաստը «այլերկրյա» է⁷:

էկզոտիկ բառը հունական ծագում ունի՝ exōtikos: Հայերենում ունի «Տարօրինակ, արտասովոր» իմաստները: (ԱՀԲԲ, էջ 392): Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում բառն արձանագրված չէ: *էկզոտիզմ* բառն արձանագրված չէ Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարանում»⁸: Վկայված է *էկզոտիկա*-ն՝ «Տարաշխարհիկություն» այն ամենը, ինչ որ արտասովոր՝ արտակարգ՝ տարօրինակ է»⁹:

Օտար միավոր տերմինի գործածության հանդիպում ենք Լ. Հովհաննիսյանի «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մեջ¹⁰: Նա գտնում է, որ *օտար միավոր* և *փոխառություն* հասկացությունների սահմանները նույնական չեն և փոխառություններ չի համարում 1. երբ միավորը համատեքստում հանդես է գալիս որպես օտար բառ, և տրվում է նրա բացատրությունը, 2. օտար սխալագիր ձևերը, 3. այն կազմությունները, որոնց մեկ բաղադրիչը մայրենի լեզվի ձևույթ է, 4. համանուն շարքերի այն միավորները, որոնք փոխառու լեզվում հեռանալով նախնական իմաստից, ձեռք են բերել նոր իմաստ, որը չկա փոխառու լեզվում: Նա որոշ վերապահությամբ հավելում է նաև այն օտար տերմինները, որոնք փոխառու լեզվում գործառում են փոխառու լեզվի տվյալ (հիմնականում չթարգմանվող) հասկացությունները ներկայացնելու համար, օրինակ՝ *մովպետան մովպետ*-ը¹¹ և այլն: Սա հենց հատկական փոխառության օրինակ է:

Մենք գործ ունենք տերմինային համանիշության հետ: ԱՀԲԲ-ում *օտար* բառը բազմիմաստ է, ունի 19 իմաստ (էջ 1593): Բառարանում *օտար* բառի 3-րդ իմաստն է «Տվյալ լեզվին՝ մշակույթին չպատկանող, օտարամուտ, փոխառյալ (օտար բառեր, ոճ)», 4-րդ իմաստը՝ «Ուրիշ ժողովուրդների պատկանող՝ հատուկ, վերաբերող»: Կարծում ենք՝ Էդ. Աղայանը բառի հենց այս իմաստները նկատի ունենալով է առաջարկել *հատկական փոխառություն* տերմինը: Այն ճիշտ է արտահայտում *հատկական*¹² *փոխառություն* տերմինի իմաստը, այն է՝ տվյալ բառը հատուկ

⁷ Տե՛ս Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 619:

⁸ Տե՛ս Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան* (այսուհետև՝ ՕԲԲ), հեղ. հրատ., Ե., 2011: Բառարանի առաջաբանում Արտաշես Սարգսյանը գրում է, որ լայն առումով բոլոր այն բառերը, որ հայերենը չի ժառանգել հնդեվրոպական մայր լեզվից, կարելի է օտար համարել: Բառարանում **օտար** ասելով, նկատի են ունեցել բոլոր այն բառերը, որոնք այսօր հանրության կողմից դիտարկվում են որպես այդպիսիք:

⁹ Ա. Հայրապետյան, նշվ. աշխ., էջ 183:

¹⁰ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990:

¹¹ ՀԱԲ-ում *մովպետ* բառի բացատրությունը հղվում է *մոզ* գլխաբառին: *Մովպետան մովպետ*՝ Մոզպետների մոզպետը, մազդայական (զրադաշտական) կրոնի գլխավոր քահանայապետն է: Մկզբնապես պահլավերեն (միջին պարսկերեն) ասվել է *մոզպետ*: Մասանյան շրջանում դարձել է մովպետ և այստեղից՝ մովպետան մովպետ: Տե՛ս Զ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1977, էջ 337, **Եղիշե**, *Վարդանի և հայոց պատերազմի մասին*, Ե., 1971, էջ 67 (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի):

¹² *Հատկական*-ը բացատրվում է 1. Մեկին հատուկ, անձնական, սեփական, անհատական, 2. Հասարակ, նվաստ; 3. Տե՛ս Հատկացական: *Հատկացական*-ն ունի «հատկացում ցույց տվող՝ արտահայտող» իմաստը (ԱՀԲԲ, 839):

է որնէ ժողովրդի, նրա մշակույթին, սովորություններին, քանի որ, իսկապէս, հատկական փոխառությունները հենց տվյալ լեզվին բնորոշ իրություններն են /ռեալիաներ/: Սովորաբար դրանք գործածվում են, երբ խոսքը վերաբերում է տվյալ ժողովրդին բնորոշ իրություններին (ռեալիաներ--факты действительности)¹³: Օրինակ՝ իրանական հին կրոնին՝ զրադաշտականությանը վերաբերող բառերը կարելի է համարել հատկական փոխառություններ՝ *աթաշ* «կրակ», *բարսմունք*՝ բույս է, որ ասորուշանների մոտ իրենց ձեռքին պահում էին մոգերը, *բոգ-պայիտ* (հին պարսիկների կրոնական արարողություններին վերաբերող գիրք է), *դեն*՝ «կրոն, հավատ», *դենիմազդեզն* «պարսկական կրոն» և այլն:

Եթե ընդհանուր բառապաշարին հատուկ է տարբեր հարաբերություններ նշանի և նշանակելիի միջև (բազմիմաստություն, համանունություն, հոմանիշություն), ապա տերմինագիտության մեջ ընդունված է հետևյալ սկզբունքը՝ *տվյալ տերմինահամակարգում մեկ տերմինին՝ մեկ իմաստ* (Աղայան, նշվ. աշխ., էջ 355): Հոմանիշությունը, ինչպէս հայտնի է, նշանի իմաստաբանական զարգացման հետևանք է. այս դեպքում մեկ նշանակելին ունի մի քանի նշաններ, որոնք միմյանցից տարբերվում են զանազան իմաստաբանական նրբերանգներով, գործառական-ոճական հատկանիշներով: Եթե համընդհանուր բառապաշարում բառին հատուկ է նշանի ներքին զարգացման հնարավորությունները, որը խոսում է լեզվի ճկուն լինելու մասին, ապա տերմինաբանության մեջ դա համարվում է թերություն: Տերմինաբանության մեջ նախընտրելի է մեկ նշան – մեկ նշանակելի հարաբերություն:

Աղայանը գրում է, որ ընդհանուր բառագիտական համանիշությունից պետք է տարբերել տերմինաբանական համանիշությունը:Տերմինային համանիշության ոլորտում մնում են բացարձակապէս նույնիմաստ տերմինները, այսինքն՝ տերմիններ, որոնք նույն հասկացությունն են արտահայտում տվյալ տերմինահամակարգում՝ առանց որևէ տարբերության և կարող են ազատորեն փոխարինել իրար մասնագիտական խոսքում, ինչպէս՝ *քնարերգություն-լիրիկա*, *փոշեծծիչ-փոշեծուծ-փոռշեհավաք* և այլն: Քննության առնելով այդ կարգի համանիշները տերմինագիտական մոտեցումով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության. նույնիմաստ տերմինները, իբրև միևնույն հասկացության տարբեր բառային ձևեր, բազմանուններ են, որովհետև այդ համանիշները միևնույն հասկացության տարբեր անվանումներ են....» (նույն տեղում): Աղայանը տերմինային համանիշությունը անվանում է բազմանուններ, ինչպէս՝ *փոշեծծիչ, փոշեծուծ- փոշեհավաք* և այլն: Նշվում է նաև, որ եթե չնորմավորված խոսքում բազմանունների գործածությունը թույլատրելի է, ապա տերմինաբանության մեջ դրանք խրախուսելի չեն, այլն երբեմն ավելորդ զուգահեռություններ են ստեղծում և նույնիսկ շփոթությունների տեղիք տալիս (Աղայան, նշվ. աշխ., 355):

Ինչպէս գիտենք, տերմինի համար կարևոր է նաև պատճառաբանվածությունը: Որքան տերմինի ներքին ձևը համապատասխանում է բովանդակությանը և ճիշտ է կողմնորոշում, այնքան տերմինի պատճառաբանվածությունը ակնհայտ է դառնում: Բառի ներքին ձև ասելով հասկանում ենք բաղադրյալ բառի իմաստային այն ամբողջությունը, որոնցով բաղադրվում է նրա բառիմաստը (Աղայան, նշվ. աշխ. էջ 31):

¹³ С. Влахов, С. Флорин, *Непереводимое в переводе*, М., 1980, стр. 7-8:

Տերմինների պատճառաբանվածությունը բնորոշ է զարգացման բարձր մակարդակի հասած և կանոնարկված գիտակարգերի տերմինահամակարգերին: Ընդհանրապես պատճառաբանվածության բարձր մակարդակ ունեն երկանդամ բռակապակցական տերմինները:

Եզրակացություն: Այսպիսով, *հատկական փոխառություն, էկզոտիզմ, տարաշխարհիկ բառեր, օտար բառեր*-ը համանիշային շարքի անդամներ են, որոնցից *էկզոտիզմ*-ը միջազգային տերմին է:

Կարծում ենք՝ վերոբերյալ տերմիններից նպատակահարմար է օգտագործել *հատկական փոխառություն* տերմինը, որը մենիմաստ է լեզվաբանական տերմինահամակարգում և պատճառաբանված: Ինչպես գիտենք, տերմինին ներկայացվող պահանջներից մեկը տվյալ տերմինահամակարգում նրա մենիմաստությունն է:

Հատկական փոխառություն տերմինը մենիմաստ է տվյալ տերմինահամակարգում և շփոթության տեղիք չի տալիս: Պարզապես այն անսովոր է և հաճախակի գործածության հետևանքով կարող է հարթել իր ճանապարհը: Վերջապես, ժամանակը ցույց կտա, թե տերմինային այս ձևերից որը կդառնա հաղթող:

Silva Papikyan. Overview of the term “characteristic borrowing”.- As is known, borrowing is the transfer of words and linguistic units from other languages as a result of various political, economic, and cultural relations between nations. Borrowing happens especially often when one nation is under the political domination of another. Naturally, the borrowed language includes words and expressions that are characteristic of the dominant nation.

«Characteristic borrowings» among general borrowings are characterized by the fact that they refer to customs, things, objects, etc. that are characteristic of a particular people, for example, from the Russian language: *burlak* «a worker pulling a barge», from Sanskrit: *guru* «teacher», from Persian: *shahid* «martyr», *mujahideen* «warrior of faith», from Mongolian: *Dalai Lama* «the supreme one» etc.

Sometimes the characteristic borrowing passes through many languages, becomes understandable to many, and replenishes the layer of international words, such as *typhoon* from Chinese («a destructive storm blowing in Asia and the western Pacific»), *tsunami* from Japanese («coastal wave»), *tornado* from Spanish («a type of hurricane in tropical countries»). The term «characteristic borrowing» in Armenian was introduced by E. Aghayan. They are also called foreign words, alien words, exoticisms. In the case of these terms, the phenomenon of terminological synonymy is in effect.

In terminology, it is accepted that one term corresponds to one meaning in a given terminology system. Terminological synonymy, which can lead to confusion, should be avoided as much as possible.

The aforementioned term «characteristic borrowing» is reasoned and unambiguous in this terminology system. It's just unusual, and over time, due to frequent use, it can pave its own way. The line between borrowings and characteristic borrowings is fluid. When an object or custom is assimilated, the assimilation of the concept simultaneously occurs, which turns it into a regular borrowing.

Keywords: borrowing, exotic words, foreign words, synonymy, term synonymy, translated literature, reality

Сильва Папикян. Обзор термина “свойственное заимствование”.- Как известно, заимствование - это перенос слов и языковых единиц из других языков в результате различных политических, экономических и культурных отношений между народами. Особенно много заимствований происходит, когда один народ находится под политическим господством другого. Естественно, в заимствуемый язык входят такие слова и выражения, которые характерны для господствующего народа.

«Свойственные заимствования» в общих заимствованиях характеризуются тем, что указывают на обычаи, вещи, предметы и т. д., характерные для определенного народа, например, из русского языка: *бурлак* «рабочий, тянущий баржу», из санскрита: *гуру* «учитель», из персидского: *шахид* «мученик», *моджахед* «воин веры», из монгольского: Далай-лама «Высочайший» и т. д. Иногда эти заимствованные слова проникают во многие языки, становятся понятными многим и становятся частью международного словарного запаса, например, *тайфун* из китайского языка - «разрушительный шторм, который дует в Азии и западной части Тихого океана», *цунами* из японского языка - «прибрежная волна», *торнадо* из испанского языка - «вид урагана в тропических странах».

Термин «свойственное заимствование» (հատկական փոխառություն) в армянском языке был введен в обращение Э. Агаяном. Также называются *иностранцами, иностранными словами, экзотизмами*. В случае этих терминов действует явление терминологической синонимии. В терминологии принято, чтобы в данной терминосистеме одному термину соответствовало одно значение. Следует по возможности избегать терминологической синонимии, которая может привести к путанице. Вышеупомянутый термин "свойственное заимствование" обоснован и в данной терминосистеме однозначен.

Оно просто необычно, и со временем, из-за частого употребления, может проложить себе путь. Граница между заимствованиями и свойственными заимствованиями изменчива. Когда предмет или обычай усваивается, то одновременно происходит усвоение понятия, которое превращает его в обычное заимствование

Ключевые слова: Заимствования, экзотические слова, иноязычные слова, синонимия, синонимия терминов, переводная литература, реалия.

Օգտագործված գրականություն

- Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:
- Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր. համալսարանի հրատ., Ե, 1984:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, ԵՊՀ հրատ., Ե., 1977:
- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն , հ. 1, Հայպետհրատ, Ե., 1940:
- Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ., Հայոց լեզվի ուղեեցույց, ԵՊՀ հրատ., Ե., 2017:

Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, «Հայաստան» հրատ., Ե., 1971 (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի):

Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, «Զանգակ-97» հրատ., Ե., 2009:

Խլղաթյան Ֆ., Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու, «Լույս» հրատ., Ե., 1976:

Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Հեղինակային հրատ., Ե., 2011:

Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1990:

Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, ՀՍՍՌ պետհրատ., Ե., 1944-1945:

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1967:

Քամալյան Ա., Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ) // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն 2(17), Ե., 2015, էջ 66-80:

Абаев В.И., О принципах этимологического словаря // Вопросы языкознания, N 5, 1952, стр. 56-69.

Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., 1980:

Համառոտագրությունների ցանկ

ԱՀԲԲ- Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան

ՀԱԲ – Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան

ՀԲԲ- Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան

ՕԲԲ- Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան

Բանալի բառեր: Բացատրական բառարան, բառարանային բացատրության եղանակներ, բառահոդված, հականիշներ, ժխտական բացատրություն:

Նախաբան: Բառապաշարի ուսումնասիրման համար շատ մեծ է լեզվաբանական կամ բանասիրական բառարանների դերը: Բառապաշարի բառաիմաստային համակարգը այս կամ այն չափով ու ճշգրտությամբ ներկայացվում է բացատրական բառարաններում:

Բառարանային բացատրությունը և բառահոդվածը ընդհանուր առմամբ պետք է հնարավորինս սպառիչ տեղեկատվություն տան բառի նշանակության մասին և ցույց տան նրա տեղը լեզվի բառային համակարգում, նրա իմաստային, նաև բառակազմական կապերը բառային այլ միավորների հետ¹:

Ինչպես հայտնի է, լեզվի բառապաշարը ունի համակարգային կառուցվածք: Լեզվի ընդհանուր համակարգում բառապաշարը մի ենթահամակարգ է, որի տարրերը, մշտապես ազդելով միմյանց վրա, որոշակի կայուն փոփոխարաբերությունների մեջ են: Այդ ենթահամակարգում բառերը կարող են կապված լինել իմաստային ինչ-ինչ հարաբերություններով, ծագումով, կազմությամբ կամ ոճական հատկանիշներով, խոսքիմասային պատկանելությամբ և այլն²:

Բառարանային բացատրության հիմնական եղանակները: Բացատրական բառարանի գլխավոր նպատակները բառիմաստի բացահայտումն ու նկարագրությունն են: Դրա համար առաջին հերթին պահանջվում է բացատրության համակարգայնություն, միօրինակացում և բավարարություն³:

Բացատրության հիմնական եղանակը *նկարագրական* կամ *տրամաբանական բացատրությունն* է (բուն բացատրությունը): Բառարաններում գերակշռում է բացատրության այս եղանակը: Այն ամենից առաջ կիրառվում է արմատական բառերի մեկնության համար: Բաղադրյալ բառերի բացատրության ժամանակ այս եղանակը մեծ մասամբ զուգակցվում է այլ միջոցների հետ:

Այս եղանակով ընդհանուր բառարաններում սովորաբար բացատրվում են գոյականների մեծագույն մասը (սովորական առարկաների անվանումները, նաև թեմատիկ խմբերը), ամենագործածական (հիմնական բառաֆոնդի մեջ մտնող) ածականների ու թվականների

¹ См. В. А. Козырев, В. Д. Черняк, *Русская лексикография*, М., 2004, с. 43.

² Մ. Ֆելքյան, *Հարաբերական ածականների բացատրության եղանակները արևմտահայերենի բառարաններում // Հայերենագիտական հանրապետական գիտաժողով* (նվիրված հայագետներ Ռ. Իշխանյանի և Ա. Սուքիասյանի 100-ամյա հոբելյաններին, Ե., 13-14 հոկտեմբերի, 2022թ.), ՀՀ ԳԱԱ ԼԻ առցանց ժողովածու, Ե., 2022:

³ Змнот. А. Г. Соколова, *Лексикографическая дефиниция как предмет лингвистического описания*, автореф. канд. дисс., Архангельск, 2011, с. 10.

ուղղակի իմաստները, բայերի մեծ մասը: Հիմնականում այս եղանակով են բացատրվում կապերը, շաղկապները, վերաբերականները:

Նկարագրական-տրամաբանական բացատրության դեպքում բառը մեկնվում է տվյալ առարկաների մերձակա սեռի և տեսակային տարբերությունների միջոցով: Բացատրությունը բաղկացած է լինում երկու մասից: Առաջինում (անվանողական մաս) անվանվում է այն սեռը, որին պատկանում է տվյալ բառը: Երբեմն նշվում են տվյալ կարգին պատկանող մի քանի առավել ընդհանուր առարկաների հասկացություններ: Երկրորդ՝ նկարագրական մասում նշվում են այն իմաստային առանձնահատկությունները, որոնցով տվյալ դասի (սեռի) առարկաները տարբերվում են այլ առարկաներից (երևույթներից): Այս եղանակը առավել ճշգրիտ, լիովին է բացատրում բառիմաստը: Անվանողական մասը ցույց է տալիս տվյալ բառի հարաբերությունը այլ բառերի հետ, իսկ նկարագրական մասում տրվում է բառիմաստի բացատրության համար անհրաժեշտ ամբողջական տեղեկությունը: Սա բառերի բացատրության ամենատարածված և առավել նախընտրելի եղանակն է: Այս եղանակով կարող են բացատրվել գրեթե բոլոր անվանողական բառերը:

Բառերի բացատրության մյուս միջոցները (*հումանշային բացատրություն, բացասական կամ ժխտական բացատրություն, հղումային բացատրություն, լուսաբանող օրինակներ*) շատ հաճախ ինքնուրույնաբար չեն գործածվում, այլ միայն լրացնում են նկարագրական-տրամաբանական մեկնությանը:

Բացասական կամ ժխտական բացատրություն: Որքան էլ տարօրինակ թվա, բառերի բացատրության ժամանակ երբեմն առավել նպատակահարմար (և համառոտ ու ճշգրիտ) է լինում այն հատկանիշների թվարկումը, որոնք տվյալ բառով արտահայտվող առարկան (երևույթը, հատկանիշը, գործողությունը և այլն) չունի⁴: Այդ հատկանիշի բացակայությունը նույնպես ինչ-որ կողմով կարող է բացահայտել առարկան: Սա բառերի բացատրության **բացասական կամ ժխտական** (նեգատիվ) **եղանակն** է: Օրինակ՝ **ՉՈՐ** 1. Խոնավություն չունեցող, խոնավությունից զուրկ, ոչ թաց: **ՀԻՆ** ... 8. Նախկին ժամանակներին հատուկ, ոչ այժմեական, իր դարն ապրած, գործածությունից, սովորությունից դուրս եկած: **ԹԹՎԱԾԻՆ**, *ծնի, գ* Քիմիական տարր, անհոտ և անգույն գազ, որ մտնում է օդի բաղադրության մեջ: **ԴԱՆԴԱՂ** *մկ*. Ծանր՝ ոչ արագ շարժվող [ԱՀԲԲ]:

Այս եղանակը այնքան էլ տարածված չէ, սակայն կան բառերի որոշակի խմբեր, որոնց բացատրության համար առավել հարմարը ժխտողական կամ բացասական բացատրության եղանակն է: Խոսքն առաջին հերթին ժխտական նախածանցներով կազմված ածականների, նաև որոշ բայերի և գոյականների մասին է: Այս կարգի բառերի հիմնական նշանակությունը որևէ հատկանիշ չունենալն է, ինչպես՝ **ԱՆՏՈՀՄ**, **ԱՆՏՈՀՄԻՎ**, *ած*. 1. Ոչ տոհմիկ, ոչ ազնվական ծագումով: 2. Ոչ ցեղական: **ԱՆՀԱՎԱՍՍԱՐ**, *ած*. 1. Ոչ հավասար, ոչ համաչափ: 2. Ոչ միահավասար, ոչ միատեսակ, անմիօրինակ: 4. Ոչ ուղիղ, ոչ հարթ: 5. (հնց): Փոփոխական, ոչ կայուն [ԱՀԲԲ]: **ԱՆՏԵՄԵԼ**, *նբ*. Ուշադրության չառնել, նկատի չառնել, հաշվի չառնել [ԺՀԼԲԲ] և այլն: Այս եղանակով են բացատրվում նաև *-ատ*, *-գուրկ*, *-սակալ*, *-պակաս* և նման վերջնաբաղա-

⁴ Այս հատվածի շարադրանքը հմմտ. **Д. И. Арбатский**, *Толкования значений слов. Семантические определения*, с. 79-82.

դրիչներով կազմությունները. **ՋՐԱԶՈՒՐԿ**, *ած.* 1. Ջրից գուրկ, խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործելու ջուր չունեցող3. ոռոգման համար անհրաժեշտ քանակով ջուր չունեցող, չորային, անջուր: 4. Ջրից գուրկ, ջրային պարունակությունից գուրկ [ԱՀԲԲ]: **ՀՈՂԱՊԱԿԱՍ**, *ա.* 1. Հողը պակաս, հողի անհրաժեշտ քանակությունը չունեցող: **ՓԱՅԼԱՍ**, *ա.* փայլ չունեցող, փայլից գուրկ, անփայլ [ԺՀԼԲԲ]:

Հականիշներով բացատրություն: Բացասական բացատրության մի տարատեսակ է հականիշներով բացատրությունը: Այս եղանակը ինքնուրույն սովորաբար չի գործածվում: Այն լինում է իբրև հավելում նակարագրական կամ հոմանշային բացատրությանը: Հականիշները երբեմն ավելի են հստակեցնում բառիմաստը, նպաստում են բառի սխալ գործածությունը կանխելուն: Նշենք, որ հականիշների դերը բառի բացատրության մեջ մեծ չէ, և հայերենի բացատրական բառարաններում այս եղանակը տարածում չունի: Հականիշները մասամբ գործածված են Սոտ. Մալխասյանցի և ակադեմիական բառարաններում: Օրինակ՝ **ԼՈՅՍ** (*ույ*), (*լուսոյ*), (*լոյսի*, *լուսի*, + *լուսու*, *գ.* 1. Արեգակի, աստղերի և այլ լուսատու մարմինների ուժը (էներգիան), որով առարկաները տեսանելի են դառնում մեր աչքին: *Հկռ.* Խաւար, մութ: **ԵԼՆԵԼ**, **ԵԼԼԵԼ**, *ելայ*, *ել՛*, *չբ.* 1. Ներսից դուրս փոխադրվել, դուրս գալ: *Հկռ.* Մտնել: **ՄՈՒԳ**, *ած.* Մութ, խիտ, թանձր (գոյնի մասին): *Հկռ.* Բաց, պայծառ: [ՀԲԲ]: **ԲԱՐԻ**, *ա.*, *մ.* 1. Բնավորությամբ՝ էությամբ ոչ չար, բարեսիրտ, ուրիշներին լավություն անող, լավ վերաբերվող, կարեկցող. *հկնշ.* Չար: **ՍՊԻՏԱԿ**, *ա.* 1. Չյան՝ կավճի՝ կաթի գույն ունեցող. *հկնշ.* Սև: [ԺՀԼԲԲ]:

Միայն Բեյրութում տպագրված «Հայոց լեզվի նոր բառարանում» են սրանք զանգվածաբար կիրառված: Սա մասամբ արդարացվում է բառարանի ուղղվածությամբ. այն հասցեագրված է սփյուռքահայությանը և ի թիվս այլ նպատակների կոչված է նաև ընթերցողի բառապաշարի հարստացմանը: Սակայն այստեղ էլ հեղինակներն ընկնում են ծայրահեղության մեջ՝ տալով գրեթե բոլոր բառերի հնարավոր հականիշները, թեև նախաբանում գրում էին, թե շատ քիչ տեղերում են հականիշները նշում: Սրանց մի մասն ավելորդ է, ոչինչ չի հավելում բառի բացատրությանը: Քիչ չեն նաև ուղղակի սխալները, ինչպես՝ **ԵՂԱՅՐԱԲԱՐ**, **ԵՂԱՅՐԱՊԷՍ**, **ԵՂԱՅՐՕՐԷՆ**, *մ.* 1. եղբոր պէս, իբրեւ եղբայր՝ հարազատ: *Հկնշ.* Քոյրաբար, քոյրօրէն: **ԹՔՈՏԵԼ**, *նբ.* 1. թուքով թրջել: *Հկնշ.* թքոտ[ու]ի: **ԿԱՐՈՒԱԾՔ**, *գ.* կարելու կամ կարի ձևը՝ եղանակը, կարելաձև: *Հկնշ.* Քակուածք կամ հիսուածք: **ՀՈՂ**, *գ.* 3. երկրի մակերեսի շերտը, գետին, ցամաք, երկիր (*Հկնշ.* ջուր): Արձանագրենք, որ նույն հեղինակը իր բառարանում **Ջուր** բառի 22 նշանակություններից և ոչ մեկի մոտ չի բերում որպես հականիշ **Հող**-ը: **ԱՅՐԱՍՊԱՆ**, *ած.*, *գ.* 1. իր ամուսինը սպաննող կին. 2. մարդասպան: *Հկնշ.* այրասէր: Ի միջ այլոց, նույն բառարանում **այրասէր** բառի երեք հականիշների մեջ չկա **այրասպան**-ը. **ԱՅՐԱՍԷՐ**, *գ.* ամուսինը սիրող կին, երիկմարդ սիրող կին: *Հկնշ.* այրատեսց, կնասէր, կնամոլ: [ՀԼՆԲ]:

Այս բառարանում իհարկե կան նաև բազմաքանակ ճշգրիտ հականիշներ: Այս դեպքում նախընտրելի է բազմիմաստ բառերի տարբեր նշանակությունների համար հականիշների նշումը, ինչպես և վարվել են հեղինակները, օրինակ՝ **ԽՈՆԱՐՀ**, *ած.* 1. հեզ, համեստ, (*Հկնշ.* Ամբարտաւան, գոռոգ). 2. հլու, հնազանդ, հպատակ (*Հկնշ.* անհնազանդ, ապստամբ). 3. նուաստ, ստորադաս, տրուպ (*Հկնշ.* գերադաս). 4. ցած, վար, ստորին, վարի (*Հկնշ.* բարձր, վեր, վերին, վերի): **ԽՈՇՈՐ**, *ած.* 1. Մեծ, յաղթ, ձարբ (*Հկնշ.* մանր, փոքր, պզտիկ, ճղճիմ). 2. գեր, խլաւ, յաղթանդամ (մարմին. *Հկնշ.* նիհար, փոքրամարմին). 3. ստուար (թիւ. *Հկնշ.* սակաւ). 4. ծանր,

աններելի, մեծ (սխալ. *Հկնշ*. թեթեւ).6. ընդարձակ, լայնատարած, մեծատարած (տարածութիւն՝ երկիր՝ կալուած. *Հկնշ*. նեղ, փոքր). 7. ծաւալուն, ընդարձակածաւալ (ծաւալ. *Հկնշ*. սահմանափակ). 8. կարեւոր (նշանակութիւն. *Հկնշ*. անկարեւոր). մեծարժէք, մեծագին, սուղ (ապրանք. *Հկնշ*. աժան, անարժէք). 10. ընդհանուր, ոչ-մանրամասնեալ (գիծ՝ նկարագրութիւն. *Հկնշ*. մանրամասն). 11. կոշտ (*Հկնշ*. նուրբ): [ՀԼՆԲ]:

Եզրակացություններ

- Բառարանային բացատրության հիմնական եղանակը նկարագրական կամ տրամաբանական բացատրությունն է (բուն բացատրությունը): Այս եղանակը առավել ճշգրիտ, լիովին է բացատրում բառիմաստը:
- Բառերի բացատրության մյուս միջոցները շատ հաճախ ինքնուրույնաբար չեն գործածվում, այլ միայն լրացնում են նկարագրական-տրամաբանական մեկնությանը:
- Բառերի բացատրության ժամանակ երբեմն առավել նպատակահարմար է լինում այն հատկանիշների թվարկումը, որոնք տվյալ բառով արտահայտվող առարկան (երևույթը, հատկանիշը, գործողությունը և այլն) չունի: Հատկանիշի բացակայությունը նույնպես ինչ-որ կողմով կարող է բացահայտել առարկան: Սա բառերի բացատրության բացասական, ժխտական (նեգատիվ) եղանակն է:
- Բացասական եղանակով են մեկնվում առաջին հերթին ժխտական նախաձանցներով կազմված ածականները, նաև որոշ բայեր և գոյականներ: Այս կարգի բառերի հիմնական նշանակությունը որևէ հատկանիշի բացակայությունը նշելն է:
- Բացասական բացատրության մի տարատեսակ է հականիշներով բացատրությունը: Այս եղանակը ինքնուրույն սովորաբար չի գործածվում: Այն լինում է իբրև հավելում նկարագրական կամ հոմանշային բացատրությանը:

Manuk Felekyan. Negatives or Negative Definitions in Dictionaries of the Armenian language.-

The role of linguistic or philological dictionaries is very important for vocabulary study. The lexical-semantic system of vocabulary is represented to varying degrees and with varying accuracy in explanatory dictionaries. The primary method of dictionary explanation is descriptive or logical explanation (explanation proper). However, when explaining words, sometimes it is more useful to list the characteristics that the object (phenomenon, property, action, etc.) expressed by the word does not possess. The absence of a feature can also somehow identify an object. Negative definitions are used primarily for adjectives formed with negative prefixes, as well as for some verbs and nouns. The primary meaning of words of this type is to indicate the absence of a certain characteristic. A variation of negative explanation is explanation through antonyms.

Negative explanations of words are often not used independently, but rather as a complement to other interpretations.

Keywords: explanatory dictionary, methods of dictionary interpretation, dictionary entry, antonyms, negative explanation.

Манук Фелекян. Отрицательные или негативные определения в словарях армянского языка. - Роль лингвистических или филологических словарей очень важна для изучения лексики. Лексико-смысловая система лексики в той или иной степени и точности представлена в толковых словарях. Основным способом словарного объяснения является описательное или логическое объяснение (собственно объяснение). Однако при объяснении слов иногда наиболее целесообразным является перечисление характеристик, которыми объект (явление, свойство, действие и т. д.), выражаемый данным словом, не обладает. Отсутствие признака также может каким-то образом идентифицировать объект. Отрицательная дефиниция употребляется преимущественно для прилагательных, образованных с помощью отрицательных префиксов, а также для некоторых глаголов и существительных. Основное значение слов этого типа — указание на отсутствие какого-либо признака. Разновидностью отрицательного объяснения является объяснение через антонимы.

Отрицательный способ объяснения слов очень часто не используется самостоятельно, а лишь дополняет другие толкования.

Ключевые слова: толковый словарь, способы словарного толкования, словарная статья, антонимы, отрицательное объяснение, негативное объяснение.

Օգտագործված գրականություն

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976:
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 1-4, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969-1980:

Հայոց լեզուի նոր բառարան, հտ. 1-2, Կ. Տոնիկեան եւ որդիք հրատ., Պեյրուք, 1992:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երևան, 1944-1945:

Ֆելեքյան Մ., Հարաբերական ածականների բացատրության եղանակները արևմտահայերենի բառարաններում // Հայերենագիտական հանրապետական գիտաժողով (նվիրված հայագետներ Ռ. Իշխանյանի և Ա. Սուքիասյանի 100-ամյա հոբելյաններին, Երևան, 13-14 հոկտեմբերի, 2022թ.), ՀՀ ԳԱԱ ԼԻ անցանց ժողովածու, Երևան, 2022:

Арбатский Д.И., Толкования значений слов. Семантические определения, 287 стр.

Козырев В. А., Черняк В. Д., Русская лексикография, Москва, 2004, 43 стр.

Соколова А. Г., Лексикографическая дефиниция как предмет лингвистического описания, автореф. канд. дисс., Архангельск, 2011, 24 стр.

Համառոտագրություններ

ԱՀԲԲ - Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան

ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան

ՀԲԲ - Հայերեն բացատրական բառարան

ՀԼՆԲ - Հայոց լեզուի նոր բառարան

Մարիամ Ալեքսանյան

Բանալի բառեր: Հովհաննես Շիրազ, պոեմ, լեզու, նորակազմ բառ, դիպվածային բառեր, ածանց, արմատ:

Նախաբան: Շիրազյան նորակազմ բառերին շատ լեզվաբաններ են անդրադարձել և դեռ կանդիդատան, քանի որ նրա ստեղծագործությունը հարուստ է հայերենի բառակազմական կաղապարներով կազմված յուրօրինակ ու յուրատեսակ բառերով, որոնք ուսումնասիրման անսպառ աղբյուր են: Բանաստեղծն օգտվել է մեր լեզվի հարուստ ժառանգությունից, լեզվի ճկունությունից և հայերենյան կաղապարները գունավորել է իր խառնվածքի, մտածելակերպի, խոհափիլիսոփայության և անհատականության դրոշմվածքով: Այդ նորակերտությունները յուրօրինակ են դարձնում հեղինակի խոսքը և առավել արտահայտիչ են բառական միջավայրում: Հովհ. Շիրազը ցույց է տվել մեր լեզվի բառաստեղծման ճկունության անսահման հնարավորությունները, ինչպես նաև իր բառաստեղծական տաղանդը:

Հովհ. Շիրազի «Անի» պոեմը, ինչպես և նրա մյուս գործերը, հարուստ են յուրօրինակ և արտահայտիչ նորակազմություններով, բայց և, հարկ է նշել, որ դրանց զգալի մասը դիպվածային են, այսինքն՝ ստեղծված են դիպվածի՝ պահի թելադրանքով՝ բանաստեղծական տողի արտահայտչականության, ոճավորման, ինչպես նաև խոսքի գունագեղության պահպանման նպատակով: Դրանցից շատերը կարող են մտնել գործուն բառապաշար, մեր խոսքի մաս կազմել, իսկ մնացածը՝ ընդհանրաճանաչ միտում չունենալ:

«Անի» պոեմի նորակազմ բառերի բառակազմական առանձնահատկությունները: Շիրազյան նորակազմությունները չափազանց խոսուն են բուն տեքստում, թեև խոսույթից դուրս էլ պատմող են և արտահայտիչ:

Պոեմի ուսումնասիրության ժամանակ նկատել ենք, որ կիրառելով հայերենի գործուն ածանցները՝ կերտել է նոր բառեր հետևյալ կաղապարներով, օրինակ՝ Ss-առյուծ*իկ*, sS-*անցույց*, sSs-*անըմպելի*, sSs-*անմեռյալ*, Ss-բաբան*ավոր*, Sss-եղևկ*յա*, SSS-խաչքար*յա*, Ss-բղեշխ*ական*, Sss-եղևկ*ենի*, Sss-խոսք*եղեն*, sS-չեղբայր, Ss-նվաստ*ուն*, Ss-պարման*ավոր*, Ss-ճորտ*ավոր*, Ss-վաղր*ավոր*, Ss-վայռ*կ*, Ss-վանք*ե*, Ss, Ss-հոյ*եղ*, Ss-օձ*եղ* ևն:

Գերակշռում են *ան-* ժխտական նախածանցով բառերը, օրինակ՝ *ան*զահաժառանգ, *ան*եսական, *ան*խորտակ, *ան*ալլահ, *ան*դուռ, *ան*խափ, *ան*հայ, *ան*շեփոր, *անցույց*, *ան*գարուն, *ան*ըմպելի, *ան*կույս, *ան*մեռյալ, որոնց զգալի մասը գործածվում է փոխաբերական իմաստով:

-*Ավոր* ածանցը գործածելով՝ կազմել է բղեշխ*ավոր*, բերդ*ավոր*, գուրգա*վոր*, պարման*ավոր*, ճորտ*ավոր*, վաղր*ավոր*, վաղր*եվոր* (գործածել է թե՛ վաղր*ավոր* և թե՛ վաղր*եվոր* ձևերը): *Գուրգալոր*, *վաղրալոր* և նման այլ բառեր գործածել է ինչ-որ առարկա կրող, առարկայով զինված լինելու իմաստով:

Բերդալոր-ը կիրարկել է բերդի բնակիչ իմաստով, *ճորտալոր*-ը՝ ճորտեր ունենալու, *պարմանալոր*-ը՝ պարմանիների խումբ իմաստով:

- **Անհ** ածանցն ընդհանրապես ցույց է տալիս ինչ-որ բան ունենալը, այստեղ նա գործածել է **վերքանհ**-ն՝ վերք ունենալու իմաստով:

- **Ե** նախածանցով կազմել է **վանքե** բառը: Այդ ածանցը գործածվում է «ինչ-որ հատկանիշին նմանեցում կատարելու իմաստով, երբեմն՝ փոխաբերաբար»¹:

- **Եղ** ածանցը գործածվել է «նախատիպի իմաստի սաստկացման կամ այլ փոխաբերական նշանակությամբ», ինչպես՝ **հոյեղ, օձեղ**²:

- **Ենհ** ածանցը կիրարկելով կազմել է ինչպես՝ **եղնկենհ**-ն «նախատիպի մատնանշած կենդանու միսը կամ կաշին բառակազմական նշանակությամբ»³, ինչպես նաև **հնդկենհ**-ն:

- **Եղեն** ածանցով կազմել է **խոսքեղեն**-ը:

- **Իկ** ածանցով՝ առյուծ**իկ**, մուրազ**իկ**, վիշապ**իկ**, բառերը, և **-իկ**-ը փաղաքշական երանգ է հաղորդել բառերին: Էդ. Աղայանը նկատում է. «...շատ հաճախ միևնույն ածանցումը խոսքի մեջ կարող է թե՛ քնքշական և թե՛ արհամարհական-նվաստական իմաստով գործածվել»⁴:

Հենց այդ «արհամարհական-նվաստական» իմաստով էլ հեղինակը գործածել է **-իկ** ածանցն **ազգիկ** բառը կազմելիս:

- **Յա** ածանցով կազմել է բագրատուն**յա**, եղն**յա**, խաչքար**յա**, կրք**յա**, առն**յա** բառերը:

Ս. Գալստյանը գրում է, որ **-յա** ածանցը գործածվում է «տվյալ առարկան ունենալու (բուն կամ փոխաբերական իմաստով)»⁵:

- **Յալ** ածանցով (գրաբարի անցյալ դերբայի հիմքով) ևս կան կազմված բառեր, օրինակ՝ իգաց**յալ**, թաթարաց**յալ**, թոնդրակաց**յալ**, ազգաեղծ**յալ**, խաչեց**յալ** ևն: «ՅԱԼ ածանց առկա է բայական նախատիպեր ունեցող բազմաթիվ երբեմնի բայաձևերում, որոնք ածականացել կամ գոյականացել են: Ածականներն ունեն նախատիպ բայի գործողության հետևանքով ստեղծված վիճակում եղող բառակազմական նշանակություն, ինչպես՝ սառուցյալ «սառած», գերյալ «գերված», բեկյալ «բեկված» ևն»⁶:

Զ- ժխտական նախածանցով կազմել է **չեղբայր**-ը, ինչպես՝ չբեր (ամուլ), չկամ, չխոսկան, չտես, չլուր, չհաս բառերը: Կան նաև անարգական իմաստով կազմություններ հայերենում, օրինակ՝ չազգ, չգարդ, չաստված, չմարդ-չմարդահավան ևն: Հարկ է նշել, որ նմանատիպ բառերը մեծ թիվ չեն կազմում մեր լեզվում⁷: **Չ**- ժխտականով գործածական բաղադրությունների նախատիպերն ընդհանրապես բայական են (չբեր, չխոսկան, չկամ ևն): Հին բաղադրություններ են **չգոյ** և **չիք** կազմությունները⁸:

- **Ուկ** ածանցով կազմել է **վայուկ** բառը (վայ ասող, լացուկոծ անող իմաստով):

Կազմել է նաև **կրկնածանցավոր բառեր**, օրինակ՝ **անզուգանալ**, **անեսական**, **անխորտակ**, **անմեղուկ**, **անզալիք**, **վայրենացի**:

¹ Տե՛ս Ս. Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 124-125:

² Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 126:

³ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 144:

⁴ Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 286:

⁵ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., Ե., 1978, էջ 144:

⁶ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 126:

⁷ Տե՛ս Ս. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Զ հատոր, Ե., 1965, էջ 180:

⁸ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 231:

Պարզ, բաղադրյալ, ածանցավոր, բարդածանցավոր գոյականներից Հովհ. Շիրազը կազմել է բայեր, որոնք նշանակական են ու տպավորիչ, օրինակ՝ արքայել, բուրգել, արմաղանել, դաշնել, բրոնզել, դրախտել, երասանել, թագել, արծվել, հայկել, յոթնել, ոսկել, տակառել, հրովարտել, անգուգանալ, թոնդրականալ, խոյակել ևն:

Այս բայերը ցույց են տալիս գործողություն, որին որպես արդյունք, արգասիք ստացվում է նախատիպի ցույց տված առարկան, գործողություն, որ կրում է իր վրա նախատիպի ցույց տված առարկան, նախատիպի ցույց տված առարկայով՝ երևոյթով զբաղվելու գաղափար արտահայտող գործողություն կամ էլ առարկա ցույց տվող գոյականով բնորոշվող գործողություն⁹:

Նկատվում է *վ* կրավորական ածանցի նպատակային կիրառություն, որով բայն ստանում է **դառնալ** իմաստը ևս.

ա/ գոյականից կազմված ածանցավոր բայեր (բայածանցով), օրինակ՝ արծվել-արծիվ դառնալ, ավարայրվել-ավարայր դառնալ, բալասանվել-բալասան դառնալ, ոսոխվել-ոսոխ դառնալ, սևանվել-սևան դառնալ ևն:

բ/ ածանցավոր գոյականներից կազմված բայեր, որոնց մի մասը նաև բայածանց ունի, օրինակ՝ անգուգանալ, թոնդրակալալ, խոյակել, կայծակել, գուժկանալ/ել, դաշույնալ/ել,

գ/բաղադրյալ գոյականներից կազմված բայեր, օրինակ՝ աշխարհագործել-աշխարհագոր դառնալ, մայրաքաղաքվել-մայրաքաղաք դառնալ ևն:

Այս բայերը ցույց են տալիս գործողություն, որ կրում է իր վրա նախատիպի ցույց տված առարկան, նախատիպի ցույց տված առարկայով բնորոշվող գործողություն ևն:

«Անի» պոեմում Հ. Շիրազը հաճախ է դիմել բառաբարդմանը՝ տարբեր բառերի համադրմամբ ստանալով նոր բառիմաստներով միավորներ:

Ինչպես հայտնի է, հինհայերենյան շրջանից մինչև ժամանակակից հայերեն միակ կենսունակ հոդակապն **ա** ձայնավորն է եղել: Հ. Շիրազի պոեմում նման կազմությունները քիչ չեն, օրինակ՝ **գաղտնաթուղթ, երկնածրագիր, բազմաբուրգ, դիվաշշուկ, վշտագուժել, քանդակագրել** ևն: Նկատում ենք, բարդությունների կաղապարներում սկզբնաբաղադրիչը, մասամբ էլ վերջնաբաղադրիչը գործածված են հնչյունափոխված տարբերակով:

Բարդություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ մեծամասամբ գոյականը, բայը և ածականն են:

Մեծաթիվ են **բառաբարդման միջոցով** կազմված նորակազմ բառերը հետևյալ կաղապարներով՝ N+N (q+q)- դրախտաբույր, երկնածրագիր, A+N (ա+q)- ձյունաշքեղ, ծպտագող, N+V (q+p)- ահառած, հրովարտաբեր ևն:

Ուշագրավ են հատկապես խոսքիմասային կաղապարների միավորման եղանակները.

1/ Գոյական+գոյական կաղապարով կերտել է գոյականներ, որոնց երկրորդ բաղադրիչը գոյական է և պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչն ունի սեռական հոլովի նշանակություն, օրինակ՝ առյուծագարմ-առյուծի գարմ, մեղրանեկտար-մեղրի նեկտար, մեղրանաբատ-մեղրի նաբատ, մայրադուռ-մոր դուռ, մայրաշուք-մոր շուք, գառնաբառաչ-գառան բառաչ, գիշերաշղարշ-գիշերվա շղարշ, կովեղջուր-կովի եղջուր, լեռնակապան-լեռան կապան, հարսնամատանի-հարսի մատանի ևն,

⁹Մ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 247:

2/ գոյական+գոյական կաղապարով կազմել են մակբայներ. ազգեագգ, գոեհեգոեհ,

2/գոյական+ածական համադրությամբ կերտել է գոյականներ, որոնք նաև ածականներ են: Այս կաղապարներում առաջին բաղադրիչն ունի սեռական հոլովի նշանակություն. դիվա-22ուկ-**դնի** 22ուկ, **դիվային** 22ուկ, երկնածրագիր-**երկնքի** ծրագիր, **երկնային** ծրագիր, թաթարա-թուր-**թաթարի** թուր, **թաթարական** թուր, ծիածանաձալ-**ծիածանի** ծալ, **ծիածանային** ծալ, կաթնածով-**կաթի** ծով, **կաթնային** ծով են,

3/ ածական+գոյական կաղապարով կազմել է ածականներ, օրինակ՝ գաղտնատեղյակ, գաղտնավախ, մեծամայր, չարահուշ, հոծամբոխ, մեղմահով, մթնաբավիղ, ունայնաորս են,

4/ ածական+ածական համադրությամբ՝ ածականներ, օրինակ՝ տխրավեհ, տխրուրախ են,

5/թվական+գոյական կաղապարներով կազմություններում նկատելի է մեր բանահյուսության մեջ գործածվող խորհրդանշական թվերի (յոթ, հազար, բյուր) համադրումը գոյականների, որոնց արդյունքում ստացվել են ածականներ, օրինակ՝ յոթնացեղ, յոթնակունք, յոթնարծիվ, յոթնադարպաս, միլիոնամեղու, հազարաբարբառ, հազարակարիք, հազարավրան, հազարազանգ են,

6/ գոյական+բայարմատ միացությամբ կազմել է ածականներ, օրինակ՝ ահախաբ, աշխարհաթափառ, գահատենչ, գաղտնատենչ, երկնամատույց, լայնահառաչ, խանդալլուկ, խրեկաբուրվառ, ծաղկավարար, կռվախուսան, հրովարտաբեր, հոգեխռով, մահապուրծ, մեղսահար, մեղսավախ, մարմնահար են,

7/ գոյական+գոյական+բայարմատ կաղապարով կազմել է ածական՝ հայաստվածաշեն,

8/ածական+բայարմատ համադրությամբ ստացել է ածականներ, օրինակ՝ խառնակուտակ, խրոխտասլաց, խանդալլուկ, լայնահառաչ են,

9/ թվական+բայարմատ միացությամբ կերտել է ածական՝ հազարավայ,

10/ դերանուն+բայարմատ համադրությամբ ստացել է ածականներ, օրինակ՝ ինքնադավ, ինքնակեր են,

11/ մակբայ+գոյական միացությամբ կազմել է կրկնապարիսպ, կրկնագոտի, մշտամրոց, մշտաքայլ բառերը, որոնցից կրկնապարիսպ-ն ու կրկնագոտի-ն գոյականներ են, իսկ մշտամրոց-ն ու մշտաքայլ-ը՝ ածականներ:

12/ մակբայ+ածական կաղապարով կերտել է ածականներ, օրինակ՝ նորից-նոր, մշտաքաջ, մշտավեհ են:

Է. Աղայանը բարդություն է համարում այն կազմությունները, «որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևային միավորումը մեկ բառում»¹⁰: Հենց այս միջոցը շատ է գործադրել Հ. Շիրազը: «...Բուն կամ իսկական բարդությունների բնորոշման հիմքը պետք է համարել այն, որ դրանք բնութագրվում են երկու բաղադրական հիմքերի՝ սերող և բաղադրող հիմքերի անպայման առկայությամբ»¹¹:

Բարդություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ հիմնականում գոյականը, բայը և ածականն են:

¹⁰ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 262:

¹¹ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 271:

«Բուն բարդությունների բաղադրիչները միմյանց հետ որոշակի շարահյուսական հարաբերության մեջ են գտնվում, որով և բաղադրվում է բարդության ներքին ձևը»¹²: Բարդ բառերի առաջին բաղադրիչը մեծամասամբ երկրորդի լրացումն է:

Մ. Աբեղյանը գտնում է, որ ցանկացած բարդ բառի նշանակություն կարելի է արտահայտել որևէ շարահյուսական կապակցությամբ¹³:

Նույնն է փաստում նաև Լ. Հովսեփյանը՝ նշելով, որ ամեն տեսակի շարահյուսական կապակցություններից կարող են բարդ բառեր առաջ գալ¹⁴:

Ըստ այս օրինաչափության՝ կան բարդություններ, որոնք որոշիչ-որոշյալ հարաբերության մեջ են կամ հատկացուցիչ-հատկացյալ են: Պետք է նշել, որ եթե (**գոյական+գոյական**), (**գոյական+ածական**) կադապարներով կազմությունները **հատկացուցիչ - հատկացյալ հարաբերության մեջ են** (երկնածրագիր - **երկնքի** ծրագիր, թաթարաթուր - **թաթարի** թուր, ծիածանածալ - **ծիածանի** ծալ, կաթնածով - **կաթի** ծով), ապա (**ածական+գոյական**), (**ածական+ածական**), (**թվական+գոյական**) կադապարներով կազմությունները՝ որոշչային, օրինակ՝ մեղմահով-մեղմ հով, մթնաբավիղ-մութ բավիղ, յոթնաթույր-յոթ թույր, յոթնականար-յոթ կամար, նորաթագ-նոր թագ, նորանուռ-նոր նուռ, հազարակարիք-հազար կարիք, հազարապտուղ-հազար պտուղ են:

N+V (գոյական+բայարմատ) կերտել է ածականներ, որոնց գերակշիռ մասը կարելի է վերածել որոշիչ դերբայական դարձվածի. ահախաբ-ահից խաբված, ահառած-ահ առած, աշխարհաթափառ-աշխարհ թափառած, մահապուրծ-մահից պրծած, խանդալլուկ-խանդից լլկված են:

Այս պոեմում հեղինակը պարագայական ու խնդրային հարաբերություն արտահայտող նոր բառեր ևս կազմել է, օրինակ՝ երկնամատույց, լայնահառաչ, խանդալլուկ, խնկաբուրվառ են:

Այժմ բարդությունները ներկայացնենք ըստ կառուցվածքի.

ա/ SS (կցական բարդություններ), օրինակ՝ բյուրասպ, եղբայրուրաց, երկերես, թագարժան, թագընտիր, կմախքկոիվ, մեղրորակ, խառնամբոխ, հոծամբոխ, հայարմատ, մայրարմատ, մահանդունդ, յոթնակունք, յոթնաղբյուր, յոթնարծիվ են,

բ/ SJS (հոդակապով բարդություններ), որոնք ունեն սերող և բաղադրող հիմքեր և ամենագերակշռողն են պոեմում, օրինակ՝ բազմաքարաշատ, բարձրաբերդ, զորավիշապ, ժայռազրահ, ինքնադավ, ինքնակեր, իշխանագահ, լայնահառաչ, վահագնավայել, վասակավայել, վաճառաշահ են,

գ/ S-S (վերլուծական բարդություններ), որոնցից հաճախադեպ են **անվանականները**՝ առդրական հարադրությամբ: Դրանք խոսում են, դիպուկ ու պատկերավոր, օրինակ՝ ազգ-բաժակ, ազգ-անտառ, դեղ-սպեղանի են.

Լուսնի խոտերից գիշերով քամված **դեղ-սպեղանի**, Բանգ ու Բալասան¹⁵...[1, էջ 26]:

¹² **Էդ. Աղայան**, նշվ.աշխ., էջ 263:

¹³ **Մ.Աբեղյան**, նշվ.աշխ., էջ 201:

¹⁴ **Լ. Հովսեփյան**, *Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը*, Ե., 2016, էջ 17:

¹⁵ **Հ.Շիրազ**, «Անի» պոեմ, Ե., 2011, էջ 26:

Այդ բառերը հեղինակը կարող էր գործածել որպես կցական բարդություն, բայց նախընտրել է վերլուծական տարբերակը, քանզի այդպիսի խոսքն ավելի տպավորիչ է դարձել.

Ասում ես՝ մեղք է՝ մի զարկ, ասում ես,

Շունչ-կենդանի են նրանք էլ մեզ պես...¹⁶

Ժողովուրդը **ծով-ծափ** դառավ...¹⁷

Ու դեռ չանցած մի **թարթ-վայրկյան**՝ Շուռ եկավ հողն էլ մի ուրիշ շիրմի...¹⁸

Վերլուծական բարդություններից շատերը հոմանիշ են մեկ բառի, օրինակ՝ հայրեն-մայրեն, հեր-մեր (ծնողներ), փորձ-մարդ (փորձագետ), դեղ-սպեղանի՝ (բալասան), բյուր-հազար (շատ), թարթ-վայրկյան (ակնթարթ) ևն:

Երբեմն էլ նույնիմաստ բառերից մեկը քնարերգուն գործածել է առդրական հարադրությամբ (հայ-աշխարհաշեն), իսկ մյուսը՝ կցական բարդությամբ (հայաստվածաշեն): Գերակշռում են *հայ, հազար, յոթ, զազան, ահ, մարմին, դժոխ(ք), աստված, արծաթ* բառերով բարդությունները:

Եզրակացություն: Հեղինակային բառերը մեր լեզվից ծնված բառեր են, ինչպես նաև մեր լեզվի հիմնաքարերից են, ուստի անհնար է ներկայացնել որևէ լեզվի բառապաշար, առանց տվյալ լեզվով ստեղծագործող հեղինակների նորակազմ բառերի:

Հովհ. Շիրազը, օգտվելով մեր լեզվի հարուստ ժառանգությունից, լեզվի ճկունությունից ու բառակերտման գործողությունից, կազմել է բոլորովին յուրօրինակ բառեր: Կիրարկել է հայերենի գործուն արմատներն ու ածանցները:

«Անի» պոեմում հաճախ է դիմել բառաբարդմանը՝ տարբեր բաղադրիչների համադրությամբ ստեղծել նոր բառիմաստներով այնպիսի կազմություններ (հարակցական, առդրական, հարակից), որոնք լեզվի պատմական զարգացման վաղ շրջաններին բնորոշ չեն:

Առանձին խումբ են ձևավորում գոյականներից կազմված պարզ բայերը:

Հեղինակը գործածել է բառաբարդման հետևյալ կաղապարները՝ գոյական + գոյական, ածական + գոյական, թվական + գոյական, դերանուն + գոյական, գոյական + բայ, մակբայ + գոյական, մակբայ + ածական ևն:

Մեծաքանակ են վերլուծական բարդություններից կազմված անվանականները:

Գործածել է նաև բաղիյուսական (շաղկապական) բարդություններ (վրանվրա) և գուգադրական բայեր (բրդել-ուտել, գտնել-մոթել) ևն:

Հ. Շիրազի գործածած թե՛ դիպվածային ու թե՛ համագործածական բառերը, որոնք նաև անվանում են ներուժունակ, ի ցույց են դնում հայոց լեզվի բառակազմական ճկուն միջոցները, հարստացման մեծ հնարավորություններն ու տարբերակները՝ ևս մեկ անգամ ապացուցելով, որ մեր բառազանձը շարունակ աճում է, թարմացվում և համալրվում նորանոր բառերով:

Այդ նորակազմությունները համագործածական կդառնան, թե՛ ոչ, մի բան աներկբա է, որ դրանք մեր հարուստ բառազանձի մի մասն են կազմում:

¹⁶ Հ.Շիրազ, նշվ.աշխ., էջ 130:

¹⁷ Հ.Շիրազ, նշվ.աշխ., էջ 30:

¹⁸ Հ.Շիրազ, նշվ.աշխ., էջ 238:

Mariam Aleksanyan. The neologism in the poem "Ani" of Hovh. Shiraz.-Or the first time, the paper examines the new words, which were used in the poem "Ani".

Armenian linguistics considers a word or a lexical unit to be a new word, which either does not exist in the dictionaries, or it is necessary to find out what authorship it belongs to. During the study of the poem "Ani", we were guided by this principle and every word that was assumed to be a new composition, we compared with the following sources: "Armenian Explanatory Dictionary" by St. Malkhasyants (Yerevan, 1944), RA NAS after H. Atcharyan Institute of Language "Explanatory Dictionary of the Modern Armenian Language" (Yerevan, 1969-1980), Ed. Aghayan's "Explanatory Dictionary of Modern Armenian Language" (Yerevan, 1976), S. V. Hambardzumyan. "Dictionary novelizations of the poem "Armenian Dantean" of by Hovh. Shiraz (Yerevan, 2016).

It has been presented what word-forming and lexical measures were used in the poem "Ani" written by Hov. Shiraz and enriched our vocabulary with new words. The data of the study makes it possible to draw the conclusion that the new words of the poem "Ani" are composed of active suffixes, endings and roots of the language.

Keywords: Hovhannes Shiraz, poem, language, new words, occasional words, root, suffix.

Мариам Алексанян. Новообразованные слова в поэме "Ани".- В статье впервые были рассмотрены новообразованные слова, использованные в поэме Ов. Шираза "Ани", которые являются авторскими нововведениями.

Армянское языкознание рассматривает слово или словосочетание как новое слово, которого либо нет в словарях, либо если оно есть, то необходимо выяснить, его авторство, то есть когда появилась книга данного автора, в которой появилось изучаемое слово или единица слово.

При изучении поэмы "Ани" мы руководствовались этим принципом и каждое слово, которое должно было стать новообразованием сравнивалось с данными: "Армянского толкового словаря" Ст. Малхасянца (Ереван, 1944), Института языка им. Г. Ачаряна НАН РА "Толкового словаря современного армянского языка" (Ереван, 1969-1980), "Толкового словаря современного армянского языка" Эд. Агаяна (Ереван, 1976), а также с данными С. В. Амбарцумяна "Словаря новообразованных слов поэмы "Армянской Дантиады" Ов. Шираза (Ереван, 2016). Представлено, какими словообразовательными мерами пользовался Ов. Шираз в поэме "Ани" и обогатил наш словарный запас новыми словами. Данные исследования позволяют сделать вывод, что новые слова поэмы "Ани" состоят из активных суффиксов, окончаний и корней языка.

Ключевые слова. Ованес Шираз, поэма, язык, новообразованные слова, окказиональные слова, корень, суффикс.

Օգտագործված գրականություն

Արեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., ԵՊՀ հրատ., 1965:

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 1984:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1926:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 1-ին, Ե., ԵՊՀ հրատ., 2013:

Ավետիսյան Յու., Սարգսյան Ա., Ներսիսյան Ն., Թեյլան Լ. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, ԵՊՀ, Ե., 2016:

Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1973:

Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1978:

Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, Ե., 1980:

Խաչատրյան Լ., Միրումյան Ս., Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2020:

Համբարձումյան Ս., Հ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորաբանությունները, Ե., «Ասողիկ» հրատ., 2016:

Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Ե., ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, «Ասողիկ» հրատ., 2016:

Շիրազ Հ., «Անի» պոեմ, Ե., ԵՊՀ հրատ., 2011:

**ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ
ՇՓՈԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Վալենտին Խաչատրյան

Բանալի բառեր: Բազմիմաստություն, համանունություն, բառային համանուններ, քերականական համանուններ, լեզվական իրողություն, շփոթություն, սահման:

Նախաբան: Բազմիմաստությունը և համանունությունը որոշակի փոխառնչություն ունեն: Ինչպես գիտենք, համանուն բառեր հաճախ առաջանում են բազմիմաստ բառերի իմաստային տրոհումից: Նշված իրողությունների շփոթությունը մեծ մասամբ կապված է նման օրինակների հետ: Հարցն այն է, որ այս կամ այն իմաստը ոմանք համարում են մերձ՝ ներառելով բազմիմաստության տիրույթում, իսկ ուրիշները՝ հեռացած՝ որպես համանունության դրսևորում: Բացի դրանից՝ հաճախ նույն արմատական բաղադրիչներով, բայց և անկախ բառակազմություն և իմաստ ունեցող բարդություններն են շփոթությամբ ներկայացվում որպես բազմիմաստ բառեր: Ահա և այդ հարցերին էլ վերաբերում է սույն հոդվածը:

Հայերենի համանուններին առաջին լուրջ անդրադարձը կատարել է Ռ. Շալունցը 1972 թ. հրապարակային պաշտպանության ներկայացրած «Համանուն բառերը ժամանակակից հայերենում» ատենախոսությամբ, որը տպագրվել է 1977 թ.¹: Այնուհետև 1978 թ. լույս է տեսել Ե. Գևորգյանի «Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարանը»², ապա Ն. Պառնասյանի «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» աշխատությունը³, իսկ 1980 թ.՝ Ռ. Շալունցի «Արդի հայերենի համանունների դպրոցական բառարանը»⁴:

Համանուն բառեր, բնականաբար, արձանագրված են նաև նույն շրջանում հայտնի բացատրական բառարաններում, ապա և հետագայի ոչ ծավալուն բառարաններում և բառացանկերում:

ԵԳՀԲ-ի տիտղոսաթերթին գրված է. «Բառարանը ընդգրկում է շուրջ 12000 բառ և բառաձև: Այն միահավաք կերպով ներկայացնում է հայերենի համանունությունը: Բերված են մինչև այժմ եղած հայերեն բոլոր բառարանների համանունները, նախկին բազմիմաստություններից անջատված նոր համանունները, հայերենի նույնագիր, ինչպես նաև նույնահունչ բառերը»:

Շուրջ կես դար է անցել, հետևաբար այդ ընթացքում հայերենի բառապաշարում լուրջ տեղաշարժեր են տեղի ունեցել, սակայն խնդրո առարկային ըստ էության նոր անդրադարձ չի կատարվել, չեն փորձել որոշ ճշգրտումներ կատարել՝ հաշվի առնելով հայ լեզվաբանության մեջ համանունության և բազմիմաստության շփոթության դեպքերը, բառիմաստային փոփոխությունները, նոր բառերի կազմությամբ նոր համանունների առաջացումը և այլն:

¹ Ռ. Շալունց, *Համանուն բառերը ժամանակակից հայերենում* // Լեզվի և ոճի հարցեր, Ե., 1977, էջ 5-76:

² Ե. Գևորգյան, *Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան*, Ե., 1978 (այսուհետև՝ ԵԳՀԲ):

³ Ն. Պառնասյան, *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*, Ե., 1979:

⁴ Ռ. Շալունց, *Արդի հայերենի համանունների դպրոցական բառարան*, Ե. 1980 (այսուհետև՝ ՌՇՀԲ):

ԵԳՀԲ-ի ներածական մասում ներկայացվել են բառարանի կազմության հիմնական սկզբունքները, անդրադարձ է կատարվել նաև բազմիմաստությունից նոր բառերի առաջացման խնդրին, բազմիմաստության և համանունության տարբերակման դժվարություններին: Ինչպես վերը նշել ենք, Ռ. Շալունցի աշխատությունը, որում հանգամանորեն անդրադարձ է կատարվել բազմիմաստության և համանունության փոխառնչությանը, տարբերակման որոշ դժվարություններին, այդ բառարանից մեկ տարի վաղ է լույս ընծայվել: Սակայն ԵԳՀԲ-ի կազմության համար օգտագործված գրականության ցանկում միայն հիշատակված են բառարաններ և բառացանկեր: Հայտնի չէ, թե արդյոք Ե. Գևորգյանը ծանոթ է եղել Ռ. Շալունցի աշխատությանը:

Այդ բառարանի տպագրության հաջորդ տարում էլ հրատարակվել է Ն. Պառնասյանի մենագրությունը, իսկ նույնից մեկ տարի անց՝ ՌՇՀԲ-ն:

Բազմիմաստության դեպքում բառարաններում բառերի կողքին, ինչպես և հարկն է, կետերով նշվում են իմաստային առումները, իսկ համանունության դեպքում որպես տարբեր բառեր տրվում են առանձին գլխաբառերով՝ դարձյալ համարակալումով:

Հայերենի բառագիտության մեջ առանձնապես կարևորելով համանունության և բազմիմաստության սահմանազատման հարցը՝ Ռ. Շալունցը գրում է. «Լեզվաբանության մեջ արդեն ապացուցված է, որ բառի սահմանները կարող են չխախտվել նրա բառիմաստային և դարձվածային տարբերակների առկայությամբ անգամ: Ուրեմն՝ հակադրվում են միանգամայն տարբեր երկու լեզվական երևույթներ, բազմիմաստություն՝ երկու և ավելի տարբեր իմաստների առկայություն մի բառի կազմում և համանունություն՝ երկու և ավելի միանգամայն տարբեր բառերի հնչյունական զուգադիպություն: Այսինքն՝ համանունության և բազմիմաստության սահմանազատման համար հիմք են ընդունում այն, որ բազմիմաստության մեջ մտնում են միևնույն բառի մի քանի բառաիմաստային տարբերակները, իսկ համանունության մեջ՝ միանգամայն տարբեր բառեր, որոնց նման արտասանությունը կամ հնչյունական զուգադիպությունը բացատրվում է լեզվական մի շարք պատճառներով»⁵:

Համանուն հասկացությունը նա սահմանում է այսպես. «Համանուն են կոչվում երկու և ավելի բառեր և բառաձևեր, որոնք արտասանությամբ նույնն են, բայց հակադրվում են բառական կամ բառաքերականական իմաստներով»⁶: Ինչպես նկատելի է, նա համանուն համարում է միայն արտասանությամբ նույն բառերը՝ մի կողմ թողնելով գրությամբ նույն և արտասանությամբ տարբեր բառերը, ուստի և այդ սահմանմանը տողատակում իր անհամաձայնությունն է արտահայտել «Լեզվի և ոճի հարցեր» ժողովածուի խմբագիր Հ. Օհանյանը:

Այնուհետև Ռ. Շալունցը նշում է, որ քննության համար հատկապես դժվարություն են ներկայացնում այն համանուն բառերը, որոնք առաջացել են բազմիմաստ բառի տարբեր իմաստների իմաստային կապերի մթազմման կամ կորստի հետևանքով⁷: Նաև ավելացնում է, որ հարցն ավելի է բարդանում լեզվաբանության մեջ համանունության և բազմիմաստության վերաբերյալ միասնական կարծիք չլինելու պատճառով՝ անդրադառնալով լեզվաբաններ

⁵ Ռ. Շալունց, *Համանուն բառերը ժամանակակից հայերենում* // Լեզվի և ոճի հարցեր, Ե., 1977, էջ 15:

⁶ Նշվ. աշխ., էջ 10:

⁷ Նշվ. աշխ., էջ 16:

Պոտենցիայի և Շչերբայի այն տեսակետին, որով ժխտվում է բառի բազմիմաստությունը, և յուրաքանչյուր իմաստ դիտվում է առանձին բառ⁸:

Ռ. Շալունցն ի վերջո խոստովանում է, որ համանունների դասակարգումը հիմնականում կատարել է Ա. Սմիռնիցկու դասակարգման սկզբունքների հիման վրա, սակայն ելնելով հայերենի համանուն բառերի բնույթից ու առանձնահատկություններից՝ որոշ չափով շեղվել է նրա սկզբունքներից: Այսպիսով, նա առանձնացնում է համանունների հետևյալ խմբերը՝ ա) բառական համանուններ, բ) բառաքերականական համանուններ և գ) խառը համանուններ⁹:

Ռ. Շալունցը տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի համանունությունը համարել է բառաքերականական¹⁰, մինչդեռ արդի ըմբռնմամբ դրանք նույնպես բառային են, իսկ բառաքերականական ասելով հասկանում ենք եզրերից մեկի անվանողական արժեքով բառ լինելը և մյուսի՝ քերականական ձևավորում ունենալը, ասել է թե բառաձև լինելը:

Բազմիմաստության և համանունության փոխհարաբերության հարցին անդրադարձել է նաև Ե. Գևորգյանը՝ իր բառարանի ներածական հատվածում նախ գրելով հետևյալը. «Դեռևս վերջնական պարզություն չի մտցված այնպիսի հիմնական հարցերում, ինչպիսիք են՝ ինչ է համանունությունը, երբ է այն անջատվում բազմիմաստությունից»¹¹: Ապա բառային համանունների առաջացման հիմնական ուղիների շարքում առանձնացնում է վերջինս՝ նշելով. «Երբեմն միևնույն բառի տարբեր իմաստները միմյանցից այնքան են հեռանում, որ դրանք իրար կապող ոչ մի օղակ, նախորդից բխելու ոչ մի նշույլ չի մնում: Այդպիսի իմաստները, լեզվի տվյալ շրջանում, ընկալվում են որպես միմյանցից անկախ, տարբեր բառեր՝ համանուններ»¹²:

Ն. Պառնասյանը «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ նույնպես խորությամբ անդրադարձել է բազմիմաստության և համանունության փոխհարաբերությանը, մասնավորապես մի ամբողջ հատված է նվիրել քերականական համանունությունը քերականական բազմիմաստությունից տարբերակելու հարցին: Ներածության մեջ լեզվաբանը նշել է, որ մինչ իր աշխատությունը հրապարակային պաշտպանության է ներկայացվել Ռ. Շալունցի «Համանունները ժամանակակից հայերենում» թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված է հատկապես բառային համանունների համակողմանի քննությանը: Այնուհետև հավելում է. «Աշխատության մեջ հեղինակը անդրադարձել է նաև տարբեր խոսքի մասերի պատկանող բառաձևերի համանունությանը, այսինքն՝ բառաքերականական համանուններին»¹³: Ակնհայտորեն Ն. Պառնասյանը ևս տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի ելակետային ձևերի համանունությունը համարում է բառաքերականական:

Լեզվաբանը բազմիմաստության և համանունության տարբերությունը բացատրում է այսպես. «Նույն նշանակիչի արտահայտած տարբեր իմաստների միջև կարող է լինել իմաստային կապ համաժամանակյա կտրվածքով, այդպիսի կապը կարող է միայն պատմականորեն վերականգնվել, իսկ հաճախ այդպիսի կապ չի կարելի գտնել: Առաջին դեպքում մենք գործ

⁸ Նույն տեղում, էջ 17:

⁹ Նշվ. աշխ., էջ 59-75:

¹⁰ Տե՛ս Ռ.Շալունց, *նշվ. աշխ.*, էջ 54, ՌՇՀԲ, էջ 3-4:

¹¹ ԵԳՀԲ-ի առաջաբան, էջ 3:

¹² Նույն տեղում, էջ 6:

¹³ Ն. Պառնասյան, *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*, Ե., 1979, էջ 6:

ունենք բազմիմաստության, մյուս դեպքում՝ համանունության երևույթի հետ»¹⁴։ Այդ ձևակերպումից կարելի է հասկանալ, թե որն է կապ կամ աղերս չգտնելու դեպքում միայն կարելի է երևույթը համարել համանունություն։ Սակայն լեզվաբանի այդ միտքը որոշակիացրել է նույն աշխատության գրախոս Ա. Մարությանը. «Չի կարելի չհամաձայնվել հեղինակի այն եզրակացությանը, որ բազմիմաստության դեպքում տվյալ ձևույթի արտահայտած իմաստների միջև եղած կապը կարելի է բացատրել համաժամանակյա կտրվածքով, իսկ եթե այդ կապը պատմականորեն է վերականգնվում ու բացատրվում, մենք գործ ունենք համանունության երևույթի հետ»¹⁵։ Ապա ավելացնում է. «Նա ճիշտ է վարվում, երբ համանունությունը որոշելիս ելակետ է ընդունում լեզվի համաժամանակյա վիճակը, քանի որ նման դեպքերում բացառվում են հնարավոր սխալներն ու թյուրիմացությունները»¹⁶։

Ուշագրավ է նաև Ն. Պառնասյանի հետևյալ նկատառումը. «Բազմիմաստության և համանունության սահմանման հիմքում հաճախ ընկած է լինում լեզվագագոթությունը, որի հիման վրա լեզվաբանը այս կամ այն հնչյունախումբը կարող է դիտել կա՛մ որպես բազմիմաստ, կա՛մ որպես համանուն՝ կախված միայն այն բանից, թե ինչպիսին է նա դիտում տվյալ հնչյունախմբին կցված իմաստները՝ կապված, թե՞ չկապված, հեռո՞ւ, թե՞ մոտիկ, հիմնական, թե՞ փոխաբերական»¹⁷։ Այնուհետև նշում է, որ այդ սուբյեկտիվիզմը հաղթահարելու համար կիրառվում են հետևյալ երեք չափանիշները՝ ստուգաբանական, ձևաբանական և իմաստաբանական¹⁸։ Սակայն հանգամանորեն չի քննում այդ չափանիշները, քանի որ դրանք կիրառվում են բառային համանունությունը բազմիմաստությունից տարանջատելու համար, իսկ ինքը տվյալ աշխատության մեջ քննում է քերականական համանունները։

Բազմիմաստության և համանունության շփոթության հիմնական դեպքերը։ Արդի հայ լեզվաբանության մեջ «բազմիմաստություն» հասկացությունը լավագույնս սահմանել է լեզվաբան Ա. Սուքիասյանը. «Բազմիմաստությունը միևնույն բառի մեջ իրար հետ կապված մեկից ավելի իմաստների առկայությունն է, որ առաջանում է սովորաբար այդ բառի սկզբնական իմաստի զարգացման հիման վրա»¹⁹։ Իսկ համանունությունը լեզվական իրողությունների ձևային (թե՛ արտասանության և թե՛ գրության) նույնությունն է՝ իմաստային տարբերությամբ։ Ա. Սուքիասյանի ձևակերպմամբ՝ «Համանուններ են կոչվում երկու և ավելի այն բառերը, որոնք նույնն են գրությամբ (հնչյունական կազմով) կամ արտասանությամբ և տարբերվում են միայն իմաստաբանորեն կամ քերականորեն, կամ էլ և՛ իմաստաբանորեն, և՛ քերականորեն միաժամանակ»²⁰։

Հոդվածներից մեկում անդրադարձել ենք բառերի՝ բազմիմաստության ներքո տրված տարբեր իմաստների դեպքում քերականական տարբեր մասնիկներով օժտվելու խնդրին,

¹⁴ Նույն տեղում, էջ 17։

¹⁵ **Ա. Մարության, Ն. Ա. Պառնասյան, Քերականական համանունները ժամանակակից հայերենում**, Ե., 1979, 185 էջ (գրախոսություն), № 4, Ե., 1980, էջ 109։

¹⁶ Նույն տեղում։

¹⁷ Նշվ. աշխ., էջ 21։

¹⁸ Նույն տեղում։

¹⁹ **Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու**, Ե., 1999 թ., էջ 110։

²⁰ Նշվ. աշխ., էջ 115։

ինչպես նաև ձևակազմական տարբերություն ցուցաբերող՝ հարաբերական համանուններին²¹։ Սույն հոդվածով փորձում ենք ներկայացնել արդի հայ լեզվաբանության մեջ բազմիմաստության և համանունության շփոթության կոնկրետ դեպքերը, նաև այն օրինակները, որոնք մեր կարծիքով համանունության և ոչ թե բազմիմաստության դրսևորում են։

Շատ համանուններ, ինչպես արդեն վերը նշել ենք, առաջացել են բազմիմաստ բառի իմաստների հեռացմամբ։ Դրանով պայմանավորված՝ հաճախ դժվար է լինում որոշել բազմիմաստության և համանունության սահմանները, ուստի և լեզվաբանական գրականության մեջ մինևս իրողությունը կա՛մ ներկայացվում է որպես բազմիմաստություն, կա՛մ որպես համանունություն։ Շփոթություն են առաջացնում նաև մինևս արմատական բաղադրիչներով, բայց և անկախ բառակազմությամբ բարդությունները։

Է. Աղայանի բացատրական բառարանում²² *ակ* բառը ներկայացված է երեք գլխաբառով՝ ելնելով 1. «ջրի ակունք», 2. «թանկագին քար» և 3. «անիվ» լիովին առանձին իմաստներից։ Այնինչ նույն բառարանում *բյուրակն*-ը տրված է որպես բազմիմաստ բառ հետևյալ երեք իմաստներով՝ 1. շատ ակունքներ՝ աղբյուրներ ունեցող, 2. շատ ակներ՝ գոհարներ ունեցող, 3. բյուրավոր՝ շատ ակունքներից բխող աղբյուր։ Ինչպես կարելի է նկատել, առաջին և երրորդ իմաստները մերձ առնչություն ունեն, որ և բազմիմաստության հարց է, սակայն երկրորդ իմաստը տարբեր է, ուստի այս դեպքում գործ ունենք համանունության հետ, որը նկատել է Ե. Գևորգյանը և արձանագրել իր կազմած բառարանում՝ նաև ավելացնելով մի երրորդ՝ «բազմաշա» իմաստով համանուն։

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»²³ *ժամ* բառի կողքին նշված է 17 իմաստ։ ԱՀԲԲ-ում այն տրված է երկու գլխաբառով։ Առաջինի կողքին նշված են 11 իմաստներ՝ ցույց տալով բազմիմաստությունը, երկրորդի՝ որպես նախորդի համանուն բառի պարագայում հղված է *ժում* «գ. 1. անգամ, 2. ժամ, ժամանակ»։ ՌՇՀԲ-ում առանձնացված է «եկեղեցի» իմաստով կիրառությունը որպես համանուն բառ, այսպես՝ *ժամ* «ժամանակի հատված» – *ժամ* «(ժող.) եկեղեցի»։ ԵԳՀԲ-ում *ժամ* բառը տրված չէ, հավանաբար հեղինակը այլոց նման ևս համանունություն չի համարել «եկեղեցի» իմաստով դրսևորումը, որը նաև քերականական, տվյալ դեպքում հոլովման տարբերություն է ցուցաբերում՝ միմիայն ենթարկվելով –ի հոլովման։

ԺՀԼԲԲ-ում հաջորդաբար տրված են *կապ* բառի 16 նրբիմաստներ, այդ թվում և՛ «15. լեռների միջով անցնող ճանապարհի նեղ մասը. կապան»։ ԱՀԲԲ-ում վերջինս ներկայացված է առանձին գլխաբառով՝ որպես համանուն բառ հակադրվելով իմաստային 14 առումների։ Հետաքրքրական է, որ ԵԳՀԲ-ում *կապ* բառի համանունությունը վկայված չէ, փոխարենը տրված է ԱՀԲԲ-ում որպես համանուն առանձնացված միավորի նույնանիշ *կապան* կազմությունը՝ բառային և քերականական համապատասխան համանուններով հանդերձ։ Ե. Գևորգյանը թերևս նկատի է առել այն, որ *կապ* բառի նշված իմաստով կիրառությունը սահմանափակվել է՝

²¹Տե՛ս Վ. Խաչատրյան, *Բազմիմաստություն և համանունություն. ձևակազմական տարբերություններ*.— ՀԱՊՀ (Պոլիտեխնիկ) «Լրաբեր», գիտական հոդվածների ժողովածու, մաս 2, Ե., 2024, էջ 585-592։

²²Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976 (այսուհետև՝ ԱՀԲԲ)։

²³Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ)։

փոխարինվելով *կապան* բառով: ՌՇՀԲ-ում *կապ* բառը, ի տարբերություն նախորդ բառարանների, ներկայացված է հինգանդամ համանունությամբ՝ «լեռներով անցնող ճանապարհ» - «կապված» - «1. թոկ, շղթա, 2. կապանք» - «խոսքի մաս» - «հաղորդակցություն»:

Կան դեպքեր, որ միևնույն արմատական բաղադրիչներով բարդության վերջնաբաղադրիչի իմաստի՝ մի կողմից պահպանումով և մյուս կողմից մթագնումով է առաջանում համանունություն:

ԺՀԼԲԲ-ում *լուսանք* բառը տրված է որպես երկիմաստ բառ՝ «գրքի՝ ձեռագրերի՝ տետրի՝ թղթի եզրերի չգրված՝ չգրվելիք նեղ շերտը, որը անջատվում է գրադաշտից» և «լույսի անցք, լուսանցույց» հայտնի իմաստներով: Սակայն Է. Աղայանը ԱՀԲԲ-ում այդ իմաստները ներկայացրել է առանձին գլխաբառերով՝ որպես համանուն բառեր: ՌՇՀԲ-ում և ԵԳՀԲ-ում այն տեղ չի գտել: Կարելի է կարծել, որ Ե. Գևորգյանը այն նույնպես չի համարել համանունություն, մանավանդ որ բառարանը կազմելիս օգտվել է նաև ԱՀԲԲ-ից: Բառը համանունության նշումով կարելի է նկատել նաև վերջին շրջանում կազմված որոշ բառարաններում և բառացանկերում, ինչպես, օրինակ, Դ. Գյուրջինյանի «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում» քերականական բառարանում²⁴:

Ջրանք բառը ԺՀԼԲԲ-ում հետևյալ իմաստների նշումով է՝ «1. արհեստական լայն առու՝ ջուրը մի տեղից մյուսը տանելու համար՝ ռոտզման և այլ նպատակներով, 2. ծովերը կամ գետերը իրար միացնող արհեստական ջրային նեղ տարածություն. Սուեզի ջրանցք, Պանամայի ջրանցք»: ԱՀԲԲ-ում այդ իմաստները միավորված են, և որպես երկրորդ իմաստ տրված է «ջրի անցք, ջրածակ»: Բառի հոգնակին, ինչպես և *լուսանք* բառի դեպքում է, առաջին իմաստով կազմվում է *-ներ*-ով, երկրորդի պարագայում՝ *-եր*-ով: Ելնելով իմաստային զգալի տարբերությունից և դրանից բխող քերականական տարբերությունից՝ այն հարկ է դիտել որպես համանունություն, չնայած որ ոչ մի հայտնի բառարանում, այդ թվում և Դ. Գյուրջինյանի վերոհիշյալ քերականական բառարան-տեղեկատուի մեջ *ջրանք* բառի համար այդպիսի նշում չկա, թեկուզ և նշված են նրբիմաստային տարբերությունից բխող հոգնակիականության տարբերությունները: Կարծում ենք, որ տեղին է ընդունել այդ բառերի համանունությունը՝ ելնելով իմաստային խիստ տարբերությունից և միաժամանակ հաշվի առնելով հոգնակիականության տարբերությունը:

Հայերենում առկա են միևնույն արմատներով կազմված բազում բարդ բառեր, որոնց վերջնաբաղադրիչները մի կողմից ունեն գոյականական արժեք և մյուս կողմից՝ բայական: Այդ օրինակները, կարծում ենք, համանունության դրսևորում են, չնայած որ բառարաններում հիմնականում տրված են բազմիմաստության ներքո: Առաջին դեպքում այդպիսի բառերը գոյականներ են, մյուս դեպքում՝ ածական կամ վերջինից խոսքիմասային անցումով առաջացած գոյական: Առաջինների հոգնակին կազմվում է *-եր*-ով, երկրորդ դեպքում՝ *-ներ*-ով: Այսպես.

Էջկապ – ԺՀԼԲԲ՝ «գ. 1. շարվածքի էջերը կապելը՝ ձևավորելը, 2. էջակապ՝ շարվածքի էջը կապող (գրաշար)», ԱՀԲԲ-ում ևս նույն բացատրությունն է՝ «*-եր*, գ. 1. շարվածքի էջակապելը, 2. էջակապ (էջակապող բանվոր)»: Դ.Գյուրջինյանի բառացանկում *էջկապ* բառի առաջին

²⁴ Տե՛ս Դ. Գյուրջինյան, *Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու*, Ե., 2007:

իմաստի դեպքում, ի տարբերություն նախորդ բառարանի, իրավացիորեն նշված է *անհոգնական* լինելը: Այսպիսով, տվյալ իմաստների պարագայում առկա է նաև քերականական տարբերություն: Եթե մի դեպքում բառն արտահայտում է տվյալ գործողության անվանումը, ապա երկրորդ դեպքում՝ այդ գործողությունը կատարող, այդ գործով զբաղվող անձ է նշանակում: Գործողության անվանում կամ անշունչ առարկա և կոնկրետ անձ նշանակելու դեպքերը, անկասկած, պետք է առանձնացնել որպես համանուն բառեր և ոչ թե բազմիմաստ:

ԺՀԼԲԲ-ում և ԱՀԲԲ-ում *գլխաչափ* բառի կողքին նշված են հետևյալ երկու իմաստները՝ 1. գլխի տրամագիծը չափելու գործիք, 2. գլխի չափ, գլխի մեծություն ունեցող: ԵԳՀԲ-ում նույնը համարվել է համանունության դրսևորում՝ ելնելով այդ իմաստների՝ անկախ բառակազմությամբ ձևավորվելու հանգամանքից: Դրանց կարելի է հավելել նաև «գլխի չափը» գոյականական իմաստը: Նույնանման կազմություն և դրսևորումներ ունի *հասակաչափ* բառը, ըստ ԱՀԲԲ-ի՝ 1. չափահաս, 2. հասակի չափով, մի մարդու բարձրությամբ, 3. հասակի չափը, 4. մարդու հասակը՝ բոլոր չափելու սարք: Կարծում ենք, որ տեղին է նաև *հասակ* բառը համանուն համարել «տարիք» և «մարմնի բարձրություն» իմաստներով: ԵԳՀԲ-ում *հասակաչափ*-ը որպես համանուն տրված է ածականական «մի մարդու բարձրությամբ» և գոյականական «հասակ չափելու հարմարանք» իմաստներով: Կարելի է հավելել նաև «հասակի չափը» իմաստը որպես առաջինի բազմիմաստության դրսևորում՝ ելնելով իմաստային մերձությունից:

Կարծում ենք, որ նույնը պետք է տարածել հետևյալ օրինակների վրա ևս, որոնք մասամբ արձանագրված չեն ԵԳՀԲ-ում, իսկ այլ բառարաններում կա՛մ իմաստներից մեկի, կա՛մ բազմիմաստության նշումով են. *էլեկտրաչափ* «էլեկտրականության ծավալը, չափը» – *էլեկտրաչափ* «1. էլեկտրաչափության ծառայող, էլեկտրաչափումներ կատարող, 2. (ֆիզ.) էլեկտրական հոսանքի լարվածությունը չափելու սարք՝ գործիք», *էջաչափ* «1. էջի չափս, 2. ա. էջի չափով» – *էջաչափ* «երկու կետերի միջև եղած ուղղահայաց տարածությունը չափող սարք», *կրծքաչափ* «1. կրծքի չափը, 2. կրծքի չափ ունեցող» – *կրծքաչափ* «կուրծքը՝ կրծքավանդակի լայնությունը չափելու գործիք»: ԺՀԼԲԲ-ում վկայված են գոյականական «կուրծքը չափող հարմարանք՝ գործիք» և ածականական «կրծքի չափ լայնք ունեցող» իմաստները, ԱՀԲԲ-ում տրված է միայն երկրորդ առումով, սակայն – *եր* հոգնակերտի նշումով, որն, իհարկե, բայական միավանկ վերջնաբաղադրիչներով բառերի պարագայում ընդունելի չէ, այդ դեպքում ճիշտ է – *ներ* մասնիկի կիրառությունը. *հողաչափ* «1. հողամասի չափը, 2. հողակույտի չափը» – *հողաչափ* «1. հողաչափության մասնագետ, 2. հողատարածքը չափող սարք, 3. հողի պարարտացման մակարդակը, ջերմաստիճանը և թթվայնությունը չափող սարք» և այլն:

ԵԳՀԲ-ում տրված է համանուն *գազաչափ* բառը, սակայն մի եզրում *գազ* բաղադրիչն այլ իմաստով է, այսպես՝ *գազաչափ* «մոտ մի գազ (երկարության չափ՝ 112սմ) երկարություն ունեցող» – *գազաչափ* «գազահաշվիչ»: Սակայն կարծում ենք, որ դրանց պետք է ավելացնել մի համանուն ևս՝ «գազի չափը, ծավալը» իմաստով:

Նույնպիսի համանունություն առկա է հետևյալ բառերում՝ *ալիքաչափ*, *անկյունաչափ*, *գանգաչափ*, *գինեչափ*, *գնդաչափ*, *երկրաչափ*, *ջերմաչափ*, *ջրաչափ*, *օդաչափ* և այլն:

Հավակեր բառը ԺՀԼԲԲ-ում տրված է երեք իմաստով՝ 1. հավ ուտող, հավի միս սիրող, 2. հավերի կեր դարձած, հավերից քցված, 3. հավի կեր, ԱՀԲԲ-ում երկու իմաստ է նշված՝ 1. հավ ուտող, 2. հավի կեր դարձած, հավերից քծված՝ փչացած: Ե. Գևորգյանը առաջին

իմաստն ու հաջորդներն առանձնացրել է որպես համանուններ՝ նշելով միմյանցից անկախ կազմություն ունենալու հանգամանքը, այսպիսով՝ *հավակեր* «ա. հավ շատ ուտող, հավի միս սիրող» - *հավակեր* «1. հավի կեր դարձած, հավերի կողմից կտցահարված, 2. հավի կեր»: Նույնը վերաբերում է նաև հետևյալին՝ ԱՀԲԲ՝ *գազանակեր* «ա. 1. գազանից կերված, գազանակուր, 2. գազան ուտող, 3. գազանի կեր», որոնց երկրորդ իմաստը պետք է առանձնացնել որպես մյուսներին համանուն բառ:

Գիր վերջնաբաղադրիչով գոյականներում նշված բաղադրիչը մի կողմից ունի «գիր, գրի տեսակ» կամ «գրություն, գրվածք», մյուս կողմից՝ «գրող, գրառող» իմաստը, ուստի առաջին դեպքում այդ բառերն ստանում են *-եր*, իսկ երկրորդ դեպքում՝ *-ներ* հոգնակերտը:

Բաբախագիր, գանգատագիր, ծաղկագիր, կենդանագիր, հուշագիր, մատենագիր, ուղեգիր և նմանատիպ այլ բառերում հիշատակված իմաստների առկայությունը ԺՀԼԲԲ-ում, ԱՀԲԲ-ում և այլուր բնութագրվել է որպես բազմիմաստության դրսևորում: Սակայն ԵԳՀԲ-ում կարելի է նկատել մի քանի օրինակներ, որոնք ներկայացված են որպես համանուններ:

ԱՀԲԲ-ում *հուշագիր* բառը ներկայացված է հետևյալ իմաստներով՝ «1. դիվանագիտական փաստաթուղթ, որի մեջ շարադրված են պետության տեսակետները որևէ խնդրի մասին, 2. հուշագրություն (գրական երկի տեսակ), 3. հուշագրությունների հեղինակ, հիշատակագիր, 4. իբրև հիշատակ թողնված գրություն՝ մակագրություն՝ արձանագրություն: ԺՀԼԲԲ-ում միայն վերոհիշյալ առաջին իմաստն է նշված, իսկ ՌՇՀԲ-ում և ԵԳՀԲ-ում բառն առկա չէ: Կարծում ենք, որ նշված երրորդ իմաստը պետք է մյուսներից առանձնացնել որպես համանուն բառ: Իսկ մյուս երեք իմաստները մերձ առնչություն ունեն՝ նշանակելով «հուշի, հիշողության գիր»՝ անկախ տեսակներից ու ձևերից:

Նույնկերպ պետք է վարվել հետևյալ դեպքերում. *բաբախագիր* «սրտի բաբախումների գծագիր» - *բաբախագիր* «սրտի բաբախումները գրանցող սարք», *գանգատագիր* «գանգատի գիր, գրավոր գանգատ» - *գանգատագիր* «գանգատ գրող մարդ», *գավեշտագիր* «գավեշտական գրվածք» - *գավեշտագիր* «գավեշտական գրվածքների հեղինակ, գավեշտական երկեր գրող», *ծաղկագիր* «ծաղկի պատկեր ներկայացնող զարդագիր» - *ծաղկագիր* «ծաղկի պատկերով զարդագրեր գրող՝ նկարող՝ գրիչ», *մատենագիր* «մատենագրի գրվածքը, մատենագրություն» - *մատենագիր* «մատյան գրող հին հեղինակ», *որմնագիր* «որմնագրություն՝ պատի վրա փորված արձանագրություն» - *որմնագիր* «որմնագրության վարպետ», *չափագիր* «չափագրված պատկեր՝ տախտակ՝ գծագիր» - *չափագիր* «չափագրող մասնագետ», *պատկերագիր* «1. պատկերագրական համակարգի գրային նշան՝ գրություն՝ գրավոր հուշարձան, 2. որևէ բանի (կենդանու, թռչունի և այլն) պատկերով ձևացրած տառ՝ զարդատառ» - *պատկերագիր* «նկարիչ, գեղանկարիչ, հատկապես՝ դիմանկարիչ», *պարսավագիր* «մեկին կամ մի երևույթ պարսավող հրապարակախոսական երկ, պամֆլետ» - *պարսավագիր* «1. պարսավագրական ստեղծագործության՝ պամֆլետի հեղինակ, 2. մեկի դեմ պարսավական բան գրող անձ», *սրտագիր* «սրտագրություն» - *սրտագիր* «սրտի աշխատանքը գրառող սարք», *վիմագիր* «վիմական արձանագրություն» - *վիմագիր* «վիմագրության մասնագետ՝ վիմագրող» (վիմագիրներ) - *վիմագիր* «աճ. վիմագրական», *ուղեգիր* «1. որևէ տեղ ուղարկվող անձին տրվող պաշտոնական փաստաթուղթ, 2. փոխադրամիջոցի ուղեգիծն ու առաջադրանքը բովանդակող փաստաթուղթ, 3. փխբ. մի տեղ մեկ-

նելու՝ մի բանի մասնակցելու իրավունք» – *ուղեգիր* «ճամփորդական նոթագրության՝ ուղեգրության հեղինակ», *ուղեղագիր* «ուղեղի աշխատանքի գրառումը՝ գծագիրը» – *ուղեղագիր* «ուղեղի աշխատանքը գրառող սարք»:

ԵԳՀԲ-ում *կենդանագիր* բառի՝ «այլևայլ կենդանիների նմանությամբ գիր, տառ՝ գաղտնագիր» իմաստն է առանձնացված որպես համանուն բառ մյուս իմաստներին, այդ թվում՝ «կենդանագրող, նկարիչ»: Կարծում ենք, որ «գրանշան», «գրություն, շարադրանք կամ ինչ-որ պատկեր» և «ստեղծագործող անձ կամ գրառող սարք» իմաստների առկայության դեպքում ճիշտ է համանունությունը համարել եռանդամ: Այսպես. *կենդանագիր* «1. կենդանի նկարված, բնականին նմանվող, 2. պատկեր, դիմանկար, 3. լուսանկար» - *կենդանագիր* «կենդանիների նմանությամբ զարդարուն գիր, զարդագիր, գազանագիր» - *կենդանագիր* «1. դեմքերը կենդանի (իրական) գույներով նկարող նկարիչ, դիմանկարիչ, պատկերահան, 2. ցուցանակներ գրող արվեստագետ»: ԵԳՀԲ-ում նշվածի համանունությունը բնութագրված է անկախ կազմությամբ, սակայն «ստեղծագործող անձ» իմաստը չի առանձնացվել ածականական և իրանիշ իմաստներից, չնայած որ այն նույնպես ուրույն կազմություն ունի:

ԵԳՀԲ-ում տեղ են գտել նաև հետևյալները. *բազմագիր* «շատ գրող» - *բազմագիր* «գրի շատ տեսակներ պարունակող», *ինքնագիր* «1. իր ձեռքով գրած, 2. մեկի ձեռքով գրածը, 3. հեղինակի ձեռագիր, 4. հեղինակային մակագրություն» - *ինքնագիր* «1. ավտոմատ կերպով գրանցող, 2. (տեխ.) չափիչ սարք»: Այդ համանունների համար նշված է անկախ կազմություն ունենալու հանգամանքը: Ե. Գևորգյանի բառարանում տեղ գտած այդ սակավ օրինակները մեզ հուշում են, որ համանուն պետք է համարել նույնպիսի կազմություն և իմաստ ունեցող մյուս բառերը ևս:

Գործ վերջնաբաղադրիչով բառերը հիմնականում մի կողմից ունեն «տվյալ գործով զբաղվող անձ, արհեստավոր» և մեկ այլ կողմից՝ «տվյալ առարկայով կամ առարկայի միջոցով հյուսված, գործված, պատրաստված» իմաստները: Արդի հայերենում առաջին առումով ընդունված է այդ բաղադրիչը համարել ածանցակերպ կամ ածանց, իսկ մյուս դեպքում՝ արմատ: Բնականաբար տվյալ միավորները պետք է համարել համանուն բառեր: ԺՀԼԲԲ-ում, ԱՀԲԲ-ում և այլ բառարաններում այդ իմաստները ներկայացված են որպես բառի բազմիմաստության դրսևորումներ: Հաճախ էլ այդ իմաստներից մեկը կամ նույն բառից բխող նրբիմաստներն են տրված: Սակայն ԵԳՀԲ-ում վերոհիշյալ իմաստային առումները նշված են որպես համանուններ՝ իրարից անկախ կազմություն ունենալու նշումով, ինչպես. *դիպակագործ* «դիպակ հյուսող արհեստավոր» - *դիպակագործ* «դիպակե, դիպակից պատրաստված», *երկաթագործ* «երկաթից պատրաստված, երկաթե» - *երկաթագործ* «1. դարբին, 2. երկաթագործական», *մեքենագործ* «մեքենավար» - *մեքենագործ* մեքենայով գործված, հյուսված», *պղնձագործ* «պղնձակերտ, պղնձից պատրաստված» - *պղնձագործ* «1. պղնձից իրեր շինող արհեստավոր, 2. հանքից պղինձ հանող բանվոր», *քարագործ* «քարից շինված, պատրաստված» - *քարագործ* «1. քարտաշ, քարի վրա փորագրություն անող վարպետ, 2. որմնադիր»:

ԱՀԲԲ-ում *պղնձագործ* բառի մոտ նշված են հետևյալ չորս իմաստները՝ 1. պղնձի հանքերում աշխատող բանվոր, պղնձահանքերի հանքագործ, 2. պղնձարդյունաբերության բնագավառի աշխատող, 3. պղնձից զանազան իրեր պատրաստող արհեստավոր, 4. (հզվդ.) դարբին:

Կասկածից վեր է, որ նշված իմաստները նույն բառի նրբիմաստներն են: Դրանց կողքին «պղնձից պատրաստված» իմաստը, բնականաբար, պետք է համարել համանուն բառ:

Կան նույնպիսի կազմությամբ այլ բառեր էլ, որոնք արձանագրված չեն ԵԳՀԲ-ում, օրինակ՝ *զարդագործ* «զ. զարդեր քանդակող՝ նկարող կամ հյուսող արվեստագետ» - *զարդագործ* «ա. զարդերով հյուսված՝ գործված» և այլն:

Այսպիսով, համանուն բառեր են նաև՝ *կոշկակար* «կոշիկի կար» - *կոշկակար* «կոշիկ կարող արհեստավոր», *գլխարկակար* «գլխարկի կար» - *գլխարկակար* «գլխարկ կարող արհեստավոր», *խրձակապ* «խրձերի կապը, կապելը» - *խրձակապ* «հնձած հացաբույսը հավաքող և խրձերով կապող մեքենա», *արջորս* «արջի որս, արջ որսալը» - *արջորս* «արջ որսացող, արջի որսորդ», *գազանորս* «գազանի որս» - *գազանորս* «գազան որսացող մարդ», *գայլորս* «գայլի որս» - *գայլորս* «գայլի որսորդ, գայլ որսացող» և այլն:

Նույնը վերաբերում է *-պատ* վերջնաբաղադրիչով բառերին: Նշվածի գոյականական և բայական իմաստով իրացումները անշուշտ պետք է համարել համանունության դրսևորում: Օրինակ, *ծաղկապատ* բառի «ծաղկապատյան, ծաղկի բողբոջը իր մեջ պարփակող պատիձ» իմաստը նույնպես բխում է *պատ* իմաստից՝ ի հակադրություն այլ իմաստների, որոնք *պատել* բայից են սերում: Հետևաբար դրանք մի շարք բառարաններում, այդ թվում՝ ԺՀԼԲԲ-ում, ԱՀԲԲ-ում, ՌՇՀԲ-ում և ԵԳՀԲ-ում դիտված են որպես համանուններ: Այսպես. 1. *ծաղկապատ* (պատել բայից) «ա. 1. ծաղկաշատ, 2. ծաղիկներով զարդարված, 3. վրան ծաղիկներ հյուսված, 4. վրան ծաղիկներ քանդակված կամ նկարված, 5. ծաղիկներով ծածկված» - 2. *ծաղկապատ* (անկախ կազմություն 1. *ծաղկապատ*-ից) «զ. (բսբ.) ծաղկապատյան - ծաղկի բողբոջը իր մեջ պարփակող պատիձը»: Պետք է նույնը կիրառել նմանատիպ այլ օրինակների դեպքում:

Շրջապատ բառի համար ԱՀԲԲ-ում տրված է 7 իմաստ, որոնցից մեկն առանձնանում է մյուսներից՝ բխելով *պատ* գոյականական իմաստից՝ «շուրջբոլորը պարփակող պատ, շրջապատներ, շրջապարիսպ»: Այսպիսով, վերջինս պետք է դիտել որպես առանձին համանուն բառ՝ հակադրելով մյուս 6 նրբիմաստներին, որոնցում առկա է *պատել* բայական իմաստը: Նմանատիպ օրինակները հայ լեզվաբանության մեջ որոշ դեպքերում դիտվում են որպես համանուններ:

Նույնպիսի օրինակներ են հետևյալները, որոնք մասամբ ներկայացված են ԵԳՀԲ-ում. *աղյուսապատ* «աղյուսաշար պատ» - *աղյուսապատ* «աղյուսով պատված՝ ծածկված», *այգեպատ* «այգու պատ՝ պարիսպ» - *այգեպատ* «այգիներով պատված», *բաղեղապատ* // *բաղեղնապատ* «բաղեղների կազմած պատ՝ պատներ» - *բաղեղապատ* // *բաղեղնապատ* «բաղեղով պատված՝ ծածկված», *երեսապատ* «արտաքին պատ» - *երեսապատ* «1. առարկայի երեսը պատելով՝ ծածկելով շոր՝ կաշի ևն, 2. երեսը պատած», *եղեգնապատ* «1. եղեգե ցանկապատ, 2. խիտ աճած եղեգներից պատ» - *եղեգնապատ* «1. վրան շատ եղեգներ աճած, 2. եղեգե կտուր, ծածկ ունեցող», *երկաթապատ* «երկաթյա պատ» - *երկաթապատ* «երկաթով պատված», *ժայռապատ* «ժայռեղեն պատ, պատի նման բարձրացող ժայռ» - *ժայռապատ* «ժայռերով պատված, ժայռածածկ», *կրապատ* «կրի շաղախով կառուցված պատ» - *կրապատ* «կրով պատած, ծածկված, վրան կիր քսված», *ծալապատ* «(տեխ.) լուսանկարչական ապարատի ծալքավոր, հարմոնի նման պատերը» - *ծալապատ* «1. ծալերով պատված, 2. ծալապատիկ»:

Բնույթով նախորդ օրինակներին են հարում նաև հետևյալները. *զարդակար* «գ. իբրև զարդ ծառայող կար՝ կարվածք» - *զարդակար* «ա. զարդերով կարված, վրան զարդեր կարված», *զարդանախշ* «գ. զարդաձև նախշ, զարդ հանդիսացող նախշ» - *զարդանախշ* «ա. զարդերով նախշված», *ժանյակագարդ* // *ժանեկագարդ* «գ. ժանյակի զարդ» - *ժանեկագարդ* «ա. ժանյակով զարդարված», *նախշագարդ* «գ. նախշերով զարդ» - *նախշագարդ* «ա. նախշերով զարդարված», *քարագարդ* «գ. քարե զարդերից» - *քարագարդ* «քարերով զարդարված», *անցումանիշ* «անցումային նիշ, միավոր, գնահատական» - *անցումանիշ* «անցումի տեղը նշող՝ սլաք»:

Վերը հիշատակված ծավալուն բացատրական բառարաններում համանուն չհամարված և դիտարկված համանունների բառարաններում չարձանագրված որոշ միավորներ որպես համանուն են ներկայացված այլ բառարաններում ու բառացանկերում: Օրինակ, ԱՀԲԲ-ում *ուղեկալ* բառը տրված է հետևյալ 5 իմաստներով՝ 1. պետական սահմանը պահպանող զինվորական ջոկատ, 2. այն տեղամասը, որ պահպանվում է այդպիսի ջոկատով, 3. սահմանապահ ջոկատի՝ զորամասի ևն զորանոցը, 4. առհասարակ՝ որևէ կարգի օբյեկտ պահպանող զինված ջոկատ, 5. ուղեփակ (շարժական ձող, որով փակում են ճանապարհը, անցարգել), սակայն Վ. Սահակյանի բառարանում²⁵ շուրջ հարյուր համանուն բառերի և բառաձևերի մեջ տրված է նաև *ուղեկալ* «սահմանապահ ջոկատ» - *ուղեկալ* «ճանապարհը փակող ձող»: Տրամաբանական է, որ բառի՝ մի կողմից անձ և մյուս կողմից ինչ-որ առարկա նշանակելու երևույթը դիտվի համանունություն դրսևորում:

Եզրակացություն: Հայ լեզվաբանության մեջ միևնույն բառը բազմիմաստ կամ համանուն համարելու բազում դեպքերը, որոնք ինչ-որ չափով ներկայացվել են հոդվածում, վկայում են այն մասին, որ հայերենագիտությունը դեռ անելիք ունի տվյալ բնագավառում: Կարծում ենք, որ հնարավոր է մանրակրկիտ աշխատանքով և վերլուծությամբ այդ հարցը վերջնականապես լուծել: Եթե բառի փոխաբերական իմաստով կիրառություն է, ապա դա անկասկած բազմիմաստության տիրույթում է: Բացի դրանից՝ բառը կարող է կիրառական բազմազանություն ցուցաբերել: Օրինակ, նույն բառը կարող է հավասարապես կիրառվել որպես ածական և որպես մակբայ: Այդտեղ բացառապես նույն իմաստն է: Կարելի է այդպիսի դեպքերը չհամարել համանունություն, թեկուզ և խոսքիմասային պատկանելությունը տարբեր է և որոշվում է բառի շարահյուսական կիրառությամբ:

Հոդվածում ներկայացված համանուն բառերը, ինչպես և նկատեցինք, երկու հիմնական խմբի են բաժանվում: Մի խումբն են կազմում միևնույն բառի իմաստների զարգացմամբ առաջացած համանունները, որոնք լեզվաբանական գրականության մեջ մերթ ղիտվում են բազմիմաստ, մերթ համանուն: Մյուս խմբի բառերն էլ միևնույն արմատական բաղադրիչներով, սակայն շարահյուսական տարբեր կառույցներից ձևավորված բարդություններ են, որոնք, բացի անկախ բառակազմությունից, խիստ տարբերվում են նաև իմաստով և քերականական հատկանիշներով, չնայած որ լեզվաբանական գրականության մեջ հիմնականում ներկայացված են որպես բազմիմաստ բառեր:

²⁵ Վ. Սահակյան, *Հոմանիշների, հականիշների, համանունների, դարձվածքների դպրոցական բառարան*, Ե., 2006:

ԵԳՀԲ-ն ցայժմ մնում է արդի հայերենի համանունների ամենահարուստ բառարանը, որը պարունակում է շուրջ 12000 բառ և բառաձև: Հոդվածում դիտարկված, բայց և նշված բառարանում տեղ չգտած շատ բառեր, ինչպես և նկատեցինք, իրենց բնույթով հարում են բառարանագրված մի շարք օրինակների: Բացի դրանից՝ այդ բառարանի տպագրությունից ի վեր (շուրջ կես դար) հայերենում կազմվել են նոր բառեր, առկա շատ բառերում տեղի են ունեցել իմաստային լուրջ տեղաշարժեր՝ հիմք հանդիսանալով նոր համանունների առաջացմանը: Հետևաբար հասունացել է համանունների նոր բառարան կազմելու պահանջը: Հուսով ենք, որ սույն հոդվածը իր որոշակի նպաստը կբերի բազմիմաստության և համանունության շփոթությունը կանխելու և համանունների նոր և համապարփակ բառարան կազմելու գործին:

Valentin Khachatryan. On the issue of confusion polysemy and homonymy.- This article examines the issue of confusion polysemy and homonymy in modern Armenian linguistics. As is known, homonymy largely arises on the basis of polysemy. Some meanings are very distant, and thus are perceived as homonyms. Some consider these meanings close, others distant, therefore in the first case the reality is viewed as polysemy, in the second case as homonymy. The main goal of the article is to overcome these difficulties. Therefore, many examples are considered, which, showing obvious semantic, word-formation and grammatical differences, are considered homonymy, although they are given under polysemy in various works. This article can contribute to clarifying the boundaries of polysemy and homonymy and to compiling a new and extensive dictionary of homonyms.

Keywords: polysemy, homonymy, lexical homonyms, grammatical homonyms, linguistic reality, confusion, boundary.

Валентин Хачатрян. К вопросу путаницы полисемии и омонимии. - В данной статье рассматривается проблема путаницы полисемии и омонимии слов в современном армянском языкознании. Как известно, омонимия во многом возникает на основе многозначности. Некоторые значения весьма далеки друг от друга и воспринимаются как омонимы. Одни считают эти значения близкими, другие далекими, поэтому в первом случае реальность рассматривается как многозначность, во втором – как омонимия. Основная цель статьи – преодолеть эти трудности. Поэтому рассматривается множество примеров, которые, демонстрируя очевидные семантические, словообразовательные и грамматические различия, считаются омонимией, хотя в различных работах приводятся в рамках многозначности. Данная статья может способствовать уточнению границ многозначности и омонимии и составлению нового обширного словаря омонимов.

Ключевые слова: полисемия, омонимия, лексические омонимы, грамматические омонимы, языковая реальность, смешение, граница.

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:

Գյուրջինյան Դ., Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Ե., «Լիմուշ» հրատ., 2007:

Գևորգյան Ե., Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1978:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:

Խաչատրյան Վ., Բազմիմաստություն և համանունություն. ձևակազմական տարբերություններ.— ՀԱՊՀ (Պոլիտեխնիկ) «Լրաբեր». գիտական հոդվածների ժողովածու, մաս 2, Ե., 2024, էջ 585-592:

Մարության Ա., Ն. Ա. Պառնասյան, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1979, 185 էջ (գրախոսություն).— Լրաբեր հասարակական գիտությունների, № 4, Ե., 1980, էջ 108-111:

Շալունց Ռ., Համանուն բառերը ժամանակակից հայերենում // Լեզվի և ոճի հարցեր, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977, էջ 5-76:

Շալունց Ռ., Արդի հայերենի համանունների դպրոցական բառարան, «Լույս» հրատ., Ե. 1980:

Պառնասյան Ն., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979:

Սահակյան Վ., Հոմանիշների, հականիշների, համանունների, դարձվածքների դպրոցական բառարան, Ե., 2006:

Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1999:

**ՀԱՄԱՆՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՆՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ինգա Մարգարյան

Բանալի բառեր: Համանունություն, հարանունություն, բազմիմաստություն, ածանցում, հիմնական ձևային, նորակազմություն, վիճակագրություն:

Նախաբան: Համանունությունը, հարանունությունը, բազմիմաստությունը լեզվական հայտնի երևույթներից են և, պայմանավորված լեզվական միավորի ձևային-հնչյունական առանձնահատկություններով, նշյալ իրողություններով կարող են հադես գալ լեզվական տարբեր մակարդակների միավորներ¹:

Լեզվաբանության մեջ տարբերվում են բառային և քերականական համանունություններ, որոնցից վերջիններս ուսումնասիրման առումով զիջում են բառային համանունությանը: Համանունությունն ակնհայտ է, երբ գործ ունենք տարբեր կիրառության, տարբեր գործառնություններ ունեցող ձևայինների հետ:

Արդի լեզվաբանության մեջ հարանունություն է համարվում տարիմաստ բառերի արտաքին ձևական նմանությունը²: Եթե համանունների դեպքում արտաքին ձևը նույնական է, ապա այս դեպքում նման բառերը իրենց հնչյունակազմով մասամբ են համընկնում³: Հարանունությունը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել, քանի որ համարվել է մասնակի համանունների մի տեսակ⁴:

Համանունությունը սերտորեն կապված է բազմիմաստության հետ, ինչը դժվարացնում է դրանց միջև խիստ որոշակի սահմաններ դնելը⁵: Սակայն տեղին է Ն. Պառնասյանի այն պնդումը, ըստ որի՝ համանունության և բազմիմաստության սահմանազատման դժվարությունը չպետք է հանգեցնի դրանց միջև եղած տարբերություններն անտեսելուն, քանի որ դրանք լեզվական համակարգում գործող իրարից որակապես տարբեր տեսակներ են⁶:

Բազմիմաստ և համանուն ածանցների տարբերակման չափանիշները ևս հստակեցված չեն: Է. Աղայանը ածանցների համանունությունը և բազմիմաստությունը տարբերակելու համար առանձնացնում է հետևյալ չափանիշները. եթե ձևապես նույնական ածանցները կազմում են երկու տարբեր հարացույցներ, կամ՝ եթե միևնույն խոսքի մասին են պատկանում, բայց որոշակիորեն տարբեր և նույնիսկ հակադիր իմաստներ ունեն, ապա դրանք համանուններ են,

¹ Այս մասին տե՛ս՝ **Lyons, J. Semantics** (Vol. 1 & 2). Cambridge University Press, 1977.

² Ձևական նմանությունների և իմաստային տարբերությունների մասին կարելի է տեսնել նաև՝ **S. Ullmann, Semantics: An Introduction to the Science of Meaning**. Basil Blackwell, 1962.

³ **Ֆ. Խլդաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, մ.1, Ե., 2009, էջ 153-154:

⁴ Տե՛ս **Է. Աղայան**, *Հնդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 66:

⁵ Այս մասին տե՛ս նաև՝ **Lyons**, նշվ. աշխ.:

⁶ **Ն. Պառնասյան**, *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*, Ե., 1979, էջ 108-109:

իսկ եթե միննույն հարացույցին պատկանող ձևապես նույնական ածանցները տարբեր հիմքերից կազմվող ածանցումներում տարբեր ածանցական իմաստներ են ստանում, ապա բազմիմաստ են⁷:

Համանունությունը որոշելու համար Ս. Գալստյանը կարևորում է նաև ձևապես նույնական ածանցների տարբեր խոսքի մասեր կազմելը⁸, իսկ Ա. Աբրահամյանը՝ իմաստային կողմը, որի հարաբերությամբ էլ որոշվում է հնչյունային (հնչույթային) նույնալիսի դրսևորում ունեցող մեկ այլ միավորի համանուն լինելը կամ չլինելը⁹: Այս առումով կարևոր է դառնում ածանցի իմաստային անփոփոխակի (ինվարիանտի) որոշումը: Ցանկացած ածանցի համար կարելի է առանձնացնել մի այնպիսի ընդհանուր (թելուզ և երբեմն խիստ վերացական) նշանակություն, որը իր հիմնական կողմերով կրկնվում է այդ միավորի խոսքային յուրաքանչյուր իրացման մեջ¹⁰:

Համանուն բաղադրիչներով նորակազմությունները «Նոր բառեր» պրակաշարում: Ածանցների բազմիմաստության և համանունության տարբերակման գլխավոր գործոններից է իմաստաբանականը: Բազմիմաստ ածանցների բոլոր նշանակությունների մեջ առկա է միննույն իմաստային անփոփոխակի: Համանուն ածանցները չունեն իմաստային առնչակցության որևէ եզր¹¹:

Այսպես՝ **-եղեն** ածանցով նորակազմություններ «Նոր բառեր» բառարանաշարից(բացի Ը պրակից)դուրս ենք գրել ընդհանուր թվով 10-ը, որից «նախատիպի ցույց տված նյութից պատրաստված» բառակամգական նշանակությամբ բուն և փոխաբերական իմաստներով ածականներ՝ **մթնեղեն, անոգեղեն, վառողեղեն(«շատ տաք»), ձյունեղեն, շանթեղեն, հեքիաթեղեն, որդեղեն**, իսկ որպես գոյականներ՝ նշելով «նախատիպի նշած առարկայի կամ նրա ցույց տված նյութից պատրաստված առարկաների տեսակային ամբողջություն»։ **հախճապակեղեն, զարդեղեն, հավքեղեն**: Հետաքրքրական է, որ մի քանի տասնամյակ առաջժամանակակից հայերենում առաջին ածանցումով կազմությունները համարվում էին ոչ գործուն, իսկ երկրորդ կիրառությունները՝ խիստ գործուն¹²: Նոր բառերի կազմության այսօրվա համապատկերում նկատվում է հակառակ երևույթ¹³:

-Ենի համանուն ածանցումով նորակազմություններ բառարանաշարում համարյա չկան. միայն Դ պրակում հանդիպել է **ծմակենի**՝ «մեկին, մի բանի հատուկ»իմաստային նշանակությամբ, այսինքն՝ **ծմակին հատուկ, խիտ բուսականություն ունեցող**, և է պրակում **դափնեկեռասենի** ծառանունը:

⁷ Է. Աղայան, *նշվ. աշխ.*, էջ 290:

⁸ Ս. Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 12:

⁹ Ա. Աբրահամյան, *Հայերենի քերականական համանունության շուրջ* // Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1974, 1, էջ 23:

¹⁰ Ս. Ֆելեքյան, *Հայերենի ածանցների համանունության մասին (Քանի՞ –ոց ածանց կա հայերենում)* // Լեզու և լեզվաբանություն, Ե., 2023, N2, էջ 47:

¹¹ Ս. Ֆելեքյան, *Բառակազմական ձևային բազմիմաստությունը և համանունությունը արդի հայերենում* // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Ե., 2024, 15-2/44/, էջ 99: Տե՛ս նաև՝ **D. A. Cruse, Lexical Semantics**. Cambridge University Press, 1986.

¹² Տե՛ս Ս. Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, 1978, էջ 125-126:

¹³ Ածանցների արտադրողականության մասին տե՛ս նաև՝ **L. Bauer**, 2001, *Introducing Linguistic Morphology* (2nd ed.). Edinburgh University Press.

-Անի ածանցումով կազմությունները վիճակագրական հետաքրքիր պատկեր են ներկայացնում. որպես «նախատիպի ցույց տված առարկաների ամբողջություն» իմաստով **Բ** պրակում կա **երգիծանի** նորակազմությունը, իսկ համանուն «նախատիպի ցույց տված գոյականը ունեցող» նշանակությամբ ածանցումները թվով գերազանցում են (շուրջ 27 նորակազմություն): Սրանք բառակազմական յուրահատկություն են դրսևորում. ածանցը բաղադրվում է թվական լրացում ունեցող նախատիպին, ինչպես՝ կոնկրետ թիվ ցույց տվող բառ. **մի** կամ **մեկ** (**միաեզրանի, միկոնանի, միաստղանի, մեկխոռոչանի, մեկծալքանի, մեկկոճականի**): **Երկու, երկ-** լրացումով (**երկխոռոչանի, երկմումանի, երկֆոկուսանի, երկաշտաքականի, երկկոտոշանի, երկշապիկանի, երկքարտանի**): **Երեք-** և **չորս-** լրացումներով (**երեքշարժիչանի, չորսշերտանի**): **Հինգ-, վեց-, յոթ-, ութ-** բաղադրիչնեչով (**հինգբլթականի, հինգմատնանի, հինգաստղանի, վեցշերտանի, վեցթևանի, յոթփականի, յոթերեսանի, յոթթևանի, յոթկետանի, ութխորշանի**): Հանդիպում են նաև թվի ընդհանուր գաղափար ցույց տվող բառեր՝ **հազարկտորանի, բազմերեսանի**: Երբեմն նորակազմություններում նկատվում է արդեն հայտնի բաղադրություններից **կիսա-** բաղադրիչով նոր կազմությունների առաջացում. ընտանի և հոլանի հայտնի ձևերից կազմվել են **կիսաընտանի** և **կիսահոլանի** նորակազմությունները: Նշենք, որ **-անի** ածանցի վեջին իմաստով կազմությունների արտադրողականությունն նկատվում է հատկապես վերջին շրջանի պրակներում (**Ե-ում՝ 9, Զ-ում՝ 5, Է-ում՝ 5**):

-Անոց ածանցով կազմությունները բառարանաշարում բավականաչափ շատ են (ընդհանուր 45 նորակազմություն): Սրանցից «նախատիպի ցույց տված առարկայի տեղը» ընդհանուր բառակազմական նշանակությամբ գոյական կազմությունները քանակապես շատ են (**կեզլանոց, քոթուկանոց, կառքանոց, ճահճանոց, աղիճանոց** («աղջիկների հավաքատեղի»), **անտերանոց, ծխահարանոց**):

Այս կաղապարի որոշ բաղադրություններ ունեն «նախատիպ առարկայի պատրաստելու, արդունահանելու, մշակելու տեղ» բառակազմական-իմաստաբանական նշանակությունը՝ **քյաբաբանոց, հրուշականոց, երշկանոց, համբուրգերանոց, շաուրմայանոց, սուֆլեանոց, մրգանոց**:

Ունեն «շենք, որտեղ աշխատում, գործում են նախատիպի ցույց մասնագիտություն, կոչում ունեցող մարդիկ» նշանակությունը՝ **նավանորոգանոց, մաշակարանոց, կերպասավաճառանոց**,

Կամ՝ կենդանիների մնալու, պահվելու, բուծելու տեղ նշանակությամբ՝ **առյուծանոց, էշանոց, կարապանոց**:

Կան կազմություններ, որոնց հիմքին նոր առաջնաբաղադրիչի ավելացումը արդեն հայտնի ածանցական բաղադրությանը, ստացվում է նոր բառ, ինչպես՝ **դալարահովանոց, մոտոխոհանոց** (մոտոքաղցած խոհանոց), **էթոխոհանոց, զիտախոհանոց, հնավաճառանոց**:

Եվ բառաստեղծական ակտիվությամբ են առանձնանում նաև **-անոց** ածանցով ածականական կազմությունները՝ նշելով «որևէ կարգի միավոր պարունակող(թվականի ցույց տված քանակով կամ չափի միավորի չափով)¹⁴. **կեսհեկտարանոց, վեցպենսանոց, մեկուկեստոնանոց, հինգմատնանոց, մեկտեղանոց, չորստեղանոց, վաթսուվատանոց, վաթսունմումանոց,**

¹⁴ Է.Աղայան, նշվ.աշխ., էջ 288-289:

քառասունհազարանոց, երեքզլխանոց, երեքհոգիանոց, երկսենյականոց, երկվագոնանոց, երեքկայանոց, շրջանականոց, մղոնանոց, շաբաթանոց, կեսժամանոց, երկուրորայանոց:

Նշենք, որ վերջին շրջանի համանունությանն ու բազմիմաստությանը նվիրված ուսումնասիրություններում վերոնշյալ ածանցումների իմաստային այս կիրառությունները համանունություն չեն դրսևորում՝ հաշվի առնելով «տեղ» ընդհանուր գաղափարի արտահայտումը բազմաթիվ տարբերակների միջոցով, ինչը դրսևորվում է տարբեր խոսքիամասային պատկանելությամբ¹⁵:

-**Իչ** ածանցով կամգությունները համանունություն չեն դրսևորում, այլ նույն ածանցի տարբեր հիմքերից կազմվող ածանցումներում տարբեր ածանցական իմաստներ են ստանում: Բառարանաշարի վերլուծությունից արձանագրում ենք հետաքրքիր վիճակագրություն, ինչը ներկայացնենք պայմանական երկու խմբով: Այսպես՝ -**իչ**-ով ածանցումների 1-ին խմբի ածականական և գոյականական կազմությունները նոր են՝ համապատասխան ա) «նախատիպի ցույց տված գործողությունը կատարող» և բ) «անձ կամ առարկա, որը կատարում է նախատիպի ցույց տված գործողությունը» բառակազմական նշանակություններով:

ա. հեղաշրջիչ, հրացուիչ, մսխիչ, ծակիչ, հուսահատիչ, ուժածվատիչ, բազմաեփիչ, ցնորիչ, ազգակերտիչ, խոսքակերտիչ, հայրենակերտիչ, պետականակերտիչ, գիտակցափոխիչ, կատվաթռիչ, ոգեփոխիչ,

բ. անձրևորսիչ, լիցքավորիչ, թանաքամաքրիչ, հատեգերծիչ, ջրահեղիչ, սելավորսիչ, ավիալիցքավորիչ, հացաբովիչ, գործարկիչ, խեցգետնորսիչ, տապկիչ («փռոշին մաքրելու»), ավտոբեռնաթափիչ, բերանափակիչ, խաղողձգմիչ, կառուցարկիչ, տգորսիչ, որոշարկիչ, փորձաընտրիչ:

Ածանցումների 2-րդ խմբում առանձնացրել ենք բարդ հիմքով այն կազմությունները, որոնցումսերող հիմքին ավելանում է այլ հիմք՝ կազմելով նոր բառ, իսկ բաղադրող հիմքը կամգությամբ նոր չէ, այլ -**իչ** ածանցով բաղադրյալ մաս, օր.՝ գտիչ (բրնձագտիչ, հյութագտիչ, էթնոգտիչ, կոյուղագտիչ, օդագտիչ), կրթիչ (հոգեկրթիչ), նկարիչ (ձմեռանկարիչ, ֆոտոնկարիչ, միկրոլուսանկարիչ, հականկարիչ, շարժանկարիչ, մարմնանկարիչ), կազմիչ (մշակութակազմիչ, գաղափարակազմիչ, ռիթմակազմիչ), ցուցիչ (ֆոտոխոշորացուցիչ, առանձնացուցիչ, սնանկացուցիչ, օդաթարմացուցիչ, նորագոյացուցիչ, գնագոյացուցիչ, քնքշացուցիչ), չափիչ (գինեչափիչ, օդաչափիչ), համակարգիչ (կենսահամակարգիչ, խաղահամակարգիչ, մինիհամակարգիչ), բաղադրիչ (եռաբաղադրիչ, ծածկաբաղադրիչ, տերմինաբաղադրիչ), առաքիչ (թմրառաքիչ, բենզինառաքիչ):

Համանուն ածանցները բազմիմաստ ածանցների հետ ունեն որոշակի ընդհանրություններ, միննույն ածանցը արտահայտում է մի քանի բառակազմական իմաստ: Բազմիմաստ ածանցների իմաստային տարբերակները իմաստով կապված են միմյանց հետ, ինչպես նաև միևնույն ածանցի դրսևորումներն են և ծագումնաբանորեն ընդհանուր են: Համանուն ածանցների դեպքում միևնույն հնչյունական ձևի մակարդակում արտահայտվում են միանգամայն տարբեր բառակազմական իմաստներ, որոնք առաջանում են և՛ միևնույն ծագում ունեցող

¹⁵Մ.Ֆեկեքյան, նշվ.աշխ., էջ 48-49:

ածանցների իմաստների առանձնացումից, և՛ տարբեր ծագում ունեցող ածանցների հնչյունակազմերի պատահական գուգադիպություններից:

Նույն սկզբունքով ներկայացնենքսան **-իկ** ածանցով կազմությունները: Բառարանաշարի հարուստ բառանյութի քննությունից պարզ է դառնում, որ ածանցումները հիմնականում արտահայտում են նվազական, փաղաքշական նշանակություն՝ կազմվելով գոյական, ածական, բայական հիմքերով նախաստիպերից: Ինչպես՝ **հետճաշիկ, սանդղիկ, բրձիկ** («փոքր բարձ»), **խնկացայիկ, կոռքիկ, անրափոսիկ** («ուսի ոսկոր»), **բզեզիկ, լուսներեսիկ, աղվամազիկ, ձեռիկ, ողբերգիկ, խնդրահումորիկ, նրբիկ, քնկոտիկ, լուսնառիկ, այլախոսիկ, ձիավարժիկ, մագլցիկ, պահանցիկ, ժպտնացիկ, արմատախիլիկ**:

Կան քիչ թվով նոր բաղադրություններ, որոնցում **-իկ**-ը նախաստիպին տալիս է արհամարհական-նվաստական նշանակություն: Այդպիսի երանգ ստանում են հատկապես պաշտոն և կոչում ցույց տվող նախաստիպերը. **քրեաօլիգարխիկ, ազնվականիկ** («անարժան»), **բանաստեղծիկ**:

Առանձնացրել ենք նաև սերող հիմքին նոր բառի ավելացումով նորակազմություններ, որոնց վերջնաբաղադրիչը **-իկ**-ով բաղադրյալ մաս է, օր.՝ մարտիկ (**վիշապամարտիկ, երաժշտամարտիկ**), բացիկ (**տեսաբացիկ**), բշտիկ (**տենդաբշտիկ**), փայտիկ (**փոխանցափայտիկ, կերակրափայտիկ**), ձողիկ (**փայտաձողիկ, փորձաձողիկ**), թերթիկ (**հրահանգաթերթիկ, գեղաթերթիկ, ծրագրաթերթիկ, հրաթերթիկ, գրանցաթերթիկ**), թևիկ (**չղջաթևիկ, մաքրաթևիկ, զարդաթևիկ, ծովաթևիկ, սիրաթևիկ**), բարձիկ (**ուսաբարձիկ, թամբաբարձիկ**), թելիկ (**արնաթելիկ, նանդթելիկ, առածգաթելիկ**), փոսիկ (**ժպտափոսիկ**), սեղանիկ (**քնսեղանիկ, ծխասեղանիկ**), գլխիկ (**մանրագլխիկ, նետագլխիկ, փամփշտագլխիկ**), գնդիկ (**սառցագնդիկ, խաղագնդիկ**), հատիկ (**ալրահատիկ, մսահատիկ, լիահատիկ, քրտնահատիկ, հուշահատիկ**), սալիկ (**խրթասալիկ, գունասալիկ**), մազիկ (**աղվամազիկ, խուճուճամազիկ**):

-Անոց, -իկ, -իչ ածանցների տարբեր իմաստային նշանակություններով նորակազմությունները հիմնականում դրսևորում են բազմիմաստություն, որոշակի իրողություններում՝ համանունություն: Բառարանաշարում նման նորակազմությունները հատկանշվում են բառակազմական ինքնատիպ իմաստային նշանակություններով, որոնց տարածումը, հանրայնացումը թույլ կտա, որ գուցե մի քանի տասնամյակ հետո նոր բառեր կազմվելու այս չդադարող, հարափոփոխ շղթայում նման կազմությունների ավելացումն ու դրանց իմաստների առավել ցայտուն տարբերակումը կհանգեցնի բազմիմաստության ու համանունության որոշակի հստակեցման:

Համանունությունը հստակ է ու պարզորոշ, երբ գործ ունենք տարբեր կիրառության, տարբեր գործառնություններ ունեցող ձևությունների հետ¹⁶: Այսպես, ակնհայտ է համանունությունը հիմնական՝ արմատական ձևությունների և նույնական հնչյունական կազմն ունեցող երկրորդական ձևությունների միջև: Իհարկե, ծագման ընդհանրությունն այսօր երբեմն խանգարում է նույնահունչ ձևությունների հստակ տարանջատելը իբրև համանուններ: Ասենք՝ **գործ** արմատական բառը («աշխատանք, զբաղմունք, պարապմունք» հիմնական նշանակությամբ)՝ **գործա-**

¹⁶ Այս մասին կարելի է տեսնել՝ **I. Plag, Word-Formation in English**. Cambridge University Press, 2003.

կարգավարական, գործամետոություն, գործահագուստ, գործանենգ, գործակերպ, գործախա-
փան անել... և **-գործ** ածանցակերպը («նախատիպի զբաղմունքով՝ արհեստով՝ մասնագիտու-
թյամբ զբաղվող անձ, մասնագետ» բառակազմական նշանակությամբ) ունեն ընդհանուր ծա-
գում: Ածանցակերպն առաջացել է արմատից. սրանց կապը չի մթագնել և արդի լեզվում հստակ
գիտակցվում է: Սակայն քանի որ դրանց բառակազմական գործառույթները տարբեր են, այժմ
համարվում են համանուններ. **չրագործ, ճյուղագործ, ներքնակագործ, հելունագործ, բզագործ,**
Էբենագործ, շոկոլադագործ, շապկագործ, ընթացագործ, զգեստագործ, թոնրագործ, խաչքա-
րագործ, թունելագործ, թմրագործ, ավիագործ, կիբեռգործ:

Նույն հարաբերությունն է նաև **բան** արմատի («գործ, աշխատանք», նաև «միտք, գաղա-
փար» նշանակություններով)՝ **բանացայտք, բանախոհականություն...** և կրկին «նախատիպի
ցույց տված զբաղմունքով՝ գործով՝ գիտությամբ՝ առարկայով մասնագիտորեն զբաղվող անձ»
բառակազմական նշանակությամբ **-բան** ածանցակերպի միջև: **-Բան** ածանցակերպով դուրս
ենք գրել երեք տասնյակի հասնող նորակազմություններ՝ **քարոզչաբան, կրծքաբան, վերարտա-**
դրողաբան, ներգատաբան, դաջվածքաբան, թմրաբան, մշակութաբան, սննդաբան, քնաբան,
գոյավերլուծաբան, հնամարդաբան, հեռուստատեսաբան, ռոնաշարաբան, մոլորակաբան,
երկրաձևաբան, ժառանգաբան, չղջիկաբան, բժշկականաբան, աստղականաբան, ժայռա-
պատկերաբան, կոնֆլիկտաբան, հոգեվերլուծաբան, օվկիանոսաբան, ֆոտոպատմաբան, լեզ-
վագործաբան, լեզվաձանաչողաբան, ավիաօդերևութաբան: Օտար հիմքերով՝ **ալերգաբան,**
ստրեսաբան: Զ պրակում հանդիպում են **ինչաբան** («Նա, ով անընդհատ՝ ամեն առիթով տալիս
է ինչ հարցը, ինչախոս») և **մեռելաբան** («մեռելների՝ հանգուցյալների մասին խոսք ու զրույց»)
դիպվածային նորակազմությունները:

«Նոր բառերում» **-գետ** ածանցակերպով կա 36 նորակազմություն՝ **խաչքարագետ,**
միջնադարագետ, նախիջնանագետ, շումերագետ, թալիշագետ, սառցագետ, ցեղասպանագետ,
ռազմավարագետ, գազանագետ, տաղաչափագետ, քարանձավագետ, սփյուռքագետ, մեղիա-
մասնագետ, մեղիափորձագետ, հուշարձանագետ, պարագետ, էթնոպարագետ, էթնոերաժըշ-
տագետ, էթնոժողովրդագետ, ժողովրդագրագետ, կոմիտասագետ, ցիցերոնագետ, օսմանա-
գետ, ադրբեջանագետ, էքսկուրսագետ, մահագետ, ահաբեկչագետ, կրեմլագետ, ֆիլմագետ,
սողունագետ: Կան դիպվածային, հեզնական նշանակությամբ կազմություններ ևս՝ **ամենինչա-**
գետ, մայրանագետ, օֆշորագետ, ճամբարագետ, կյանքագետ, ապագայագետ: Իսկ հիմնական
ձևերի բաղադրությամբ նշենք՝ **գիտապաշար, գիտախոհ, գիտակերպ, գիտադարան, գիտա-**
խնդիր, գիտաճամբար և այլն:

Վերոնշյալ **-գործ, -բան, -գետ** բաղադրիչներով կազմություններում իմաստային անփո-
փոխակի հստակությունը թույլ է տալիս այդօրինակ նորակազմությունները հիմնականում
դիտակել բազմիմաստության տեսանկյունից: Սակայն, այստեղ հարկ ենք համարում առաջ-
նահերթ նշել այդ բաղադրիչներով անընդհատ նոր կազմություններ առաջանալու ակտիվ
գործընթացը՝ հնարավոր դարձնելով լեզվիներկայիս վիճակի վերլուծությունը:

Հարանուն բաղադրիչներով նորակազմություններ: Հարանուն բաղադրիչներով նորա-
կազմություններից առանձնացնենք **-հենք** և **-հեն** բաղադրիչներով ձևերը, որոնք գործուն են
հատկապես բառարանաշարի վերջին պրակներում: Այսպես՝ **գիտելիքահենք** («գիտելիքի վրա

հենված»), համայնքահենք, փաստահենք, արդարահենք, մտահենք, գաղափարահենք, շուկա-
յահենք, գիտահենք և ցանցահեն, լրագրահեն, հանքահեն, բառահեն, լրահեն, համակարգչա-
հեն, ծրագրահեն:

-հենք-ով կազմությունները համեմատաբար արտադրողական են, սակայն, հաճախակի են նաև հարանուն բաղադրիչով կազմությունների ստեղծումը: Պատճառը, թերևս, -հենք-ի **հեն** արմատի շփոթությունն է **-հեն** («ավագակ») նշանակությամբ ձևի հետ: Արդյունքում հաճախադեպ են հետևյալ անհաջող կազմությունները՝ **արդյունքահեն, արժեքահեն, չափորոշահեն, յարողունակահեն, բուսահեն, հետազոտահեն, նախագծահեն, խնդրահեն**, Այսպիսով՝ **-հեն** և **-հենք** արմատները հարանուններ են, և բառեր կազմելիս պետք է տարբերակվեն:

Վիճակագրական տախտակ. Համանուն և հարանուն բաղադրիչներով նորակազմություններն արդի հայերենում («Նոր բառեր» բառարանաշարի հիման վրա): Ստորև ներկայացվում է վիճակագրական տախտակը՝ հողվածում քննարկված հիմնական ածանցների/բաղադրիչների, դրանց հիմնական իմաստային նշանակությունների, նորակազմությունների թվի (որտեղ նշված է), դրսևորվող լեզվական երևույթի և արտադրողականության միտումների ամփոփմամբ:

Վիճակագրական տախտակ 1. Համանուն և հարանուն բաղադրիչներով նորակազմություններն արդի հայերենում («Նոր բառեր» բառարանաշարի հիման վրա)

Ածանց	Իմաստային նշանակություն	Խոսքի մաս	Քանակը	Լեզվական երևույթ	Արտադրող. միտում
եղեն	«նախատիպի նյութից պատրաստված»	Ածական	7	Համանունություն	Միտումի փոփոխություն (նախկինում ոչ գործուն, այժմ՝ գործուն)
	«առարկաների տեսակային ամբողջություն»	Գոյական	3	Համանունություն	Միտումի փոփոխություն (նախկինում խիստ գործուն, այժմ՝ պակաս գործուն)
ենի	«մեկին, մի բանի հատուկ»	Ածական	2	Համանունություն	Ցածր
անի	«նախատիպի առարկաների ամբողջություն»	Գոյական	1	Համանունություն	Ցածր (այս իմաստով)
	«նախատիպի գոյականն ունեցող» (թվական լրացումով)	Ածական	29	Համանունություն	Բարձր (վերջին պրակներում ակտիվ)
անոց	«նախատիպի առարկայի տեղը»	Գոյական	7	Բազմիմաստություն	Բարձր
	«պատրաստելու, մշակելու տեղ»	Գոյական	7	Բազմիմաստություն	Բարձր
	«շենք՝ մասնագիտություն ունեցող մարդկանց համար»	Գոյական	3	Բազմիմաստություն	Բարձր


	«կենդանիների մնալու, պահվելու տեղ»	Գոյական	3	Բազմիմաստություն	Բարձր
	Նոր առաջնաբաղադրիչով կազմություններ	Գոյական	5	Բազմիմաստություն	Բարձր
		Ածական	19	Բազմիմաստություն	Բարձր
իչ	«նախատիպի գործողությունը կատարող»	Ածական	15	Բազմիմաստություն	Բարձր
	«անձ կամ առարկա, որը կատարում է գործողությունը»	Գոյական	18	Բազմիմաստություն	Բարձր
	Բարդ հիմքով կազմություններ (-իչ-ը վերջնաբաղադրիչ)	Գոյական	32	Բազմիմաստություն	Բարձր
իկ	Նվագական, փաղաքշական նշանակություն	Գոյական, ածական, բայ	21	Բազմիմաստություն	Բարձր
	Արհամարհական-նվաստական նշանակություն	Գոյական	3	Համանունություն	Ցածր
	Բարդ հիմքով կազմություններ (-իկ-ը վերջնաբաղադրիչ)	Գոյական	40	Բազմիմաստություն	Բարձր
գործ	«գրադմունքով՝ արհեստով զբաղվող անձ»	Գոյական	16	Բազմիմաստություն	Բարձր
բան	«գործով՝ զիտությամբ զբաղվող անձ»	Գոյական	31	Բազմիմաստություն	Բարձր
գետ	«որևէ բնագավառի մասնագետ»	Գոյական	36	Բազմիմաստություն	Բարձր
հենք	«նախատիպի վրա հենված»	Ածական	8	Հարանունություն	Բարձր
հեն	«ավազակ» (բուն իմաստով)	Գոյական	7	Հարանունություն	Բարձր
	«ավազակ» (անհաջող կազմություններ՝ շփոթության հետևանքով)	Ածական/Գոյական	8	Հարանունություն	Միջին (հաճախ սխալ կիրառմամբ)

Դիագրամ 1. Նորակազմությունների քանակն ըստ ածանցի-բաղադրիչի %-ի

Եզրակացություն: Այս աշխատանքը հնարավորություն ընձեռեց «Նոր բառեր» բառարանաշարի Ա-Ը պրակներում հավաքված բառանյութի հիման վրա վերլուծելու և համակարգելու համանուն և հարանուն բաղադրիչներով նորակազմությունները, ինչպես նաև պարզելու արդի հայերենի բառաստեղծման որոշակի միտումներ և օրինաչափություններ:

Իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ համանունության և բազմիմաստության տարանջատման խնդիրը շարունակում է մնալ արդի լեզվաբանության կարևորագույն մարտահրավերներից մեկը, հատկապես ածանցների դեպքում: Ածանցների իմաստային անփոփոխակի (ինվարիանտի) որոշումը վճռորոշ է այս տարբերակման համար, քանի որ բազմիմաստ ածանցները պահպանում են ընդհանուր իմաստային առանցք, մինչդեռ համանուն ածանցների դեպքում իմաստային կապը բացակայում է, կամ էլ ձևային գործում են տարբեր բառակազմական հարացույցներում:

Ուսումնասիրված ածանցներից (**-եղեն, -անի, -անոց, -իչ, -իկ**) մեծ մասը դրսևորում է բառակազմական բարձր արտադրողականություն՝ նորակազմությունների հարուստ շերտ ձևավորելով: Նկատելի է, որ **-եղեն** ածանցի դեպքում տեղի է ունեցել արտադրողականության միտումի հակառակ փոփոխություն՝ ժամանակին ոչ գործուն համարված կազմությունների ակտիվացում: **-Անի** ածանցն առանձնանում է թվական լրացումներով կազմությունների մեծ թվով, իսկ **-անոց** ածանցը՝ իմաստային բազմազանությամբ և բառակազմական մեծ ակտիվությամբ՝ ինչպես գոյականական, այնպես էլ ածականական կազմություններում: **-Իչ** և **-իկ** ածանցները հիմնականում դրսևորում են բազմիմաստություն՝ տարբեր հիմքերից կազմված բառերում ստանալով ածանցական տարբեր իմաստներ, բայց պահպանելով իմաստային ընդհանրություն (գործողություն կատարողի կամ նվազական-փաղաքշական իմաստի շրջանակներում):



Համանունության առավել ակնհայտ դրսևորումներ արձանագրվեցին հիմնական (արմատական) ձևային և նույնական հնչյունական կազմն ունեցող ածանցակերպերի միջև: **-Գործ, -բան** և **-գետ** բաղադրիչները, չնայած իրենց ծագումնաբանական ընդհանրությանը, արդի լեզվում հստակորեն տարբերակվում են իրենց բառակազմական գործառնություններով և բացառիկ արտադրողականությամբ, ակտիվորեն համալրելով հայերենի բառապաշարը նորանոր մասնագիտություն, գործունեություն կամ գիտակարգ ցույց տվող բառերով: Այս բաղադրիչներով նորակազմությունների անընդհատ աճը վկայում է լեզվի ներքին զարգացման դինամիզմի մասին:

Հարանուն բաղադրիչների դեպքում, հատկապես **-հենք** և **-հեն** ձևերի օրինակով, ակնհայտ դարձավ դրանց տարբերակման կարևորությունը: Չնայած երկու բաղադրիչներն էլ դրսևորում են արտադրողականություն, նրանց ձևական նմանությունը հաճախ հանգեցնում է իմաստային շփոթության և անհաջող կազմությունների առաջացման, ինչը շեշտում է լեզվի կանոնարկման և բառաստեղծական գործընթացների հստակեցման անհրաժեշտությունը:

Ամփոփելով՝ «Նոր բառեր» բառարանաշարը արդի հայերենի բառաստեղծական գործընթացները, դրանցում դրսևորվող համանունության, բազմիմաստության և հարանունության դրսևորումներն ուսումնասիրելու հարուստ և անփոխարինելի աղբյուր է: Այս նորակազմությունների վերլուծությունը թույլ է տալիս ոչ միայն արձանագրել լեզվական միտումները, այլև կանխատեսել դրանց հետագա զարգացումները՝ նպաստելով լեզվական համակարգի ավելի խորը ըմբռնմանը:

Inga Margaryan. Neologisms with homonymous and paronymous components in Modern Armenian. - This study is dedicated to the analysis of neologisms with homonymous and paronymous components in Modern Armenian, based on the extensive material from the "New Words" dictionary series (volumes A–H). The analysis reveals that distinguishing between affixal homonymy and polysemy remains a significant linguistic challenge, for which the presence of a semantic invariant is a decisive criterion.

The word-formation productivity of suffixes such as *-egen*, *-ani*, *-anoc'*, *-ič'*, and *-ik* is examined. The findings highlight notable trends, including a reversal in the productivity of the suffix *-egen*, the exceptional activity of *-ani* in formations with numerical components, and the high productivity and semantic diversity of *-anoc'*, *-ič'*, and *-ik*, which primarily exhibit polysemy.

Special attention is given to affixoids like *-gorc*, *-ban*, and *-get*. Despite originating from homonymous root words, these components are now treated as homonyms in the modern language due to their distinct word-formation functions. They demonstrate exceptional productivity in creating new terms for professions and fields of study, actively enriching the lexicon.

Regarding paronymous components, the study analyzes the forms *-henk'* ("based on") and *-hen* ("bandit"), showing how their formal similarity frequently leads to semantic confusion and incorrect word formations. In conclusion, based on a statistical analysis of neologisms, the research sheds light on the dynamic processes of word formation in Modern Armenian and identifies key trends in its ongoing linguistic development.

Keywords: Homonymy, Paronymy, Polysemy, Affixation, Root morpheme, Neologism, Statistics.

Инга Маргарян. Неологизмы с омонимичными и паронимичными компонентами в современном армянском языке. - Настоящая работа посвящена исследованию неологизмов с омонимичными и паронимичными компонентами в современном армянском языке на материале словарей серии «Новые слова» (выпуски А-С). Анализ показывает, что разграничение омонимии и полисемии аффиксов остается одной из ключевых лингвистических проблем, для решения которой решающим критерием является наличие семантического инварианта.

В работе рассматривается словообразовательная продуктивность суффиксов *-еген*, *-ани*, *-аноц*, *-ич*, *-ик*. Выявлены важные тенденции: изменение продуктивности суффикса *-еген* в обратную сторону, исключительная активность *-ани* в сочетании с числительными, а также высокая продуктивность и семантическое разнообразие суффиксов *-аноц*, *-ич* и *-ик*, которые в основном проявляют полисемию.

Особое внимание уделяется аффиксоидам *-горц*, *-бан*, *-гет*. Происходя от омонимичных корней, в современном языке они приобрели статус омонимов благодаря функциональному разграничению и с исключительной продуктивностью пополняют лексический состав, образуя названия профессий и областей знания.

В случае паронимичных компонентов исследуются формы *-хенк* («основанный на») и *-хен* («разбойник»). Показано, что их формальное сходство часто приводит к смысловой путанице и ошибочным словообразованиям. Таким образом, на основе статистического анализа неологизмов, исследование раскрывает динамические процессы словообразования в современном армянском языке и выявляет важные тенденции его развития.

Ключевые слова: Омонимия, Паронимия, Полисемия (многозначность), Аффиксация, Корневая морфема, Неологизм, Статистика.

Օգտագործված գրականություն

Աբրահամյան Ա., Հայերենի քերականական համանունության շուրջ // Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1974, N1:

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Ե., 1984:

Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ.1, ԵՊՀ հրատ., Ե., 1970:

Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1978:

Գևորգյան Ե., Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 1987:

Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1963:

Խլղաթյան, Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, մ.1, Ե., 2009:

Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 1990:

Նոր բառեր. Ա պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

- Նոր բառեր.** Բ պրակ, Ե., «Ասողիկ» հրատ., 2016:
- Նոր բառեր.** Գ պրակ, Ե., «Ասողիկ» հրատ., 2017:
- Նոր բառեր.** Դ պրակ, Ե., «Ասողիկ» հրատ., 2018:
- Նոր բառեր.** Ե պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. , 2020:
- Նոր բառեր.** Զ պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021:
- Նոր բառեր.** Է պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022:
- Նոր բառեր.** Ը պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023:
- Պառնասյան Ն.,** Քերականական համանունները ժամանակակից հայերենում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979:
- Ջահուկյան Գ.,** Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, «Անանիա Շիրակացի» հրատ., Ե., 1998:
- Սուքիասյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 2004:
- Ֆելեքյան Մ.,** Հայերենի ածանցների համանունության մասին (Քանի՞ –ոց ածանց կա հայերենում), Լեզու և լեզվաբանություն, 2, Ե., 2023:
- Ֆելեքյան Մ.,** Բառակազմական ձևայինների բազմիմաստությունը և համանունությունը արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 2024, N15, 2(44):
- Bauer L.,** Introducing Linguistic Morphology (2nd ed.). Edinburgh University Press, 2001.
- Cruse, D. A.,** Lexical Semantics. Cambridge University Press, 1986.
- Lyons, J.,** Semantics (Vol. 1 & 2). Cambridge University Press, 1977.
- Plag, I.,** Word-Formation in English. Cambridge University Press, 2003.
- Ullmann, S.,** Semantics: An Introduction to the Science of Meaning. Basil Blackwell, 1962.

Տեղեկություններ հեղինակների մասին

- Անահիտ Գալստյան** – ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլհասցե՝ anahit.galstyan2021@mail.ru
- Լեոնիդ Թելյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ., դոցենտ,
Էլհասցե՝ leonidtelyan0@gmail.com
- Կարինե Առաքելյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլհասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru
- Գայանե Գրիգորյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլհասցե՝ gayane.grig.grigoryan@gmail.com
- Ֆրիդա Հակոբյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլհասցե՝ frida.hakobyan@gmail.com
- Հրաչյա Բալոյան (Հրաչյա Արմենյան)** - «Պատմաբանասիրական հանդես», բաժնի
խմբագիր, փ. գ. թ.,
Էլհասցե՝ hrachyab@gmail.com
- Հովհաննես Զաքարյան** - «Տաթև» ԳԿՀ, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար, փ. գ. թ.
Էլհասցե՝ hovzakaryan@yahoo.com)
- Հասմիկ Ղազարյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ լաբորանտ, փ.գ.թ., դոցենտ, ԲՊՀ դոցենտ,
Էլհասցե՝ ghazarian.hasmik@gmail.com
- Լուսինե Ղամոյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլհասցե՝ lgamoyan@mail.ru
- Ռեբեկա Մարգարյան** - փ.գ.թ., ԵՊՀ դոցենտ,
Էլհասցե՝ margaryanrebeka@ysu.am
- Սիլվա Պապիկյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլհասցե՝ silvapapikyan23@gmail.com
- Մանուկ Ֆելեքյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ գիտաշխատակից, փ.գ.թ., Երևանի պետական համալսարանի
հայոց լեզվի ամբիոն, դոցենտ,
Էլհասցե՝ manukfelegyan@gmail.com
- Մարիամ Ալեքսանյան** - Լեզվի կոմիտեի լեզվական վերահսկողության բաժնի ավագ
մասնագետ,
Էլ.հասցե՝ alexanyanmariam38@gmail.com
- Վալենտին Խաչատրյան** - ՀՀ ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատակից, փ. գ. թ., դոցենտ,
Էլ.հասցե՝ valentin.khachatryan81@gmail.com
- Ինգա Մարգարյան** – ՀՀ ԳԱԱ ԼԻ գիտաշխատակից, փ. գ. թ.,
Էլ.հասցե՝ inga--1987@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆ, ԼԵՈՆԻԴ ԹԵԼՅԱՆ, Հայերենի տալ բայի իմաստագործական քննություն	4
ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ, Նորակազմ բառեր արդի հայ քնարերգության մեջ	8
ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Բարենյու ժեստերի փոփոխությունը կովիդ-19-ի (covid-19) ժամանակաշրջանում. հանրամշակութային վերլուծություն	13
ՖՐԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ, Արհեստական բանականության համակարգերի դերը բառիմաստի բացատրության գործընթացում	22
ՖՐԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ, Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ	28
ՀՐԱԶՅԱ ԲԱԼՈՅԱՆ (ՀՐԱԶՅԱ ԱՐՄԵՆՅԱՆ) Հատկական փոխառությունների իմաստային և գործածական առանձնահատկությունների մասին....	35
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ, Փոխառությունն ընդդեմ հասկանալիության	45
ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ, Տարաբժեք երկրորդական ձևույթները ժամանակակից հայերենում	58
ԼՈՒՍԻՆԵ ՂԱՍՈՅԱՆ, «Խաղ» արմատի բառակազմական և իմաստային առանձնահատկությունները	69
ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, Բառաբաղադրությունները հագուստ անվանող բառերի իմաստային դաշտում	81
ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ, Դիտարկումներ «հատկական փոխառություն» տերմինի մասին	89
ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ, Բառերի բացատրության բացասական կամ ժխտական եղանակը հայերենի բառարաններում	96
ՄԱՐԻԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Նորակազմությունները Հովհ. Շիրազի «Անի» պոեմում	101
ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱԶՍՏՐՅԱՆ, Բազմիմաստության և համանունության շփոթության հարցի շուրջ	109
ԻՆԳԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, Համանուն և հարանուն բաղադրիչներով նորակազմություններն արդի հայերենում	122
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	134

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2025թ., հունիսի 27)**

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի